Ի Գրոց [illegible]

ԾԱՂԻԿ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ

Ի պէտս Դպրոցաց Հայաստանեայց։

Ի ՄՈՍԿՈՎ.

1819։

[illegible] Moskva - [illegible]

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

19

ՍՏՈՒԳՎԱԾ Է
1952 Թ.

5405

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Օ[illegible] գործ [illegible] ծաղկանկար [illegible] գիտութեանց յաջողեալ Տեառն օգնականութեամբ ընծայել 'ի լոյս՝ պարտուպատշաճ [illegible] 'ի [illegible] [illegible] յայտ առնել [illegible] վերծանողաց, եւ է 'ի պէտս ուսումնատենչ [illegible] պատանեկաց մերոց եւ դեռավարժից յաւէտ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], եւ 'ի չափ կատարեալ ուսումնականութեան ժամանելոց ։ Արդ [illegible] կարէ [illegible] էն [illegible] յազգէ մերում, որք զօրէն [illegible] [illegible] ութեանց. եւ ընդ [illegible] յոգւոյն 'ի ժամանակակցաց մերոց կարօտէն [illegible] համառօտ տեղեկութեանց՝ [illegible] հոգ, եւ [illegible] մշակութեան [illegible] [illegible]՝ [illegible] հոգւոյս [illegible] 'ի հանդերձել [illegible] կամ նախա[illegible] ծանօթութեանց կարեւորագունից. ընդ որ [illegible] [illegible] [illegible] համեակաց մերոց, եւ [illegible] [illegible] [illegible] [illegible] օգտակար գիտելեաց՝ [illegible] եւ [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]։

[illegible] յայն ոսկի [illegible] գործոյ Օ[illegible] գիտութեանց էրէ. [illegible] [illegible] [illegible] եւ [illegible]

[illegible] քաղեալ ’ի [illegible] [illegible] [illegible] ծանօթութեանց, է՝ որ ’ի մատենագրաց մերոց, և է՝ որ յօտարաց, երբեմն [illegible] [illegible] երբեմն ծաղկանց ’ի մի վայր հաւաքեցի, և ուսումնասիրաց մանկանց նուիրել հոգացայ, վայելել ’ի նոսա և իմաստնանալ:

[illegible] հանդերձ [illegible]:

Այլ [illegible] ամենայն [illegible] շնորհ:

ԾԱՂԻԿ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ:

Յաղագս Գիտութեան առ հասարակ:

Հարց: Զի՞նչ է Գիտութիւն:

Պատասխանի: Գիտութիւն է ճանաչումն զինչևիցէ բնական կամ գերբնական իրաց:

Հ: Զիա՞րդ մարթի ժամանել 'ի ճանաչումն իրաց:

Պ: Ընթերցանութ՟բ, փորձառութ՟բ և երկար մտածութ՟բ:

Հ: Զի՞նչ պիտո՞յ է մարդոյ գիտել նախ քան զամ՟:

Պ: Թէ Աստուած է արարիչ ամ՟ի. և մարդս պատուականագոյն ստեղծուած նր՟:

Հ: Ուստի՞ մարթ է զայս ապացուցանել :

Պ: Ի բնական լուսոյ , և 'ի մատենէն՝ յորում Աստուած յայտնեցաւ մարդկան :

Հ: Զիա՞րդ կոչի այն մատեան :

Պ: Աստուածաշունչ :

Հ: Զի՞նչ գիտութիւն է հարկաւորագոյն :

Պ: Գիտութիւն Կրօնի · որ կոչի Աստուածաբանութիւն :

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ·

Յաղագս այլևայլ Կրօնից :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ·

ԿՐՕՆ :

Հ: Զի՞նչ է Կրօն :

Պ: Ընդհանրապէս խօսելով՝ Կրօնն է այն պաշտօն , զոր մատուցանեմք Ա՟յ և ս՟բց նորա :

Հ: Առ ի՞նչ հարկաւոր է Կրօնն :

Պ: Կրօնն ուսնէ զմարդն հաւատարիմ առ Արարիչն իւր , և բարեհամբոյր առ ընկերն : Նա զմեզ ըստ ն՟մի առաքինիս գործէ և արդարս : Առանց Կրօնի մարդիկ լինին անիրաւք ամբարիշտք և վատշունէրք :

Հ: Ո՞յք առաւելապէս պարտաւոր են ունել զԿրօն :

Պ: Նախադահք և իմաստունք 'ի մարդկանէ :

Հ։ Ընդէ՞ր այս պահանջի յառաջ 'ի նոցանէ քան 'ի ռամկաց ։

Պ։ Վասն զի իշխանք ազգաց ոչ միայն յօգուտ անձանց պարտական են ծառայել Արարչին իւրեանց, և լինել առաքինի, այլ նաև պարտին օրինակ բարի լինել հպատակաց իւրեանց և ռամկաց, որք սեռօրէն զհետ երթալ սովոր են շաւղաց այնոցիկ՝ զորս գեր 'ի վերոյ քան զինքեամբս համարին և յարգեն ։

Հ։ Մի՞թէ ունիցի՛ն ամենայն ազգք զԿրօն ։

Պ։ Անշուշտ իմն է այս · քանզի չի՛ք ինչ ազգ 'ի վերայ երկրի՝ որոց չիցէ սահմանեալ զարարողութիւն ինչ յաւէտ կամ նուազ, առ 'ի պաշտօն մատուցանել այնմ որում երկրպագեն, իւրաքանչիւր ըստ իւրում հաւատոյ, և տրամախոհութեան մտաց ։ Աստի գեղեցիկ ասէ Պղուտարքոս, թէ «տեսեալ է արդեօք ուրուք քաղաք անարև, քան անկրօն ։»

Հ։ Քանի՞ են գլխաւոր Կրօնք աշխարհի ։

Պ։ Վեց · նախ՝ Կրօն բնական · երկրորդ՝ Կրօն Հրէից · երրորդ՝ Կրօն Քրիստոնէից, որ Հրէութեան յաջորդեաց · չորրորդ՝ Հեթանոսութիւն, կամ վաղեմինական Կրօնն Եգիպտացւոց, Յունաց և Հռովմայեցւոց ։ Հինգերորդ՝ Մահմետականութիւն, որ տարածեալ է յԱսիա, յԱփրիկէ և յանկիւնս ինչ Եւրոպիոյ ։ Վեցերորդ՝ Կռապաշտօնէութեան, որ ցայսօր յոլովակերպ գտանի առ զանազան ազգս աշխարհի :

Հ: Արդէօք գտանի՞ն 'ի վերայ աշխարհի տարբերին քան ամենայնի անձք :

Պ: Մարթ է ասել, թէ բազումք 'ի մարդկանէ են անձամբ գործեալ և վարուք իւրեանց . այլ սակաւք յոյժ միօք և կամաւ :

Հ: Քանի՛օն է պաշտօն Ա̃յ ճշմարիտ :

Պ: Երկեն . ներքին և արտաքին :

Հ: Ո՛րն է ներքինն . և ո՛րն արտաքինն :

Պ: Ներքին պաշտօնն է այն պատիւ զոր տամք Ա̃յ ըստ ինքեան . որ կայանայ 'ի ճշգրիտ ծանօթութե̃ և 'ի յայտնի խոստովանութե̃ ամենակարողութե̃ և ամենաբարութե̃ ն̃ր . յորմէ և յառաջ գայ երկիւղ Տեառն : Իսկ արտաքինն է գործածութիւն ինչ ինչ հոգեպատկան արարողութե̃ց, զոր տայ մեզ Կրօնն կատարել . որպիսի են աղօթք . փառաբանութի̃ և այլն :

Հ: Բաւակա՞ն իցէ արդէօք ունել և ճշմարտել զԱ-ստ̃ծ 'ի ներքուստ սրտէ :

Պ: Ոչ . այլ հարկ է միանգամայն յուսալ 'ի նա իբրև յաղբիւր ամ̃բարութե̃ց և 'ի պատճառ երջանկութե̃ մերոյ . այլև 'ի նա ապաւինել, նմա հնազանդել, և 'ի նմանէ երկնչել :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ։

ԲՆԱԿԱՆ ԿՐՕՆ։

Հ. Զի՞նչ է բնական կրօն։

Պ. Բնական կրօնն է, որ աւանդէ զա՟մ օրէնս և սկզբունս հասարակ սերի մարդկան. որպիսի է առ յամենեցուն ընկալեալ օրէնքս այս. « Ա՛րա այլոց զայն, զոր կամիս՝ զի արասցեն քեզ։ Այսպիսի օրէնք յառաջ բղխեն բնականապ՟ ՚ի դիւրագոյն սկզբանց և ՚ի տեղեաց, զորս իւրաքանչիւր ոք յառաջ կամ յետոյ ինքնին ուսանի ՚ի բնու՟է։

Հ. Զի՞նչ է հիմն օրինաց բնութեան։

Պ. Հակամիտու՟ին, զոր այր իւրաքանչիւր ունի ՚ի կենցաղավարել ընդ այլում։ Վասնզի որովհետև Աստուած զնոյն ձգտմունս և զնոյն զգացմունս պարգևեաց մարդկան, ամ՟ք առ հասարակ ունին փոփոխակի պէտս կարեկցութեան. յորմէ զհետ գայ՝ զի յամենեսեան են նոյն սկզբունք և նոյն օրէնք իբր հիմունք կենցաղակցու՟է։ Զսոյն զայս է տեսանել և ՚ի կենդանիս անբանս, զոր օրինակ ՚ի մեղուս՝ որք ընկալեալ են յԱրարչէն զյատուկ ձգտումն, կամ ազդումն բնու՟է առ ՚ի կեալ ՚ի միասին. զոր չէ ընկալեալ առիւծն, կամ արջն։ Եւ ահա պատճառն, որոյ վասն արդարու՟ին, բարեկամու՟ին, երախտագիտու՟ին, ասպնջականութիւն , և այլ առաքինութիւնք , որք 'ի նոցա են սակի՝ առ ամենեսին համարին իբրև կարևոր միջոցք , և հաստահիմն կապ պատկանաւոր կենակցութեան ։

Հ։ Որպէ՞ս ճանաչեմք զբնականս զայս օրէնս ։

Պ։ Թուի թէ ոչ միայն փիլիսոփայք կամ իմաստունք 'ի նոցանէ , այլ նաև բիրտք և տխմարք ․ ըստ որում մի ոմն 'ի փիլիսոփայից նոցա վկայէ , թէ յոլովք 'ի խուժադուժ ազանց առանց հրահանգութեան և ուսման կենցաղավարէին ըստ միմեանս համաձայն օրինաց բնութեան , և սկզբանց տրամախոհութեան ։

Հ։ Զի՞նչ շահ է գոյ 'ի պահպանութենէ բնական օրինաց ։

Պ։ Մտադիր պահպանութիւն բնական օրինաց տայ հանգիստ մտաց , և պահպանէ 'ի բազմադիմի չարեաց՝ որք բերեն 'ի վնաս մարդոյ և տէրութեանց ։ Առանց օրինաց մոլութիւնք և առաքինութիւնք ինչ ոչ տարբերեն յիրերաց ․ և կենցաղակցութիւն մարդկան լինի վնասաբեր և անտանելի ։

Հ։ Զի՞նչ Կրօն անուանէին նախնիք ։

Պ։ Զբնականն , զոր նոքա ուսան յԱ՟Յ և 'ի բնութենէ ։

Հ։ Ո՞վ առաջինն մատոյց պատարագ Ա՟Յ ամենակալի ։

Պ։ Կայէն և Աբէլ ։

Հ։ Զի՞նչ մատուցին նոքա ։

Պ: Կայէն մատոյց զառաջին պտուղս երկրի · իսկ Հաբէլ զանդրանիկս խաշանց իւրոց :

Հ: Ո՞ւմ յայտնեցաւ Աստուած յետ Նոյի :

Պ: Աբրահամու :

Հ: Ե՞րբ Աստուած ետ Հրէական զգրաւոր օրէնս :

Պ: Յետ ելանելոյ Իսրայելացւոց յԵգիպտոսէ :

Հ: Ընդէ՞ր կոչեն գրաւոր օրէնք :

Պ: Վասն զի զառաջինն նուագ այնք 'ի գիրս արձանացան, եւ տուան ցՄովսէս :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

ԿՐՕՆ ՀՐԷԻՑ.

Հ: Զ՞ինչ են մասունք Հրէութեան :

Պ: Նախ՝ տասնաբանեայ պատուիրանքն Այ, եւ որ ինչ միանգամ գտանի 'ի հինգ գիրսն Մովսէսի · երկրորդ՝ այն ամ, զոր յաջորդաբար Ռաբբիք բանիւ աւանդեցին միմեանց · եւ սա կոչի օրէնք բերանոյ · երրորդ՝ զորս սովորութիւն յինչ ինչ կողմանս եւ 'ի ժամանակս ընկալեալ է 'ի տեղի օրինաց · սա կոչի յատկապէս աւանդութիւն :

Հ: Զ՞ինչ տօնք էին 'ի ժողովրդեանն Հրէից :

Պ: Նախ՝ Տապանակն 'ի յիշատակ Տապանակիուխտին · յորում են հինգ գիրք Մովսէսի՝ ըզգուշութ՟ օրինակեալք 'ի բնագրէն Եզրասայ, զորըս ըստ ասից Հրէից օրինակեալ է նա 'ի նոյն իսկ նախարտակէն Մովսիսի ։ Երկրորդ՝ գրակալ մի, յորոյ վերայ եդեալ զմատեանն ընթեռնուն 'ի լու ժողովրդեան ։ Երրորդ՝ վերնատուն վանդակապատ վասն կանանց, ուստի նոքա լսեն զԱստուածային պաշտամունս ։

Հ ։ Ո՛րք յանձանձէին աղքատանոցս ։

Պ ։ Երևելի քաղաքս շրջին յիւրաքանչիւր շաբաթամուտ երեկոյս 'ի տունս մեծատանց · և նոքա ըստ կարողութե իւրեանց բաշխեն նոցա զողորմութի ։ Բաց յայսմանէ փարթամքն ինքնակամ յա՟մ աւուրս տօնից յղեն զտուրս 'ի տունս աղքատաց, այրեաց և հիւանդաց ։ Բայց և բազում ուրեք գոն հաստատեալ միաբանութիք 'ի դարման չքաւորաց · և պահպանին գանձանակք 'ի թաղել զտնանկ մեռեալս, և 'ի թափել զգերիս ։ Համօրէն Հրէայք յա՟մ ուստեք առաքեն ամի ամի ըզնուէրս յԵրուսաղէմ, 'ի Տիբերիա և յԵբրոն, ուր են գերեզմանք Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ և այլ Նահապետաց ։

Հ ։ Յի՛նչ առանձինն առաւելապէս պարապին Հրէայք ։

Պ ։ Յուսմունս սէ՟ գրոց և Թալմուտի · որ է առասպելախառն ինչ գիրք մեկնիչ Աստուածաշնչի ։ Պարապին նոքա և 'ի գրուածս գիտնոց իւրեանց , և 'ի համառօտութ՟ն Թալմուտին :

Հ: Մի՞ թէ օրէ՛ն իցէ նոց՟ խափանել զՔրիստոնեայս .

Պ. Նոքա պնդեն զներհակն . այլ գործով հաստատեն զնոյն :

Հ: Ո՞յք են առ հասարակ դատաւորք Հրէից .

Պ: Ռաբբիքն նոցին , և կամ միջնորդք ոմանք , զորս նոքա ընտրեն յերկուց կողմանց 'ի դատել զվէճս իւրեանց :

Հ: Զ՞ի՛նչ կերակուր ոչ կարեն նոքա ուտել .

Պ: Զմիս ամ՟ անասնոց , որք չիցեն կճղակահերձք և որոճողք : Նոյնպէս արգելեալ է նոցա ուտել զճագար , զուղտ , զնապաստակ , զխոզենի և զձուկն անթեփ . այլև զսողունս և զգիշատիչ թռչունս . որպէս և զճարպ և զարիւն .

Հ: Յորո՛ւմ ժամանակի կատարեն նոքա զԶատիկ .

Պ: Ի 15 Նիսան ամսոյն , որ իբր 'ի բազումս է Ապրիլ ամսին Քրիստոնէից .

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ .

ԿՐՕ՛Ն ՔՐԻՍՏՈ՛ՆԷԻՑ .

Հ: Ո՛վ եղեւ հեղինակ այսր Կրօնի .

Պ: Յս՟ Քս՟ :

Հ: Ո՛վ էր նա :

Պ: Երկրորդ անձն ամենասուրբ Երրորդութե՟ն . այսինքն է Բանն Ա՟ծ .

Հ։ Զիա՞րդ հաստատեաց նա զԿրօն իւր ։

Պ։ Քարոզութ՟բ և սքանչելեօք ։

Հ։ Զի՞նչ փաստս ունիմք զճշմարտութենէ այսր Կրօնի ։

Պ։ Բազումս · որոց գլխաւորն է՝ զի հեղինակն և հիմնադիրն է նոյն ինքն Որդին Ա՟յ ։

Հ։ Զիա՞րդ հաստատի, թէ Ք՟ս Տէրն մեր ճշմարտապէս եկն յաշխարհ ։

Պ։ Դիւրաւ իմն զայս մարթ է ապացուցանել ՚ի համահաւանութ՟է ամ՟ ազգաց Հեթանոսաց, ևս և Հրէից · որք թէպէտ և ոխերիմ թշնամի են Քրիստոսական հաւատոյ, այսու ամ՟իւ վկայեն՝ թէ արդարև ծագեցաւ երբեմն ՚ի Հրէաստան այր ոմն՝ Յ՟ս անուն, որ զանձն Որդի Ա՟յ քարոզէր ։

Հ։ Ուստի՞ գիտեմք, թէ նա էր ճշմարիտ Որդի Ա՟յ ։

Պ։ Նախ անտի՝ զի զոր ինչ միանգամ նախագուշակեցին Մարգարէք զնմանէ, այսինքն ըզՄեսիայէ՝ այն ամ՟ անթերի կատարեցաւ յանձն Յ՟սի ։ Երկրորդ՝ հրաշագործութ՟ք նորա՝ զորոց նաև վկայեն Հրեայք, և յառնելն ՚ի մեռելոց՝ յայտ յանդիման առնեն ամ՟ իրօք, թէ նա էր ճշմարիտ Ա՟ծ, և Ա՟ծապ՟ս առնէր զամ՟ ։

Հ։ Զի՞նչ են այլ յայտնի ապացոյցք ճշմարտութեան Կրօնի մերոյ ։

Պ. Սրբութիւն և արդարութիւն, զոր ամ՟ ուրեք մեզ քարոզէ՝ են անաղարտելի նշանակք ճշմարտութե՟ն նորա ։

Հ։ Յի՛նչ երեւելի՛ էր տարբերի Քրիստոնէութիւնն յայլոց Կրօնից ։

Պ։ Յայլ ամ՟ Կրօնս գտանին պատիր վարդապետութիւնք, և մոլորապաշտ հաւատալիք, զորովք ըստ արժանեաց այպն արարին 'ի դարս դարս այլք իմաստունք և առաքինիք ։ Իսկ ընդ ներհակն Կրօնն Քրիստոնէից այլ ինչ ոչ ուսուցանէ, բայց եթէ զայնս՝ որք համաձայն են բնական լուսոյ և արդարութե՟ն ։

Հ։ Զի՛նչ են էական հիմունք այսր Կրօնի ։

Պ։ Միութի՟ն Ա՟յ, Երրորդութի՟ն անձանց, Մարդեղութի՟ն Բանին և Յաւիտենականութի՟ն փառաց և պատժոց ։

Հ։ Զի՛նչ են փաստք Միութեան Ա՟յ ։

Պ։ Համահաւանութի՟ն մարդկան, վկայութի՟ն խղճի մտաց, բնական լոյսն, և յայտնութի՟ն Բանին Ա՟յ ։

Հ։ Զի՛նչ է Աստուած ։

Պ։ Ա՟ծ է գերագոյն էակ աննիւթ և կատարեալ, ամենաբարի ամենակարող ամենագէտ և յաւիտենական․ այլ և քաղցր մարդասէր և ողորմած ։

Հ։ Ուստի՛ գիտեմք, թէ երեք անձինք են 'ի մի Աստուած ։

Պ։ 'Ի Նոր Կտակարանէ․ ուր գրի թէ երեք են՝ որք վկայեն յերկինս՝ Հայր, Բան և Հոգի Սբ, և երեքեան մի են : Յօհ. Կթղ. ա. գլ. Ե. համար 7. Զայս գիտեմք և յայնմ բանից Մատթէոսի՝ որ 'ի Գլ. ԻԸ. համար 19. ասէ՝ թէ Գնացէ՛ք . . . . . . Մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ :

Հ: Զի՛նչ բարիք յառաջ գան 'ի Ս. Երրորդութենէն :

Պ: Արդարութիւն, բարեկարգութիւն և խաղաղութիւն : Կրօնս այս միայն գիտէ սրբել զմարդիկ 'ի մեղաց, մխիթարել, կանգնել և պարգևել զնմ երջանկութիւն՝ որում ընդունակ են մարդիկ :

Հ: Զի՛նչ արժան է մեզ 'ի միտ առնուլ յասացելոց անտի :

Պ: Թէ չի՛ք բարի դերագոյն և կարևորագոյն 'ի վր աշխարհի քան զայս Կրօն, զոր Որդին Այ ինքնին եբեր յաշխարհ, և ուսոյց մեզ :

Հ: Որ գիրք բովանդակեն զամենայն զճշմարտութիւնս Կրօնի մերոյ :

Պ: Ածաշունչն, որ պարունակէ զՀին և զՆոր Կտակարանս :

Հ: Ո՛վ գրեաց զհինն և ո՛վ զնորն :

Պ: Զհինն՝ Մովսէս և այլ ոմք Մարգարէք. Իսկ զնորն՝ Առաքեալք և Աշակերտք Քսի :

Հ: Զի՛նչ նշանակէ անունդ Յս, և զի՛նչ Քս :

Պ: Յս նշանակէ փրկիչ. և Քս՝ օծեալ :

Հ: Արդեօք եղև կատարեալ մարդ Քս իբրև զմեզ :

Պ: Այո՛. բայց առանց մեղաց. և ոչ երբեք թողլով զԱծուն իւր :

Հ։ ԶԻԱ՞ՐԴ ԾՆԱՒ։

Պ։ Սքանչելի եղանակաւ. վասն զի յղացաւ ՚ի Հոգւոյն Սրբոյ, և ծնաւ յամենասուրբ Կուսէն Մարիամայ։

Հ։ ԸՆԴԷ՞Ր ՄԱՐԴ ԵՂԵՒ ՏԷՐՆ ՄԵՐ։

Պ։ Առ ՚ի մեռանիլ ո͞պ մարդ, և յաղթել մահու որպէս Ա͞Ծ, և ազատել զմեզ ՚ի ծառայութենէ սատանայի։

Հ։ ՄԻ ԹԷ ՄԵՔ ԾԱՌԱ՞Յ ԷԱՔ ՍԱՏԱՆԱՅԻ։

Պ։ Այո. վ͞ս զի իբրև ստեղծաւ նախահայրն մեր Ադամ, և եդաւ ՚ի դրախտին՝ հրաման ընկալաւ յԱ͞Ծ չուտել որոշակի ՚ի պտղոյ ծառոյն՝ որ կայր ՚ի միջին տեղւոջ դրախտին. և յուտել նո͞ր յայնմանէ՝ իսկոյն մերկացաւ յա͞ծային շնորհաց, և զմեզ ը͞ն իւր էարկ ը͞ն ծառայութ͞ք սատանայի։

Հ։ ՎԱՍՆԷ՞Ր ՏԷՐՆ ՄԵՐ ՆԱԽԸՆՏՐԷՐ ՉԱՐՉԱՐԱՒ ՄԵՌԱՆԵԼ ՚Ի ՎԵՐԱՅ ԽԱՉԻՆ։

Պ։ Առ ՚ի դէմ յանդիման ցուցանել մեզ՝ թէ ինքն ՚ի վե͞ր անձին բառնայր զանէծս և զդատապարտութիւն՝ յորս մեք անկեալ էաք. իբր զի այն տեսակ մահու առաւել անէծք էր և անարգ առ հրէայս, և կնիք դատապարտուե͞։

Հ։ ՅՈ՞ՐՉԱՓ ԺԱՄԱՆԱԿՍ ՏԷՐՆ ՄԵՐ ԵԿԱՑ ՅԱՇԽԱՐՀԻ։

Պ։ Ամս երեսուն և երեք։

Հ։ ԶԻ՞ՆՉ ԱՐԱՐ ՆԱ ՅԵՏ ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ԻՒՐՈՅ։

Պ։ Զաւուրս քառասուն կենցաղավարեալ ՚ի

վերայ աշխարհի ընդ սիրելի աշակերտաց իւրոց, և մխիթարեաց զնոսա՝ փառօք համբարձաւ յերկինս ։

Հ։ Արդեօք ապա՞ նա հանապազ մնայ յերկինս ։

Պ։ Ո՛չ · այլ ըստ անսուտ խոստման իւրոյ գալոց է միւսանգամ յաշխարհ 'ի կատարած ժամանակաց, առ 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, և վարձս հատուցանել իւրաքանչիւրոց ըստ գործոյն՝ զորս գործեցին ։

Հ։ Արդեօք հարկաւո՞ր իցէ նաեւ հաւատալ 'ի Հոգին Սուրբ ։

Պ։ Այո · զի նա է մի յերից անձանց ամենասուրբ Երրորդութեան · որ ըստ բանի Փրկչին ելանէ 'ի Հօրէ, և անբաժանելի է 'ի Հօրէ և յՈրդւոյ ։

Հ։ Զի՞նչ են Հրեշտակք ։

Պ։ Հրեշտակք են կատարելագոյն անմարմին արարածք կարգեալք 'ի սպասաւորութիւն Ա̅յ̅ ։

Հ։ Ո՞յք են չար հրեշտակք ։

Պ։ Որք ըստ պետի իւրեանց Արուսեկի ապստամբեալք յԱ̅յ̅՝ վարեցան յերկնից, և դատապարտեցան 'ի դժոխս · սոքա կոչին նաեւ դեւք ։

ԱՇԽԱՐՀ ։

Հ։ Ո՞վ ստեղծ զաշխարհ ։

Պ։ Ա̅Ծ̅ ։

Հ։ 'Ի քանի՞ աւուրս ստեղծ զայսոսիկ որո՞վ կարգաւ ։

Պ: Ի վեց աւուրս · յառաջնում աւուր ըստեղծ զլոյս · Բ՝ զհաստատութի՟ն · Գ՝ զծառս , ըդ-զտունկս և զբոյսս · Դ՝ զարեգակն , զլուսին և զաստեղս · Ե՝ զձկունս , զթռչունս և զա՟մ կենդանիս՝ որք գտանին յօդս և 'ի մէջ ջուրց · Զ՝ զանասունս և զգեռունս · հուսկ ա՟մի զմարդն :

Հ: Յորմէ՞ ստեղծ զայն ա՟ծ :

Պ: Յոչնչէ ամենազօր բանիւ իւրով՝ բաց 'ի մարդոյ , զոր արար 'ի հողոյ երկրի 'ի պատկեր և 'ի նմանութի՟ իւր :

Հ: Զ՞ինչ էր անուն առաջին մարդոյն :

Պ: Ադամ :

Հ: Ո՞ւր էր նա :

Պ: Ի դրախտին փափկութե՟ :

Հ: Զիա՞րդ ապա ստեղծ զԵւայ :

Պ: Թմրեցոյց զԱդամ, և 'ի կողէ նորա կազմեալ զմայրն ա՟մ մարդկան՝ արար նմա ընկեր և օգնական :

Հ: Յորու՞մ վիճակի ստեղծ զնոսա ·

Պ: Ի վիճակի անմեղութե՟ և արդարութե՟ :

Հ: Վասն է՞ր կորուսին նոքա զայն վիճակ շնորհաց :

Պ: Վասն զի ապախտ արարին զհրամանս Ամենակալին և կերան յարգելեալ պտղոյն :

Հ: Զ՞ինչ չարիք եկին հասին յայնժամ՝ 'ի վերայ նո՟ց :

Պ: Նոյն ժամայն ծանեան զչարն և պատկառեցան , զրկեցան յերջանիկ Թագաւորութե՟ն և զգեցան զմահկանացու բնութիւն :

ՄԵՂՔ ։

Հ։ Զի՞նչ է մեղք ։

Պ։ Մեղքն է զինչ և իցէ խորհուրդ բան կամ գործ՝ որ հակառակի կամաց Ա՟յ և պատուիրանաց նորա ։

Հ։ Քանի՛պատիկ է մեղքն ։

Պ։ Երկլին ․ սկզբնական և ներգործական ։

Հ։ Զի՞նչ է սկզբնականն, և զի՛նչ ներգործականն ։

Պ։ Սկզբնական մեղքն է՝ որ ծնանի ընդ մեզ փոխանցեալ ՚ի նախահօրէն մերմէ Ադամայ ․ իսկ ներգործականն է, զոր գործեմք ՚ի հասանել մեր ՚ի չափ հասակի ապականեալ բնութ՟ մերով ։ Եւ այս դարձեալ բաժանի ՚ի մահացու և ՚ի ներելի ․ մահացուն է՝ որ այնպէս վշտացուցանէ զԱ՟ծ, մինչև լինել պատճառ դատապարտութեան գործողին ․ իսկ ներելին է՝ որ թէպէտ և անարգէ զԱստուած, այլ ոչ այնչափ ․ յայն սակս և դիւրաւ գտանէ զթողութի ։

ԵԿԵՂԵՑԻ ։

Հ։ Զի՛նչ է Եկեղեցի ։

Պ։ Եկեղեցին է ժողով հաւատացելոց ՚ի Ք՟ս Յ՟ս ։

Հ։ Ո՞վ է գլուխ նորա ։

Պ։ Նոյն ինքն Ք՟ս ։

Հ: Ո՞յք են փոխանորդք Քրիստոսի։

Պ: Առաքեալք և Եպիսկոպոսունք։

Հ: Ո՞վ է գլուխ Եկեղեցւոյ Հայաստանեայց։

Պ: Ընդհանուր գլուխ Եկեղեցւոյս Հայաստանեայց է Կաթուղիկոսն Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի՝ որ յաշխարհին Արարատայ. և է՛ նա խսկաբանչ փոխանորդ Քրիստոսի, և յաջորդ Լուսաւորչին Սրբ Հայրապետին մերոյ Գրիգորի։

Հ: Զ՞ինչ են նշանք ճշմարիտ Եկեղեցւոյ։

Պ: Սրբութիւն վարդապետութեան և հնութիւն արարողութեանցն՝ համաձայն Սբ Աւետարանին և աւանդութեան Առաքելոցն։

Հ: Զ՞ինչ են գլխաւոր շնորհք, զորս Հոգին Սուրբ պարգևէ Եկեղեցւոյ որդւոց։

Պ: Թողութիւն մեղաց, յարութիւն մարմնոց և կեանք յաւիտենական։

Հ: Քանի՞ են պատուիրանք Աստուծոյ։

Պ: Տասն, զորս Աստուած ետ Մովսէսի ՚ի Սինայ լերինն։

Հ: Զ՞ինչ է հիմն Աստուածային օրինաց։

Պ: Սէր Աստուծոյ, և սէր ընկերին։

Հ: Ո՞յք են ընկերք մեր։

Պ: Ամենայն մարդիկ՝ սիրելիք և ատելիք։

ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵԿԵՂԵՑՒՈՅ.

Հ: Քանի՞ են Խորհուրդք Եկեղեցւոյ։

Պ: Եօթն.

2402
Դ
A / 992
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ. Զ՞ինչ ներգործութիւնս առնեն այս Խորհուրդք։

Պ. Մկրտութիւնն սրբէ զմեզ 'ի սկզբնական մեղաց վերստին հոգևոր ծննդեամբ։

Դրոշմն հաստատէ զմեզ 'ի հաւատս Քսի Այ մերոյ։

Հաղորդութիւնն միաւորէ զմեզ ընդ Քսի ճաշակմամբ կենարար մարմնոյ և արեան նորա։

Ապաշխարութիւնն կամ Խոստովանութիւն պարգևէ մեզ զթողութիւն ներգործական մեղաց միջնորդութբ Քահանային։

Վերջին Օծումն առնէ մեզ զառողջութիւն հոգւոյ և մարմնոյ օծմամբ իւղոյն. զոր Հայաստանեայց մերս Եկեղեցի սովորաբար մատակարարէ 'ի Մկրտութեան զոյգ ըդ Դրոշմին իբր դեղ պատրաստական։

Կարգ Քահանայութեան։ Այս Խորհուրդ տայ պաշտօնէի եկեղեցւոյ զիշխանութիւն կատարելոյ զայլ Խորհուրդս, և զայնս մատակարարելոյ ժողովրդեան։

Պսակն որ առնէ զամուսնութիւն առն և կնոջ, որք ազատակամ դաշնադրութբ կապին 'ի մի հոգի և 'ի մարմին մի 'ի պէտս որդեծնութեան։

Հ. Զ՞ինչ խորհուրդք հաստատեցան յառաջ քան զգալուստն Քսի։

Պ. Թլփատութիւն և Զատիկ. որք միայն ստուեր էին խորհրդոց նոր Օրինաց։

Հ. Ա՞ռ ինչ պիտոյ էր Իսրայէլացւոց Թլփատութիւնն։

Պ։ Թլփատութիւնն տայր որոշել զսերունդն Աբրահամու յայլոց ազգաց ։

Հ։ Զի՞նչ էր Զատիկ ։

Պ։ Զենումն գառին, զոր Իս՟լացիք ուտէին 'ի յիշատակ ելանելոյ իւրեանց 'ի գերութ՟է Եգիպտացւոց ։

Հ։ Զի՞նչ գուշակէր գառն այն ։

Պ։ ԶՏէրն մեր Յս՟ Քս՟, որ զենաւ զնովին ժամանակաւ 'ի փրկութ՟ե մարդկան ։

ԶԱՆԱԶԱՆ ԿՐՕՆՔ

Քրիստոնէից եւ Աղանդք նոցա ։

Հ։ Ո՞ր է հնագոյն Եկեղեցին Քրիստոնէից ։

Պ։ Եկեղեցին Յունաց և Հռովմայեցւոց ։

Հ։ Վս՟ է՞ր Յոյնք բաժանեցան 'ի Հռովմայեցւոց ։

Պ։ Վասն զանազան պատճառաց, որոց գլխաւորքն են. նախ՝ զի Լատինք յաւելին 'ի Հաւատամքն զբանն և յՈրդւոյ, պնդելով թէ Հոգին Ս՟ ոչ միայն բղխի 'ի Հօրէ, այլ նաև յՈրդւոյ ։ Իսկ Յոյնք ցայսօր ուրանան զայն ։ Երկրորդ՝ զի Պապն Հռովմայ կամեցաւ վարել զիշխանութիւն իւր բացարձակ նաև 'ի վերայ նոցա. որոյ վասն նոքա իսպառ անջատեցան 'ի Հռովմայեցւոց ։ Երրորդ՝ զի Հռովմայեցիք սկսան հաղորդել զժողովուրդն ը՟ միով եւեթ տեսակաւ, այն է հացի ։ Կան եւս այլ տարաձայնութիւնք, որք ծագեցան հետ զհետէ 'ի մէջ այնց երկու Քրիստոնեայ ազգաց, որք առաւել վերաբերին առ արարողութիւնս քան առ վարդապետութիւնս հաւատոյ. եւ թէ 'ի բաց որոշեսցի վարդապետութեան Աւետարանին, որում՝ ջատագով գտան Լատինք. իսկ Յոյնք մերժեցին և մերժեն զայն ցայսօր.

Հ: Զի՞նչ կողմն կալաւ Եկեղեցին Հայոց 'ի յառնել այնց հակաճառութեանց:

Պ: Հայաստանեայց Եկեղեցին քաջ գիտելով, թէ որ ինչ հնագոյն է և առաքելական՝ այն իսկ է հաստատուն և ապահով, ջանացաւ անխախտ պահպանել զնոյն մինչև 'ի վախճան. և յետս կասեցաւ երկիւղածութեամբ՝ տարապարտ կողմնապահութեանց:

Հ: Զո՞րք մոլեցան ոմանք ընդդէմ խորհրդոյ ամենասուրբ Երրորդութեան:

Պ: Սաբէլ ուրացաւ զզանազանութիւն անձանց. Արիոս զնոյնութիւն համագոյութեան. Մակեդոն մերժեաց զհաւասարապատուութիւն Հոգւոյն Սրբոյ. Նեստոր բաժանեաց յերկուս զմի անբաժանելի անձն Քրիստոսի, ուրանալով միանգամայն զԱստուածութիւն նորա. Եւտիքէս շփոթեաց զերկուս բնութիւնս Քրիստոսի. որով և ինքն շփոթեցաւ.

Մարտինոս Լուտեր:

Հ: Ո՞վ ապստամբեցոյց յԵկեղեցւոյն Հռովմայ զմեծ մասն Քրիստոնէից ազգացն Եւրոպիոյ:

Պ: Մարտինոս Լուտեր Կրօնաւոր Գերմանացի 'ի կարգէ Հարց Օգոստինեանց ։ Տեսեալ նորա՝ թէ Պապք Հռովմայ 'ի բազում դիպուածս չարաչար վարէին զվեհագոյն իշխանութիւն իւրեանց , և եկեղեցական պաշտօնեայք նց՟ բազում անկարգութիւնս գործէին , եդ 'ի մտի նորոգել զԵկեղեցին , և չափ արկանել տարապայման իշխանութեան այն Հայրապետին ։ Բայց խորհելով՝ թէ որք միանգամ ձեռներէց գտան յայն գործ մեծ , պատուհասակոծ լեալ հալածեցան 'ի Պապից Հռովմայ . և գիտելով ևս թէ Յովհաննէս Հուս և Երոնիմոս Պրակացի յամի 1415 կենդանւոյն հրով դատեցան 'ի դոյն պատճառս , առ ժամանակ մի զսպեաց զեռանդն սրտի իւրոյ ։

Ընդ այն ժամանակս Լեւոն տասներորդ նըստեալ էր Պապ Հռովմայ . որոյ կամեցեալ յաւարտ հասուցանել զբազմածախս հոյակապ շինուած եկեղեցւոյն Պետրոսի Առաքելոյ՝ զսկըսեալն 'ի նախորդէ իւրմէ 'ի Յուլիոսէ երկրորդէ , և ոչ ուստեք մարթանալով գտանել զայնքան ծախս 'ի պէտս այնորիկ՝ հնարս հնարեաց 'ի սակս դրամոց արկանել զլիակատար ներողութիւնս Եկեղեցւոյ , և նոքօք 'ի յանկ հանել զայն մեծագործ շինուած ։ Նմին իրի ընտրեալ նորա զոմանս 'ի Կրօնաւորաց Դոմինիկեանց՝ առաքեաց 'ի տեղիս տեղիս , պատուէր տալով նոցա՝ զի փութով իմն առաքեսցեն առ ինքն զնուէրս ժողովրդեան ։ Սփռեալ նոցա աստ և անդ՝ կոչեցին 'ի խուռն ինչ միջոցի 'ի հաւատացելոց զդրամ բազում · զոր փոխանակ առաքելոյ 'ի Հռովմ՝ սկսան վատնել և ծախել 'ի պէտս անկարգս · որով ոչ սակաւ գայթակղեցուցանէին զժողովուրդն ։ Զայն տեսանել Լուտերի՝ ուրախ եղև յանձն իւր, և ժամանակ բարեդէպ համարեալ առ 'ի գլուխ տանելոյ զխորհուրդն իւր՝ բուռն եհար հրատարակել հարկեցուցիչ բանիւք զնանրութիւն այնց ներողութեանց, և նախատակոծ առնել զհեղինակսն ։ Այս եղև յամի 1517 ։ Իբրև լուաւ Պապն Լևոն զայնյանդուգն գործ Լուտերի՝ գրեաց առ նա բազում բանս ուղղութեան · իսկ նա ինչ ոչ անսաց նմա ։ Յայնժամ Պապն կոնդակաւ դատապարտեաց զնոր վարդապետութիւն Լուտերի · ընդ որ առաւել ևս զայրացեալ նորա, և պաշտպանեալ 'ի Կայսրընտիր Իշխանէն Սաքսոնից, և 'ի Համալսարանէն Ուիրդէմպերկայ՝ վեր-'ի-վայր տապալեաց զամ՛ զվարդապետութիւն Եկեղեցւոյն Հռովմայ, և բզմ՛ անարգանս գրեաց նաև ընդդէմ մեծի Հայրապետին Լևոնի ։ Իսկ Պապն անճարացեալ՝ նզովեաց յայնժամ զԼուտեր, և գրեաց առ Կայսրն Գերմանիոյ վաղվաղակի ձերբակալ առնել զնա և առաքել 'ի Հռովմ ։ Այլ Իշխանն Սաքսոնից թագոյց զԼուտեր զամիսս ինն յամրոցի իւրում, և ոչ ետ կատարել ըստ հրաման Պապին ։ Յետ որոյ 'ի յայտ երևեալ Լուտերի՝ իսպառ մեկնեցաւ յԵկեղեցւոյն Հռռովմայ, և նոր օրէնս և արարողութիւնս սահմանեաց՝ զբազմութիւն հպատակաց այնր Եկեղեցւոյ արար իւր համախոհ և հետևորդ ։

Հ. Յի՞նչ իրս գլխաւորաբար տարբերին Լուտերականք յայլոց Քրիստոնէից ։

Պ. Լուտերականք, Կալվինականք և այլ ամ՟ Նորակրօնք զերկուս խորհուրդս Եկեղեցւոյ միայն ընդունին . որք են՝ Մկրտութիւն և Հաղորդութիւն ։ 'Ի բաց հերքեն զամ՟ արտաքին արարողութիւնս Եկեղեցւոյ և զնորուն հանդիսաւոր զարդարս . խոտեն զբարեխօսութիւն սրբոց և զնոցին պատուական մասանց յարգութիւն ։ Արհամարհեն զծոմապահութիւնս պատուիրեալս և զվիճակ ամուրեաց, և զայլ ամ՟ կամաւոր ապաշխարութիւնս .

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ .

ՀԵԹԱՆՈՍՈՒԹԻՒՆ ,

որ է Դիցապաշտութիւն .

Հ. Զի՞նչ է Դիցապաշտութիւն .

Պ. Դիցաբանութիւն կամ Առասպելաբանութիւնն , որ 'ի Յունաց Միթոլոգիա ձայնի՝ է շարք ինչ առասպելեաց , որոց նախնի Յոյնք և Հռովմայեցիք հաւատս ընծայէին իբրև բարեպաշտ և անմոլար Ճշմարտութեանց .

Հ. Առ ի՞նչ պիտոյ է տեղեկութիւն այնց աստուածոց ։

Պ. Առ իմացուցմն ազգի ազգի հանճարիմաստ բանաստեղծուեց և գերօգտակար գրուածոց նախնեաց և նորոց, որք սեթևեթեալ են նոքօք իբրև ազդուագոյն օրինակօք և վայելչագոյն նըմանուեք զձաւս իւրեանց ։

Դիք առաջին կարգի ։

Հ. Ո՞վ էր հնագոյն 'ի մէջ Դիցն ։

Պ. Ուրանոս կամ Երկին ։ Սա էր որդի Ակմոնի, և այր Տիտեայ քեռ իւրոյ, այսինքն Երկրի․ յորմէ ծնաւ զերկուս որդիս՝ զՏիտան և զՍատուռն ։

Հ. Զի՞նչ պատմի զերկուց որդւոցն Ուրանոսի ։

Պ. Թէպէտև Տիտան էր անդրանիկն, այլ 'ի վերայ այսր տամի ետ եղբօր իւրում Սատուռնոսի զիշխանութիւն՝ զոր ունէր 'ի վերայ երկրի, այսու դաշամբ՝ զի նա ոչ զոք յարու զաւակաց իւրոց պահեսցէ կենդանի․ որպէս զի նոյն տէրութիւն յետոյ անցցէ 'ի Տիտանեանս ։ Հաւանեալ ընդ այս Սատուռնոսի՝ եկուլ զամ զարու զաւակս իւր մի զկնի միոյ․ ընդ որ դժկամակ դառեալ կին նորա Սիբելէ՝ որ և կոչի Ոպէս կամ Հռէա, յորժամ ծնաւ զԴիոս՝ որ և Արամազդ, հնարս խորհեալ ապրեցուցանել զնա՝ ետ առաջի որկորեայն Սատուռնոսի արձան մի քարեղէն իբրև զծնունդ իւր․ և նա եկուլ զայն առանց ստուգելոյ զիրն ։ Իբրև լուաւ զայն Տիտան՝ ետ պատերազմ ընդ եղբօր իւրում Սատուռնոսի, և գերի արար զնա հանդերձ կնաւն



Կռոնոս :



Յանոս :



Կիւբելէ :



Արամազդ :

Իսկ Դիոս ապրեալ և աճեցեալ մարտեաւ ընդ հօրեղբօր իւրում, և կորզեաց զծնողսն իւր 'ի ձեռաց նր՟ : Ապա կամելով կենդանացուցանել և զեղբարս իւր զկլեալսն յառաջնմէ 'ի հօրէ իւրմէ՝ արբոյց նմա ըմպանակ ինչ, որով փսխեցոյց զՆեպտունոս և զՊղուտոն : Հաստատեալ վերըստին Կռոնոսի յաթոռ իշխանութեան իւրոյ, և կասկածեալ զԴիոսէ զորդւոյ իւրմէ՝ խորհեցաւ սպանանել զնա. բայց Դիոս իրազգած լեալ՝ ընկէց զնա յերկնից 'ի վայր ընդ այլ Տիտանեանս : Անկեալն Կռոնոս ոչ այլուր եգիտ յայնժամ ինքեան տեղի ապաւինի, բայց եթէ առ Յանոս Արքային Իտալիոյ. առ որ դիմեալ՝ եգիտ 'ի նմանէ բազում շնորհս մարդասիրութե՟ ։

Արքայս այս նկարագրի ընդհանրապէս երկդիմակ՝ 'ի ցոյց մեծի խոհականութե՟ իւրոյ, որով դիտէ զանցեալն և զապագայն : Իսկ Կռոնոս նկարագրի իբրև զծերունազարդ ոմն սպիտակացեալ ալեօք՝ ունօղ զարծուի թեւս և զուրագ 'ի ձեռին : Այս է խորհրդաւոր նշան ժամանակին. որ է հնագոյն, վաղանցուկ և սպառիչ : Եւ Կիւբեղէ կին նորա նկարի իբրև կառավարիչ երկրի բազմեալ 'ի կառս, զոր բառնան երկու առիւծք. ունի և 'ի գլուխ իւր պսակ կամ թագ յօրինեալ յատամանց որմոց, և 'ի ձեռին զբաժակ առատութե՟ ։

Պետութիւն Արամազդայ :

Հ: Զ՞ինչ արար Արամազդ ՚ի ժամանակս իշխանութեան :

Պ: Յետ յաղթելոյ Արամազդայ Կռոնոսի հօր իւրում՝ բաժանեաց զՏէրութիւն իւր ՚ի մէջ եղբարց իւրոց . Պոսիդոնի կալաւ զիշխանութիւն ծովու . և Պղուտոնի դժոխոց . իսկ զԵրկինս և զծայրագոյն իշխանութիւն Արամազդ պահեաց ՚ի ձեռս իւր : Այլ նա ինքն ոչ կարաց ընդ երկար վայելել խաղաղութեամբ զայն իշխանութիւն գերագոյն . քանզի նախանձաբեկ լեալ որդւոցն Տիտանայ և Երկրի ընդ միահեծան թագաւորութեան նորա՝ մարտ եդուն ընդ նմա , և կամեցան յինքեանս գրաւել զայն : Եւ էին նոքա արք հսկայք , որոց գլուխն հասանէր մինչև յերկինս . և ոմանք ՚ի նոցանէ ունէին նաև զհարիւր բազուկս : Իսկ Արամազդ կոչեաց յայնժամ յիւր օգնականութիւն զայլ բազում չաստուածս , և նոքօք նուաճեաց զՏիտանեանս ընդ իւրև :

Յետ ժամանակաց աղմուկ շփոթի ծագեցաւ ընդ Արամազդ և ընդ բնակիչս Երկնի վասն ինչ ինչ պատճառաց . և մանաւանդ ՚ի սակս Պրոմեթեայ , որ կազմեալ էր մարդ մի ՚ի հողոյ և ՚ի ջրոյ , և տուեալ էր նմա հոգի հրեղէն և յափշտակեալ յերկինս : Դիոս ետ Պրոմեթեայ վասն յանդգնութեանն կուռել ՚ի ժայռ ինչ ՚ի լերինն

Կովկասու, եւ արձակեաց ՚ի վերայ նորա անգղ մի՝ զի անդադար կրծեսցէ եւ կերիցէ զմշտանորոգ աղիս նորա ։ Ապա նախանձեալ Դիոսն ընդ այն՝ զի Արամազդ սեփհականել էր ինքեան զիշխանութիւն ստեղծանելոյ զմարդիկ, կազմեցին եւ նոքա զգեղեցիկ կին մի. որում ետուն ՚ի պարգեւ զա՟մ կատարելութիւն, անուանեալ զնա Պանդորա, այսինքն Ամենապարգեւ ։ Արամազդ եւս յիւր դիմաց ետ ցնա զպարգեւ մի, որ էր անօթ հմայական ուժգին խփեալ, յորում կային ա՟մ չարաբախտութիւնք եւ թշուառութիւնք. Այլ նորա զգացեալ զդաւաճանութիւն՝ չէառ յանձն ընդունել զայն պարգեւ ։ Իսկ Եպիմեթեւս եղբայրն Պրոմիթեայ տեսանել զանօթն գեղեցիկ, եւ կարծելով զայն աման բարելից՝ մեծաւ յուսով եբաց զայն. եւ նոյն ժամայն թափեցան յերկիր թշուառութիւնքն լցեալ յայն աման. եւ այն ինչ փութացաւ նա վերստին խփանել զանօթն՝ այլ ինչ չէր մնացեալ ՚ի նմա, բայց միայն յոյսն՝ որ իջեալ կայր ՚ի յատակ անօթոյն.

Դիոս բաց ՚ի բազում կանանց՝ եած ՚ի կնութ՟ նաեւ զքոյր իւր Հերա, զոր միայն ընտրեաց կոչել թագուհի երկնից. յորմէ եւ ծնաւ Հեբէ զա՟ծուհին երիտասարդութեան, եւ Հեփեստոս զա՟ծն հրոյ ։ Ապա գարշեալ ՚ի տգեղ կերպարանաց Հեփեստոսի՝ կիցս արձակեալ ընկէց զնա յերկնից ՚ի վայր. եւ նա անկեալ ՚ի Կղզին Լեմնոս՝

հաստատեց անդ զգործարան դարբնութեան 'ի կազմել զկայծակն. և Կիկլոպեանք՝ որք հսկայաձևք և գագաթակնեայք էին գործաւորք նորա

Հերա նկարագրի իբրև չաստուածուհի գեղեցիկ և աշխոյժ, ունօղ առընթեր իւր զսիրամարգ թռչունն: Այս թռչուն էր նոյն ինքն Արգոս հարիւրաչեայն՝ կերպափոխեալ 'ի Հերա չաստուածուհոյն. որև յետոյ սպանաւ 'ի Հերմէս չաստուծոյն: Ծիածանն կամ Աղեղն Երկնի էր պատգամաւոր հրեշտակ նորա:

ՄԻՆԵՐՎԱ ԿԱՄ ԱԹԵՆԱՍ.

Հ. Ո՞Վ ԷՐ ՄԻՆԵՐՎԱ.

Պ. Մինէրվա, որ 'ի մէնջ Աթենաս կոչի՝ էր չաստուածուհի գիտութեան: Ըստ առասպելաբանելոյ Դիցաբանից յաւուր միում նեղեալ չարաչար Դիոսի 'ի սաստիկ ցաւոյ գլխոյն՝ հրամայեաց Հեփեստեայ ճեղքել տապարաւ զգլուխ իւր. որ իբրև կատարեաց զայն հրամանն՝ յանկարծ 'ի դուրս երևեցաւ անտի Աթենաս քաջ սպառազինեալ: Սա կոչի առ հասարակ Աթենաս, երբ նկարագրի իբրև չաստուածուհի գիտութեանց և արհեստից. և Պաղլաս ասի. 'ի մէնջ Նանէ, յորժամ համարի չաստուածուհի պատերազմի:

ԱՊՈՂՈՆ.

Հ. Ո՞Վ ԷՐ ԱՊՈՂՈՆ.

Պ. Որդի Արամազդայ և Լէտոնայ կամ Դէ-



Հեփեստոս :



Հէրա :



Մինէրվա :



Ապողոն :

ՏՈՆԱՅ. զորմէ այսպէս առասպելաբանեն նախնիք: Զչարեալ Հերա ընդ այն՝ զի Դիոս սիրեալ էր զԼատոն և յղացուցեալ՝ երդմնեցոյց զԵրկիր չտալ ուրեք Լատոնայ տեղի ծընանելոյ զմանկունս իւր. և կարգեաց նաև զվիշապ օձ մի ՊԻՒԹՈՆ անուն, զհետ լինել նմա ու՛ր և երթիցէ: Այլ Պոսիդոն չաստուած ծովու գթացեալ ՚ի նա՝ ՚ի վեր եհան ՚ի ծովէ նոր կղզի՝ կոչեցեալ ԴԵԼՈՍ, որ յայտնեալ թարգմանի. անդ ծնաւ Լատոն զԱպողոն. որ սպան յետոյ զօձն Պիւթոն: Սպան ապա Ապողոն և զԿիկլոպայս, կամ զԿիկլոպեանս, որք զշանթս կամ զկայծակունս կազմեալ էին Արամազդայ, որով նա սպան զԵՍԿՂԱՊԻՈՍ, կամ զԱՍԿՂԷՊԻՈՍ զորդի իւր, որ այնքան քաջակիրթն էր յարուեստն բժշկականութեան, մինչև զմեռեալս անգամ յարուցանել: Զայրացեալ ընդ այն Արամազդայ՝ ընկէց զԱպողոն յերկնից. և նա հարկեցաւ դառնալ հովիւ առ ԱԴՄԵՏԷ Արքային Փերէյացւոց ՚ի ԹԵՍսաղիա. ապա եղև և որմնադիր ընդ Պոսիդոնի, և շինեաց ընդ նմին զորմունս Տրովադայ:

Ըստ Դիւցաբանից Ապողոն էր չաստուած աւուր, և վարէր զկառս Արեգական. յայնժամ կոչէր ՓԵԲՈՍ: Իսկ լոկ անուամբ Ապողոնի համարէին զնա պետ ՄՈՒՍԱՅԻՑ, և չաստուած արուեստից և գիտութեանց. որպէս և բանաստեղծութեան, երաժշտութեան և բժշկականութեան:

Մուսայք.

Հ։ Ո՞յք էին Մուսայք։

Պ։ Մուսայք, որ և Յաւերժահարսունք՝ համարեալ լինէին դստերք Դիոսի և չաստուածուհւոյ յիշողականութեան՝ Մնեմոսինեայ. և սոքա էին թուով ինն. ա Կղիոն. բ Կալլիոպէ. գ Երատոն. դ Թաղիա. ե Մելպոմենէ. զ Տերպսիքորէ. է Եւտերպէ. ը Պօլիմնիա. և իններորդ Ուրանիա.

Անահիտ, կամ Արտեմիս.

Հ։ Ո՞վ էր Անահիտ.

Պ։ Անահիտ կամ Արտեմիս, և ըստ Լատ՟ Տիանա՝ էր քոյր երկուորի Ապողոնի, մեծ չաստուածուհի համարեալ Հայոց և բոլոր Ասիոյ. սա որպէս չաստուածուհի որսոյ՝ կոչէր Անահիտ. որպէս լուսնին՝ Փեբէ. և որպէս չաստուածուհի դժոխոց՝ Հեկատէ. Իսկ սա և վերակացու ծննդականաց իբրև զՀերա չաստուածուհին։

Դեմետրէ.

Հ։ Ո՞վ էր Դեմետրէ։

Պ։ Դեմետրէ կամ Դիմիտր, և ըստ Լատ՟ Չերէս՝ էր դուստր Կռոնոսի և քոյր Դիոսի, համարեալ չաստուածուհի արմտեաց և պտղաբերութեան երկրի. որպէս և անուանն իսկ ստուգաբանի առ Յոյնս՝ Երկիր Մայր։ Սա ուսոյց մարդկան ըզհողագործութիւն. և ունէր զդուստր մի՝ որ կո-



Կղիոն ։



Կալլիոպէ ։



Երատոն ։



Թաղիա ։



Մելպոմենէ։



Տերպսիքորէ։



Եւտերպէ։



Պօղիմնիա։

չէր Պերսեփոնէ․ զոր գտեալ 'ի դաշտի ուրեք Սիկիլիոյ սանդարապետն Պղուտոն՝ յափշտակեալ տարաւ 'ի դժոխս, առնել իւր հարսն։ Իսկ մայր նորա Դեմետրէ խնդրեալ զնա զօրն ողջոյն, և ոչ գտեալ՝ ելոյց ապա ջահս 'ի հրոյ Եթնայ լերին, զի և 'ի գիշերի շրջեսցի 'ի խնդիր դստեր իւրոյ։

Եւ յետ յածելոյ ընդ ա̃մ երկիր, իմացեալ՝ թէ նա 'ի սանդարամետս անդնդոց պահի՝ դիմեաց առ Պղուտոն, և յետ բազում աղաչանաց հաւանեցոյց զնա՝ զի զկէս տարւոյն ընդ նմա բնակեսցի 'ի ստորինս երկրի և զկէս այլ ընդ ինքեան Դեմետրեայ 'ի վերայ երկրի։

Ափրոդիտէ։

Հ։ Ո՞վ էր Ափրոդիտէ։

Պ։ Ափրոդիտէ, որ 'ի մեզ հնչի Փրփուր կամ Փրփրածին, և 'ի Լատինացւոց Վէնուս կոչի՝ էր չա̃ծուհի սիրոյ և գեղեցկուե̃, ծնեալ յարենէ Ուրանոսի՝ այսինքն Երկնի, և 'ի փրփրոյ ծովու։ Սա ունէր ասեն զերիս Շնորհս իւր ընկեր․ որք են՝ Ագլէա, Եփրոսինէ և Թաղիա․ այլև զերկուորդիս՝ զԿուպիդոն չա̃ծն սիրոյ և զՀիմէն չա̃ծն ամուսնուե̃։

Հերմէս։

Հ։ Ո՞վ էր Հերմէս։

Պ։ Հերմէս և ըստ Լատ․ Մէրքուրիոս՝

էր որդի Դիոսի և Յաւերժահարսին Մայեայ, դեսպան և սուրհանդակ Երկնի · որ սակս ունէր զԹեւս 'ի գլուխ և 'ի կոճս ոտից իւրոց · իսկ 'ի ձեռին զցուպ մի շարահիւսեալ յերկուց օձից ։ Էր սա և վերատեսուչ վաճառականութե և ա̃ծ պերճախօսութե, որպէս և աւազակութե ։ Սորա էր գործ տանել զհոգիս մեռելոց 'ի սանդարամետս դժոխոց ։

ՊՈՍԷԴՈՆ ։

Հ: Ո՞վ էր Պոսէդոն ։

Պ: Պոսիդոն, զոր Լատինք՝ Նեպտունոս կոչեն՝ էր որդի Կռոնոսի և Ռէայ ա̃ծուհւոյն, եղբայր Դիոսի և այր Ամփիտրիտէայ դստեր Ովկիանոսի ։ Զսա համարէին Յոյնք լինել ա̃ծ ծովու, զոր նկարագրէին նստեալ 'ի խեցի կառս բարձեալ յերկու ծովային երիվարաց, որոց կէս ստորին մասն էր ձկնակերպ · ունէր սա 'ի ձեռին զեռաժանի, որով իշխէր ջուրց · կերպարան ն̃ր փառահեղ և տրտմազգեաց · և Տրիտոն մի կառապետ նորա հարկանէր զգալարափող ։

ԲԱՔՈՍ կամ ԴԻՈՆԻՍԻՈՍ

Հ: Ո՞վ էր Բաքոս ։

Պ: Որդի Արամազդայ և Դեմետրեայ, կամ ը̃ այլոց Սեմելեայ · և ա̃ծ խաղողոյ և գինւոյ ։ Սիղենոս ծերունի ո̃մն գինեմոլ և պորտաբոյծ սնոյց զնա, և չոքաւ ը̃ նմա յաշխարհաւուն Հնդկաց ։



Հերմէս ։



Բաքոս ։



Պոսիդոն ։



Պղուտոն ։



Ուրանիա ։



Անահիտ ։



Դեմետրէ ։



Ափրոդիտէ ։

Հ. Ո՞յք երեւէին ծովու :

Պ. Նայադայք, Ներէիդեանք և Համադրեադք : Սք էին Յաւերժահարսունք ծովու, որոց կէս մասն էր օրիորդակերպ, և ստորին այլ կէս մասն ձկնակերպ . և էին ամենեքեան հոյլք հետեւակք թագուհւոյն իւրեանց, և շրջէին ընդ նմա յերեսս ջուրց : Զսոցանէ առասպելէին նախնիք՝ թէ այնքան քաղցրանուագ երգէին, մինչև ելեալ յերեսս ջուրց՝ զմոլորեցուցանէին զնաւորդըս, և թմբեցուցեալ զնոսա՝ վտանգէին զնաւն :

Հ. Ո՞վ էր Ա՟ծ ստորերկրայոց :

Պ. Պղուտոն էր սանդարապետ կամ թագաւոր դժոխոց, զոր նկարէին որպէս այր խոժոռադէմ և ահեղատեսիլ նստեալ 'ի կառս, զոր քարշէին չորս սեաւ երիվարք . ունէր սա և 'ի ձեռին զեռաժանի և զփականս դժոխոց : Իսկ դժոխք բաժանեալ էին յերկուս, 'ի յԵլիսեան դաշտս և 'ի Տարտարոս : Ելիսեան դաշտքն համարէին լինել պարտէզք զուարճալիք բնակելոյ 'ի հոգւոց արդարոց . իսկ Տարտարոսն՝ տեղի սարսափելի, ուր տանջէին հոգիք մեղաւորաց : Հինգ լիճս դնէին 'ի ստորինս նախնիք . զորս կոչէին՝ Աքերոն, Կոկիւտ, Փլեգեթոն, Լեթէայ և Ստիւգոս : Քարոն որդի գիշերոյ արկանէր զհոգիսն 'ի նաւակ մի, և տանէր 'ի դժոխս : Կերբերոս շուն եռագլուխ էր դռնապան այնց վայրաց, կարգեալ 'ի Պղուտոնէ առ զ'ի ներքս եկեալսն ընդունելոյ, և արտաքս ելանել ումեք չտալոյ թոյլ : Եաքոս, Մինոս և Ռադամանթոս էին դատաւորք · և կատաղիքն Տիսիփոնէ, Մեգերա և Ալեկտոն ունէին զհոգ տանջելոյ զդատապարտեալս : Էին 'ի սանդարամետս անդնդոց և երեք քորք, որք մանէին զաւուրս կենաց մարդկան · և նոցա անուանքն էին՝ Լաքեսիս, Կղոթոն, Ատրոպոս :

Հ : Ո՞վ էր աստուած պատերազմի :

Պ : Մարտ · Լատ · Մարս : Սա էր որդի Դիոսի և Հերայ աստուածուհւոյն, զոր նկարէին նախնիք որպէս քաջ սպառազինեալ ոմն ունող 'ի ձեռին զնիզակ և զվահան, և 'ի գլուխ իւր զսաղաւարտ : Այլ երբեմն նկարագրէին զնա բազմեալ 'ի կառս, յորմէ իբր թէ խոյացեալ յարձակեսցի 'ի վերայ թշնամեաց :

Աստուածք երկրորդ կարգի :

Հ : Ո՞յք էին սոքա :

Պ : Երևելագոյնքն 'ի նոցանէ էին՝ Վերտումնոս աստուած աշնան, որ էառ զկերպարան պառաւ կնոջ առ 'ի հրապուրել 'ի կամս իւր զոմն 'ի Յաւերժահարսանց Պոմոնա անուն՝ աստուածուհի պտղոց · Փլորա աստուածուհի ծաղկանց, որոյ տարփածու էր Զեփիւռոս քաղցրասիւք հողմն գարնան · Փան աստուած խաշանց, նկարեալ իբրև մօրուսաւոր ոմն, որոյ եղջիւրքն և ոտքն էին նման խոյի · և սորա էին ընկերք՝ Փաւնեանք և Սատիրեանք : Առաց 'ի սոցանէ էին և չա̃ծք ընտանիք՝ հոգատարք ներքին պահպանութե̃ տանց, զորս կոչէին Լարէսք . և Լատինք Բենատէսք ։ Սոմնոս էր չա̃ծ քնոյ, որում հնազանդէին երազք . Մորփէոս՝ չա̃ծ խեղկատակութե̃ . Կոմոս՝ խոհարարութե̃ . և Թեմիս՝ չա̃ծուհի արդարութե̃ ։ Այլև Աստրէա էր չա̃ծուհի հաւատարմութե̃ . Բելլոնա՝ պատերազմի . Վեստա՝ հրոյ . Էոլոս՝ հողմոց . և այլք բազումք ։ Առաքինութե̃ք և մոլութե̃ք եւս չաստուածացեալ էին առ առասպելաւէր նախնիս . արդարութիւն, բախտն, միաբանութիւն, երկպառակութիւն, և այլ սոցին նմանք եւս ունէին առ նոսա մեհեանս և սեղանս ։

Բանաստեղծք հանճարեցին զայսպիսի այլաբանական չաստուածս, որքան հարկ եղև նոցա առ 'ի շքեղ ընծայելոյ զգրուածս իւրեանց ։

Կիսա̃ծք և Դիւցազունք ։

Դիցամոլ Կռապաշտք կիսա̃ծ անուանէին զայն դիւցազունս, որք ծնեալ էին 'ի մարդոյ և 'ի չա̃ծոյ . և կամ զորս տեսանէին առաւելեալս ինչ ինչ կատարելութե̃ ։

Հ: Ո՛յք էին երևելագոյնք 'ի նոցանէ ։

Պ: Պերսէոս, Հերակլէս, Թեզէոս, Կաստոր, Պողիւքս և Յասոն . զորոց մի մի համառօտ ստորագրեսցուք ։

Պերսէոս ։

Արամազդ հայր չա̃ծոց կամելով տեսանել

զԴանայէ զդուստրն Ակրիսիոսի արքային Արգիւոյ, զոր հայր իւր 'ի դիպահոջ պահէր 'ի պղնձի աշտարակի միում յայն սակս՝ զի Դիւք գուշակեալ էին՝ թէ ունէր նա մեռանել ձեռամբ որդւոյ դստեր իւրոյ, փոխեցաւ յոսկի անձրև. և մտեալ առ նա՝ ծնաւ 'ի նմանէ զդիւցազն Պերսևս, զոր Ակրիսիոս հաւ նորա խփեաց 'ի մէջ տփոյ և ընկէց 'ի ծով ։ Ձկնորսք ոմանք գտեալ զնա սնուցին . և նա յետ ժամանակաց առանց գիտելոյ սպան զհաւ իւր ։ Հերմէս պաշտպանեաց զՊերսևս . և նա հեծեալ 'ի հրեղէն ձի Փեգասոս անուանեալ, և ունելով ընդ իւր զվահանն Պալլաս չա՟ծուհւոյն՝ եհատ զգլուխ Մեդուսայի, որոյ հերքն էին օձային, և ունէին զզօրութ՟ 'ի քար փոխելոյ զ'ի նոյն հայեցողսն ։ Այնու գլխով Պերսևս կերպափոխեաց յապառաժ զԱտլաս զարքայն Մաւրիտանիոյ, և զերծոյց զԱնդրոմեդէ, որ եդեալ էր յեզր ծովու 'ի կուր վիշապի միոյ ։ Այնսա 'ի քարինս այլափոխեաց զՓինէաս և զա՟մ ընկերս նորա, որք կամէին յափշտակել զԱնդրոմեդէ զսիրուհին իւր ։ Սա դասեցաւ ը՟ համաստեղութ՟ս երկնից ։

Հերակղէս, կամ Հերակլէս, որդի Ալկմենէ ։

Սա ծնաւ յԱրամազդայ և յԱղքմենայ ։ 'Ի հալածել Ռէա չա՟ծուհին զա՟մ կանայս Դիոսի, իբրև լուաւ զծնանիլ Հերակլի, առաքեաց զեր-



Պերսեւս ։



Հերակլէս ։



Կաստոր եւ Պողիդեւկէս ։



Յասոն ։

կուս օձս առ 'ի կլանել զնա . որ մինչդեռ էր յօրորոցի` հեղձամղձուկ արար զնոսա ։ [illegible] ընդ այն Ռէայ չա̃ծուհւոյն` դրդեաց զեղբայր Հերակլի զԵւրիստէոս` զի սպանցէ զնա . և Եւրիստէս յանձն առեալ զայն` էարկ դխանօրէն զեղբայրն իւր 'ի բազում վտանգս մահու , յորոց ա̃մէ նա փառօք զերծաւ ։ Ապա հրամանաւ իսկ անագորոյն եղբօր իւրոյ արին Հերքուլէս կալաւ և սատակեաց զվիթխարի առիւծն անտառին Նեմիոյ . սպան զեօթնգլխեան հիդրայն անտառին Հերիմանտիոյ . 'ի փախուստ դարձոյց ըզՀարպայս , որք ծածկէին զլիճն Ստիմփաղայ . յաղթեաց քաջուբ̃ արիամարտ կանանց Ամազոնեանց , և սատակամահ կացոյց զԴիոմիտէս զարքայն Թրակիոյ , որ մնուցանէր զերիվարս իւր մարմնով օտարաց և հիւրոց ։ Սոյն սա 'ի ձեռս եբեր զոսկի խնձորն` որ 'ի Հեսպերեան պարտէզսն , սպանեալ զահագին վիշապն` որ պահապանն էր այնց դրանց . էջ և 'ի դժոխս , և եդ 'ի չղթայս զԿերբերոս եռագլխի գազանն , և զերծոյց ըզԹեսևս զբարեկամ իւր . սատակեաց զԿակոս զերևելի աւազակն . խեղդամահ արար հուչակաւոր մենամարտուբ̃ զանպարտելին Անթէոս զորդի Երկրի , որ քանիցս խոնարհեալ շօշափէր զյատակ երկրի` անդէն անդ զօրանայր . նուաճեաց զցուլ ամեհի` որ կայծակունս հրոյ 'ի բերանոյ և յռնգաց արձակէր . պատառեալ յերկուս բաժանեաց և զլեառն մի : Յետ այսքան մեծամեծ յաղթանակութեանց՝ Սէրն միայն յանարգանս մատնեաց զդիւցազն Հերակլէս : Քանզի հարեալ նորա 'ի սէր Հոմփաղեայ՝ ինչ ոչ ամօթ համարեցաւ անձին զգենուլ 'ի հաճոյս նորա զհանդերձ կանացի , և առնուլ 'ի կեր փոխանակ զինուց զաղեկատըն և զիլիկս : Ապա եած 'ի կնութիւն զԴէյանիրէ զդուստր արքային Ենեայ . և նա առաքեաց առ Հերակլէս զարիւնաշաղախ հանդերձ մի կախարդեալ բժժանօք Նէսոսի , մինչդեռ նա զոհս մատուցանէր 'ի լերինն Էտայ : Յայս արիւն Հերքուլէս եթաց զսլաքս իւր , որով սպան զձիացուլն զայն՝ որ կամէր յափշտակել զտարփածուն իւր զԴէյանիրէ : Բայց յետ ծնանելոյ Հերակլեայ զորդի մի 'ի Նամանէ՝ հովացաւ 'ի սիրոյ նորա . և քանզի Նեսոս 'ի մեռանիլ իւր տուեալ էր Դէյանիրեայ զայն պատմուճան , ստուգելով նմա՝ թէ անհնար էր Հերակլեայ 'ի զգենուլ զայն՝ չվառիլ գլխովին 'ի սէր նորա , նմին իրի ետ նմա Դէյանիրէ զգենուլ զայն պատմուճան . և նա իբրև զգեցաւ՝ անկաւ յախտ չարատանջ , և ցնորեալ մտօք՝ ընկէց զանձն 'ի խարոյկ հրոյ և այրեցաւ . Զսա աստուածք ընկալան 'ի դասս դիւցազանց : Արտաշէս Բ զորա արձան պղնձաձոյլ ոսկեզօծ բերեալ 'ի Հայս՝ կանգնեաց 'ի տեղին Վահեվահեան :

ԹԵՍԷՈՍ :

Թեսէոս կամ Թեսևս որդի ԵԳԷՈՍԻ արքային Աթենացւոց և ԵԹՐԱՅ՝ 'ի հասանել յարբունս հասակի՝ գնաց գտանել զհայր իւր : ՄԵԴԷԱ հռչակաւոր կախարդուհի ոմն կամեցաւ ամուսնանալ ընդ Եգէոսի, և հետամուտ լեալ Թեսէոսի՝ այն ինչ մերձ էր 'ի կորուսանել զնա՝ հայր նորին Եգէոս ապրեցոյց զնա : Թեսևս էր մտերիմ բարեկամութ̃ կապեալ ընդ քաջին Հերակլեայ և Պերիթոսի արքային Լապիթաց · որում ձեռնտու լեալ Թեսևս հանդերձ Հերակլիւ՝ ազատեաց զՀԻՊՊՈԴԱՄԷ զդուստր Ադրակայ 'ի ձեռաց Կենտաւրոսաց · (սոքա էին ձիացուլք և յուշկապարիկք) , որք 'ի ժամանակի հարսանեաց կամէին յափշտակել զնա : Այնու սա էջ ընդ բարեկամի իւրում Պերիթոսի 'ի Տարտարոսն առ 'ի կորզել զՊերսեփոնէ զկին Պղուտոնի սանդարապետի · այլ ընդ հասանել ն̃ց մ̃տ առ դուրս՝ Պերիթոս սատակեցաւ 'ի Կերբերոսէ, որ էր շուն եռագլխի պահապան դրանց դժոխոց · և Թեսևս վտանգեալ ըմբռնեցաւ 'ի ներքս անդ · մինչև եկեալ Հերակլեայ ազատեաց զնա :

Երևելի գործք քաջութ̃ Թեսէոսի են սպանումն ՓԱՂԱՐԻՍԻ բռնակալին Ակրականդացւոց , որ նորահնար իմն տանջանարանաւ այրէր զօտարականսն · ՍԿԻՐՈՆԻ , որ ընկենոյր 'ի ծով զմարդիկ · և Պրոկրուստէսի նշանաւոր աւազակին, որ ծայրատէր զոտս այնոցիկ, զորոց հասակ երկայն քան զչափ իւր անկողնոյն գտանէր ։ Նոյն և սպան սա զՄինոտաւրոսն զայն, առ որ Աթենացիք յիւրաքանչիւր ամի առաքէին զբազում պատանի ուստերս և դստերս 'ի կուր նորա, 'ի պատիժ սպանման Անդրոգէոսի որդւոյ Մինովսայ արքային Կրետացւոց ։

Կաստոր և Պողիդևկէս ։

Սորա ծնան 'ի Դիոսէ և 'ի Լեդայ ։ Կաստոր հռչակաւոր եղև 'ի սանձել ճարտարուբ՟ զերիվարս ամեհիս · և Պողիդևկէս, զոր Լատինք Պօլլուքս անուանեն՝ նշանաւոր գտաւ 'ի մարզումն ըմբշամարտուե՟ ։

Զսոսա նկարէին նախնիք երիտասարդական կերպարանաւ, որոց իւրաքանչիւրն ունէր 'ի ձեռին զսանձ ձիոյ, և 'ի գլուխ զփոքրիկ աստղ ։ Նաւավարք կարդային զսոսա յօգնուն՟ ինքեանց 'ի ժամանակի ալէկոծուե՟ ծովու ։

Յասովն ։

Սա էր որդի Եսոնայ արքային Թեսաղացւոց ։ Պելիաս հօրեղբայր նորա բռնի նստեալ յաթոռ թագաւորուե՟՝ դարանօք խնդրէր բառնալ զՅասովն 'ի կենաց · որոյ աղագաւ հրամայեաց նմա գնալ 'ի Կողքիս առ 'ի կորզել զգեղմն ոսկի, որ էր ընդ ձեռամբ Այետայ արքային Կողքիսաց՝ կախեալ զծառոյ , և պահպանեալ 'ի մշտարթուն գազանէ միոջէ, և 'ի հրաշունչ ցլուց . Յասոն եղև առաջնորդ Արգոնաւտաց . որոց ընկերացան նաև Կաստոր , Պողլուկէս , Թեսևս և Հերակլէս . Որփէոս կամ Որփեւս քաջ քնարածուն ուրախ առնէր զճանապարհորդութիւն նոցա ։ Եւ իբրև հասին նոքա անդ՝ Յասոն հարաւ 'ի սէր Մեդեայ դստեր արքային Կողքիսաց . և զինա էր նշանաւոր կախարդուհի ոմն՝ միջնորդութեամբ նորա Յասոն սատակեաց զցուլս , Թմբրեցոյց զվիշապ գազանն , և յափշտակեաց զայն ոսկե գեղմն ։ Ապա 'ի դառնալ իւրում՝ անտի Յասոն՝ յափշտակեալ և զտռփածուն իւր զՄեդէ՝ էած էր իւր 'ի Թեսաղիա , և արար իւր կին ։ Իսկ յետ ծնանելոյ 'ի նմանէ որդիս՝ անտես արար զնա Յասոն և ամուսնացաւ ընդ Գլաւկեայ դստեր արքային Կորնթացւոց ։ Զայրացեալ Մեդեայ ընդ ապերախտութեան Յասոնի և դրդուեալ 'ի վրէժխնդրութիւն՝ այրեաց զԳլաւկեա և ընդ Կրեոն զհայր նորին . սպան և զզաւակս իւր ընդ ծնեալսն յապաշնորհ Յասոնէ , և խոյս ետ յԱթէնս . ուրանօր ամուսնացաւ ընդ Եգէոսի որդւոյ Պանդիոնի .

Աքիլլէս ։

Սա է հռչակաւոր դիւցազն՝ ծանուցեալ ընդ ամենայն աշխարհ և արքայ Թեսաղացւոց , որ բազմօրինակ քաջութիւնս արար 'ի Տրոյական պատերազմին ։ Զսմանէ առասպելեն նախնիք՝ թէ սնաւ 'ի Քիրոնէ ձիացլոյ ուղղովք առիւծուց ․ և 'ի ծնանիլն ասեն մայրն ընկղմեաց զնա 'ի Ստիւգեան լիճ ․ որով եղև անխոցելի, բաց 'ի գարշապարացն, ուր խոցեալ՝ սպանաւ հուսկյետոյ ։

Վահագն ։

Էր սա որդի Տիգրանայ Երուանդեան՝ այր զօրեղ և անուանի յոյժ, որ հանդոյն Հերակլեայ այնքան գործս քաջութեան եցոյց, մինչև Հայք և Վիրք արձան կանգնեցին յանուն նորա, և այնպէս աստուածացուցին զնա ։

ՊԱՏԵՐԱԶՄ

Տրոյեայ կամ Իլիոնի ։

Գերահամբաւեալ է յոյժ առ արտաքին մատենագիրս Յունաց և Հռովմայեցւոց պատերազմն Տրովադայ դիպեալ 'ի ժամանակս այնց դիւցազանց ․ յորոյ վերայ Հոմերոս իշխանն բանաստեղծից յօրինեաց զայն անհամեմատ և սխրալի զիւր տաղաչափութիւն, որ դեռևս մի միայն յատկացեալ փայլէ 'ի մէջ ամենայն ազգաց աշխարհի ։ Այս պատերազմ եղև 'ի պատճառս կորզելոյ Պարիսայ որդւոյ Պրիամոսի արքային Տրոյացւոց զՀեղինէ զկին Մենելաւոսի իշխանին Սպարտիոյ՝ ընդհռչակեալն գեղեցկութեամբ ։ Ամենայն թագաւորք և իշխանք Յունաց զօրաժողով լեալ դրդուեցան 'ի վրէժխնդրութ̃ն : Ագամեմնոն արքայն Միկենաց եղբայր Մենելաւոսի ընտրեցաւ Սպարապետ համօրէն միաբանեալ զօրաց այնոցիկ : Պաշարումն այնր քաղաքի տեւեաց զամն տասն . և Յոյնք հուսկ յետոյ մտին անդր այսպիսի իմն դաւով : Շինեցին ինքեանց երիվար մի փայտակերտ՝ մեքենայ մեծ և անճոռնի , և զոտս այնր երիվարի անուաւոր կազմեալ՝ ղօղեցան 'ի փոր նորա ոմանք զինակիրք 'ի քաջաց անտի . և նովաւ խաղացեալք 'ի ներքս՝ յանկարծ 'ի դուրս երևեցան , և զսուր 'ի ձեռին յարձակեալք 'ի վերայ բնակչացն՝ սկսան կոտորել զնոսա . յայնժամ զեղան և այլ բազմութիք 'ի Յունաց 'ի ներքս 'ի քաղաքն, և ետուն սրոյ ճարակ՝ զոր միանգամ գտին . և տիրեալ քաղաքին՝ աւար հարին զամ̃ և այրեցին : Սպանին և զՊրիամոս և զորդի նորա զՊարիս . և Մենելաւոս ինքնին սպան զՀեղինէ զկին իւր , յորոյ 'ի պատճառս այնքան չարիք ծագեցան

Իսկ Ենէաս մաղապուրծ զերծեալ քանի մի արամբք 'ի զարհուրելի կոտորածէ անտի՝ չոքաւ յԻտալիա, և շինեաց անդ քաղաք մի՝ զոր կոչեաց Լաւինիոն :

Եւ երևելիքն 'ի Յունաց՝ որք գտան յայնմիկ պատերազմի՝ էին Ագամեմնոն, Մենելաւոս , Աքիլլէս , Դիոմեդէս , Այաս , Ոդիսևս՝ որ և Ուլիսէս . որք ը̃ մեծի մասին չարաչար վախճանուին մի զկնի միոյ : Պատաւ 'ի մարտի անդ և նահապետն մեր Զարմայր՝ հզօրն ՚ի հանդէս արութեան, ընդ հրաւիրելոյ նորա ՚ի Պրիամոսէ Արքայէ . որ ՚ի դիմի հարեալ մարտիւ քաջին Աքիլլեայ՝ սպանաւ ՚ի նմանէ : Այս պատերազմ սկիզբն կալաւ յամի ստեղծման աշխարհի 2810, 1190 ամօք յառաջ քան զգալուստն Քրիստոսի :

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.

ՄԱՀՄԷՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ :

Հ: Ո՞վ հաստատեաց զՄահմետականութիւն :

Պ: Մահմետ կամ Մուհամմետ՝ որդի Ապտուլլահայ և Ամինեայ, ծնեալ յամին 612 ՚ի Մեքքայ քաղաքի յապառաժն Արաբիա : Մինչդեռ էր սա ՚ի տիս մանկութեան՝ կորոյս զծնողս, և մնաւ առ հօրեղբարս իւր, որոց անուանք են՝ Ապուտալէպ, Աբբաս և Համզայ : Եւ երբև աճեալ զարգացաւ՝ գունդ կազմեալ տիրեաց բազմաց ՚ի կողմանս Արաբիոյ . և որ քան զոր զօրացեալ ընդարձակեաց զտէրութիւն իւր : Զհետ սորա գնացին նախ Սարակինացիք և Հագարացիք . ապա Պարսիկք և ազգն Թուրքաց, և Սկիւթացիք, և այլ բազում ազգք բարբարոսք : Մեռաւ սա յամի իբր 631, և թաղեցաւ ՚ի քաղաքն Մետինայ . Թողեալ ազգի իւրում զգիրք մի Կուրան անուն, յորում դասանին ամենայն օրէնք և արարողութիւնք կրօնի նորա : Թլփատութիւն, զոհագործութիւն, ծոմապահութիւն, զոր Ռամազան կոչեն՝ լուացումն և աղօթք հնգից յաւուրն՝ են գլխաւոր մասունք Մահմետականութեան :

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ ։
ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ։

Հ ։ Զի՞նչ է Կռապաշտութիւն ։

Պ ։ Կռապաշտութիւն է պաշտօն՝ զոր մարդիկ կուրուք մատուցանէին կռոց , արձանաց և այլ անբան արարածոց փոխանակ Արարչին երկնից գերագոյն Էին ։ Այս է չարաչար մոլորութիւն , յոր անկան գրեթէ ամենայն ազգ աշխարհի , ևս և Հրեայք , որք երբեմն երբեմն զթիկունս դարձուցեալ յԱստուծոյ ճշմարտէ՝ յայսպիսի ցնորս ըմբռնեալ մոլեցան ։ Այլ մարթ ինչ է ասել , թէ իմաստունք 'ի մարդկանէ յարաժամ արհամարհեցին զայս . իբր զի եթէ արտաքուստ ցուցանէին զնշան ինչ յարգութեան կամ երկրպագութեան անբան արարածոց , 'ի սրտէ գիտէին զայն վերառաքել առ աներևոյթ զօրութիւն ինչ՝ որ կայր պարունակեալ 'ի նոսա ։

ԾԱՂԻԿ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ.

Հ. Զի՞նչ է փիլիսոփայութիւն:

Պ. Փիլիսոփայութիւն ըստ ստուգաբանութեան է սէր իմաստութեան. զոր մեք կոչեմք Իմաստասիրութիւն: Իսկ ըստ որում գիտութիւն՝ է ուսումն բնութեան և բարոյականութեան հիմնեալ ի վերայ քննութեան, փորձառութեան և տրամախոհութեան:

Հ. Ի քանի՞ մասունս բաժանի փիլիսոփայութիւնն:

Պ. Ի չորս գլխաւոր մասունս. որք են՝ ա. Տրամաբանութիւն. բ. Բարոյական. գ. Համբնաբանութիւն. դ. Բնաբանութիւն:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Հ։ Զի՞նչ է Տրամաբանութիւն։

Պ. Տրամաբանութիւն է գիտութիւն կամ արհեստ ուղիղ խորհելոյ կամ թէ պատշաճի 'ի գործ դնելոյ զբանական կարողութիւն. որ լինի՝ ուղիղ սահմանելով, բաժանելով և եզրակացուցանելով։

Հ։ Քանի՞ ձև է Տրամաբանութեանն.

Պ. Կրկին. բնական և արհեստական։ Բնական ասի՝ երբ առաջնորդութեամբ ընդաբոյս զօրութեան միայն տրամաբանէ ոք՝ առանց գիտելոյ զկանոնս, որք յայն սակս աւանդին. իսկ արհեստականն է, որ առաջի դնէ զամենայն կանոնս հանեալս 'ի բնական լուսոյ և յուշադրութենէ մարդկան, առ 'ի յաջողապէս բերել 'ի քննութիւն իրաց, և համարձակ զայնցանէ տրամախօսել։ Եւ այսմ պիտոյ է ընթերցմունք, դատողութիւն, տրամախոհութիւն և Մեթոդոս։

Հ։ Զի՞նչ օգուտ յառաջ գայ 'ի Տրամաբանութենէ։

Պ։ Առանց Տրամաբանութեան անհնար է զլաւն որոշել 'ի յոռւոյն, և զստոյգն 'ի ստոյ։ Ուստի ամենայն իրաւամբ այս գիտութիւն համարի հիմն և սկիզբն ամենայն մակացական գիտութեանց։

Զ Բարոյականն և զՀամաբնաբանութիւն առ համառօտութեան թողումք այլ ուրեք գտանել և ընթեռնուլ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.
ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Հ։ Զի՞նչ է Բնաբանութիւն։

Պ։ Բնաբանութիւն է գիտութիւն՝ որ աւանդէ ըզբնական իրս, զյատկութիւնս մարմնոց, և զօրէնսն՝ որովք նոքա վարին։ Բնական պատմութիւնն է մասն այսր գիտութեան. որ առաջի առնէ մեզ զներգործութիւնս բնութեան, և զյատկութիւնս իւրաքանչիւրոց՝ որովք տարորոշին յիրերաց։

Հ։ ՚Ի քանի՞ դասս ընդհանրապէս բաժանին մարմինք։

Պ։ ՚Ի չորս. ՚ի տարրականս, ՚ի հանքայինս, ՚ի բուսականս, և ՚ի կենդանականս. զորովք պատմէ Բնաբանութիւնն.

Տարերք.

Հ։ Զի՞նչ են Տարերք.

Պ։ Տարերքն են պարզ մարմինք սկզբունք բաղադրութեանց ամենայն ենթալուսնեայ մարմնոց, և գոյաւորիչք անզգայից և զգայնոց։

Հ։ Քանի՞ են Տարերք։

Պ։ Չորս. Օդ, Ջուր, Հուր և Հող։

Հ։ Զի՞նչ են գլխաւոր որակութիւնք օդոյ.

Պ։ Ջերմութիւն, ցրտութիւն։ խոնաւութիւն և չորութիւն։

Օդ.

Հ։ Զի՞նչ է Օդ.

Պ. Օդն է մարմին հեղուկ, ձայնահան, անհոտ, անգոյն, թափանցիկ, անօսր և առաձգական, զոր մեք անդադար շնչեմք, որով և կեանք ։ Օդն ըստ փորձառութեան բնաբանից է 850 անգամ թեթևագոյն քան զջուրն . այլ և յստակագոյն և պարզագոյն . որպէս և բնութեամբ խոնաւ և միջասահման ջերմ ։ Ասի հեղուկ . վասն զի պարբերի իբրև զջուր աստ և անդ, պահելով զհաստատուն յօժարութիւն առ իւր սեփհական հաւասարակշռութիւն ։ Ասի ձայնահան . զի ընդհարեալ ընդ այլոց առարկայից՝ ձայնս արձակէ, և տայ նոցա ևս կրկնել զձայն և ստուարանալ ։ Ասի և առաձգական . զի ՚ի կարի իմն փոքրիկ քանակ կարէ ճնշիլ և ամփոփիլ . որպէս և յանհնարինս ընդարձակիլ և անդայտանալ . մինչև լինել զբիւրապատիկ մեծագոյն միջոցս՝ քան զիւր բնաւոր քանակ ։ Առ հասարակ Օդն ճնշի ցրտութեամբ և ձգտի ջերմութեամբ ։

Մետէորայք ։

Հ. Զինչ է Մետէորայն ։

Պ. Մետէորայք ստուգաբանին՝ ՚ի Բարձրացեալ երևելեալ կամ՝ յօդս վերացեալ . և է այն ամենայն ծնունդ՝ որ տարրանայ յօդս, և երևի ընդ լուսնիւ ։ Առ հասարակ երեք ազգ են Մետէորայից, օդայինք, ջրայինք և հրայինք . ընդ որս և դասին որք լինին ՚ի հող և ՚ի ջուր ։

Հ. Զորք են օդայինք Մետէորայք ։

Պ. Մետէորայք կամ բաղկանան 'ի միջէ տարրէ ևեթ որակութ՟ այլոց այլայլելոյ. որպէս ջուրն անօսրեալ իբրև զօդ` լինի ամպ և շոգի. և կամ բաղկանան 'ի բազմաց, բայց ոչ բարուք ը՟ միմեանս խառնելոյ. և վ՟ այնդիւրին է նոցա դառնալ յառաջին որպիսութի՟. որպէս ձիւնն խառնեալ 'ի ջրոյ և յօդոյ` դիւրաւ լուծանի 'ի սոսա.

Հ. Ո՞ՐՔ ԵՆ ՏԵՍԱԿՔ ՄԵՏԷՈՐԱՅԻՑ.

Պ. Սեփհական նիւթք Մետէորայից են ծուխք ինչ, որք 'ի հողոյ և 'ի ջրոյ վերանան յօդըս. և շոգիք կոչին որք ելանեն 'ի ջրոյ. և որք 'ի հողոյ` գոլորշիք. Իսկ քանզի 'ի հողն ոմանք են անբերք և մոխրք, և ոմանք կպրաւորք, բորակոտք, պարարտք և իւղաւորք, այնպէս և 'ի գոլորշեաց ասսի ոմանք պարարտք են, ոմանք չորք, ոմանք կպրաւորք, ոմանք ծծմբայինք ևայլն. Ի ծծմբայնոց և յիւղաւորաց լինին Մետէորայք հրեղէնք. որպէս ԿԱՅԾԱԿՔ. և կամ ԳԻՍԱՒՈՐ ԱՍՏԵՂՔ, ԿԱՅԾԱԿԱՆՔ, և ՇՈՂՇՈՂԱԿԱՆՔ.

Հ. Ո՞ՐՆ Է ՀՈՂՄ.

Պ. Հողմն է նոյն ինքն օդն շարժեալ յանօսր և յանդայտացեալ գոլորշեաց, որք զընթացս իւրեանց 'ի նոյն տեղի ուղղելով ուժգնութ՟ վարեն զօդն. Գլխաւոր պատճառ հողմոց համարի լինել ջերմութի՟ արևու. Օրինակ ինչ ը՟ իրաց հասու լինելոյ այսմիկ մարթ է ունել շարժելով շհովահար մի, որ ճնշելով, 'ի բաց վարելով, և յինքն ձգելով զօդն՝ առնէ զայն զգալի ։ Ըստ զննուե Դերհամայ ուժգին հողմն 'ի միջոցի միոյ ժամու ընթանայ 45 մղոն անգղիական ։

Հ· ՔԱՆԻ՞ ԵՆ ՀՈՂՄՈՒՆՔ ։

Պ· Գլխաւոր հողմք են չորք, որք շնչեն 'ի չորից կողմանց աշխարհի · Որ յԱրեւելից շնչէ՝ ասի ԱՐԵՒԵԼԵԱՆ · եւ է եւս չորագոյն եւ պարզ · զի շնչէ յԱսիոյ, ուր ոչ գոն ծովք, բայց եթէ հեռագոյն յոյժ 'ի մէնջ ։ Որ Արեւմտից՝ կոչի ԱՐԵՒՄՏԵԱՆ · եւ է եւս խոնաւագոյն եւ անձրեւաբեր · զի շնչէ յԱթլանտիկեան Ովկիանոսէ, յորմէ առաւելուբ՟ իմն 'ի վեր ելանեն շոգիք ։ Որ 'ի Հիւսիսայ՝ անուանի ՀԻՒՍԻՍԱՅԻՆ, եւ է եւս ցրտագոյն · զի շնչէ 'ի ցրտագին կողմանց սառնասառոյց Գօտւոյ ։ Իսկ որ շնչէ 'ի Հարաւոյ՝ ասի ՀԱՐԱՒԱՅԻՆ · եւ է եւս ջերմագոյն՝ մանաւանդ յամառան · զի գայ յայրեցած Գօտւոյ ։

Հ· ԶԻ՞ՆՉ Է ՄՐՐԻԿ ։

Պ· Յորժամ ուժգին հողմք պատահին յանցս իւրեանց խիտ ամպոց՝ արգելանին, եւ'ի բարձանց բռնուբ՟ իջանեն 'ի ստոր 'ի վերայ երկրի եւ գործեն զՄՐՐԻԿ · որ եւ ասի ՓՈԹՈՐԻԿ ։

Հ· ԶԻ՞ՆՉ ԵՆ ԱՄՊՔ ։

Պ· Ամպքն են անօսրեալ գոլորշիք, որք ջերմուբ՟ արեւու, եւս եւ ներքին ջերմուբ՟ հողոյ եւ յատակաց ծովու եւ հողմովք ելեալ 'ի վեր՝ անդ 'ի բարձունս առ ցրտուե օդոյն վերստին խտտանան·

զորս հողմունք կուտեալ 'ի մի, և թանձրացուցեալ՝ ամպ գործեն ։ Եւ այս ամպք որչափ առաւել բերին 'ի բարձունս, այնչափ առաւել խտանան և կուտակին ․ վ՟ն այն 'ի բարձրաբերձ լերինս 'ի դիմի հարկանին ճանապարհորդաց, և բազում խոնաւութ՟բ զհանդերձ ն՟ց տամկացուցանեն ։

Հ. Զի՞նչ է Մէգ ։

Պ. Մէգն, որ և Մառախուղ կամ Շամանդաղ՝ ոչ այլով ինչ տարբերի յամպոյ, բայց եթէ ծանրագոյն գոլով քան զնա՝ մնայ 'ի խոնարհ յերեսս երկրի, և պատէ զմեօք ։

Հ. Զիա՞րդ գոլորշիքն ամպոց փոխին յԱնձրև ։

Պ. Յորժամ անօսրեալ ջուրքն, որք գործեն զգոլորշիս՝ միաւորին և կուտակին ընդ իրեարս, յայտ է զի և յայնժամ ծանրագոյն դառնան ․ մինչ զի ոչ ևս կարելով նոցա մնալ 'ի բարձունս՝ անկանին, և յանկանելն առաւել ևս թանձրացեալ՝ շիթ շիթ իջանեն յերկիր ․ և ահա այս է զոր կոչեմք Անձրև ։

Հ. Զի՞նչ է Ցօղն, և զի՞նչ Եղեամն ։

Պ. Ցօղն գոյանայ 'ի մասանց ինչ անօսրեալ ջրոց, որք 'ի խաղաղ և 'ի պարզ ժամանակի յածեալք 'ի բարձունս իբրև զգոլորշիս՝ ցրտութ՟բ գիշերոյ թանձրանան, և 'ի շիթս լուծեալ յառաւօտու իջանեն յերկիր ․ կուռին 'ի բոյսս և 'ի ծառս՝ որոց դիպին, և տամկացուցանեն առ հատարակ զա՟մ տերևս բուսոց և տնկոց, և աճեցուցանեն զնոցայն պտուղս. Իսկ Եղեամն չէ այլ ինչ, բայց եթէ ցօղ ցրտութ՟ պաղեալ.

Հ. Զիա՞րդ գոյանայ Գազպէն։

Պ. Գազպէն գոյանայ ՚ի քաղցր գոլորշեաց ծառոց, ծաղկանց և խոտոց ը՟ ցօղ խառնելոց, զոր ժողովեն ՚ի բազում տեղիս աշխարհի.

Հ. Զի՞նչ է Մթնոլորտն.

Պ. Է ստորին օդն զերկրաւ շրջապատեալ, ՚յորում գտանին ա՟մ գոլորշիք. կամ է աշխարհ ինչ լոյծ և նուրբ պարունակ ամենայն ծովային և ցամաքային անօսրացե՟լ մարմնոց հողագնտոյս.

Հ. Զի՞նչ է Ձիւն.

Պ. Է ամպ կամ մանրաշիթ անձրև սառուցե՟լ և միացեալ լի օդով, որ ՚ի թօթափիլն յերկիր՝ գործի ՚ի ցրտուէ՟ վերին աշխարհի։

Հ. Ընդէ՞ր հատք ձեան այնչափ բեկբեկ են և այլատեսակ։

Պ. Բացատուի՟ք, զորս հատքն թողուն ընդ մէջ իւրեանց լի անօսր գոլորշեօք՝ են պատճառ թեթևուե՟ ձեան. Եւ սպիտակ է ձիւնն. զի փոքրիկ մասունք սառին՝ որք բաղադրեն զայն հատիկս, գոլով կարծր՝ պինդ և թափանցիկ, ևս և զանազան դրութ՟ անդայտացեալ՝ բեկբեկեն մեզ զլոյս յամենայն կուսէ.

Հ. Զի՞նչ է Կարկուտն.

Պ. Կարկուտ ասի, յորժամ վայրահոս շիթք անձրևաց սաստիկ ցրտութ՟ պաղեալ իջանեն իբրև ղհատս սխուան սառուցեալս :

Հ: Զի՞նչ է Որոտումն · զի՞նչ Փայլակն · և զի՞նչ Կայծակն :

Պ: Որոտումն է այն շառաչիւն կամ Թնդիւն, որ լսելի լինի յօդս · և լինի յոլովակի յամառան : Եւ սա զարմանագոյն յամ Մետէորայս · և լինի այսպէս : Նկարեա առաջի մտաց քոց զբազում ամպս մի քան զմի բարձր՝ փոխանակաւ բաղադրեալս 'ի գոլորշեաց և 'ի շոգեաց, զորս ջերմութիւն արեգական հետ զհետէ 'ի վեր եհան յերկրէ առատուբ : Արդ վերին ամպք վարեալք 'ի հողմոց՝ ստիպին իջանել 'ի վերայ ստորին ամպոց, զորս նոյնպէս ստորին հողմք, և այլ հասարակ պատճառք պահեն 'ի բարձունս : Նոյն օդն, որ է մէջ վերին և ստորին ամպոց՝ վարեալ յիւրմէ տեղւոջէ, զառաջինն գտանէ անցս ելից յերկուց ծայրից ամպոցն · որով տայ խոնարհիլ այն երկու ծայրից առաւել քան զմիջավայրն, և լնու զայն բազում օդով : Ապա հարկեալ և օդոյն, որ յայն միջավայրն, ելանել արտաքս անձկագոյն և զարտուղի անցիւք՝ տայ նմա շաչել ահեղ դղրդմամբ · և այս է այն Որոտումն, որ լինի առանց փայլականց :

Փայլակն : Այլ եթէ շոգիք ծծմբայինք և կպրայինք, որք երբեմն դիպին 'ի մէջ երկուց ամպոց՝ ուժգնուբ բորբոքին և լուցանին, բոցն՝ որ անտի՝ հաղորդի նոյն ժամայն այլ ամ կիզանուտ մերձակայ մարմնոց, և ընդարձակեալ յոյժ զօդն՝ գործէ զփայլակն · ուստի լինի՝ զի յահեղ շառաչմանէ անտի տեսանեմք միանգամայն զօդն բոցակիզեալ:

Կայծակն: Բաց յայսմանէ իբր 'ի բազումս պատահի՝ զի հուրն, որ 'ի փայլականց անտի՝ ուժգնութեամբ մղեալ՝ անկանի, և յանկանելն դըղրդեցուցանէ զայն · ուրեք ուրեք սպանանէ զմարդիկ և զանասունս · կիզու և կործանէ զծառս, զշինուածս և այլն · և յայնժամ կոչի այն՝ Կայծակն:

Հ: Որոտմունք և փայլատակունք ե՞ր [illegible] ոչ լինին 'ի ձմեռան:

Պ: Վասն զի գոլով նոցա բաղադրեալ 'ի ջերմէ 'ի չոր գոլորշեաց, մանաւանդ 'ի բորակայնոց և 'ի ծծմբայնոց՝ այնպիսիք 'ի ձմեռան առ նուազ ջերմու՟ե արեգական սակաւ յերկրէ 'ի վեր ելանեն · և որք ելանենն՝ չեն դիւրավառ սակս օդոյն և ամպոցն ցրտու՟ե:

Հ: Զինչ է Ծիածանն:

Պ: Ծիածանն որ և Գօտի երկնային՝ է բազմերանգ և գեղեցկանիշ այն կամար, որ 'ի գալ անձրևաց առ հասարակ երևի 'ի խոնաւ ամպս հանդէպ արեգական: Զսա յետ Ջրհեղեղին եդ Ա՟ծ յամպս 'ի նշան հաշտու՟ե ը՟ մարդկան · ըստ այնմ թէ՝ Զաղեղն իմ եդից յամպս, և եղիցի 'ի նշան յաւիտենական ուխտին ընդ իս և ընդ ամենայն երկրի: Ծնն. 9: Իւր բազմագոյն երևի · զի ճառագայթք արեւու յաւէտ կամ նուազ ցոլացեալք ՚ի շիթս անձրեւաց, եւ բեկբեկեալք մինչեւ յաչս մեր՝ գործեն զայն պէսպիսութեն գունոց ՚ի նմա ։

Հ․ Զի՞նչ է Ասուպն ։

Պ․ Ասուպն կամ Աստեղաց անկումն, զորս ՚ի պարզ գիշերի տեսանեմք աստեղանմանս երբեմն ՚ի տեղւոջէ ՚ի տեղի ընթանալ, եւ երբեմն ՚ի խոնարհ թաւալ իջանել՝ չեն այլ ինչ, բայց եթէ փոքրիկ ամպք՝ որք պարունակեն յինքեանս զկիզանուտ շոգիս, որք վառին եւ ցնդին յօդս, կամ հասանեն մինչեւ յերկիր ։

Հ․ Որպիսի՞ են ազգք Գիսաւորաց ։

Պ․ Լինին երեք ազգ Գիսաւորաց․ ոմանք են մշտակայ մարմինք հաստատեալք յերկինս բարձրագոյն յոյժ քան զլուսինն, որք երբեմն մօտ եկեալ առ մեզ լինին երեւելի, եւ երբեմն ՚ի բաց յառաջացեալ՝ առ բազում հեռաւորութե լինին աներեւակ ։ Իսկ ոմանք են Մետէորական մարմինք ծնեալք ՚ի բարձունս օդոյ ՚ի գոլորշեաց վառելոց ։ Դարձեալ ՚ի Մետէորական Գիսաւորաց ոմանք են տանսաւորք, որք զպախտակամնիշ հետս իւրեանց ձգեն ընդ երկայն․ ոմանք մօրուսաւորք, որք զայն հետս ոչ յոյժ յերկայն, այլ յաւէտ ՚ի լայն սփռեն․ եւ ոմանք վարսաւորք, որք պէսպէս լուսափայլ շառաւիղս տարածանեն զիւրեամբ ոպ զվարսս ։ Կան եւ այլ ձեւք Գիսաւորաց․ զորօրինակ սուսերաձեւ, ջահանման, սլաքանման եւայլն ։

Հ. Զ՞ինչ գուշակեն Աստեղք գիսաւորք ։

Պ. Ըստ ոմանց՝ այնպիսիք են նշանակ անպտղութե՟ և մրրկաց, հողմոց, ախտից, պատերազմի և այլ մեծամեծ փոփոխութե՟ց, զորս տուեալ է Ա՟ծ ՚ի նշան իւրոյ բարկութե՟ և արկածից որ մերձ ՚ի վ՟ր կան . որպէս եդ զաղեղն երկնից ՚ի նշան ուխտի հաշտութե՟ ը՟ մարդկան ։ Վ՟նկ յառաջ քան զաւերումն Ե՟ղմի գիսաւոր մեծ երևեցաւ՝ անհնարին սրածութե՟ն գուշակ ։

Հ. Զ՞ինչ է Գետնաշարժ ։

Պ. Գետնաշարժն և կամ սասանութի՟ն երկրի համարի լինել ՚ի յանկարծ վառմանէ ծծմբային և կպրաւոր շոգեաց ՚ի խոռոչս երկրի պարուրելոյ . որոյ յայսկոյս և յայնկոյս շարժեալ, և բուռն արարեալ հատանել ելս ՚ի բուն յիւր տեղի՝ զերկիր սասանեցուցանէ, և մեծամեծ պատառուածս գործէ . որով երբեմն զքաղաքս ողջոյն և զմեծամեծ լերինս կլանէ ։ Այս պատահի յաւէտ ի հարաւային գաւառս քան այլուր ։

Հ. Եւ զ՞ինչ ստորերկրեայ հրայրեայք .

Պ. Ստորերկրեայ հրայրեայք են ՚ի ծծմբային և ՚ի կպրաւոր նիւթոյ ՚ի ներքոյ երկրի լուցելոյ, որոյ արտաքս յարձակմամբ լինին այն հրոյ շնչաբանք և լերինք վառեալք . որպէս Ետնայն ՚ի Սիկիլիա, Վեզուվն ՚ի Կամբանիա և Եէկլայն յԻսլանդիա ։

Ջուր ։

Հ. Զի՞նչ է Ջուր ։

Պ. Ջուրն է մարմին երևակ, խոնաւ, ցուրտ, շարժուն, լոյծ, միամած և թափանցիկ, որ փոփոխէ յը՟հարկանել 'ի նա լուսոյն, անօսրանայ 'ի գոլորշիս իւրով խոնաւութբ՟, թանայ զա՟մ յոր հպի, և սողոսկեալ ընդմտանէ գրեթէ յա՟մ մարմինս, նաև յայնս յորս օդն ոչ կարէ թափանցել ։

Հ. Զի՞նչ է օգուտ ջրոյ ։

Պ. Ջուրն է գլխաւոր սնուցիչ և աճեցուցիչ բուսոց և կենդանեաց · առանց որոյ հողն անբեր լինի և անպիտան ։ Նովաւ մարդիկ լուացեալ մաքրեն յաղտոյ և գեղեցկանան ։ Ջուրք անձրևաց մաքրեն զօդն և առողջ գործեն ։ Միով բանիւ՝ ջուրն է զարդ երկնի և երկրի ։

Հ. Մի՞ թէ միատեսակ իցեն ջուրք ։

Պ. Ո՛չ · զի կէսք անխառն են և քաղցր, թեթև և պաղ և յստակ · այսպիսի են ջուրք անձրևաց և գետոց, աղբերց և ջրհորոց · այլք խառնեալ 'ի բազում հանքային մասանց կամ յաղայնոց · վ՟ այն ունին զհամ թթու կամ դառն կամ աղի · կամ են պարարտք կամ ջերմ կամ քարացուցիչ · և սոքա ունին պէսպէս զօրութի՟ս բժշկականս ։

Հ. Զի՞նչ է Ծով ·

Պ. Ծովն է մեծ կուտակումն ջուրց խառնեալ յամենատեսակ մարմնոց, որք գտանին 'ի տիեզերս ·

ծովն է մայր և սկիզբն ամ՟ ջրոց ։ Ջուր ծովու է աղէհամ․ զի բազում աղ կայ խառնեալ՚ի նմա ․ և կամ այն յատուկ իմն խնամով տուեալ է նմա յԱրարչէն, ՚ի լինել յարմարագոյն ՚ի ծընունդ և ՚ի սնունդ ձկանց ։ Գտան երբեմն ՚ի յատակ ծովու գերեզմանք և կարկառք քարանց, որք յառաջ ցամաքք էին մարդաբնակք, և ապա երկրաշարժութ՟բ ՚ի յատակ անդր սուզեալք ։

ՀՈՒՐ ։

Հ․ ԶԻ՞ՆՉ Է ՀՈՒՐ ։

Պ․ Հուրն է մարմին թեթև, լոյծ, նուրբ, շարժուն, լուսաւոր, ջերմ և ներգործական ։ Հուրն իւրով ամենալոյծ նրբութեամբ ը՟մտանէ յամ՟՝ մարմինս ․ և եթէ կարի իմն յորդեսցի՝ նովին լուծականութ՟բ և ջերմութ՟բ և շարժմամբ իւրով քակտէ, ծախէ և լուծանէ զամ՟ մարմին ։ Հուրն է սկիզբն և պահպանիչ իւրով ջերմութ՟բ կենդանեաց, բուսոց, հանքաց և տարերց ։ Որոյ աղագաւ ՚ի բառնիլ ջերմութե՟ն հրոյն՝ սառի ջուրն և անպիտանանայ ․ օդն չլինի յարմար ՚ի շունչ կենաց ․ հողն ոչ բուսուցանէ ինչ, և եղեալ բոյսքն չորանան ․ ձուք և սաղմն ոչ կենդանանան ․ կենդանիք բովանդակ մեռանին ․ ամ՟ ինչ մնայ անգործ և անշարժ ․ և աշխարհս իսկ խոպանանայ ։

Հ․ ԶԻ՞ԱՐԴ ԱՐԾԱՐԾԷ ՀՈՒՐՆ ։

Պ․ Նախ՝ հարմամբ կարծր մարմնոց ը՟ իրեարս · զորօրինակ հրահանից ընդ դայլախազն (Չախմախ Քար) : Երկրորդ՝ խմորմամբ և եռանդմամբ · որով ՚ի խառնուածոյ ինչ ինչ նիւթոյ գոյանայ սաստիկ ջերմութիւն և երբեմն վառումն : Երրորդ՝ արծարծեն զհուրն ճառագայթք արեգական, որք պարուրեալք ՚ի մի ՚ի ձեռն գոգաւոր ապակւոյ՝ անկանին ՚ի վերայ մարմնոյ : Այսու եղանակաւ պատմի՝ թէ Արքիմեդէս Սիրակուսացի քաջ աստեղաբաշխն այն վտանգեաց զնաւս Հռովմայեցւոց, որք պաշարեալ էին զՍիրակուսա :

Հ: Ո՞րն է Լոյս :

Պ: Լոյսն է հեղանիւթ բոլորովին առաձգական, որ յընդհարկանել յաչս մեր՝ գործէ ըզպայծառութիւն, և տայ մեզ տեսանել զառարկայս : Ըստ նոր դիտողութեանց լոյսն 1,530,000 անգամ աւելի արագ հասանէ քան զգունդն թնդանօթի :

Հ: Ո՞րք գիտութիւնք պատշաճին լուսոյ :

Պ: Տեսաբանութիւն, Հայելաբանութիւն և Դիտակաբանութիւն :

Հ: Ո՞րն է Տեսաբանութիւն :

Պ: Այն գիտութիւն, որ ճառէ զներգործութիւն ուղղաձիգ շառաւիղաց լուսոյն · այսինքն զտեսութիւն առարկայից, որք ՚ի ձեռն շառաւիղաց ուղղակի և անմիջապէս հասանեն մինչև յաչս մեր :

Հ: Ո՞րն է Հայելաբանութիւն :

Պ: Այն գիտութիւն, որ քննէ զներգործութիւն ցոլացեալ շառաւիղաց. և զի այս պատշաճագոյնս լինի 'ի ձեռն հայելեաց՝ կոչի Հայելաբանութիւն :

Հ: Զիա՞րդ շինի հայելի :

Պ: Առ 'ի շինել զտափարակ հայելի ապակեղէն՝ նախ պարզեն 'ի վերայ փայտեայ տախտակի թուղթ ծծողական, ցանելով 'ի վերայ փոշի Արիտեան կաւոյ. յորոյ վերայ հարթածաւալ սփռեն թիթեղն Անգղիական անագի. ապա հեղուն 'ի վերայ զսնդիկ հաւասարապէս ծաւալեն բամբակաւ, մինչև թիթեղն կրծեալ լինիցի ամենայն ուստեք. յետ այսորիկ դնեն ամենայն զգուշութեամբ 'ի վերայ թիթղան զապակի տախտակն. յորոյ վերայ հուսկ յետոյ դնեն թուղթ և բեռն ծանր, որով 'ի դուրս քամի աւելորդ սնդիկն. և անագն սնդագոյնս մածնու ընդ հայելին. որ իբրև ցամաքի, 'ի բաց առեալ զբեռն՝ ունիցիս զհայելին :

Հ: Ո՞րք են գործիք Տեսաբանութեան :

Պ: Գլխաւորքն են՝ Խոտորադիտակն. որ է դիտակն խոտորնակ 'ի հայել յառարկայս՝ որք չեն հանդիպակաց ական. Հեռադիտակն. որ է գործի կամ դիտակն կազմեալ 'ի բազում գոգաւոր ապակեաց, և կամ 'ի կորնթարդ հայելեաց, առ 'ի մերձ բերել աչաց զբացակայ առարկայս. Ակնոցն. որ սովորաբար 'ի գործ դնի 'ի պահպանութիւն կամ յօգնութիւն աչաց. Մանրադիտակն. որ երևեցուցանէ զիրս մանունս և դժուարատեսանելիս, խոշորացուցանելով զնոսա. որոյ աղագաւ կոչի և Խոշորացոյց :

Հ: Որո՞նք են գլխաւոր Գոյնք :

Պ: Եօթն. կարմիր, նարնջագոյն որև քրքմագոյն, դեղին, կանաչ, կապուտակ որև երկնագոյն, լեղակագոյն և մանուշակագոյն : Այլ ա̃մ գոյնք բաղկանան 'ի սոցանէ :

Հ: Միթէ չե՞ն 'ի թիւ գլխաւոր գունոց Սեաւն և Սպիտակն :

Պ: Ո՛չ. զի սեաւն գունոց պակասութիւն է, և սպիտակն բովանդակութիւն, կամ բաղկացումն ամենայնի միանգամայն :

Հ: Զի՞նչ է Ձայն :

Պ: Է շարժումն՝ որ ելանէ 'ի ձայնատու մարմնոց. և առ փոքր փոքր ծաւալեալ՝ 'ի ձեռն օդոյ գնայ ժամանէ 'ի ներքին գործարանն ականջաց, և հաղորդի օդալիր մաշկի խոյ՝ որ կոչի Թմբուկ Ականջաց : Ըստ փորձառութեան բնաբանից ձայնն ունի զնոյն երագութիւն հողմոյն, յորմէ վարեալ սփռի 'ի տեղւոջէ 'ի տեղի :

Հ: Զի՞նչ է Արձագանգ :

Պ: Է վերադարձ բարբառոյ. որ լինի՝ երբ ը̃յառաջ նորա ելանէ մարմին ծոցաւոր. զորօրինակ տուն, պարիսպ, բլուր և այլն : Իսկ եթէ բ̃զմ մարմինք ը̃ս օրինի տրամադրեալք խոչընդոտք լինիցին ձայնին, յայնժամ արձագանգն ոչ լինի պարզ մի, այլ առաջինն զձայն իւր փոխատրէ միւսումն;

և նա երրորդում, մինչև միոյ բարբառոյ արտադրել զբազում արձագանգս :

Հ: Զ՞ինչ է Քիմիական արհեստն :

Պ: Քիմիական արհեստն որ և Քիմիագործութիւն է ուսումն, որ պարապի ՚ի ճանաչել զզանգուածիկս, այսինքն զմասնիկս մարմնոց, և ՚ի բաղադրել կամ ՚ի լուծանել զնոսա :

Հ: Զ՞ինչ է Բժշկականութիւն :

Պ: Է գիտութիւն, որ պատաղի ճանաչել զմարմին մարդոյ և կենդանեաց. ևս և զայն ամենայն՝ որով մարթ է պահպանել զառողջութիւն, և կամ ապաքինել զհիւանդութիւն : Երկին են տեսակք սր. մինն տեսական կամ հայեցողական. և միւսն գործնական կամ ճարտարական : Առաջինն պարապի միայն ՚ի քննել զբնութիւն մարդկային մարմնոյ. ՚ի ճանաչել զնորուն հիւանդութիւնս. և ՚ի գիտել զօրպիսութիւն դեղօրէից. իսկ երկրորդն ՚ի ձեռն փորձառութեան ճգնի ՚ի գիւտ յատուկ դեղոց կամ սպեղանեաց իւրաքանչիւր խօթութեան, որով մարթ իցէ անվրթար և դիւրաւ գործել զբժշկութիւն ախտացելոց :

Հ: Ո՞ր գիտութիւն ճառէ զմարդկային մարմնոյ :

Պ: Անդամազննութիւնն. որ ուսուցանէ զհաստուած մարդկային մարմնոյ, և զամ մասունս՝ որք բաղկացուցանեն զնա. աւանդէ զայն ամենայն որ նուաղեցուցանէ կամ զօրացուցանէ զկազմուածս մարդոյ, և ճառէ զպէսպէս պատճառաց, յորոց յառաջ գան հիւանդութիւնք :

Հ։ Զի՞նչ է Վիրաբուժութիւն.

Պ։ Այն մասն Բժշկականութեան, որ ուսուցանէ զօրէնս դարման մատուցանել արտաքին վիրաց, ուռուցից, խոցից եւայլն. որ լինի հատմամբ, կամ սպեղանեօք։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

ԲՆԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ.

Երկրաբանութիւն եւ Հանքաբանութիւն։

Հ։ Զի՞նչ է Երկրաբանութիւն։

Պ։ Այն գիտութիւն՝ որ ճառէ զստորերկրեայ իրաց։

Հ։ Զի՞նչ է Հանքաբանութիւն։

Պ։ Այն գիտութիւն որ ուսուցանէ ճանաչել զբազմատեսակ մարմինս, որք գտանին ընդ երկրաւ. որպիսի են հանք, քարինք եւայլն։

Հ։ Յի՞նչ իրս տարբերի Հանքաբանութիւնն յԵրկրաբանութենէ։

Պ։ Երկրաբանութիւն քննէ զկոյտ ստորերկրեայ մարմնոց ընդհանրապէս. այլ Հանքաբանութիւն զննէ մի մի զամենայն մասունս առանձինն։ Յետինս այս է պիտանի քան զառաջինն. որ է միայն զուարճալի։

Հող.

Հ։ Զի՞նչ է Հող.

Պ։ Այն տարր պարզ, կարի խիտ ցուրտ, չոր,

ապակենիւթ, սերտ, և խիտ քան զա՟մ պինդ մարմինս, և արմատ և հիմն բաղադրուե՟ ա՟մ պնդակազմ մարմնոց ։ Բայց քանզի անմած են մասունք նորա ը՟ իրերաց, փոշի է որ ջրով փոքր ինչ մածանի և կակղանայ․ իսկ հրով յապակի լուծանի ։ Զհող տարրական՝ ամենևին պարզ և անխառն յայլ տարասեռ մասանց դեռևս ոչ գտին մարդիկ ։ Այլ հողն բաղադրեալ 'ի հանքային մասանց, զորօրինակ աղի, ծծմբոյ եւ այլն, ընդհանրապէս է կրկին․ հող կրային, որ հրով 'ի կիր լուծանի․ և հող կաւային, որ հրով կարծրանայ ։

Հ. Զի՞նչ է Քար ։

Պ. Քարն է հող կուտեալ և մածուցեալ 'ի մի 'ի հիւթոյ ինչ, որ առաւել սակաւ ցնդելով տայ մասանց հողոյ առաւել սերտ միաւորիլ ընդ իրերաց և կարծրանալ ։ Քարն է մարմին սերտ, որ ոչ կռանաւ ծաւալի, և ոչ ջուրբ լուծանի, և ոչ ը՟ ինքեան հալի ։

Հ. Քանի՞ են սեռք Քարանց ։

Պ. Ըստ հասարակաց բաժանման՝ չորք են ազգք քարանց ։ Առաջինն պարունակէ զհողս և քարինս լոկ անոճանելս․ երկրորդն զաղս հանքայինս, որք լուծանին 'ի ջուր․ երրորդն զկիզանուտ մարմինս կամ զհանքս ։

Քարինք առաջին սեռի են՝ Սրճանաքարն, Բիւրեղն ժայռից, Ակատն, Քաղկեդոնն, Գրանն, և այլ բաղումք : Նոյնպէս Տպազիոնն , Շափիւղայն կամ Սափիրայն և Յակինթն : Սոքա կոչին և Արևելեան քարինք , յորս Յակինթն է ևս կարծր . և ընտիրն գայ մեզ յաշխարհաց Աւայ և Պեգուայ . Շափիւղայն չէ այնքան կարծր իբրև զՅակինթն . և գայ 'ի Պեգուայ և 'ի Սէյլանայ : Իսկ Տպազիոնն է կրկին , Արևելեան և Արևմտեան . առաջինն է ազնուագոյն , և գայ յԱրաբիոյ և յԵգիպտոսէ :

Քարինք երկրորդ սեռի են՝ Ալքալի հանքային , Աղն հասարակ , Աղբորակին կամ Շնիբորակին , Պաղլեղն և Արջասպն : Ալքալի հանքայինն է աղ հանեալ 'ի մոխրոյ բուսականաց : Հասարակ աղն բաժանի 'ի հանքային և 'ի ծովային . Հանքայինն է որ գտանի 'ի սիրտ երկրի . և է փայլուն և լուսանցոյց իբրև զապակի , որ իբրև զվէմ հատանի 'ի կտորս , զորս կոչեմք ղամաշէղ : Եւ գտանի յԵրևան , 'ի Բողոնիա , 'ի Մաճառաստան և այլն : Իսկ ծովայինն է շնչումն գոլորշեաց ծովու վերածխեալ արևու կամ հրոյ ջերմութ̃ .

Քարինք երրորդ սեռի են՝ Անդամանդն , Ածղաթն , և Սաթն :

Հ. Զի՞նչ է յատկութիւն Անդամանդ քարին :

Պ. Անդամանդն է ևս կարծրագոյն և պայծառագոյն քան զամ̃ բաղադրեալ մարմինս աշխարհի : Սա 'ի հնումն գայր մեզ յԱսիոյ . բայց ժամանաւանդ ինչ է , յորմէ հետէ նաւ գայ 'ի Բրասիլիոյ որ յԱմերիկա ։

Հ։ Զի՞նչ են Հանք ։

Պ։ Հանք կոչին այն մարմինք գոյացեալք 'ի հողոյ բաղադրութ՟ հրային նիւթոց և այլ տարերաց ։ Զսոսա մարթ է վերածել յերկուս սեռս . 'ի Կռանելիս , որք կռանաւ ծաւալին . և որք յատուկ անուամբ Հրահալելիք կամ Մետաղք կոչին . և յոչ կռանելիս , որք կռանահարութ՟ ոչ ծաւալին , այլ իբրև զքար բեկանին և փշրին . որպիսի են Անտիմոնն , Զառիկն , [illegible] , Կոբաղտն , Ծծումբն և այլն ։

Հ։ Ո՞յք են Քարէնք չորրորդ կարգի ։

Պ։ Հրահալելիք կամ մետաղք . և են ութն . Ոսկի , Արծաթ , Անագ , Կապար , Երկաթ , (որոյ Պողպատն է յատուկ ինչ եղանակաւ պատրաստեալ , և ոչ է ինքեան զատագոյն , որպէս նախնիք կարծէին) Պղինձ , Փլատինոյ , կամ Ոսկի սպիտակ և Սնդիկ ։

Ոսկին 'ի մէջ հրահալելեաց առաւելու՟ք զայլս բազում ձիրք . այսինքն ծանրութ՟ , գունով , զտութ՟ և անապականութ՟ . զի ոչ ժանգահարի , և ոչ ծախի 'ի հրոյ . այլ եթէ զբազում ամիս , 'ի բորբոքեալ քուրայս հալեսցի՝ ելանէ անտի նովին կշռութ՟ ։ Բայց սա գերազանցէ զայլովքն նաև իւրով հիանալի ծաւալականութ՟ . իբր զի տրամ՝ մի ոսկի ծաւալի ցհարիւր վաթսուն մղոնս յերկայնութեան : Ոսկին լինի 'ի Ճեաբոն, 'ի Սիբերիա, յԱմերիկա և յայլ բազում տեղիս :

Արծաթն լինի առատ յոյժ 'ի Հարաւային Ամերիկա 'ի ցրտագոյն գաւառսն : Արտաշնչութիւն շոգեաց որ 'ի հանքաց անտի՝ սպանանէ զբազում գործաւորս յայնս պարապեալս :

Անագն է ևս թեթևագոյն և կակղագոյն, և խառնի ընդ պղնձոյ 'ի բաղադրել զխրինձ, այն է Թունճ : Սորա հանք բազում են յԱնգղիա, 'ի Բոհեմիա և 'ի Սաքսոնիա :

Կապարն է կակղագոյն և ծանրագոյն, և գրեթէ միշտ արծաթախառն : Սա է յոյժ պիտանի արհեստագործութեանց . և գտանի 'ի Գաղղիա, յԱնգղիա և բազում ուրեք : Որք պարապին 'ի բովս սորա՝ կարի սակաւակեաց լինին :

Երկաթն յետ սկւոյ է ևս կարծրագոյն, և յետ Անագի ևս թեթևագոյն . և գտանի 'ի Սիբերիա բազում յոյժ . որպէս և գրեթէ յայլ ամենայն կողմանս աշխարհի : Հանք սորա չեն այնքան խորին . այն զի են որք յերեսս երկրի գտանին : Մագնէս քարն գտանի 'ի բովս երկաթոյ . և ամենայն յայտ է՝ ունի զզօրութիւն քարշելոյ յինքն զերկաթն . ունի սա և զյարումն առ հիւսիսային բևեռն, որով կազմի Կողմնացոյցն յուղղութիւն նաւորդաց :

Պղինձն է պիտանի յոյժ 'ի կազմել զգործիս և զանօթս և զկարասիս . և գտանի ամենայն ուրեք :

Փլատինայն կամ՝ սպիտակ Ոսկին է հրահալելի

ինչ նորագիւտ և ազնիւ որպէս զոսկի · բայց իբրև զարծաթ սպիտակ ։

Հ։ Զ՞ինչ է Ծծումբն ։

Պ։ Ծծումբ կոչի այս նիւթ, որ յատկապէս է վառելի · և բաղկանայ 'ի բազում հրեղէն նիւթոց խառնելոց ընդ հողեղէնս և ընդ ջրեղէնս, զորս 'ի վառիլ հրեղինին վարէ 'ի ծուխ ։ Ծծումբն է չոր, դիւրաբեկ, թեթև և դեղնագոյն · և կարի յոյժ գտանի սփռեալ 'ի ներքոյ երկրի զուտ կամ խառն ընդ մետաղաց ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ ։

ՏՆԿԱԲԱՆՈՒԹԻՒՆ ։

Հ։ Զ՞ինչ է Տնկաբանութիւն ։

Պ։ Է գիտութիւն, որ զննէ զբնութիւն տնկոց և ըզնոցայն յատկութիւնս ։

Հ։ Արդեօք ունի՞ն բոյսք կենդանական գործողութիւնս ։

Պ։ Այո · զի իբրև զկենդանիս սնանին, աճին, միաւորին, բազմանան և մեռանին · բայց զուրկ են 'ի կամաց ։ Ոմանք 'ի նախնեաց, որպէս Անաքսագորաս և Եմպեդոկղէս, զհոգի ոչ միայն տնկական, այլև զգայական ընծայեցին տնկոց · իսկ այլք, որպէս Մանիքեցիք՝ այնքան յիմարեցան, մինչև նաև զբանական հոգի ընծայեցին նոցա · ուստի և հարկանել զնոսա, կամ զծաղիկ , զպտուղ և զոստս նոցա կորզել` մեղս համարէին և սպանումն իմն տեսակ ։ Բայց այլք , որպէս Ստոյիկեանք` կարծեցին տնկոցն ամենևին չունել զհոգի կամ զկեանս զօրէնքարանց ։

Ապա մարթ է ասել ընդդէմ սոցա ամենեցուն , թէ տունկք թէև չեն 'ի սակս կենդանեաց , բայց կեան և ունին զազգ ինչ կենաց ․ զի թէպէտ ոչ զգան և ոչ կրեն , այսու ամենայնիւ շարժին , աճին և պտղաբերին ․ որք են գործք կենաց ։

Հ. Քանի՞ են մասունք տնկոց ։

Պ. Հասարակքն են չորս ․ արմատ , բուն , տերեւ և պտուղ ։

Արմատն է այն մասն տնկոց , որ ծածկեալ 'ի հողով պահէ զնա անշարժ , և զհիւթն սննդական յառաջագոյն զհանդերձեալն 'ի գետնի` ծծէ յինքն և աճեցուցանէ զնա ։

Բունն կամ Ցօղուն է այն մասն տնկոց , որ նախ արտաքս ելեալ 'ի հողոյ` սոսկապէս ամբառնայ յարմատոյ 'ի վեր ․ յոր և գայ հաւաքի հիւթն սննդական 'ի սփռիլ յայլ մասունս ։

Տերեւն կամ Սաղարթն է մասն լցեալ մանրերակօք , առատ և փափուկ հիւթով , տուեալ տնկոց 'ի զարդ և 'ի պահպանութիւն պտղոց ։ Գոյնն յամենայն բոյս հակի 'ի կանաչ ․ բայց այնպէս բազմօրինակ աստիճանեալ , մինչև յանհամար պէսպիսութեան նոցա և ոչ երկուս ևս գտանել` յորս իցէ ամեչունին նոյնագոյն տերև · այլ 'ի մին բացագոյն, 'ի միւսն լրթագոյն, յումեմն աղօտագոյն և յումեմն պայծառագոյն, և յոմի այլևայլ։

Պտուղն է արգասաբերութիւն կամ ծնունդ բուսոց · և կամ այն մասն, յոր գործողութիւն տնկական կենաց ժամանէ 'ի վախճան։ Սա լինի զկնի ծաղկելոյ տնկոյն և փթթելոյ կոկոնացն, և սնանի ցորչափ կախեալ կայ զնմանէ՝ որպէս մանուկ զստենէ · մինչև ժամանեսցէ 'ի պատշաճ հասունութիւն ։ Պտուղն լինի բազմատեսակ և բազմահամ ։

Հ. Ամենայն բոյսք բաղկանա՞ն յայսց մասանց ։

Պ. Ո՛չ · զի ոմն յայսմիկ և ոմն յայնմիկ միայն գտանի · զորօրինակ Աֆրիկտոնին չիք բնաւ սեպհական արմատ · զի 'ի վերայ ծառոց բուսանի ։ Նոյնպէս անպտուղ է Յասմիկն, անծաղիկ Թուզենին, անտերև Ծնէբէկն վայրի ևայլն ։

Հ. Զի՞րդ բոյսք կայն ուղղաձիգ ։

Պ. Ոմանք ուղղագիծ 'ի մակերևոյթ երկրի, և ոմանք առ եզերս · իսկ այլք խոտորնակի · սակայն ամենեքեան առ հասարակ միտեն 'ի կեդրոն երկրի, բաց 'ի սակաւուց ոմանց, որք շեղին 'ի բուն ուղղութենէ դրից իւրեանց 'ի գլուխ բարեհող երկրի ։

Հ. Զի՞նչ է յատկապէս Ծառն ։

Պ. Ծառն է տունկ փայտեղէն միաբուն 'ի հարուստ մի բարձրութիւն բնաւորեալ · որպէս Կաղնին, Չինարենին ևայլն ։ Ոմանք 'ի ծառոց են պտղատուք և ոմանք անպտուղք . և պտուղք ոմանց ծառոց են մասամբ լինին ուտելի . զորօրինակ Խնձորն, Տանձն և այլն . այլոց կամ արտաքոյ միայն ուտելի, որպէս Դեղձն, Սալորն և այլն . և կամ 'ի ներքոյ , որպէս է Ընկոյզն և այլն : Իսկ անպտուղքն են որք ոչ բերեն պտուղ ուտելի մարդկան, Թէպէտ և ուտելի այլոց կենդանեաց : Աք են առաւել բարձրաբերձք և գեղեցկաձևք , և մեծատարածք հովանաւորք և երկայնակեացք յոյժ : Փայտ սոցա ամրագոյն է և պիտանագոյն քան ըզպտղատու ծառոց . ոմանք 'ի սոցանէ ծառայեն շինուածոց . այլք բղխեն զխէժ անուշահոտ, որ կարծրացեալ՝ լինի ծխանելի կամ խունկ . և կէսք ծորեն զիւղ պիտանի և ազնիւ :

Դարձեալ ծառն բաժանի յընտանի և 'ի վայրենի . ընտանի ծառոց ոմանք դարմանին յաղագս հոտոյ կամ վայելչութեան , և ոմանք վասն պտղոց : 'Ի հոտաւէտ ծառոց երևելի են Դափնին . որոյ վարսքն են մշտադալար, և տերևքն անուշահոտ . Մուրտն . (Մ՚էրսին տաճկ.)՝ հոտով և ազնուութեամբ տերևոց և ծաղկանց համբաւեալ . Յասմիկն քաջ ծաղկաւէտ և այլն : Վայրենի ծառոց ոմանք են լեռնային, և ոմանք դաշտային և ջրային : 'Ի լեռնայնոց երևելիք են Կաղնին , Շագանակն , Մայրն և Տօսախն : 'Ի մէջ ջրայնոցն՝ Ուռին, Կաղամախն, Բարդին և այլն :

Այս են ծառք առ մեօք երևելին . բայց են և

այլ բազումք, որոց ծանուցաւ մեզ պտուղն, կեղեւն, արտօսր և այլ մասունք · բայց զբոյսն ոչ իւիք հնար եղև երկրի մերում ընտելացուցանել ։ Այսպիսի են նախ ԿԻՆԱՄՈՄՆ (ԴԱՐՉԻՆ), որ բուսանի յաւէտ 'ի Սէյլան կղզին մեծութ՟ նման ձիթենւոյ · որոյ տերևքն են իբրև զկիտրոնի · այլ կանաչութ՟ տերևոցն իբրև զդափնւոյ · ծաղիկ նորա սպիտակ, և պտուղն սեաւ և բոլորակ ։ Յետ նորա՝ ՄԵԽԱԿՆ, որ բուսանի 'ի նոյն կղզի · սա ունի ծաղիկս հոտաւէտս յոյժ, զոր թօթափեալ և չորացուցեալ առ մեզ առաքեն (ԽԱՐԸՆՓԻԼ) ։ 'Ի ն՟ց համարի են ՊՂՊԵՂՆ, ԿՆԴՐՈՒԿՆ, ԲԱԼԱՍԱՆ և այլն ։

Հ։ Ո՛ՐՉԱՓ Է ՍՏՈՒԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՌՈՑ ։

Պ։ Ըստ պէսպիսութ՟ կլիմայից և վայրաց պէսպէս է և ստուարութ՟ նոցա ։ Պատմի՝ թէ յԵտնայ լերինն գոյր ծառ մի գոգաւոր այնչափ ստուար, մինչև 'ի ներքս իւր պարունակէր զ50 և աւելի ոչխարս հանդերձ հովուաւն ։ ԿԱՂՆԻՆ լինի մեծ 'ի ստորոտս լերանց, և փոքրիկ 'ի ծայրս · ոմանք 'ի ծառոց զամիսն բաձրանան ցերկոտասան ոտնաչափ, և ստուարանան ցչորս բթաչափ ։ Եւ ոմանք ցայնչափ բարձրութ՟ վերանան, մինչև քան զնետընկեցս առաւելուլ · որոց և ընոյն ստուարութ՟ եօթն մարդկան գրկածութ՟ հազիւ պարանի ։

Հ։ ՔԱՆԻ՞ ԵՐԿԱՅՆԱԿԵԱՑ ԼԻՆԻՆ ԾԱՌՔ ԵՒ ԴԱԼԱՐԻՔ ։

Պ։ Յայտ է փորձիւ՝ զի ՁԻԹԵՆԻՆ կեայ ամս 200 · ԿԱՂՆԻՆ 300, և ց500 ։ Իսկ ՄԱՅՐՔ Լիբանանու համարեմ թէ անմահ են և յաւիտենականուէ տիպ ․ զի պատմի երևեալք անդր ձեռատունկք Սողոմոնի արքայի, տնկեալք իբրև 'ի 3020 ամաց 'ի վեր ․ որք և բազում դարս գուցէ տևեսցեն ։ Իսկ Պաւարիք սակաւակեաց են յոյժ ․ զի գրեթէ համայնք են տարեկան, և սակաւ ոմանք միայն տևեն զերկեամ կամ զերեամ ։

Հ։ Արդեօք իցե՞ն նաև 'ի բոյսս հիւանդութիւնք ։

Պ։ Այո ․ զի թողեալ զորս լինին 'ի վնասուէ մարդկան և կենդանեաց ․ որպիսի է ծայրատութիւն՝ են տնկոց և այլ բազում վնասք բնականք ․ որոց ոմանք բառնան զնոցին վայելչութի ․ որպէս տերևաթափութիւն ․ ոմանք զդեռաբոյս ստեղունս հարկանեն ․ որպէս խորշակահարութիւն ․ ոմանք զծաղկունս և զպտուղս թօթափեն ․ որպէս յոուռի արմատոյ, կամ անբարեխառն հիւթ ․ և ոմանք զսկզբունս նոցին կենաց վտանկեն ․ որպէս ցրտահարութիւն, բաղցկեղն և այլն ։

Հ։ Որո՞ց 'ի չորից տարերաց՝ պարզք բնակեցան 'ի բոյսս, մինչ այլ երկրային տարերք գոն 'ի նոսա ։

Պ։ Օդայինն ․ որ է պարծանք և վայելչութի նոցունց ։ Սա արձակի յոլովակի յիւրոց կոկոնաց իբր 'ի կանաչասաղարթ տափոյ փթթել, և երբեմն երբեմն վառ առեալ բոցատիպ փայլմամբ ։

Ջրայինն ․ որ կայ 'ի տնկամիջի անդ, և երևի լինել նորա իբր սիրտ և ուղեղ, և տնկական ոգւոց բնակարան ։

Սերմն . որ է գոյացուցիչ և բողբոջեցուցիչ նիւթ՝ երբ 'ի բազում պարունակեալ 'ի պտուղն։

Հ. Միթէ 'ի հատոց սերմանց բողբոջին ամենայն բոյսք ։

Պ. Ըստ մեծի մասին . Այլ տակաւին չէ ը՟ ամենայնի յայտ՝ թէ յիւրաքանչիւր 'ի նոսա լիցէ սերմն, յորմէ գոյաւորին ։ Քանզի 'ի փոքրաքանակ բոյսս և 'ի թեթևամարմինս չերևի բնաւ ինչ սերմն . ուստի և այնպիսիք բուսանին առանց ցանելոյ կամ տնկելոյ ։ Բայց հաւանական իմն թրուի լինել յամենայն սերման ինչ, որոյ վարեալ 'ի հողմոց, կամ 'ի ծփանաց ալեաց ծովու, և կամ 'ի վեր առեալ 'ի թռչնոց, ապա 'ի թռչելն 'ի վայր արձակեալ ապաւաւաւ՝ անկանի 'ի տեղի յարմարաւոր և բողբոջի ։

Հ. Քանի՛ են տեսակք բուսոց ։

Պ. Տեսակք բուսոց բազում են յոյժ . մինչև ցայժմ առաւել քան զքառասուն հազար տեսակս գտին Տնկաբանք . բայց գոն այլ հազարաւորք 'ի յատակս ծովու ծածկեալք 'ի մերոց աչաց, և կամ առ փոքրուն իւրեանց ոչ անկանին ը՟ տեսութ՟ մերով ։ Նաւ 'ի մէջ այսր բիւրատեսակ տընկոց չգտանին և ոչ երկու տեսակք հաւասարք կատարելութ՟ . այլ իւրաքանչիւրքն մի քան զմի կատարեալ են, մինչև կատարելագունին մօտաւորիլ և կենդանեաց ։

Հ. Զ՞ինչ է թուփն ։

Պ. Թուփն է տունկ փայտեղէն բազում բնովք

արմատոց 'ի դոյզն ինչ բարձրութ̃ ամբարձեալ· ո̃պ ՄՈՐԵՆԻ, ՍՈՐԲԵՆԻ եւյլն ։ 'Ի մէջ բազմատեսակ թփոցն արժան է յիշել զայն թուփն Թաթարաց, զորմէ ըստ համբաւոյն զարմանալիս և միանգամայն դժուարահաւատալիս գըրեն ոմանք ։ Արդ՝ սա ասի լինել 'ի Յորդան գլխաւոր քաղաքն Թաթարաց, որ աճէ 'ի բարձրութ̃ եռոտնաչափ 'ի կերպարանս գառին, ոտիւք, կճղակօք, ունկամբք և բովանդակ իսկ գլխովն նմանեալ նմին · բաց յեղջերաց, որոց փոխանակ բերէ զմազս միոյ եղջեր նմանութ̃ · պատի նրբագոյն մաշկաւ · զոր քերծեալ բնակչաց տեղւոյն գործեն իւրեանց արտախուրակս ։ Ասեն նաև թէ ներքին միս նորա նման է մսոյ խեցգետնի · և 'ի խոցել իւրում արիւն ևս բղխէ ։

Յ։ Եւ ԴԱԼԱՐԻՔ ։

Կ։ Դալարիք ըստ մեծի մասին կարճիկ են, նուրբ, կակուղ, հիւթալից և սակաւակեաց ։ Անհամար են սոցա տեսակք, որք ծածկեն և զարդարեն զերկիրս բովանդակ · և գտանին նաև 'ի ջուրս ծովու, գետոց եւյլն ։ 'Ի սոցանէ ոմանք են ինքնաբոյս · և ոմանք ձեռնասուն կամ դարմանեալք ։ Ինքնաբոյսքն լինին ա̃մ ուրեք · որոց ոմանք, որպէս պարզ խոտք՝ ստեղծան 'ի զարդ երկրի և յուտեստ կենդանեաց · այլք 'ի պէտս դեղոց և սպեղանեաց ։ Եւ դալարիք որք խնդրեն զդարման մարդկան, ոմանք առ փափկութ̃ և ոմանք 'ի կերակուր կարգեցան, որպէս և ոմանք 'ի պէտս բժշկու՟ե ։

Հ։ Զի՞նչ նշմարանս զգայութեան երևին 'ի գործս բուսոց ոմանց ։

Պ։ Ոմանք 'ի նոցանէ խորշին 'ի լուսոյ ։ որպէս Գիշերածաղիկն, որ յայն սակս 'ի գիշերի բանի և 'ի գալ առաւօտու կծկի ։ այլք սիրեն զարեգակն ։ յորոց միջի Արևածաղիկն շարժի ը՟ արևու, թեքելով 'ի կողմն նորա ։ իսկ այլք խորշին 'ի կենդանեաց ինչ ։ զորօրինակ Փեգենայն յօձից ։ և կամ ը՟ ներհակն համակիր են ը՟ նոսա ։ զորօրինակ Վալերիանայն ը՟ կատուի ։ Այսպիսի գործք բուսոց նշմարանք միայն կոչին զգայու՟ե ։ զի զստուեր և զնմանու՟ի զգայու՟ե յանձին բերեն, և ոչ զիսկու՟ի ։ Բայց քան զայսոսիկ մեծագոյն գործս զգայու՟ե երևեցուցանեն բոյսք ինչ, որք կծկեալ ամփոփեն զտերևս իւրեանց ը՟ հպիլ ուրուք 'ի նոսա, և թեքեն զկանթ իւրեանց ։ 'Ի միջի այսպիսեաց տերևք ծառոց ինչ յԱմերիկա կոչեցեալ Ճանճորս՝ ըմբռնեն զճանճս և զայլ մանր կենդանիս, որք գան նստին առ ուտելոյ 'ի հիւթոյ անտի ։ Այսպիսիք տիրապէս կոչին Կենդանաբոյսք ։ զի շաղկապք համարին բուսոց և կենդանեաց, հաղորդք լինելով յիւրաքանչիւր յատկու՟իւն միանգամայն ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ:

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

Հ. Զի՞նչ է Կենդանաբանութիւն:

Պ. Կենդանաբանութիւն է գիտութիւն, որ ճառէ զյատկութեանց և զպէսպէս տեսակաց կենդանեաց: Եւ սորա բաժանին 'ի հինգ ընդհանուր մասունս. որք ունին զմեծ իմն տարբերութիւն ըստ իրերաց, ըստ ձևոց, ըստ բնաւորութեանց և ըստ յատկութեանց: Եւ են այսոքիկ:

ա. Դիեցուցիչք, կամ Ստնաւորք. բ. Թռչունք. գ. Երկակենցաղք. դ. Ձկունք. ե. Միջատք:

ԴԻԵՑՈՒՑԻՉՔ.

Հ. Ո՞յք են Դիեցուցիչ Կենդանիք:

Պ. Դիեցուցիչ կամ ստնաւոր Կենդանիքն են՝ Մարդն և ամենայն անասունք կենդանածինք:

Հ. Զիա՞րդ տարորոշի մարդն յայլոց կենդանեաց:

Պ. Բանական հոգւովն, որով պատկեր է Աստուծոյ և 'ի նմանութիւն նորա ստեղծեալ:

Հ. Զի՞նչ է Հոգին:

Պ. Հոգին է՝ որ տայ կեալ շարժիլ զգալ և իմանալ:

Հ. Զիա՞րդ բաժանի Հոգին:

Պ. 'Ի տնկական, 'ի զգայական և 'ի բանական: Տնկականն է առաջին սկիզբն աճելոյ:

Զգայականն է առաջին սկիզբն զգալոյ ։ Իսկ բանական հոգին է բոլորովին հոգեղէն, աննիւթ, անմահ և անապական ։

Զգայութեանց Հոգւոյ ։

Հ։ Զի՞նչ է Երեւակայութիւն ։

Պ։ Երևակայութիւն է զգայական զօրութիւն հոգւոյ երևեցուցիչ և ըմբունօղ բացակայ իրաց ․ ուստի և կրկին է գործ նորա ․ այսինքն երևեցուցանել զբացականս, նկարելով զնմանութիւն նոցա առաջի իւր, և ըմբունել զերևեցուցեալսն 'ի նմանութեան անդ ։

Հ։ Զի՞նչ է Կարծողութիւն ։

Պ։ Կարծողական կամ ընտրողական զգայութիւնն է զգայական զօրութիւն հոգւոյ՝ վերահասու անզգալի իսկութեանց ․ որպիսի են օգուտ և վնաս, սէր և թշնամութիւն, պիտանութիւն և անպիտանութիւն ։

Հ։ Զի՞նչ է Յիշողութիւն ։

Պ։ Յիշողութիւն է զգայական զօրութիւն հոգւոյ պահպանակ անցելոց ․ որ պահէ անկորուստ ըզտեսակս տպաւորեալս յերևակայութեան և 'ի կարծողական զգայութեան ։

Հ։ Զի՞նչ է Ցանկական բաղձանքն ․ և զի՞նչ Ցասմնականն ։

Պ։ Ցանկականն է անձուկ և փափագ զգալի բարեաց ․ և զզուշութիւն կամ խորշումն 'ի զգալի չարեաց ․ ուստի առարկայ ցանկութեան է բարին հեշտալի, յոր դիմեն ախորժակք վեցեակ շարժմամբ, որք և կիրք կոչին · և են՝ Սէր, Ատելութի̃, Խորշումն, Խնդութի̃ և Տրտմութի̃ ։

Իսկ Ցասմնականն է հետեւակ առաջնոյն · և է փափագ՚ի ձեռս բերելոյ զդժուարահաս բարիս, և ընդդէմ զինելոյ չարեաց՝ որք խափանարար գտանին կամ յապաղեն առ ստանալ զբարին ։ Ուստի առարկայ ցասմնական բաղձմանց է բարին տարժանելի կամ դժուարահաս · իսկ կիրք նորա են հինգ · Յոյս և Յուսահատութի̃, Համարձակութի̃, Երկիւղ և Բարկութի̃ ։

Այս ամ̃ ախորժակք կամ զգացմունք զգայական բաղձմանց ունին իւրեանց գործի մարմնեղէն զսիրտն · որպէս և ներքին զգայութի̃ք՝ զուղեղն · և են հասարակ մարդոյ և անասնոց ։

ԶՕՐՈՒԹԻՒՆՔ ԲԱՆԱԿԱՆ ՀՈԳՒՈՅ ·

Հ։ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՔ ՀՈԳՒՈՅ ։

Պ։ Երկին զօրութի̃ք կամ կարողութի̃ք են՚ի բանական հոգին · Միտք և Կամք, որով նա գործէ յինքեան և արտաքոյ իւր ։

Հ։ Զ՞ԻՆՉ Է ՄԻՏՔՆ ԵՒ Զ՞ԻՆՉ ԿԱՄՔՆ ։

Պ։ Միտքն է կարողութի̃, որ ըմբռնէ զճշմարիտն կամ զիսկութի̃ ամ̃ իրաց · վասն որոյ և բընութ̃բ դեր՚ի վերոյ է և նախապատիւ քան զկամն · որ չէ՛ այլ ինչ, բայց եթէ յօժարութի̃ հետեւակ մտաց · այսինքն բանական բաղձանք կամ յօժարութի̃ ՚ի բարին ըմբռնեալ մտօք ։

Միտքն է առաջին և գլխաւոր զօրութիւն հոգւոյն, որով գործէ զճշմարիտ․ զի նովաւ իմանայ հոգին, նովաւ խորհի և տրամաբանէ, նովաւ խօսի և հանճարէ զճշմարիտ ինչ․ որոյ վասն 'ի դէպ է անուանել զնա ակն հոգւոյ․ որով տեսանէ զինքն հոգին և զճշմարիտ ինչ․ սովաւ շարժի նաև կամքն, և ուղղի առաջնորդեալ առ բարին հոգւոյն ։

Առարկայ մտաց է ճշմարիտ ինչ․ քանզի որում ձեռնհաս է հոգին իմանալ զճշմարիտ ինչ՝ զեղեալսն և զկարելիսն ։ Գլխաւոր զօրութիւնք մտաց են երեքին սոքա․ նախ՝ լինել ըմբռնօղ կամ հասու ճշմարտի, որ չիցէ անհուն․ երկրորդ՝ անկորուստ պահել զոր ծանեաւ, առանց լքանալոյ նոքօք․ երրորդ՝ լինել արտադրիչ ճշմարիտ բանի, որոց միանգամ կարէ լինել հասու ։

Հ։ Զի՞նչ է Խիղճ մտաց ։

Պ։ Այս ոչ է բնական ինչ զօրութիւն․ այլ Աստուածապարգև խթան 'ի յորդոր բարւոյ և սանձարկու չարեաց․ ուստի խիղճ մտաց չարչարէ զմարդն 'ի գործելն զչար, և ուրախ առնէ 'ի գործելն զբարի ։

Խառնուածք Մարդոյ ։

Հ։ Քանի՞ են ազգք խառնուածոց 'ի մարդն ․

Պ։ Չորս՝ ըստ թուոյ տարերց․ մաղձային, արիւնային, մաղասային, և սևամաղձային ։ Մաղձային խառնուածոյ տիրէ Հուրն, արիւնայնոյ Օդն, մաղասայնոյ Ջուրն, և սևամաղձայնոյ Հողն ։

Որք ունին զխառնուած մաղձային՝ լինին չոր և ջերմ, վ͞ա այն և կորովամիտ, արագ, վեհանձն, նուրբ, քաջասիրտ և համարձակ · այլ միանգամայն անխորհուրդք և շուտափոյթք, անհամբերք և թեթևք ։

Արիւնայինք լինին հեզք, խնդամիտք, քաղաքավարք, քաղցրաբարոյք և ընդունակք յա͞մ իրս · այլև երկչոտք, թեթևք, փոփոխականք, փոքրոգիք և տարտամք ։

Մաղասայինք լինին խոհականք 'ի գործս, հետազօտք 'ի նորահնար իրս և յօժարակամք յառաքինութիւն · այլև դանդաղք, ապուշք, ծոյլք, յողդողդք և այլ բ͞զմ պակասութ͞եք լցեալք ։

Իսկ Սևամաղձոտք՝ երկայնամիտք, մտայոյզք, ծանրաբարոյք և լուրջք, զգոյշք և մեծախորհուրդք · այլև կասկածոտք, վեհերոտք, ժանտք, նախանձոտք և կարի յոյժ հեշտասէրք ։

Մեծն Արիստոտել նախադաս համարէ քան զա͞մ խառնուածս զՍևամաղձն · վ͞ա զի ա͞մ քաջազունք և արք երևելիք եթէ գրով, եթէ զինուք, եթէ հասարակօգուտ գործովք, և եթէ արուեստից Ճարտարութ͞ք էին սևամաղձոտք · որպէս Աղեքսանդր մեծ, Հերքուլէս, Պղատոն, Սոկրատէս և այլք ։

Մարմարեղէն ծովն ։

Հ. Որո՞նք են ծովածոցք Մարմարեղէն ծովուն ։

Գ. Մասունք մարդկեղէն մարմնոյ բաժանին 'ի նմանականս և յաննմանականս : Նմանական մասունք բազում են յոյժ , զորոց զգլխաւորսն՝ թուով տասն և հինգ այսպէս համառօտեսցուք :

Ոսկր . է մասն ցուրտ չոր պնդակազմ սերտ և կարծր , որ տայ մարմնոյ զհաստատութիւն , զգեղեցկութիւն և զուղղորդութիւն : Ոսկերք 'ի մարմնի՝ թուին մինչև ցերեք հարիւր վաթսուն , սքանչելի արուեստիւ յօդեալ ընդ միմեանս :

Աճառ . է ընդ մէջ ոսկեր և մսոյ . և է մասն կակուղ քան զոսկր , և քան զմիս կարծր , դիւրակոր և անզգայ :

Ջղանք . է մասն ուժգին և պինդ , յոր երբև 'ի տուտ կամ 'ի լար աւարտի մկանն : Այսպիսի են այնք , որք լարատեսակ երևին 'ի ձեռս և այլն :

Յօդակապ . սա գործով միայն տարբերի 'ի ջըղանց . ըստ որում ոչ է տուեալ 'ի զօրացուցանել զշարժմունս , այլ յաւէտ 'ի կապել ըզպնդակազմ մասունս :

Մկանունք . են թելք 'ի մսոտ մասունս յեղեալ 'ի զօրացուցանել և յամրացուցանել , ևս և յօգուտ շարժման , և 'ի կատարումն սուաձգութեան , պահողութեան և արտաքսման :

Մաշկ . է մասն լայն , կոկ և ամրանիւթ՝ կերպացեալ որպէս մորթ , տուեալ մարմնոյ 'ի պատել զայլ մասունս :

Երակ . է խողովակ մաշկեայ միաթերթ , բոլորակ և ծորակաւոր , կարգեալ 'ի զուսպ պահել զարիւնն , և'ի բաշխել ը՟ ամ՟ մարմինն :

Նեարդ . է խողովակ մաշկեղէն երկայնաձիգ և բոլորակ , կարգեալ իբրև զերակն առ զուսպ ունելոյ զոգելից արիւնն և բաշխելոյ ը՟ մարմինն :

Ջիլ . է մասն ներքոյ փափուկ և ուղղալից , և արտաքոյ կարծր և մաշկեղէն , կարգեալ 'ի բաշխումն կենդանական ոգւոյ ը՟ մարմինն :

Միս . գլխաւոր մասն է մարմնագոյիցս և գոյացուն փափկին , և իբր արիւնային հիւթ մածուցեալ . որոյ գործ է զմանրաթելս և զանօթս՝ զորովք պատի՝ տամկացուցանել , և յարտաքին պատահարաց ցրտոյ և տօթոյ պատսպարել :

Ճարպ . է պարարտ և իւղալից մասն արեան թորեալ յերակաց առ գրգուն երակապատ թերթի :

Ուղեղ . է փափկին գոյացուն 'ի ծոց ոսկերաց փակեալ :

Արիւն . է լոյծ մասն մարմնեղէն գոյացուն . Գլխաւորն է անուանեալ արիւն , որ խառնեալ ունելով ը՟ իւր զայլ զերիս հիւթս՝ զմաղձն , զսեւամաղձն և զմաղաս (բլղամ)՝ գնայ 'ի սնունդ անդամակազմ մասանց :

Ոգի . է նուրբ և շնչելի մասն մարմնեղէն գոյացուն :

Աննմանական մասունք բաժանին 'ի գլուխ 'ի լանջս , յորովայն և յանդամս :

Գլուխն է կայանք զգայութե՟, և իշխեցող բովանդակ մարմնոյ ․ զոր Պղատոն կոչէ անդամ պատուական, Հիպոկրատէս՝ մտաց պահապան, և անմահ բանաստեղծն Հոմերոս՝ երկինք, վասն զշարժումն և զլոյս ճանաչման յայլ մասունս հոսելոյ ․ և բաղկանայ յուղղալից գոյացութէ՟ ինչ, որ է շաղական և կակուղ՝ ամենևին աննման այլ ա՟մ մարմնեղէն գոյացութե՟ց ։

՚Ի դէմս կամ յերեսս են բազում մասունք ․ այսինքն ճակատ, յօնք, արտևանունք, աչք, ունչք, այտք, ականջք, շրթունք, կզակ, բերան և լեզու ։ Մեք ստորագրեսցուք կարճ ՚ի կարճոյ զայնցանէ որք զգայարանք են մարմնոյ ։

Աչք ․ է գործարան տեսողական զգայութե՟, պատեալ հնգեակ մաշկօք կամ թաղանթովք, որք լցեալ են եռատեսակ հիւթովք ․ որպէս զի անցանելով ը՟ նոսա շառաւիղաց լուսոյն ցոլացելոց յա՟մ լուսաւոր իրաց՝ բեկբեկեսցեն առ միմեանս, և միացեալ ՚ի ներքին թաղանթս՝ նկարեսցեն զիրն որ յանդիման լինի ։

Աչօք տեսանեմք և վայելեմք զանձինս մեր և զա՟մ երևելի արարածս ․ սովաւ ձգեմք ՚ի մեզ զաշխարհս ա՟մ և զերկինս առ հասարակ ա՟մ զարդուք նորա ։ Աչքն համարի իբր զգալի միտք կամ պատկեր մտաց, որ ձգէ յինքն զա՟մ, և ձգի առ ա՟մ ։ Անշարժ և անփոփոխ մնալով ինքեան՝ դիտէ, զննէ և վարէ զայլ ա՟մ զգայարանս ։ Աչքն է գեղեցկագոյն յանդամս մարմնոյ և լուրջ քան զամենեսեան ։

ԱԿԱՆՋ կամ ՈՒՆԿՆ · է գործարան լսելեաց վայելչաձև պատշաճեալ 'ի բարեզարդութե՟ գլխոյ · որ բաղկանայ 'ի փափուկ և յառաձգական մաշկէ ԹՄԲՈՒԿ կոչեցելոյ, որ կայ 'ի բերան ականջաց կախեալ զջղէ իջելոյ յուղղոյ, յոր տպաւորի նախ շարժումն օդոյն դիմելոյ արտաքուստ 'ի ներքս · Այս մաշկ գոգաւոր է և օդալից, ունելով հաղորդութի՟ ը՟ բերանոյն 'ի ձեռն երիք խողովակի ։

Այս զգայութի՟ է յոյժ կարևոր մարդկան · մինչև առանց սորա տկարանայցեն մարդիկ ը՟ իրեարս կենակցելոյ ։

ՈՒՆՉՔ կամ ՌՆԳՈՒՆՔ · են գործարան հոտոտելեաց, որք 'ի մարդն փոքր և անձուկ են քան զբազում կենդանեաց · վասն այն և այս զգայութի՟ տկար է 'ի մարդն քան 'ի նոսա ։ Անմիջական գործի հոտառութե՟ է ներքին մաշկն ռնգաց, կամ գնտակաձև սպնգանմամբ բլթակք մնոյ՝ ՊՓՆՉԱՆՔ անուանեալք, որք կախեալ կան յուղղոյ գլխոյն · ամին իբր ունչք հաւաքելիք են միայն հոտոյ ։

Այս զգայութի՟ է առաջնորդ և իբր փորձաւոր ճաշակելեաց · զի զոր կամիմք ճաշակել՝ նախ հոտոտելով զննեմք զլաւութի՟, և ապա ուտեմք ։

Հոտառութի՟ն տուեալ է մարդոյ 'ի կազդուրումն և 'ի զօրութի՟ ուղղոյ գլխոյն · ևս և կարգել է 'ի շնչառու՟ն ․ որ է գլխաւոր խ՟մն 'ի պահպանու՟ն կենաց ։

Լեզուն է գործարան ճաշակելեաց սպնգանըման յօրինեալ [illegible] 'ի ծծել զհիւթս ․ միանգամայն և ջղալից առ 'ի զգալ զհամ նոցին ։ Բայց յայսմանէ այս գործարան սքանչելի ունի զայլատեսակ գլխաւորագոյն գործ ․ զի ոչ միայն կարգեալ է յառնուլ զճաշակ ամենատեսակ համոց, այլ՝ նաև պէսպէս օրինակաւ յօդաւորել զձայնս՝ որք ելանեն 'ի հագագէ, և յայտնել նոքօք զա՟մ ճանաչմունս և զկամս հոգւոյն ․ վասն որոյ չիք բնաւ քան զխօսս յայտնագոյն և անժխտելի նշանակ բնաւոր մտաց ։

Հ։ Ո՞րն է Լանջք ։

Պ։ Է՝ այն սահման մարմնոյ, որ ձգի 'ի պարանոցէ մինչ ցստամոքսն և կամ ցմէջքն ։ Սիրտն է մասն սորա ․ և է ազնուագոյն գործարան հոգւոյ, առաջին սկիզբն կենաց, գործատուն կենսական ոգւոց, վառարան բնական ջերմու՟ե, և պատճառ կենսական շարժման ։ Ձև սորա է բրգանման իբրև զկոկոն ։

Հ։ Ո՞րն է Որովայն ։

Պ։ Է՝ ստորին գաւառ մարմնոյ 'ի վերուստ 'ի լանջաց անջրպետեալ, որ ընդունի, եփէ և մարսէ զկերակուր ։

Հ։ Ո՞րն են Շօշափելիք ։

Պ։ Շօշափական զգայու՟ն թէպէտ ստորին և

և առաւել նիւթական է քան զայլ զգայութիւնս , բայց ընդհանրագոյն քան զնոսա · զի այլ ամենայն զգայութիւնք են յանդամս ինչ մարմնոյ միայն · իսկ սա ծաւալեալ է ընդ բոլոր մարմինն : Շօշափական կամ զգացող զգայութիւնն է յոյժ հարկաւոր մարմնոյ · զի սովաւ 'ի խնդիր լինի օգտակարացն անձին , և զգուշանայ 'ի վնասակարացն :

Շօշափելիքն 'ի մարդն առաւել կատարեալ է քան յայլ ամենայն կենդանիս : Եւ թէպէտ ամենայն մասունք և անդամք մարդկեղէն մարմնոյ՛ունին զայս զգայութիւն , սակայն մատունք ձեռաց կատարելագոյն օրինակաւ կրեն զայն յինքեանս · մինչև լնուլ ըստ իւրաց ինչ և զտեղի այլոց զգայութեանց · ըստ որում պատմի՝ թէ կոյրք ոմանք շօշափմամբ մատանցն որոշելով զնիւթ շօշափեալ իրացն , զգոյն և զպէսպիսութիւն ձևոյն՝ 'ի գլուխ ելեալ են կոփել զարձանս :

Կեանք Մարդոյ :

Հ: Քանի՞ են ընթացք կենաց մարդոյ :

Պ: Չորս · որք և կոչին հասակք · մանկութիւն , պատանեկութիւն կամ երիտասարդութիւն , այրականութիւն և ծերութիւն :

Հ: Զի՛նչ դէպ է մարդոյ 'ի մանկութեան :

Պ: Մարդս իբրև ծնանի՝ չէ ընդունակ վարելոյ զո՛ և իցէ մասունս մարմնոյ իւրոյ , և է ապուշ և տկար քան զամենայն կենդանիս · ուստի և աուսել կարօտի օգնականութ՟ե ծնողացն : Այլ կենդանիք ՟ի մեծի մասին ծնանին փակ աչօք · այլ մարդն ՟ի ծնանելն բանայ զաչս · Թէպէտև զառաջինն տկար է և ակնկար տեսութ՟ի նորա · և ապա յետ սակաւուց յաւեալ պահէ զնոսա · մինչև շառաւիղք լուսոյ առ փոքր փոքր ցոլացեալք և բեկբեկեալք տպաւորեն զտեսանելի նիւթս : Նորածին երեխայն ցաւուրս քառասուն վայելէ զերազանման կեանս · զի առ փափկութ՟ե անդամոցն ոչինչ զօրէ ինքնին առնել · և չունի նաև հնարս յայտնելոյ ծնողաց իւրոց ըզկարիս իւր · բայց յետոյ օր քան զօր զօրացեալ նորա՝ ձայնիւ լալոյ նշմարէ զպիտոյսն ՚ի տեղի բարբառոյ, և սկսանի ծիծաղել և լալ արտասուելով · զի յառաջ քան զայն ոչ լայ տխրապէս, այլ միայն ողորմ ձայնիւ մինչէ իբրև զձագս անբան կենդանեաց :

Ապա ՟ի չափու զգաստանալոյ մանկանն՝ զօրանան և անդամք նորին · և նախ զայն անդամս շարժէ, որք պիտանագոյն ն՟են · որպէս ձեռքն եայլն : Առաջին սնունդ նորա է կաթն, յորոյ պէտս բնութ՟ին հաճեցաւ կաթամբ լնուլ զստինս նորածին կանանց · և զի մի՛ խածանիցէ երեխայն զայնս՝ գիտնօրէն զրկեցաւ յատամանց, ցորքան պէտս ունիցի կաթին : Այլ իբրև յարմարաւոր դառնայ ևս հաստատուն կերակրոց, յայնժամ ըսկսանին եղանել և ատամունք նորա : Առաջին ատամունք որք ելանեն՝ են ութ, կրծիք կամ հատուք կոչեցեալք, որք են յառաջոյ կողման բերանոյն․ և սոքա ելանեն ցաւօք տղայոյն․ զոր ոմանք ասեն լինել պատիժ մեղաց նախահօրն վ̃ն ուտելոյ նորա յարգելեալ պտղոյն ։

Երեխայն շատ ննջէ առ հասարակ․ թէպէտ քուն նորա չէ շարունակ, այլ միջահատեալ․ և կարօտի ևս ստէպ ստէպ կերակրոյ ։ Եւ իբրև փոքր մի աճէ՝ սկսանի իմանալ 'ի փորձոյ զիւր բարին, և 'ի նշանաց զկամս այլոց, և ծանուցանէ այլոց նշանացի զկամս իւր ։ Ապա 'ի լինել նորա իբր ութ կամ տասնամսեայ․ սկսանի նաև թոթովելով յօդել զխօսս, և իմանալ զբանս այլոց․ որով օր ըստ օրէ առաւել բանին միտք նորա ։

Կեանք տղայոց է յոյժ վշտագին և վտանգաւոր մինչև ցվեցամեայ հասակ․ յորում ժամու ստանայ զամրութ̃ն և զապահովութ̃ն ։

Դ։ Երրորդ աստիճան կենաց պատանեկութեան ։

Գ։ 'Ի չորեքտասան ամաց հասակի․ յորում մանուկն՝ որ ցայնվայր առ սակաւ սակաւ աճէր և զօրանայր և յողդողդ կեանս վարէր, յանկարծակի 'ի միում ամի առնու գրեթէ զլրացեալ չափ հասակին, և անդամք նորա ստանան զոյժ պատշաճեալ մարդոյ․ որով 'ի մանկութ̃է փոխակերպի յայր, և լուսաւորին միտք նորա ։ Ոմանք յետ տասն և չորս կամ տասն և հինգ ամաց հա սակի այլևս ոչ աճեն և բարձրանան • իսկ այլք աճեն մինչև ցքսան և երկու ամ, և աւելի ևս :

Կանայք վաղագոյն ժամանեն 'ի չափ կատարեալ հասակի • զ՟ի որում 'ի քսաներորդում ամի հասակի իւրեանց են նոքա այնչափ կատարեալ • որպէս արք յերեսներորդումն :

Հ: Զ՛ինչ լինի մարդոյ յայրականութեան :

Պ: Իբրև հասանէ մարդն յայրականութի՟, որ սկսանի յետ երեսուն ամաց հասակի՝ ստանայ ըզկատարեալ չափ զօրութե՟ ուժոյ մարմնոյն և մըտաց • յայնժամ քաջ իմանայ զգերազանցել իւր զայլովք արարածովք, և զտէր լինելն երկրի և ա՟մի որ 'ի նմ՟ : Այլ ոչ առնու զկատարեալ չափ զգօնութե՟ և իմաստութե՟ • զի աղմկել կայ յապերասան տարադէպ կրիցն յարձակմանց • յորոց մնալ ոչ հանդարտի, մինչև ցքառասուն ամ հասակին • յորում լինի այնուհետև ծանրակաց, համբերող և հանճարեղ, և հետամուտ զգօնութե՟ և իմաստութե՟ : Վասնզի յայնժամ կարէ մարդն հանճարել զա՟մ ինչ, և փորձառութբ՟ զկանոն որոշել 'ի յոռւոյն, և զառնելին 'ի խոտելւոյն • խորհուրդք նորա լինին աւաւել հաստատունք և քաջընտիրք • միտքն հանդարտ և լուրջ, և զօրութիւնք հոգւոյն զօրեղք և գործունեայք :

Բայց աւա՛ղ՝ զի այս ժամանակ երջանկութեան կարճատև է 'ի մարդն • զի յետ սակաւուց ամ աստիճան աստիճան պակասի ոյժ մարմնոյն, և յուշ գան հիւանդութք՟ բազմատանջք · զօրութք՟ մտաց տկարանան, և անձն ողջոյն յարբուէ՟ և յաշխատասիրութէ՟ յետս ընկրկի · և մարդս չեւս մեռեալ 'ի վաթսուն ամ հասակի իւրոյ՝ տեսանէ առ դուրս զշրտասաւոյցն ծերութ՟ :

Ճ: ՕՐԷՆՔ ՊԷՏՔ ՏԱՐՔՈՅ 'Ի ԾԵՐՈՒԹԵԱՆ :

Գ: Իբրև մարմին մարդոյ հասանէ 'ի լրացեալ չափ կատարելութ՟ ամ՟ անդամոց, և 'ի կատարեալ բարձրութ՟ և 'ի լայնութ՟՝ աւաւելու նաև 'ի ծանրութիւն և 'ի ստուարութ՟, նա և 'ի տարտամութ՟ : Առաջին նշմարանք ծերութ՟ լինին նախ քան ըզքառասուն ամն կենաց · ապա առ աստիճան աստիճան բազմանան և բացադոյս երևին այնք մինչև ցվաթսունն · և իբրև մերձ լինի մարդն յեօթանասուն ամն՝ ամ՟ մասունք մարմնոյ զգան ը՟ բաւականին զմերձենալ մահուան, և ազդարար լինեն հոգւոյն՝ թէ ժամ է մեկնել նմ՟ 'ի մարմնոյն, և պատրաստել զինքն 'ի չու առնել յիւր սեպհական կայան : Մահն առ հասարակ ժամանէ յառաջ քան զյիսուն ամն կենաց · և սակաւք են յոյժ որք աւելի երկարակեաց լինին :

Մահն է հասարակ ամ՟ կենդանեաց, և այլ արարածոց · զի հոգին է միայն անմահ և յաւիտենական · և է պատիժ տուեալ մարդոյ յաղագըս առաջին հօրն մերոյ յանցանաց : Եւ քանզի չիք հնար զերծանելոյ 'ի մահուանէ, պարտ է բարւոք քաղաքավարիլ յաշխարհի աստ, առ 'ի չզարհուրիլ՝ երբ հասանէ 'ի դուրս ։

Հ։ Զի՞նչ է պատճառ պէսպիսութեան կենաց մարդկան ։

Պ։ Երեք են գլխաւոր պատճառք երկարակեցութեան մարդկան, և նոցին այլևայլ հանգամանաց. և են՝ կլիմայ, մնունդ և բարք ։ 'Ի ցրտային և 'ի չոր գաւառս առ հասարակ մարդիկ լինին առաւել երկայնակեացք և սպիտակք ։ Որք միանգամ շատանան թեթև, սակաւանիւթ և անխառն կերակրովք, և խորշին յայնմ ամենայնէ, որք պատճառեն զհում և զաւելորդ հիւթս՝ լինին առողջք, առոյգք և բազմամեայք ։ Զնոյն է ասել և զայնցանէ՝ որք զուսպ պահեն զկիրս իւրեանց, և սանձեն զվառումն և զապաժոյժ եռանդն ոգւոց ։ Նոյնպէս են որք հրաժարեալք 'ի փափկութեանց աշխարհի՝ վարեն զկեանս կրօնաւորական. զորոց գեղեցիկ գրէ ոմն Փռանկիսկոս անուն 'ի ճառելն վասն երկարակեցութեան նախնի հարցն անապատականաց ։ 'Ի կրօնաւորական կեանս է՝ ասէ՝ հանդարտութիւն բարուց, մեռուցումն ախտից, չափաւոր աշխատութիւն, զմայլումն և տեսութիւն աստուածայնոց, խնդութիւն ոչ զգայական, յոյս ազնուական, երկիւղ փրկական, տրտմութիւն քաղցր, ողջախոհութիւն՝ կենաց երկարիչ քարոզեալ յամենեցուն, կերակուր թեթև, անկողին կարծր, և շապիկ խոշոր ։ Իսկ կերպարանաց դիմաց, և գունոց մարդկան զայլևայլութիւն բազումք գրեն այլևայլ մննդեան և սովորութեան նոցին · սակայն առաջին պատճառ ամենայնի սոցա է կլիմայն և երկնին՝ ընդ որով կեան ։

ԿԵՆԴԱՆԱԾԻՆ ԱՆԱՍՈՒՆՔ ԿԱՄ ՉՈՐՔՈՏԱՆԻՔ ։

Հ. ՈՅ՛Ք ԵՆ ԱՅԼ ԿԵՆԴԱՆԻՔ ԾԾԵՑՈՒՑԻՉՔ ։
Պ. Չորքոտանիք ։
Հ. ՈՐՔԱ՞Ն ԵՆ ՏԵՍԱԿՔ ՆՈՑԱ ։
Պ. Տեսակք յայտնի չորքոտանեաց ՚ի կենդանաբանից համարին ցչորս հարիւր և յիսուն ։ Սոքա սեռօրէն բաժանին յընտանիս և ՚ի վայրենիս ։ Ընտանեաց ոմանք պահին ՚ի պէտս ծառայութեան · որպէս ձի, էշ, ուղտ ևայլն · այլք ՚ի դարման · որպէս անասունք · եթէ մեծամեծք, որպէս արջառք · և եթէ մանունք, որպէս ոչխարք ևայլն ։
Հ. ՈՐ՞Ն Է ՄԵԾ ՚Ի ՉՈՐՔՈՏԱՆԻՍ ։
Պ. ՓԻՂՆ ։ Սա է կենդանի զօրաւոր և անճոռնի, որոյ բարձրութիւն, յորժամ հասեալ իցէ ՚ի լրացեալ չափ իւր՝ է իբր երեքտասան ոտնաչափ, և երբեմն աւելի ևս · նոյնչափ և երկայնութիւն նորա ։ Իսկ ստուարութիւն մարմնոյն է այնչափ, մինչև շրջապատի նորա առաւելուլ դրեթէ կրկնապատիկ քան զերկայնութիւն իւր · որոյ սակս ոտք նորա կարի իմն ստուար են առ ՚ի դիւրաւ բառնալ զայնքան ահագին ծանրութիւն մարմնոյն ։ Գլուխ նորա է այլանդակ և ստուարամորթ ·

որպէս և ամ՟ մարմինն · ականջքն մեծ և երկար · աչքն թէև ը՟ ինքեան նկատեալ մեծ են, բայց նկատմամբ չափու բոլոր մարմնոյն՝ մանր · արտևանունք նորա ունին զհերս զօրէն արտևանանց մարդոյ · ոսկր գլխոյն 'ի ճակատն ստուար է իբրու եօթն մատնաչափ · վ՟յ եթէ մխեսցի նետ 'ի ճակատ նորա՝ ոչինչ վնասի անտի · սակայն 'ի յետին կողմն գլխոյն 'ի միջին տեղւոջ կարի իմն նուրբ է ոսկր նորա, մինչև նաև թեթև ինչ հարուած վիրաց սպանանէ զնա ։ Բայց որ նշանաւոր համարի և զարմանալի 'ի փղին՝ է քիթ կամ կնճիթ նորա, որ տուեալ է նմ՟ փոխան ձեռաց և զինուց, զոր հասուցեալ մինչև ցգետին՝ նովաւ առնու զխոտն, և զայլ ամ՟ կերակուրս, և տանի 'ի բերան իւր · նովաւ պատերազմի ը՟ այլ կենդանեաց, և պատսպարէ զանձն 'ի թշնամեաց ։ Այլ քանզի այս միակ և կակուղ զէն տակաւ իմն էր այնպիսի մեծ կենդանւոյ՝ տուեալ նմ՟ երկու երկայն, ստուար և կարծր եղջերաձև ատամունք՝ որք 'ի վերին ծամելիս նորա, որով հարկանէ զմարտնչօղս ը՟ իւր ։ Այս երկու ատամունք փղոսկր կոչեցեալք՝ պատուականագոյն են քան զոսկերս այլ ամ՟ կենդանեաց, յորոց գործեն մարդիկ պէսպէս արհեստակերտուածս ազնիւս և տևականս ։

Փղին քաղցր է բնութ՟ և դիւրընտել, կարի ճարտար և լուրջ · զի փութով ուսանի առնել՝

Երես. 96



Առիւծ։



Փիղ։

զոր կամիցին մարդիկ պահապանք նորա ։ Ուսանի ձգել զկառս, խաղալ և առնել պատերազմ ․ ’Ի ծայր կնճ̃թի սոցա կապէին ’ի նախնումն մարդիկ զսուր մերկ, որով և վտանգէին զթշնամիս ․ կանգնէին ’ի վերայ նոցա և փոքրիկ աշտարակս, յոր մտեալ քանի մի զօրականք պատերազմ տային անտի իբրև յամրոցէ ։ Փիղք երկնչին ’ի հրոյ ․ ուստի այժմ չե՛ն իմիք պիտանի ’ի պատերազմունս, եթէ ոչ ’ի բառնալ զբեռինս ․ զի կարեն բառնալ իբրու երեք հազար լտր ծանրութ̃ բեռինս ։ Փիղք որք ’ի Հնդիկս լինին՝ մեծ են քան զփիղս Ափրիկոյ ․ և գտանին անդ նաև փիղք սպիտակք, որք առ սակաւուն կարի թանկագին են ։ Կեանք նոցա տևէ մինչև ցերեքհարիւր ամն ․ ըստ ոմանց մինչև ցհինգհարիւր ։ Փիղն ուտէ ցքառասուն հօխայ, այն է ցհարիւր և քսան փութ որիզ կմ̃ հաց, և ըմպէ զբ̃զմ դոյլ ջուր ։

Առիւծ ։ Սա թէպէտ յոյժ փոքր է քան զփիղն, բայց յոխորտութ̃, զօրութ̃ և քաջասրտութ̃ նախապատիւ քան զնա և քան զայլ ամ̃ կենդանիս ցամաքայինս ․ և տիրապէս կոչի թագաւոր գազանաց ։ Է սա կենդանի շիկամազ՝, ահաւոր և փառահեղ, որոյ գլուխն և երեսն մեծ և ահագնատեսիլ, զարդարեալ է երկայն և թաւահեր բաշիւ ([illegible]) ․ մարմին նորա զօրաւոր, թեթև, ջլային և միանուտ գոլով՝

արագ շարժի և վազէ , և ոստնու բարձր ։ Բերան նորա մեծ է յոյժ , և ձեռք կամ առաջին ճիրանք նորա սաստիկ ուժով , և յաջողակ 'ի պատառել ։ Ձայն նորա ահաւոր է և զօրեղ · և 'ի զայրանալն իւր գոչէ ահագին յոյժ և սասանեցուցանէ զամ՟ զլսօղս · կնճռէ յայնժամ զմորթ երեսացն և երևեցուցանէ զատամունս իւր · ցցէ զհերս բաշի իւրոյ , և զձետ (պոչ) իւր հարկանէ ուժգնութ՟բ ը՟ գետին · բանայ զիւր մեծ բերանն և հանէ զերկայն լեզուն արտաքս , և այնպիսի իմն կատաղութ՟բ սկսանի աստ և անդ ընթանալ , մինչև անհնար է յայնժամ տեսանել զնա և չդողալ ։ Մեծութ՟ն յաղթանդամ առիւծուց է իբր ութն ոտնաչափ · իսկ փոքունց չորս և կէս ։ Էգ առիւծն չունի զբաշ 'ի վերայ գլխոյ և պարանոցի , և է իբրու չորրորդ մասամբ փոքր քան զարուն , և նուա՛զ զօրաւոր և սրտեղ քան զնա ։ Այս կենդանի ահաւոր բնակի 'ի ջերմ գաւառս հարաւային Ասիոյ , և յԱփրիկէ ։ Կարէ կեալ և 'ի ցրտային երկիրս , այլ ոչ ծնանիլ ։ Բոյս բարուց նորա է վեհանձն և մեծարու · մինչև յոլովակի` յորժամ չիցէ սովեալ կամ բարկացեալ` ոչ վնասէ տկար կենդանեաց , որպէս և մանկանց · խնայէ 'ի նոսա որք խոնարհին առաջի նորա ։ Ոչ մոռանայ զերախտիս մարդոյ · ուստի և ընտելանայ · սակայն դիւրաշարժ է 'ի բարկութ՟ն · և երբեմն վնաս տայ նաև տեառն իւրում ։ Ի նախ-

Նր. 98



Ինձ։



Ռնգեղջիւր։

նումն առիւծունք լծեալ ՚ի կառս յաղթականս՝ ածեալ լինելին յորս և ՚ի պատերազմ։ Սոքա երկնչին յոյժ յօձից և ՚ի հրոյ։

Վագր։ Սա է գազան դժնդակ և կատաղի քան զառիւծն և զայլ ամ՟ գազանս, թէպէտև ոչ այնքան զօրաւոր· և է նաև յոյժ թեթևամարմին և սրընթաց։ Կերպարան նորա և ձևն ը՟ ա՟մի նման է կատուի· ոստնու յական թօթափել բազում կանգուն բարձրու՟բ և հեռաւորու՟բ, որով ըմբռնէ և պատառէ զա՟մ կենդանիս, նաև զմարդն· և ՚ի պատառելն լափէ և ծծէ զարիւն նոցա։ Մեծու՟ն նորա է չորս ոտնաչափ յերկայնու՟ն, և մաքառի ը՟ փղի և ը՟ առիւծու, որոց և երբեմն յաղթէ։ Զայս գազան ամեհի ոչ իւիք հնարիւք մարդիկ ձեռնհաս գտան ընտելացուցանել· զի ոչինչ երախտիս ճանաչէ, մինչև անգամ խածանել զձեռս այնորիկ, որ մատուցանէ նմ՟ կերակուր։ Ըստ այսմ չիք և ոչ մի գազան այնպէս ատելի և անգութ իբրև զսա, որպէս և վնասակար։

Ինձ և Յովազ։ Ս՟ք ունին զմորթ պիսակ, սևաստեղօք կամ՝ աչօք զարդարեալ· և են կատաղի յոյժ· այլ ոչ ՚ի չափ վագեր· և երկնչին ՚ի մարդկանէ։ Հնար է զսոսա ընտելացուցանել, մանաւանդ զփոքրագոյն տեսակն՝ որ ծառայէ մարդկան իբրև զշուն։

Ռնգեղջիւր։ Է սա գազան մեծ և զօրաւոր, որ ունի յռնգունս իւր զմի միայն ստուար եղջիւր, որով պատերազմի ընդ այլ գազանս և մանաւանդ ընդ փղի, որում է ոխերիմ թշնամի, զոր և հարկանէ եղջերաւն ընդ փափուկ փոր նորա։ Բարձրութիւն նորա է իբր վեց ոտնաչափ· իսկ երկայնութիւն երկոտասան· նոյնչափ և շրջապատ մարմնոյն· ձև նորա և ձայնն՝ նման եզին· բայց գլուխն և ականջք առաւել նման խոզի· մորթ մարմնոյն լերկ և անմազ· այլ ստուար և կարծր· գոյն մորթոյն թուխ դեղնագոյն ։

Այս կենդանի դուն ուրեմն յաղթի վասն անգծելի պատենից՝ որովք պատեալ է, և վասն սաստիկ ուժոյն· որով յիրաւի լինէր գլխովին անպարտելի, եթէ չունէր դժուարութիւն դառնալոյ ընդ կրունկն, և անձեռնհասութիւն հայելոյ ընդ ամենայն կողմն ։ Խոտաճարակ է սա և շատակեր, և բնութեամբ հեզ և դիւրընտել·

Արջ ։ Է գազան յաղթանդամ, կարծրամորթ, թաւամազ և երկայնահեր, վասն այն և անձև յոյժ· ոտք նորա մեծ են իբրև զմարդոյ· զառաջինսն՝ի կիր առնու փոխանակ ձեռաց, որով բառնայ և ձգէ քարինս հարուստ մի երկար։ Զգայարանք նորա զօրաւոր են յոյժ, մանաւանդ շօշափելիքն և հոտոտելիքն· և ինքն բազմահնար և ճարտար է քան զայլ բազում կենդանիս, ևս և ուժեղ և պատառօղ· բայց վատասիրտ և երկչոտ ։ Երեք են տեսակք արջուց ·



Արջ։



Գայլ։

թուխ . սեաւ և սպիտակ . սպիտակն գտանի միայն ՚ի կարի խիստ ցրտային գաւառս, այսինքն ՚ի Ռուսաստան և ՚ի Թաթարս .

Գայլ : Է գազան փոքր և տկար քան զարջն . սակայն վնասակար քան զնա : Ձևով և կերպարանաւ և մեծութեամբ նման է յոյժ շան, սակայն բարուք՝ ամենայն իրօք աննման . որք ՚ի բնէ անհաշտ թշնամիք են միմեանց : Շատակեր է, և անյագ մսակեր քան զամենայն գազանս : Զգայարանք նորա սուր են, մանաւանդ հոտառութիւն . մինչև առնուլ նմա զհոտ մսոյ իբր յերկու մղոնաչափ հեռաւորութենէ : Ակռն և ծամելիքն այնքան զօրաւորք են, մինչև նոքօք բառնալ նորա զամբողջ ոչխարն, և երագ վազել ընդ երկար :

Այս կենդանի ճարտար է յոյժ և բազմահնար ՚ի գտանել զդարման կենաց : Գոլով նորա տըկարագոյն քան զբազում կենդանիս, և ոչ գտանելով յոլովակի յանտառս և յանապատս զկերս սովորաբար ճարակ առնէ ինքեան, մերձ գայ գիշերայն ՚ի շէնս և յաւանս, և գաղտ գտեալ զկայան ոչխարաց՝ յանկարծ յարձակի ՚ի վերայ նոցա, և յափշտակեալ զմին ՚ի նոցանէ, և կամ խածանելով հատեալ զմասն ինչ մարմնոյ նոցին՝ շտապաւ ելանէ ՚ի միջոյ . այլ եթէ չյաջողեսցի այն՝ զի մի՛ ՚ի յայտ եկեսցեն հետք իւր՝ զանխուլ դիմէ յայլ կողմն, և առեալ շրջան մեծ՝ կամովին թագչի . ապա անդրէն եկեալ ՚ի նոյն տեղի՝

մնայ դարմանեալ այնքան՝ զի յանպատրաստ գըտեալ զհովիւսն և զպահապան զշունս՝ հասանէ 'ի վերայ որսոյն և տանի զնա ։ Գայլք ոչ իւիք հնարիւք ընտելանան մարդկան ․ և օգուտն զոր մատակարարեն մեզ՝ է թաւամազ մորթ նոցին ։

Ուղտ ։ Այս կենդանի կարգեալ 'ի բառնալ բեռինս ծանունս յայն ամենայն երկիրս, ուր պակասութիւն է իշոյ և ջրոյ ․ վասն այն և բնակէ յոյժ 'ի ջերմ, յանջրդի և յաւազուտ գաւառս ։ Տոկայ ծարաւոյ, և ուտէ ախորժանօք զչոր խոտս և փուշս բուսեալս յաւազուտ անապատս ։ Ողն նորա ուռուցեալ՝ է պատշաճեալ 'ի բառնալ զմարդիկ և զբեռինս նոցա ։ Մեծ և զօրեղ ուղտն բառնայ բեռինս իբր հազար լիտր ծանրութեան ․ և ուղտք Ափրիկոյ առ հասարակ մեծ են և զօրաւոր, և սակաւապէտ քան զուղտսն Ասիոյ ։ Բայց 'ի հասարակաց՝ կայ տեսակ մի ուղտու, որ ունի զերկուս ուռոյցս 'ի թիկունս ։

Բայց 'ի բեռնակրութեան օգտակարութենէն՝ է սա նաև պիտանի մարդոյս իւրով կաթամբ, գոլով այնմիկ առողջարար և մաքրիչ արեան, և դարման թոքախտութեան ․ որպէս և իւր միսովն, զոր ուտեն բնակիչք հարաւային կողմանց ․ այլև մորթ նորա է կարևոր մարդկան, զոր զգենուն ․ նոյնպէս ստևնորին, յորմէ գործեն կապերտս ։ Ուղտն ոխակալ է և կատաղի՝ երբ վնաս ինչ կրէ յումեքէ, զոր ոչ մոռանայ ընդ երկար ․ Բայց ընդ-

Եր. 102



Ուղտ։



Խոզ։

հանրապէս հեզ է և հլու մարդկան ։ Կեանք նր՟ ձգի իբր քսան ամ ․ և զայս իմանալ պարտ է զուղտուց ջերմ գաւառաց ․ եթէ ոչ՝ ուղտք բարեխառն և ցրտային կողմանց սակաւ ապրին, և ոչ ևս ծնանին ։

Ձի ։ Ի սա օգտակարագոյն և կարևորագոյն ՚ի մէջ կենդանեաց, որք՝ նպաստամատոյց լինին մե՟զ ՚ի ծառայութի՟ ․ զի բառնայ զնա ՚ի վ՟ր իւր, և տանի ուր և կամիցի նա ․ ձգէ զկառս և զարօր ․ բառնայ և զբեռինս ծանունս, և անվաստակ տանի յերկար տեղիս ։ Բնութի՟ սորա և այլ ազնիւ հանդամանք քաջայայտ իմն են ամ՟ցն ։

Խոզ ։ Ի կենդանի անձև և տգեղ և նուաղ հարկաւոր քան զայլ ընտանի կենդանիս ․ ևս և աղտեղասէր, աղբևայոյզ, որկորամէտ և վախշոտ, և ի՟ր մ՟սն գարշելի և անպիտան ։ Թուի թէ Արարիչն ընտանեցոյց մեզ զայս կենդանի յօրինակ գարշելի և անարգ բարուց ։

Ջորի ։ Սա ծնանի յէշոյ և ՚ի ձիոյ ․ սակայն ծնեալն յէշոյ և ՚ի մատակ ձիոյ առաւել մեծ է և զօրաւոր ։ Նա է կենդանի անհարազատ, որ թէպէտ ունի զարու և զէգ՝ որք և զուգին ը՟ իրերաց, սակայն ոչ ծնանի, բայց եթէ հազիւ երբեք ։ Քաջայարմար է ՚ի բառնալ զմարդն ՚ի վերայ իւր զօրէն ձիոյ, այլ ոչ այնքան իբրև զնա ․ բայց բառնայ բեռինս ծանունս քան զնա, և յերկար տոկայ աշխատութե՟ց և տօթոյ, և անդանդաղ գնայ ը՟ լերինս, և ը՟ դժուարակոխ և գահավէժ տեղիս անվտանգ ընթանայ։

Էշ։ Սա թէպէտ տգեղ կենդանի է և գռեհիկ, այլ մի յօգտակար և ՚ի պիտանի կենդանեաց համարի վասն ծառայութեան, զոր ծառայէ մարդոյն, բառնալով զծանրագոյն բեռինս անհամեմատ չափու մեծութեան իւրոյ, և վասն տոկալոյ նորա բազում և երկար աշխատութեանց։ Այլ որ առնէ զնա արժանի սիրոյ և քաջ խնամակալութեան առաւել քան զոր ունին մարդիկ զնմանէ՝ է սակաւապէտ և ժուժկալ բարք նորա, որով շատանայ սակաւ ինչ կերակրով, նաև լոկ խոտով և տերևովք։

Ոչխար։ Է չորքոտանի կարի յոյժ պիտանի մարդոյ. միս նորա համեղ է և պարարտ, և կաթն պարարտագոյն. ասրն ջերմագոյն և պիտանի ՚ի հանդերձս, յորմէ գործի չուխայ։ Եւս է առաւել հեզ, քաղցր և անմեղ քան զա՟մ կենդանիս, և ը՟ ա՟մի անզէն, հլու և հպատակ մարդկան։

Այծն տարբերի յոչխարէն մորթով մարմնոյն, և չէ այնքան պիտանի իբրև զնա. ունի և զմօրուս, և բարուք առաւել զուարթ է և արի և դիւրընտել մարդկան. որպէս և թեթև և արագաշարժ քան զոչխար։ Մորթ նորա լինի կաշի ազնիւ, և ՚ի մազից նորա գործեն մարդիկ ցփսիս (շալ) և կերպաս ՚ի զգեստ և ՚ի ծած-



Ջորի։



Եղջերու։

կոյթ ։ 'Ի մէջ այծից առաւել գեղեցիկ, երկայնահեր և նրբամազ՝ են այծք Հերակլիոյ և Գաղատիոյ, ևս և աշխարհին Բարբարոսաց և Հնդկաց ։

Եզն կամ Արջառն է պիտանագոյն քան զա՟մ ընտանի կենդանիս և բազմաշահ ։ զի այլ կենդանիք պիտանի են մարդոյն 'ի սնունդ կամ 'ի ծառայութ՟ի ։ իսկ սա երկոքումբք ևս օգտէ նմա ։ հերկէ զերկիր վասն սերմանցանի, և ձգէ ըզծանրաբեռն սայլս ։ տայ 'ի սնունդ մարդկան կաթն առատ և պատուական ։ մատակարարէ զմիս իւր սննդարար, համեղ և զա՟մ խառնուածոց մարդկան պատշաճեալ ։ 'Ի մորթոյ ն՟ր գործեն կօշիկս, և այլ պէսպէս իրս ։ Յեղջերաց նորա շինեցին զառաջինն զբաժակ ըմպելոյ, մինչև գտեալ էր ապակւոյ ։ որպէս և զառաջին գործի սաստկացուցանելոյ զձայն մարդոյ, այսինքն զեղջերափողն ։ վարէին երբեմն և 'ի պէտս թափանցիկ նիւթոյ, որով գործէին սուտ ապակիս, կանթեղս ևայլն ։ շինէին և սանտերս և այլ բազում իրս ։

Բարք Կովու առաւել քաղցր է, և ինքն ևս կարևորագոյն մարդոյ քան զեզն և զցուլ ։ որպէս սա արիասիրտ քան զնա ։

Եղջերուն է կենդանի թեթև, սրընթաց և վայելչատեսիլ, որոյ արուք միայն ունին եղջիւրս բազմաճիւղս ը՟ ձևոց ծառոց, զորս թափեն ամ՛ ըս̃ ամէ 'ի սկիզբն գարնան, և դարձեալ նոքօք զարդարին յամառան : Մեւօրէն այս կենդանի քաղցր և դիւրընտել մարդկան՝ յանտառս և 'ի դաշտավայրս բնակի. և է կարգեալ 'ի դարման և 'ի զբօսանս մարդկան. բայց յԱմերիկա և յայլ ինչ ինչ կողմանս աշխարհի՝ փոխան արջառոց դարմանեն ո̃ք առ 'ի մարդկանէ. և ըս̃ օրինակի նոցա 'ի ցերեկի երթան արածել 'ի մօտակայ տեղիս, և ը̃ երեկս դառնան 'ի տուն տեառն իւրեանց, և մատակարարեն զքաղցրաճաշակ միս իւրեանց. որպէս և զկաթն և զմորթ 'ի հանդերձս :

Նապաստակ : Է թեթեւամարմին և սրընթաց փոքրիկ երէ, որ ոչ որոճէ. և գտանի յամ̃ տեղիս աշխարհի, բաց 'ի կարի իմն ցրտասառոյց գաւառացն Հիւսիսոյ : Բազմածին է յոյժ, հեզիկ և դիւրընտել. Թէպէտև ոչ յօժարութ̃ բնակի ը̃ մարդկան. խնդրէ հանապազ ազատանալ և յարձակավայրս բնակել : Լեռնաբնակ նապաստակք մեծագոյն են քան զդաշտայինս, և միս նոցա առաւել համեղ է և պարարտ :

Կայ և այլ կենդանի մի ամենեւին նման նապաստակի, որ կոչի ընտանի նապաստակ. գոյն նորա սպիտակ, դեղնագոյն և սեաւ, կամ խայտաբղէտ յերկուց և կամ յերից գունոց աստի. միս նորա սպիտակ է և պարարտագոյն քան զնապաստակին :



՝Նապաստակ։



Շղուէս։

Կատու : Եւ սա ստեղծեալ յԱ՟յ առ որսալ եւեթ զմկունս, որք են կենդանիք վնասակարք տանց, և գողք սպառիչք մթերից և ընչից մարդկան. և երևելի է միայն ճարտարութ՟ք և յաջողակութ՟ք, որով որսայ զնոսա : Ծոյլ բարուք և ինքն գող է և անհաւատարիմ, և ապերախտ յոյժ :

Շունն է մի ՚ի կատարեալ և յօգտաւէտ կենդանեաց աշխարհի : Բնաւորս ունի այնպիսի, մինչև թուի ստեղծեալ յատուկ ՚ի պէտս և ՚ի ծառայութի՟ մարդոյ : Ունի ը՟ հարազատ սիրոյ և անձնանուէր հնազանդութի՟ առ մարդն. որպէս և հիանալի իմն ճարտարութի՟ և յաջողակութի՟ առ այն ամ՟, որ օգտակար և կարևոր է մարդոյ : Քանզի պահպանէ զմարդն և զամ՟ զստացուածս նորա ՚ի գողոց և ՚ի թշնամեաց, արկանելով բազում անգամ զանձն իւր ՚ի վտանգ մահու. օգնէ նմա ՚ի յորս իւր, և կատարէ ուրախութ՟ք զամ՟՝ զոր ինչ հրամայէ տէր իւր : Եթէ մարզեսցի՝ գնէ զմիս և զայլ կերակուրս ՚ի վաճառանոցէն, և բերէ հաւատարմութ՟ք ՚ի տուն. դարձուցանէ հանդարտութ՟ք զխորովելի միսն շամփրով. առնէ զդռնապանութի՟, փակելով և բանալով զդուռն տանն. գնայ յորս երէոց ը՟ տեառն իւրում, և ՚ի զբօսանս. խայտայ և խաղայ ը՟ նմ՟, և իւրով ողոք ընկերակցութ՟բ զուարճացուցանէ զնա : Միանգամայն ասել՝ շունն է առաւել դիւրանսաց, պիտանի և զուարճալի քան զա՟մ անասունս · որում միայն ձին կարէ հաւասարիլ, և առ մեծագոյն զօրութեան և սրընթացութ՟ իւրոյ առաւելուլ ևս ։

Աղուէսն է չորքոտանի հնարագէտ և խորամանկ, ձևով և մեծութ՟ նման շան, թաւամազ և գեղեցկամորթ, դեղին և կարմիր · բայց գտանին 'ի Հիւսիսային կողմանս սեաւք և սպիտակք ։ Մորթ նորա է կարի ջերմացուցիչ · վա՟ այն և պիտանի առ պատսպարել 'ի ցրտոյ, որպէս և 'ի զարդ վայելչութ՟ ։ Կերակուր նորա են մանր չորքոտանիք · այսինքն մկունք, նապաստակք, թռչունք, և այլ սոցին նման կենդանիք, զորս որսայ զարմանալի հնարիւք և դիւրութ՟ ։ Երկնչի 'ի մարդկանէ, և սակաւ վնասէ նոցա · և միանգամ այն դիւրաւ ընտելանայ ։

Կապիկ ։ Է սա գերագոյն տեսակ 'ի մէջ ա՟մ անբան կենդանեաց · զի բերէ առաւել զնմանութ՟ի մարդոյ քան զայլ կենդանիս, եթէ ճարտարութ՟ և ուշիմութ՟ և եթէ յաջողակութ՟ առ բիւրատեսակ գործս հնանալիս · մինչև մարթ է սահմանել զնա կենդանի մարդակերպ ։ Զուրկ է թէպէտ 'ի բարբառոյ, այլ այնպիսի նշանօք գիտէ զա՟մ զներքին կամս և զկիրս իւր յայտ առնել մարդկան, մինչև անհնար է չիմանալ զոր նա կամին ։ Եթէ հարկանիցի՝ լայ և հառաչէ, բայց առանց արտասուաց · հանէ զձայն յայտարար բարկութ՟ եւ այպանելոյ , որպէս եւ զաղաղակ զարհուրեցուցիչ․ ունի բարս նմանողականս , որով ջանայ առնել զոր ինչ միանգամ յայլոյն տեսանէ ։ Աղտեղի է եւ տգեղ, եթէ ձեռով եւ եթէ բարուք․ որպէս եւ գող , վնասագործ եւ վաւաշոտ ։

Ուսանի փութով զայն ամ՟, զոր ինչ միանգամ գործեն մարդիկ․ այսինքն լուանալ զանօթս , դնել զսեղան , աւել ածել ՚ի տան , բերել զջուր , վառել եւ արծարծել զհուր , հարկանել զթմբուկ , եւ առնել զամ՟ գործս ծառայի ։ Ուսանի եւ խաղալ ՚ի վերայ չուանի , գրել եւ չափել , առնել պէսպէս խեղկատակութ՟ս, եւ ձեւացուցանել զխաղ թատրոնական ։

Օէնք Կապկաց են ոստք ծառոց , յորս ՚ի հալածիլ ապաւինին․ որպէս եւ քարինք , զորս կուտեալ ձգեն յերեսս թշնամեաց , եւ սաստիկս ՚ի դիմի հարկանեն նոցա ։ Էգք նոցա հանգոյն կանանց ունին երկու ստինս կախեալս առ կրծովք․ որք եւ առեալ զձագս իւրեանց ՚ի ձեռս դիեցուցանեն զնոսա , եւ բարձեալ տանին ՚ի վերայ ուսոց իւրեանց՝ ը՟ օրինակի կանանց Եթէովպացւոց եւ Արաբացւոց ։

Բազում տեսակք են Կապկաց․ յորս է տեսակ իմն մարդաչափ եւ մարդաձեւ , զոր ոմանք մարդ վայրենի կամ մարդ անտառաց կոչեն , հայելով ՚ի ձեւ մարմնոյ նորա՝ որ ը՟ ամ՟ի նման է մարդոյ • միայն թէ չունի զնոյն վայելչութիւն և գեղեցկութիւն : Գնայ սա առ հասարակ իբրև զմարդ ՚ի վերայ երկու ոտից , և ձեռօք իւրովք գործէ զամենայն ինչ • նստի ընդ մարդկան ՚ի սեղան և ուտէ պատշաճաւոր շարժմամբ • զգենու զզգեստ մարդկան , և այնպէս կենցաղավարի ընդ նոսա , մինչև չէ՛ հնար որոշել զնա ՚ի մարդկանէ , եթէ ոչ ստիպեսցի ՚ի խօսել :

ԹՌՉՈՒՆՔ .

Հ: Զի՞նչ են Թռչունք :

Պ: Թռչունքն են կենդանի երկոտանի , փետուրաւոր , թևաւոր և կտցաւոր՝ որք սլանան յերկինս :

Հ: Քանի՞ են տեսակք նոցա :

Պ: Մինչև ցայժմ մարդիկ գտին իբր 2500 տեսակս • թող զխառնուրդս նոցա կամ զծնեալսն յայլեայլ տեսակէ : Ոմանք ՚ի նոցանէ են գիշատողք , ոմանք վայրենիք , և ոմանք ընտանիք :

Հ: Ո՞յք են գլխաւոր Թռչունք ,

Պ: Արծուին : Սա է թռչուն զօրաւոր , բարձրաթռիչ և մեծագոյն քան զամենայն թռչօղ հաւս , նմանեալ առիւծու ՚ի չորքոտանիս • է և վեհանձն , քաջամարմին և սրատես : Մեծագոյնքն լինին ՚ի Հարաւային կողմանս՝ Քոնտօր կոչեցեալք , որոց երկայնութիւն թևէ ՚ի թև է վեշ-



Կապիկ ։



Կապկի մարդաձև ։



Արծիւ:



Կաքաւ:

տասան ոտնաչափ. և սոքա վերացուցանեն 'ի բարձունս և զեղլինս անգամ ։

Գիշատող Թռչունք են և Ցին, Անգղ և Բազէ. և յետ սոցա այլք բազումք ։

Հ. ՈՅՔ ԵՆ ՄԱՅՐԵՆԻՔ ։

Պ. Սոքա աւելի են քան զգիշատողս և զընտանիս, թէ ը͞ բազմութեան տեսակաց, և թէ ը͞ թուոյ նոցին. և ըստ մեծի մասին ոչ միայն ուտելի են, այլև գեղեցկատեսիլ և քաղցրանուագ. և մեծքն 'ի նոցանէ ոչ զանցանեն զմեծու͞թ հաւուց. որպիսի են Սոխակ, Սարեակ, Տատրակ, Կաքաւ, Կռունկն, Ծիծեռն և այլն ։

Հ. ՈՐՊԻՍԻ ԹՌՉՈՒՆ Է ԿՈՂԻԲՐ, և ԹՌՉՈՒՆՆ ԴՐԱԽՏԻ ։

Պ. Կողիբրի կոչին տեսակք ինչ մանր թռչնոց, որք գտանին 'ի Հնդիկս և յԱմերիկա. որք և ԹՌՉՆԱՃԱՆՃ ։ Այլևայլ է մեծու͞թ նոցա և գոյն. բայց ամ͞քն գեղեցիկ են յոյժ, և առաւել եւս մեծագոյն տեսակք. որոց գոյնքն այնքան պայծառ են, մինչև գրեթէ չեն ինչ ընդհատ 'ի գունոց գոհար ականց ։ Գլուխ նոցա է կանաչագոյն ոսկենիշ կիտուածովք զարդարեալ. լանջքն նոյնպէս կանաչ փայլուն, և փորն ոսկեգոյն. աչքն ունին զգոյն և զտեսիլ անդամանդի. իսկ կտուցն և ոտքն են 'ի գոյն սեաւ և պայծառ աբանոսի ։

Իսկ Թռչունք դրախտի են եւս գեղեցկագոյն

Թռչունք աշխարհի․ և նոյնպէս գտանին 'ի Հընդիկս : Ամ գլխաւոր գոյնք գտանին 'ի նոսա այնպիսի ըխառնութբ և պայծառութբ, մինչև հիացուցանել զտեսօղսն : Բազմատեսակք են յոյժ․ այլ գլխաւոր տեսակք նոցա են երկու․ մինն մեծագոյն 'ի չափ աղաւնւոյ, որ գեղեցկագոյնն է․ և միւսն փոքրագոյն :

Հ: Ո՞յք են ընտանի Թռչունք :

Պ: Ընտանի Թռչունք են առ հասարակ հաւք, հնդկահաւք, բադք և սագք, կարգեալ 'ի դարման մարդոյ բարեսնունդ և համեղաճաշակ մըսով իւրեանց և ձուով՝ որք են նոցա փոխան կաթին : Գոյն նոցա է բազմատեսակ մի քան զմի գերազանց․ նոյնպէս և ձեւն :

Հ: Որպիսի հաւ է փասիանն :

Պ. Փասիանն՝ որ և վայրի աքաղաղ կոչի, է հաւ խիստ գեղեցիկ և խայտաբղէտ, մեծութեամբ ընտանի հաւուց․ միս նորա է փափուկ պարարտ և համեղաճաշակ քան զայլ հաւուց : Փասիանն Չինաց գեղեցկագոյն է 'ի մէջ այլոց․ և գոյն փետրոց նորա ըստ այլևայլ մասանց մարմնոյն՝ է ոսկեգոյն, ծիրանագոյն, դեղնագոյն, երկնագոյն և կանաչագոյն․ որք և այնքան պայծառ փայլեն, մինչև յափշուն կրթել զամնն :

Հ: Ո՞րն է գեղեցկագոյն 'ի մէջ հասարակ Թռչնոց :

Պ: Սիրամարգն սեւօրէն գեղով իւրով գերազանցէ զայլ ամ հաւուք : Գլուխ նորա և



Սիրամարգ :



Ջայլամն :

պարանոցն, որպէս և լանջքն՝ են կապոյտ. Թևքն ՚ի Թիկանց սևագոյն և ՚ի ներքուստ կարմիր. Թիկունք նորա սպիտակ, սևադիծ և դեղնակիտուած նկարուք, և ՚ի միջացն ՚ի վայր մրթնականաչ. տուտ նորա երկայն քան զա՟մ՝ հաւուց։ Ունի նաև զցցունս ՚ի գլուխն, որք բաղկանան ՚ի քանի մի մերկ կանաչագոյն ստեղանց, որոց իւրաքանչիւրն ունի ՚ի ծայրն շուշանաձև ծաղիկ կապտագոյն։ Ոտք նորա են փայլակնացայտ. պարանոցն նուրբ և երկայն. շարժումն նազելի, և քայլք սիգաճեմ. և ինքն ո՟պ թէ գիտիցէ զգեղ իւր՝ ջանայ առաւելուլ զայն, պարզելով զիւր հրաշատեսիլ տուտ հանդէպ արեգական, և պանծալի երևիլ տեսողացն։

Հ։ Զի՞նչ է Ջայլամն։

Պ։ Ջայլամն է կենդանի վիթխարի, յաղթանդամ և տխմար, որ թէպէտ է ՚ի սեռս թռչնոց, այլ բ՟ղմ իւիք ունի զնմանութի՟ չորքոտանեաց։ Գլուխ նորա նման է բադու. սակայն պարանոցն երկայն և գրեթէ անփետուր. յարշաւանս ասի զանցանել զհեծելովք, և ՚ի թռիչս ը՟ր սահման այլոց վայրի թռչնոց։ Մարսէ զոր ինչ ուտէ, և ուտէ զոր ինչ գտանէ. այսինքն քար, երկաթ և զա՟մ ինչ։ Բնութ՟ ջերմ՝ է և մեծութ՟ առաջին ՚ի մէջ թռչնոց։

ԵՐԿԱԿԵՆՑԱՂՔ։

Հ։ Ո՞յք են Երկակենցաղ կենդանիք ։

Պ։ Երկակենցաղքն են միջասահման կենդանիք 'ի մէջ ցամաքայնոց և ջրայնոց՝ այսինքն ձկանց, որք անխտիր կեան 'ի ծովու և 'ի ցամաքի ։ Ի սոցա սեռէ են Կոկորդիլոս, Մողէսք, Գորտք, և Կրիայ. որպէս և Ջրշուն կամ Իկղի տղիոյ ։

Հ։ Ո՞րպիսի կենդանի է Կոկորդիլոսն ։

Պ։ Է սա գլուխ ա̅մ զեռնոց և մողեսաց, և մեծ, ահարկու և վնասակար յոյժ յոյժ ։ Երկայնութիւն նորա է տասնևհինգ, կամ քսան ոտնաչափ, և աւելի ևս. մորթ նորա թխագոյն, թեփաւոր և խայտաբղէտ, և կարծր իբրև զխեցի, և անտեղիտալի նետից. բերան նորա մեծ, և սուր ատամամբք 'ի ձև ատամանց սղոցաց զինեալ. ցռուկ նորա երկայն է, և վերին ծամելիք նորա անշարժ. իսկ ստորինն միայն շարժուն. տուտ նորա երկայն է ը̅ս̅ չափու մարմնոյն, և կարծրամորթ ։ Բնակի սա 'ի գետս Հարաւոյ, որպէս 'ի Նեղոս և 'ի Գանգէս. ուտէ ըզձկունս և զկենդանիս ցամաքի, յարձակեալ 'ի ջրոյ 'ի վերայ նոցա. երբեմն և յարձակի 'ի վ̅ր̅ մարդկան յանկարծակի, և ուտէ զնոսա ։

Այս կենդանի վնասակար խնամովն Ա̅յ̅ սակաւածին է, և ունի զերկուս մահաւիթ թշնամիս՝ զԻքնեւմոնն, զորմէ տեսցես յերես 116, և զԻղուրս կոչեցեալ փոքրիկ կենդանւոյն, ը̅ իրաց նըմին մկան, որ խորտակէ զձուս նորա և ուտէ : Այլ և 'ի ննջել անդ Կոկորդիլոսի բերանաբաց 'ի ցամաքի, մտանէ սա ը̅ բերան նորա 'ի ներքս և կրծէ զփորոտիսն, և այնպէս սատակէ զնա :

Հ: Օձնման Մողէսք: (Սէրբէնթէլէ):

Պ: Ընդհանրապէս առեալ՝ Մողէսք են երկակենցաղ օձաձև կենդանիք քառոտանիք և անթոյնք : Ոտք նոցա են մատնաւոր . ունին և ականջս բոլորաձև 'ի մէջ գլխոյ 'ի յետակողմանն : Մորթ նոցա նման է օձից . իսկ տուտ նոցա երկամասնեայ և եռամասնեայ : Ամէքն ձուածին են, և ծնանին ըստ օրինակի օձից . որպէս և ցուրտ իբրև զնոսա :

Հ: Եւ Գորտք:

Պ: Գորտք են երկակենցաղ կենդանիք առանց տտան . ոմանք 'ի սոցանէ ոստոստեն . այլք քայլեն կամ զեռան . ոմանք յաւէտ բնակեն 'ի ջուրս, և ոմանք 'ի ցամաքի . Ջրայինքն առաւել անվնաս են քան զցամաքայինսն . մերկանան ստէպ զնուրբ մաշկ իւրեանց, և բազմածին են յոյժ :

Հ: Եւ Կրիայ.

Պ: Կրիայն է երկակենցաղ կենդանի խեցեպատեան և անթոյն : Ցուրտ է բնութ̅ և յամրաքայլ . վ̅ն ետ նմ̅ Արարիչն խեցեղէն ամուր պատեան . որպէս զի ոչ կարելով նորա ապրել փախստեամբ 'ի ձեռաց թշնամեաց՝ ապրեսցին թագստեամբ։ Ծովային Արխայք մեծ լինին յոյժ․ մինչև վարել մարդկան կամարաձև պատենիւ թիկանց նոցա 'ի տեղի նաւակի, և նովաւ նաւել անվտանգ ո՛ւրև ախորժեն։ Միս նոցա համեղ է և առողջարար և դեղ բազում ախտից։ 'Ի փոր էգ Արխայից գտանին հարիւրաւոր ձուք ախորժահամք 'ի կերակուր։ Փոքրագոյն պատեանք թիկանց նոցա լինին փոխան սկտեղ և անօթոյ․ և մանաւանդ կան տեսակք ինչ Արխայից, որոց պատեանքն կակղին 'ի ջուր ջերմ, և առնուն զա̃մ ձևս և զգոյն, յորոց շինեն մարդիկ տուփս, և զանազան թափանցիկ արուեստակերտուածս։

Զետգետե։ Սա գրեթէ մեծութ̃ Անդեղջեր․ գլուխ նորա մեծ է և ը̃ իրաց նման ցլու և ձիոյ, որպէս և մարմինն․ այլ ձայնն նման խնջմանց ձիոյ․ մորթ մարմնոյն է թուխ, լերկ և կարծր յոյժ․ ատամունքն սպիտակ առաւել քան զժանիս փղի, յորոց շինեն մարդիկ պէսպէս փոքր ձեւակերտածս։

Այս կենդանի զմեծ մասն տարւոյն բնակի 'ի գետս, և գտանի 'ի Նեղոս և յայլ գետս ջերմ գաւառաց․ թշնամի է Կոկորդիլոսի և սատակէ զնա։ Բնութ̃ հեզ է, և չունի այլ զէնս բաց յոտից և յատամանց՝ որք են թուով քառասուն և չորս, անհնարին կարծր և զօրաւոր։

Եր. 116



Կոկորդիլոս։



Ձիագետի։

Հ։ Ո՞րպիսի կենդանի է Գորշուն ։

Պ։ Գորշուն կամ Լուէշկ Տշկոյ է երկակենցաղ կենդանի ճարտար և հնարագէտ, և մարմնով փոքր իբր 'ի չափ միջահասակ չորքոտանեաց ։ Մորթ նորա մոխրագոյն է. բայց 'ի ցրտասաւոյց գաւառս լինի և սեաւ. և սակաւ ոմանք նաև սպիտակ. մազ մորթոյն նուրբ է և ազնիւ յոյժ ։ Գլուխ նորա է նման շան. ականջքն կարճ և բոլորակ. իսկ բերանն զինեալ չորս մեծ զօրաւոր և հատու ատամամբք. մատունք առաջին ոտից են զատեալք յիրերաց, որովք վարի 'ի տեղի ձեռաց. իսկ յետին ոտից մատունք մաշկաւ յօդեալք ընդ միմեանս, պատշաճեալք առ 'ի լողել 'ի ջուրս. ձետ նորա երկայն և ստուար, փոքր ինչ տափակաձև և կարծր թեփովք պատեալ ։ Զգայարանք նորա՝ մանաւանդ հոտառութիւն սուր է, և ոչ կարէ տանել զարշ հոտոյ ։ 'Ի ներքոյ որովայնի կրէ զհիւթ ինչ ծանրահոտ՝ Մուշկ կոչեցեալ, որ ունի զբժշկական զօրութիւն, և բազում ախտից լինի դեղ. սակայն եթէ հնասցի՝ փոխի 'ի թոյն. 'ի մազից մորթոյն շինեն մարդիկ ձորձս և զանկապանս և ձեռնոցս. այլև զգլխարկս Եւրոպացւոց, և զսուտ հերմն ։

Այս կենդանիք հեզ և դիւրընտել՝ 'ի մարդաշատ գաւառս առ երկիւղի բնակեն ցրուեալք 'ի միմեանց. այլ 'ի սակաւամարդ երկիրս յետ անցուցանելոյ զգարունն յանտառս՝ ուր գտանեն ճարակ առատ՝ ժողովին յամառուան բազումք 'ի միասին, և շինեն իւրեանց բնակութի՟ վասն ձմեռուան 'ի ջրարբի տեղիս զարմանալի իմ՟ ճարտարութ՟, և մարդավայել արուեստիւ ։

ՁԿՈՒՆՔ։

Հ. Զի՞նչ է Ձուկն։

Պ. Ձուկն է կենդանի ջրային առաւել բազմաթիւ և բազմատեսակ քան զայլ ա՟մ կենդանիս ։ Մարդիկ ցարդ 1200 տեսակս համարեցին · բայց մեծ մասն թերևս անյայտ է 'ի մէնջ ։ Ձև մարմնոյ նոցա չէ այնքան որոշեալ և կանոնաւորեալ իբրև զսեռից այլոց կենդանեաց · որ է ապացոյց անկատարութե՟ բնութե՟ նոցա ։ Քանզի ոմանք 'ի նոցանէ են երկայնաձև, ոմանք տափակաձև, ոմանք գլանաձև, այլք եռանկիւնաձև, քառակուսի, բոլորշի ևայլն ։ Ձև գլխոյ նոցա փոքր մի սրածայր է, առ 'ի դիւրաւ պատառել զջուրն յընթացս իւրեանց · և փոխան ոտից ունին թևս, որովք լուղեն արագ կամ յամրաշարժ ը՟ հաճոյս · Թևք տատան նոցա են 'ի տեղի ղեկի մարմնոյ իւրեանց, որով դառնան յոր կոյս և կամիցին, և յընթացս իւրեանց պահեն ուղիղ զգիծս մարմնոյն ։ Գլուխ նց՟ անմիջա՟պ կցեալ է ը՟ մարմնոյն առանց պարանոցի · բերան նց՟՝ յոմանս է 'ի կողմն թիկանց · և ունին մի կամ աւելի կարգս ատամանց · աչքն առանց արտևանանց, և բիբքն անփո-



Ջրշուն:



Պալէնայ:

փոխ ։ Ունին և ըռնգունս · այլ զուրկ են յականջաց · և ունին միայն ՚ի ներքս ՚ի գլուխն զգործարան ինչ լսելեաց ։

Զկունք ունին փոխանակ փետրոց և մազից թեփս և մաշկ ինչ ողորկ , որոց պատեալ գոլով արտաքուստ մածուցիկ կամ իւղային հիւթով իւիք՝ չտան ջրոյն ամենևին տեղի թափանցել ՚ի մարմինն , և ծանրացուցանել զնա · որով ոչ միայն պատսպարին ՚ի ցրտոյ , այլև մեծապէս գեղեցկանան և զարդարին · մինչև ոմանց երևիլ արծաթափայլ , ոմանց ոսկեգոյն , կարմրագոյն , կանաչագոյն և այլն ։

Զկունք ձուածին են , և յատուկ իմն եղանակաւ ծնանին ։ Իբրև լինի ժամանակ շփելոյ նոցա ընդ քարինս առ արկանելոյ զձուս իւրեանց՝ էգք նոցին դնեն զձուս ՚ի զանազան պատշաճաւոր տեղիս · յորոց վերայ արուք ցնցղկեն զկաթն կամ զսերմն իւրեանց · ապա ջերմութիւն արևու առանց այլ ինչ ներգործութեան նոցա կենդանացուցանէ զձուսն ։ Բազմածնունդ են Զկունք յոյժ , մինչև միում ամ ըստ ամէ հազարաւոր և բիւրաւոր ձուս բերել · և զայս բազմածնութիւն Արարիչն ետ նոցա , զի մի՛ սպառեսցին բնաւ՝ առ յոլովութեան բազում վտանգաց , ընդ որովք անկեալ կան հանապազ · այլ լինիցին զարդ ջրոց և կերակուր մարդկան ։ Ի Հիւսիսային գաւառս յաւէտ բազմութիւն ձկանց գտանի քան այլ ուրեք · զի անդ առ երկարատև սաստկութեան ցրտոյ պակասելով բազմաց 'ի կենդանեաց , և 'ի բուսոց և 'ի պտղոց՝ ելից Ա.Ծ զլճերուն նոցա յոլովութ՟ ձկանց ։

Հ։ ՈՐ՛ՆՉ ԵՆ ԱԼՊՔ ։

Պ։ Ալպք ը՟ ներքին կազմութեան մարմնոյն են գրեթէ ամենևին նման չորքոտանեաց · բայց դասին ը՟ ձկունս · զի զօրէն նոցա ունին թևս լուղելոյ , և ձևով նմանին նոցա ։ Համարին և երկակենցաղք · վասն զի երբեմն ելանեն յերես ջուրց առ 'ի շնչել զօդ ։ Ծնանին կենդանի ձագս իւրեանց · և ունին 'ի վերայ գլխոյն փող ինչ , ընդ որս սաստկութ՟ արտաքս ձգեն զջուրն կլեալ հարուստ մի բարձրութ՟ ։

Բազում են տեսակք Ալպից մի քան զմի մեծամարմին · ը՟ որս դասի և ՊԱԼԷՆՆ ։ Միս նոցա ոչ է ուտելի · սակայն ճարպ նոցա բազմաւատ ոչ սակաւ օգուտ մատակարարէ մարդկան · որպէս և կակուղ ոսկերք նոցա ։ Գլխաւոր ամ՟ Ալպից է ՊԱԼԷՆԱՅՆ ահագնամարմին , 100 , կամ 200 , ը՟ ոմանց ց500 ոտնաչափ երկայնութ՟ , որ բնակի 'ի հիւսիսային Ովկիանոսն յօգուտ բնակչաց այնոցիկ կողմանց ։ Ըստ ոմանց սա էր՝ որ եկուլ զՅովնան մարգարէն ։

ՄԻՋԱՏՔ ։

Հ։ ՈՐ՛ՆՉ ԵՆ ։

Պ։ Միջատ կենդանիք կոչին այնք, որոց մարմին կազմեալ է 'ի քանի մի հատուածոց յօդելոց ընդ իրեարս, և կամ 'ի բազում անրակաց ։ Այսպիսի են ամենայն ճանճք, մժղուկք, մրջիւնք, սարդք, որդունք և այլն ․ Եւ են սեռ ինչ կենդանեաց որիշ յայլոց ամենայն, բազմատեսակ և յոքնաթիւ քան զայլ ամենայն սեռս կենդանեաց միանգամայն ։ Յայս սեռ պարտ է վերաբերել նաև զամենայն ջրային միջատ կենդանիս ․ որպիսի են խեցիք, խեցեմորթք և այլն ։ Են և անկատար բազմօք քան զայլ ամենայն կենդանիս, թէ ըստ ներքին կազմութեան մարմնոյ իւրեանց, և թէ ըստ այլևայլ մասանց և զգայարանաց, որ 'ի նոսա պակասի ․ քանզի զուրկ են յարենէ, յոսկերաց, յականջաց և 'ի հոտոտելեաց ․ բազումք նաև յաչաց և յոտից ։

Հ։ Զի՞նչ են Մեղուք ։

Պ։ Մեղուք են Միջատ կենդանի անփետուր և քառաթև, որք իւրեանց վաստակօք և ճարտարութեամբ լուսաւորեն զմեզ 'ի խաւարի, և կերակրեն քաղցրահամ մեղու իւրեանց ։ Միաբանութիւն նոցա կանոն համարի բարեկարգ հասարակապետութեան, և գործք նոցին վաստակոց կարգին 'ի մեծագոյն օգուտ մարդկան ։ Զի է 'ի մէջ նոցա տեսանել զամենայն կարգ օրինաց, որպիսի շահաւէտ է և խաղաղավայել կենակցութեան մարդկան ։ Բաշխեն 'ի մէջ ինքեանց պաշտօնս, զոմն մեծագոյն մարմնով քան զամենեսին, և զօրեղ խայթոցօք զինեալ իւրեանց մայր կամ Թագուհի անուանելով · գործեն շինուածս · չու առաքեն զոմանս զօրէն ասպատակաւոր զօրաց յաւարի առնուլ զամբարեալսն յայլոց, և պատրաստել ինքեանց կերակուր · փոփոխ ուտեն, և զա՟մ ինչ հասարակաց համարին ։ Մանկադոյնքն արտաքս դնան 'ի գործ · իսկ ծերքն 'ի ներքս դադարեն, և պահպանեն զբնակութի՟ իւրեանց · 'ի տուէ առ դուրս նոցա բազմութի՟ խռնեալ և ճամբար բանակեալ · այլ 'ի գիշերի ամ՟քն հանդարտեալ հանգչին մինչև ցառաւօտ · և 'ի տալ միոյ ուրուք նշան զարթուցիչ՝ յառնեն վաղվաղակի կրկին բզզանօք ։

Մեղուք հաւաքեն զհիւթ 'ի հոտաւէտ և 'ի բարենիւթ ծաղկանց, յորմէ կազմեն զմեղր և զմոմ ։ Ի բաց փախչին խնամով 'ի թունաւոր ծաղկանց, և 'ի թառամեալսն ոչ երբեք թռանին · և ոչ ևս յարեն ո՟պ զճանճս 'ի միս, 'ի ճարպ և յարիւն · սիրեն զմաքրութի՟ · վ՟ն այն 'ի մի վայր հաւաքեն զկղկղանս, և 'ի պարապ գտանել՝ բարձեալ տանին արտաքս ։ Եւ յորժամ պատահին 'ի բացի՝ 'ի յառնել մրրկի, բառնան ոտիւքն զխիճ · զի 'նովաւ ծանրացեալք՝ մի՛ յափշտակեսցին 'ի հողմոյ ։

Մեղուք թշնամի ունին ղղէֆաջ» կամ ղջէաուպայ», որք են քառաթև կենդանիք բազմօք նման նոցին · սոքա յոլով անգամ սատակեն զնոսա, և յաւարի առնուն զնոցայն հաւաքեալ մեղր ։

Հ։ Զի՞նչ են Սողունք ։

Պ։ Սողունք են կենդանիք երկայնաձև և անոտն, որք ընթանան սողոսկմամբ․ որպիսի են Օձք ։ Տեսակք նոցա համարին լինել իբր 180․ բայց են ըղձք ևս անծանօթ մեզ ։ Սոսին առ հասարակ գլուխ փոքրիկ, և լեզու երկճղի՝ 'ի ծայրն, և ատամունս սուր և սանտրանմանս․ աչք նոցա փոքրիկ են յոյժ, զորս ոչ փակեն 'ի քուն լինելն ։ Օձք ձուածին են․ և թաղեն զձուս իւրեանց ընդ հողով, յորոց 'ի յաջորդ ամի ելանեն ձագք ։ Բայց Իժք կենդանածին են, և ծնանին բնական ճանապարհաւ ։ Սեւօրէն ցուրտ են բարուք․ յմ՛ սակս 'ի ձմեռան մտեալ 'ի ստորերկրեայ և 'ի ջերմ տեղիս՝ կամ մնան անդ անշարժ և ընդարմացեալ մինչև ցգարունն ։ Օձք կեան հարիւրաւոր ամս և հանապազ աճեն ։ Գտանին 'ի մէջ նոցա փոքրիկք 'ի ձև մողեսի իբր կէս ոտնաչափ․ իսկ այլք մեծագոյնք աստիճան քան զաստիճան․ մինչև տեսակաց ինչ լինել իբրու 25 ոտնաչափ, և աւելի ևս երկայն և ստուար ըստ նմին համեմատութեան ։

Հ։ Բայց ի՞նչ պատճառ թոյն նոցա ։

Պ։ Վասնզի Օձք դժուարամարսք են յոյժ առ ցրտութեան բնութեան իւրեանց, վասն այն տուաւ նոցա թոյն առ 'ի հալել զկերակուրն զոր ուտեն, և միանգամայն 'ի պաշտպանութիւն անձին, գոլով նոցա ամենևին անզէն ։

Հ: Զի՛նչ է պիտանութիւն նոցա :

Պ: Օձք ևս մասամբք մարմնոյ իւրեանց օգտակար են մեզ և պիտանի, զորով դեղ բժշկարար պէսպէս ցաւոց և ախտից : Այլ որ ևս զարմանալին է, զի ՚ի մարմնոյ օձից կազմի դեղթափ թունոյ իւրեանց. յԱփրիկէ և յԱմերիկա ուտեն մարդիկ զմիս օձից :

Հ: Զի՛նչ է Նեփոչ :

Պ: Է տեսակ ինչ օդասլաց օձի, որ ոստուցեալ սլանայ ընդ օդս մինչև 20 կանգուն յերկայնութիւն :

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ :

Չափաբերական Մակացութիւնք :

Հ: Զի՛նչ են :

Պ: Չափաբերական կամ Մաթեմաթիքական մակացութիւնք են, որք պատաղին զքանակութիւնք, և ՚ի յայտ բերել զհաւասարութիւն կամ զանհաւասարութիւն :

Երկեն են ազգք Չափաբերական մակացութեանց, պարզ, և խառն : Պարզ մակացութիւնքն զննեն զքանակութիւնս ընդհանրապէս, առանց հայելոյ ՚ի նոցին զգալի որակութիւնս. զորօրինակ ՚ի կարծրութիւն, ՚ի ծանրութիւն, ՚ի գոյն և այլն : Իսկ խառն ասեն, որք խուզեն զպէսպէս տեսակս



Իժ։



Թեւօձ ։

քանակութեանցն հանդերձ զգալի հանգամանօք նոցուն · որպիսի են Մեքենաբանութ՟ի, Աստեղաբաշխութ՟ի, Տեսաբանութ՟ի, Դիտակաբանութ՟ի, և այլք նոցին նմանք :

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ :

Հ: Զի՞նչ է :

Պ: Թուաբանութ՟իւն է պարզ Չափաբերական գիտութ՟ի, որ ճառէ զթուոց · և կամ է արհեստ հաշուելոյ :

Հ: Զի՞նչ է թիւ :

Պ: Թիւն է որոշիչ բազմութե՟ միութեց, որք գտանին յորքանութե՟ անդ : Զորօրինակ 6 է թիւ· զի է բաղադրեալ 'ի վեցեկի միութե՟ :

Թիւն բաժանի յամբողջական և 'ի կոտորակ :

Հ: Զի՞նչ է ամբողջականն, և զի՞նչ կոտորակն :

Պ: Ամբողջական թիւ ասի այն, որ զամբողջ միութ՟ի յայտ առնէ · զորօրինակ 2, 3, 4, 5, 10, 50, 100, և այլն :

Իսկ կոտորակք կ՟մ կոտորակեալ թիւք են, որք զմասն ինչ միութե՟ ևեթ յայտ առնեն : զորօրինակ $\frac{1}{2}$ ցուցանէ զկէսն միութեան · զի թիւն 2 եղեալ ստորև՝ յայտ առնէ զբաժանիլ միոյ յերկուս հաւասար մասունս · իսկ թուանշանն 1 եղեալ 'ի վ՟ր նորա՝ ցուցանէ յերկու մասանց անտի զմին միայն :

Նոյնպէս և պարտ է իմանալ զայս կոտորակեալ թիւս. $\frac{2}{3}$. $\frac{3}{4}$. $\frac{4}{5}$. $\frac{6}{7}$. $\frac{8}{9}$. $\frac{10}{11}$. և այլն :

Հ. Ոյք են նշանք թուոց :

Պ. Նշանք թուոց կամ թուագիրք, որք այժմ սովորաբար 'ի գործ դնին՝ են տասնեքին սոքա.

մին երկու երեք չորս հինգ վեց եօթն
1. 2. 3. 4. 5. 6. 7.
ութն ինն զրոյ :
8. 9. 0.

Վերջին նշանն o ոչինչ ցուցանէ ըստ ինքեան. այլ եդեալ զոյգ ընդ այլ թուանշանաց՝ աւելու զչափ նշանակութեան նոցա :

Այս թուանշանք յորժամ առեալ լինին մի մի առանձին, և դնին ուրոյն ուրոյն՝ ասին պարզ կամ միաւոր. իսկ յորժամ յարին ընդ միմեանս, և դնին ընդ մի կարգ առանց կէտի և խտրոցի՝ փոփոխեն զչափ նշանակութեան իւրեանց : Միաւորն միշտ է թուանշանն եդեալ յառաջին տեղւոջ, սկսեալ յաջմէ կողմանէ. և թուանշանն յարեալ 'ի նա ընդ ձախակողմն ընթանալով՝ կոչի տասնաւոր. իբր զի տասնեակ միութիս պարունակէ յինքեան. ընդ այսմ երրորդ թուանշանն, որ դնի ընդ նոսա՝ կոչի հարիւրաւոր. չորրորդն՝ հազարաւոր. հինգերորդն՝ տասն հազարաւոր. վեցերորդն՝ հարիւր հազարաւոր. եօթներորդն՝ միլիոնաւոր և այլն. Օրօրինակ. 1000000 : Առաջին զրոյն կամ նօլն ասի միաւոր. երկրորդն՝ տասնաւոր. երրորդն՝ հարիւրաւոր. չորրորդն՝ հազարաւոր. հինգերորդն՝ տասն հազարաւոր . վեցե՟րդն՝ հարիւր հազարաւոր . իսկ եօթնե՟րդն՝ որ է թուա՟շանն 1, ասի միլիոնաւոր կամ հազարիցս հազարաւոր . ուստի այս թիւ բացատրէ զմի միլիոն ։ Ըստ նմին օրինակի և պարտ է բացատրել զհետագայ թիւդ ։

7964351 ։ Եօթն միլիոն, ինն հարիւր վաթսուն և չորս հազար, երեքհարիւր յիսուն և մի ։

Այլ քանզի 'ի թիւս բազմաւորս և երկարագոյնս դժուարին է իսկոյն զչափ թուանշանացն գտանել՝ առաջի դնի կանոն, առ անվրէպ և դիւրաւ որոշելոյ զայնպիսիս ։ Պարտ է բաժանել զթուանշանսն 'ի զանազան անդամս երիս երիս, սկսանելով յաջմէ, և դնել ստորակէտ 'ի մէջ իւրաքանչիւր անդամոց ըստ առաջիկայ օրինակիդ ։

582, 476, 834 ։ Ահա գոլով այս մի թիւ բովանդակ, առ դիւրումն բաժանի յերիս անդամս, և բացատրի այսպէս . Հինգ հարիւր ութսուն և երկու միլիոն, չորեք հարիւր եօթանասուն և վեց հազար, ութ հարիւր երեսուն և չորս ։

Եթէ թիւն իցէ կարի իմն երկար, և մանաւանդ յորժամ 'ի մէջ թուանշանացն գտցին և բազում զրոյք՝ որով ոչ սակաւ շփոթին միտք նորավարժից, յայնժամ գոյ և այլ դիւրագոյն եղանակ ըմբռնելոյ զայն ։ Այսինքն է, յետ բաժանելոյ զԹուանշանսն ՚ի զանազան անդամս երիս երիս, ո՟պ ՚ի վերոյ՝ ապա սկսեալ միւսանգամ յաջմէ՝ դի՛ր ՚ի վ՟ր առաջին Թուանշանին զկէտ. և Թողեալ զհինգ Թուանշանս ՚ի միջի՝ դի՛ր ՚ի վ՟ր վեցե՟րդին զԹուանշանդ 1. յետոյ Թողեալ նոյնպէս և այլ հինգ Թուանշանս՝ դի՛ր ՚ի վ՟ր վեցե՟րդին 2. Թողեալ ապա զայլ հինգ Թուանշանս՝ դի՛ր ՚ի վ՟ր վեցերորդին 3։ Այսպէս արա եԹէ Թիւն իցէ քան զայս երկարագոյն, յաւելլով զկնի 3 Թուանշանին զ 4, զ 5, և այլն։ Օրինակ. 89$\overset{4}{4}$, 425, 63$\overset{3}{9}$, 348, 70$\overset{2}{9}$, 254, 57$\overset{1}{3}$, 642, 37$\overset{0}{5}$. Այս է, ուԹն հարիւր իննսուն և չորս քառամիլիոն, չորսհարիւր քսան և հինգ հազար, վեց հարիւր երեսուն և ինն եռամիլիոն, երեք հարիւր քառասուն և ուԹ հազար, եօԹնհարիւր և ինն երկմիլիոն, երկու հարիւր յիսուն և չորս հազար, հինգ հարիւր եօԹանասուն և երեք միլիոն, վեց հարիւր քառասուն և երկու հազար, երեք հարիւր եօԹանասուն և հինգ։ Ահա աստէն Թուանշանն 1, որ ՚ի վ՟ր եօԹներորդ Թուանշանին, յայտ առնէ լինել Թուոյն ցայն տեղի մի միլիոն եւԹ. իսկ 2 Թուանշանն ցուցանէ զերկմիլիոնն. նոյնպէս և 3 և 4 Թուանշանքն՝ զեռամիլիոնն և զքառամիլիոնն։

[illegible]

Պ: Չորք են հասարակ և կարևոր կանոնք Թուաբանութեան. ՅԱՒԵԼՈՒՄՆ, ՆՈՒԱԶՈՒՄՆ, ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ և ԲԱԺԱՆՈՒՄՆ. զորոց ուրոյն ուրոյն խօսեսցուք համառօտ :

ՅԱՒԵԼՈՒՄՆ :

Հ: Զի՞նչ է ՅԱՒԵԼՈՒՄՆ :

Պ: Յաւելումն որ և Գումարումն՝ է բազում թուոց 'ի միմեանս բարդումն, և 'ի մի գումար հաւաքումն. և կամ է դուռն, որով զանազան թիւք յաւելեալ 'ի միմեանս՝ հաւաքին և միաւորին 'ի մի թիւ և 'ի մի գումար:

Թիւք, որք յաւելեալ լինին 'ի վ͞ր միմեանց՝ կոչին ԳՈՒՄԱՐԵԼԻՔ. իսկ թիւն, որ ծագի 'ի հաւաքմանէ անտի՝ կոչի ԳՈՒՄԱՐ: Յաւելումն լինի այսու եղանակաւ: Նախ դի՛ր զգումարելի թիւսն 'ի ներքոյ միմեանց այնպէս՝ զի միաւորքն անկցին ուղղակի 'ի ներքոյ միաւորաց, տասնաւորքն 'ի ներքոյ տասնաւորաց, հարիւրաւորքն 'ի ներքոյ հարիւրաւորաց և այլն: Յետ այսպէս կարգաւ դասաւորելոյ զթիւսն ը͞ն խուրաքանչիւր գաւազանաց՝ ձգեա 'ի ներքոյ ն͞ց գիծ, և սկսեալ հաւաքել զն͞ս ուրոյն ուրոյն, ստորէ 'ի վեր ընթանալով, և կամ ընդ ներհակն. և գրեա զգումարն 'ի ներքոյ գծին : Կա՛լ քեզ օրինակ:

Գումարելի. 436
241
321
Գումար. 998

Թուանշանն 1, որ է միաւոր յետին թուոյն՝ բարդեալ ՚ի վերայ 1 թուանշանին միւսոյ թուոյն լինի երկու. զոր յաւելեալ ՚ի վ՟ր 6 թուանշանին, որ ՚ի գլուխ միաւորաց՝ լինի 8. դի՛ր նոյնպէս ՚ի գումարն զթուանշանն 8։ Յետոյ հաւաքեա՛ զտասնաւորս երից թուոցն այսպէս. 2 և 4՝ լինին 6, և 3 լինին 9. գրեա՛ զայս ևս ՚ի ստորև. նոյնպէս հաւաքեալ ի մի զ3, 2 և 4՝ լինի 9. և այնպէս դի՛ր ՚ի գումարն։ Եւ բովանդակ գումարն այսց թուոց լինի ը՟ որսւմ՝ տեսանի, ինն հարիւր իննսուն և ութ։ Իսկ եթէ ՚ի հաւաքել քո զթիւս՝ գումար նոցա իցէ աւելի քան տասն, զտասնաւորն պահեալ ՚ի մտի՝ զմիաւորն միայն դի՛ր ՚ի գումարն. ապա ՚ի հաւաքել զթուանշանս յետագայ դաւազանին՝ բարդեա՛ զտասնաւորն ՚ի վ՟ր ն՟ր. զորօրինակ, եթէ հաւաքեալ գումարն իցէ 16, զվեցն միայն գրեա՛ ստորև դաւազանին միաւորաց, և զ1 տասնաւորն տա՛ր ՚ի դաւազանն տասնաւորաց։ Կա՛լ քեզ բացայայտ զայս օրինակ։

Գումարելի ·
4326
2325
3465
10116
Գումար ·

Սկիզբն արարեալ 'ի միաւորաց հաւաքեա՛ այսպէս. 5 և 5՝ լինին 10, և 6 ես՝ գումար միաւորացն լինի 16 · զ6 միաւորն միայն գրեալ 'ի գումարն՝ զ1 տասնաւորն տա՛ր 'ի միւս գաւազանն տասնաւորաց, և դի՛ր 'ի վ՟ր 6· որով լինի 7 · յաւե՛լ ապա 'ի վ՟ր ն՟ր զերկու Թուանշանսն 2, և զգումարն գրեա՛ ընդ նոքօք, այսինքն զ1 միաւորն· իսկ զ1 տասնաւորն նորին գումարի տա՛ր 'ի միւս գաւազանն հարիւրաւորաց, և բարդեա՛ 'ի վ՟ր 4 Թուանշանին· որով լինի 5 · 'ի վ՟ր ո՟ր բարդեալ զ3, և դարձեալ զմիւս 3, գումար հարիւրաւորաց լինի նոյնպէս 11 · զորոյ զմիաւորն 1 գրեալ ստորև՝ զմիւսն տար 'ի չ՟րդ գաւազանն, և բարդեա՛ 'ի վ՟ր 3 Թուանշանին· որով լինի 4· յաւել ապա 'ի վ՟ր այսորիկ զ2 և զ4, գումարն լինի 10· և գրեա՛ զայն ամբողջ 'ի վերջոյ ։ Արդ՝ որպ՟ տեսանի՝ գումարն բովանդակ այսց հաւաքեալ չորեց Թուոց 'լինի տասն հազար հարիւր տասնևվեց ։

Եթէ գումարելի Թիւքն իցեն բ՟մ յոյժ, մինչև դժուարին իմն լիցի զամ՟ն միանգամայն հաւաքել և զգումարն դնել ստորև, մա՛րթ է յայնժամ հատանել զ'ի վերուստ 'ի վայր ձգեալ թիւսն 'ի բզ̃մ մասունս, և որոշել զնմ̃ գծիւ. և ապա առ մկ̃ւ սակաւ հանել զգումարն ։

Օրինակ.

346
267
975
421
Գումար. 2009
724
362
895
Գումար. 3990
213
462
724
Գումար. 5389

Այսպէս հետզհետէ դիւրաւ վճարի յաւելումն, և 'ի յայտ գայ գումարն բովանդակ հուսկ յետոյ. որպ̃ դէմ յանդիման տեսանի յառաջիկայ օրինակդ ։

Հ։ Որպէս է փորձ Յաւելման ։

Պ։ Ընտրեալ լինի այս կանոն, եթէ գումարն բովանդակ որ ծագի 'ի յաւելմանէ՝ իցէ հաւասար գումարելի թուոցն ։ Դիւրագոյն փորձն, որ սովորէն աւանդի նորավարժից՝ է այս ։ Յաւե՛լ 'ի վ̃ր միմեանց զգումարելի թիւսն ը̃ պարզ նշանակուե̃ իւրեանց, և 'ի հասանել քո 'ի թիւն 9՝ զիննեակ թիւսն միշտ ձգեա՛ 'ի բաց, և նորոգ սկսեալ մինչև 'ի վերջն՝ արա՛ այսպէս, և զյաւելուածն որ մնայ հուսկ յետոյ՝ դի՛ր ուրոյն ։ Ապա նոյնպէս արա՛, յաւելլով 'ի միմեանս զոմ՝ զթուանշանս գումարին, և զյաւելուածն նշանակեա ուրոյն ։ Արդ՝ եթէ այն երկու յաւելուածք իցեն միմեանց հաւասար՝ ուղիղ է յաւելումն ։

Օրինակ ·

Գումարելիք ·

67435
47253
96321

$\begin{array}{c|c} 4 & \\ \hline & 4 \end{array}$

Գումար · 211009

Ահա սկսեալ ՚ի ձախմէ և ուղղագիծ ընթանալով՝ 6 և 7՝ են 13 · յորմէ ՚ի բաց ձգեալ զինն՝ մնայ 4 · յաւել ՚ի վերայ նորա 4 և 3, և լինի 11 · զինն ՚ի բաց ձգեալ՝ մնայ 2 · յաւել ՚ի վերայ զ5 և զ4 թիւն միւս կարգի, և լինի 11 · յորմէ զինն ՚ի բաց առեալ՝ մնայ 2 ։ Այսու եղանակաւ յառաջ մատուցեալ՝ հուսկ յետոյ մնայ 4, զոր դիցես ՚ի վերին անկեան խաչանիշ գծին ։ Նոյնպէս հաւաքեա զթուանշանսն համօրէն գումարին, յաւելլով ՚ի միմեանս և ձգելով ՚ի բաց զիննեակ թիւսն · որով վերջին յաւելուածն լինի 4, համեմատ յաւելուածոյ գումարելի թուոցն, որ և դնի ՚ի ստորին անկեան խաչաձև գծին ։

Այլ զգուշանալ պա՛րտ է յայսմ փորձոյ · զի բազմանգամ վրիպի · սակայն փոխանակ այսմ լաւ ևս է կրկին հաւաքել զթուանշանսն ՚ի վերուստ ՚ի վայր, և ստորէ ՚ի վեր, մինչև երկբայութիւն ինչ բնաւ չմնասցէ ՚ի գումարին ։

ԲԱՐՁՈՒՄՆ ։

Հ. ԶԻ՞ՆՉ Է ԲԱՐՁՈՒՄՆ ։

Պ. Բարձումն որ և Հանումն՝ է դուռն Թուաբանութեան, որով առնումք ՚ի բաց զփոքր թիւն ՚ի մեծէն, առ ՚ի գտանել զյաւելուածն ։

Այս լինի սովին օրինակաւ ։ Գրեա՛ նախ զմեծ թիւն, և ՚ի ներքոյ նորա զփոքրն՝ զոր բառնալ կամիս անտի այնպէս. զի միաւորն անկցի ընդ միաւորաւ, տասնաւորն ընդ տասնաւորաւ և այլն ։ Ապա ձգեա՛ գիծ ՚ի ներքոյ նոցա. և սկսեալ յաջմէ՝ բարձ զստորին թուանշանսն ՚ի վերնոցն, և զմնացորդսն գրեա՛ ստորև ՚ի ներքոյ գծին ։ Ա՛ռ քեզ օրինակ ։

Թիւ մեծ ։ 6342
Թիւ փոքր ։ 4231
Մնացորդ . 2111

Զ 1 ՚ի բաց առեալ ՚ի 2 թուանշանէն, մնայ 1. և այն եդաւ ՚ի ներքոյ. նոյնպէս զ3 ՚ի բաց առեալ ՚ի 4 թուանշանէն, մնայ և 1. զ2 ՚ի թուանշանէն 3, մնայ դարձեալ 1. հուսկ ապա զ4 ՚ի 6, մնայ 2 ։ Այս մնացորդն ողջոյն լինի երկուհազար հարիւր տասն և մի ։

Այլ եթէ թուանշանն փոքր թուոյ իցէ մեծագոյն քան զվերին մեծ թուանշանն՝ յորմէ և անհնար է բառնալ զայն, պա՛րտ է յաւելուլ միոք ՚ի վերին թուանշանն զտասնեակ մի ամբողջ. և այնպէս բառնալ անտի զստորինն, միով նուազեցուցեալ զյաջորդ թուանշանն վերին՝ որ 'ի ձախակողմն : Ահա քեզ օրինակ ·

76523
68342
08181

Զերկուսն 'ի բաց հանել 'ի թուանշանէն 3՝ մնայ 1 · ապա քանզի ստորին թուանշանն 4 մեծ է քան զվերինն 2, պա՛րտ է յաւելուլ 'ի վր̅ 2 և զտասն, որով լինի 12 · այնպէս 'ի բաց առեալ յայնմանէ զ4՝ մնայ 8 : Այլ թուանշանն 5՝ որ զկնի, նուազի միով և մնայ 4 · և հանեալ 'ի նմանէ զ3, մնայ 1 : Յետոյ դայ 6 և 8 · և զի չէ՛ հնար զ8 ստորինն հանել 'ի 6 վերնոյն, պա՛րտ է զտասնեակ մի առնուլ 'ի 7 թուանշանէն որ զկնի, որով լինի 16 · և այնպէս 'ի բաց առեալ զ8, մնայ և 8 : Իսկ 7 պակասելով միով՝ մնայ 6 · և 'ի նմանէ հանեալ զ6 ստորինն՝ մնայ 0 · այն է ոչինչ :

Եթէ թուանշան ինչ ստորին ամենևին իցէ հաւասար վերնոյն, դի՛ր 'ի ներքոյ գծին 0 : Իսկ եթէ 'ի թիւն մեծ գուցէ ուրեք 0, յորժամ անմարթ է բառնալ զթուանշանն ստորին՝ յաւե՛լ յայնժամ զտասնեակ մի 'ի վերայ նորա · և այնպէս բարձ 'ի բաց յայնմանէ զստորինն, առաւելեալ միով զյաջորդ թուանշանն ստորին, և դնելով կէտ առ նովաւ : Ահա քեզ օրինակ :

634 352	
521·541	
112 811	

Ի բաց առեալ զ1 'ի 2, մնայ 1, զ4 'ի 5, մնայ 1․ ապա քանզի անհնար է զ5 'ի բաց հանել 'ի 3, յաւելաւ տասնեակ մի 'ի վ՟ր 3, որով եղև 13․ յորմէ առեալ 'ի բաց զ5, մնայ 8․ և յաջորդ թուանշանն 1, առ որով կէտ եդաւ, լինի 2․ և զսա 'ի բաց հանեալ 'ի 4, մնայ 2․ մնացեալն նոյն է ը՟ վերնոյն։

Հ․ ԶԻԱ՞ՐԴ ԼԻՆԻ ՓՈՐՁ ՀԱՆՄԱՆ։

Պ․ Այսպէս․ յետ աւարտելոյ զբարձումն՝ ձգեա գիծ 'ի ներքոյ մնացուածոյն, և բաժանեա գծիւ նաև զմեծագոյն թիւն 'ի փոքրագունէն․ ապա 'ի մի հաւաքեալ գումարեա զփոքր թիւն ը՟ մնացուածոյն․ եթէ գումարն հաւասար եղիցի մեծ թուոյն, ուղիղ է բարձումն։

Օրինակ։

ԹԻՒ ՄԵԾ․	867434
ԹԻՒ ՓՈՔՐ․	$\dot{7}8\dot{6}522$
ՄՆԱՑՈՐԴ․	080912
ԳՈՒՄԱՐ ԵՒ ՓՈՐՁ․	867434

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ։

Հ․ ԶԻ՞ՆՉ Է ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ։

Պ․ Բազմապատկութիւն է դուռն, որով բազմացուցանեմք զմի Թիւ այլով Թուով. զորօրինակ զծ՝ օ Թուովն :

Թիւն եղեալ ստորև, որով բազմապատկի՝ կոչի ԲԱԶՄԱՊԱՏԿԻՉ. իսկ Թիւն եղեալ 'ի վերոյ՝ կոչի ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼԻ : Եւ մեծագոյն Թիւն, որ ծագի 'ի բազմապատկութենէ անտի՝ կոչի ԱՐՏԱԴՐԵԱԼ.

Եւ 'ի լինել քաջավարժ 'ի բազմապատկութեան՝ հարկ է 'ի մտի ունել սերտողաբար զառաջիկայ աղիւսակդ Պիւթագորեան :

ԱՂԻՒՍԱԿ ՊԻՒԹԱԳՈՐԵԱՆ.

1	2	3	4	5	6	7	8	9
2	4	6	8	10	12	14	16	18
3	6	9	12	15	18	21	24	27
4	8	12	16	20	24	28	32	36
5	10	15	20	25	30	35	40	45
6	12	18	24	30	36	42	48	54
7	14	21	28	35	42	49	56	63
8	16	24	32	40	48	56	64	72
9	18	27	36	45	54	63	72	81

Բազմապատկութիւն լինի այսպէս։ Գի՛ր նախ զթիւն բազմապատկելի, և 'ի ներքոյ նորա զթիւն բազմապատկիչ. և ապա ձգեալ գիծ ստորև՝ բազմապատկեա առանձին առանձին, և զարտադրեալն դի՛ր 'ի ներքոյ գծին։ Կա՛լ քեզ օրինակ։

Բազմապատկելի. 63492
Բազմապատկիչ. 8
Արտադրեալ. 507936

Բազմապատկեա 8 անգամ 2, և լինի 16. զ6 եդեալ ստորև՝ զ1 տասնաւորն պահեա 'ի մտի. ապա բազմապատկեա 8 անգամ 9, և լինի 72. որում յաւելեալ զ1, զոր պահեալ էիր 'ի մտի՝ լինի 75. զ3 գրեա և զ7 պահեա 'ի մտի։ Յետոյ բզ̃մապատկեա 8 անգամ 4, և լինի 32, և 7 ևս՝ 39. զ9 գրեալ՝ զ3 պահեա. դարձեալ 8 անգամ 3՝ լինի 24, և 5՝ 27. զ7 գրեալ՝ զ2 պահեա։ Հուսկ ապա 8 անգամ 6. լինի 48, և երկու ևս 50. գրեա զայն ամբողջ։ Ահա այսու 'ի յայտ եկն բոլոր արտադրեալն։

Եթէ 'ի թիւն բազմապատկելի իցեն բազում թուանշանք՝ դի՛ր զնոսա 'ի ներքոյ կարգաւ, սկսեալ յաջմէ. ապա բազմապատկեա նոքօք զա̃մ բազմապատկելի թիւսն առանձին առանձին, սկիզբն արարեալ յաջմէ. և զարտադրեալսն դի՛ր 'ի ներքոյ այնպիսի կարգաւ՝ զի իւրաքանչիւր արտադրեալ թիւ լիցի ուղղակի 'ի ներքոյ բազմապատկիչ թուանշանի իւրոյ։ Յետ այնորեկ ձգեալ զայլ միւս գիծ 'ի ներքոյ արտադրելոյն՝ յաւե՛լ զնոսա 'ի միմեանս և հաւաքեա՛ 'ի մի գումար ըստ առաջնում կանոնի կամ դրան . և ունիցիս զարտադրեալն ողջոյն ։

Օրինակ ։ Այլ օրինակ ։

```
        6435              847563
          27                 452
       45045            1 695 126
       12870             42 375 15
ԱՄԲՈՂՋ. 173745           338 025 2
                       392,098,476
```

Եթէ 'ի թիւն բազմապատկելի իցէ օ՝ դի՛ր և յարտադրեալն անդ օ . իսկ եթէ պահեալ իցես 'ի մտի 'ի բազմապատկութենէ նախընթաց թուանշանին զմիութիւնս ըստ տասնեակ թուոցն , դի՛ր զայն միութիւնս փոխանակ օի ։

Եթէ 'ի թիւն բազմապատկիչ իցէ մի զրոյ և կամ աւելի՝ դի՛ր յարտադրեալն անդ նոյնքան զրոյս 'ի ներքոյ այնց զրոյից ուղղակի ըստ այսց առաջի եդեալ օրինակաց ։

```
     364           137
     200           604
     000           548
    000           000
   728           822
   72800         82748
```

Հ. Զիա՞րդ ստուգի առաջարկեալն Բազմապատկութեան ։

Պ։ Այսու փորձաւուք․ Յաւե՛լ 'ի միմեանս նախ զթուանշանս բազմապատկելի թուոյն, և ձգե՛լ 'ի բաց զիննեակ թիւս հետ զհետէ՝ ըստ օրինակին՝ զոր ցուցաք 'ի փորձն Յաւելման, դի՛ր զմնացուածն 'ի վերին անկեան խաչանիշ գծին յայսկոյս ։ Ապա յաւե՛լ 'ի միմեանս և զթուանշանս բազմապատկիչ թուոյն, և ըստ նմին օրինակի 'ի բաց ձգեալ զիննեակսն, զմնացորդն դի՛ր 'ի ստորին անկեան խաչանիշ գծին յայսկոյս ։ Զայս երկոսին մնացուածս բազմապատկեա՛ միմեամբք, և յարտադրեալ թուոյն ձգեալ 'ի բաց զիննեակ թիւս, դի՛ր զմնացուածն 'ի վերին անկեան խաչանիշ գծին յայնկոյս ։ Յետոյ յաւե՛լ 'ի միմեանս և զթուանշանս բոլոր արտադրելոյն, և ձգեալ 'ի բաց նոյնպէս զիննեակ թիւս, դի՛ր զմնացորդն 'ի ստորին անկեան խաչանիշ գծին յայնկոյս ։

Արդ՝ այս երկոքին վերջին մնացուածք եթէ իցեն հաւասար միմեանց՝ անվրէպ է Բազմապատկութիւն ։ Կալ քեզ օրինակ ։

4,735
26
28 410
94 70
123,110

1 | 8
8 | 8

Բաժանումն ։

Օ ։ Օ՞ինչ է Բաժանումն ։

Պ ։ Բաժանումն է գործն՝ որով զմի թիւ մինչ բաշխեմք այլ թուով առ գտանելոյ զայլ միւս թիւ, յորում այնչափ միութիւնք իցեն որչափ անգամ պարունակի թիւն բաժանարար 'ի թիւն բաժանելի ·

Թիւն՝ զոր դնեմք 'ի բաժանել, կոչի Բաժանելի · Թիւն որով բաժանեմք՝ Բաժանարար, և թիւն՝ որ ելանէ 'ի բաժանմանէ անտի, կոչի Քանորդ ։

Բաժանումն լինի այսու օրինակաւ ։ Դի՛ր նախ 'ի միջի անդ զթիւն բաժանելի, և 'ի նմին կարգի նաև զթիւն բաժանարար փոքր մի հեռի 'ի նմանէ · զոր օրինակ

Բաժանելի ·		Բաժանարար ։
ա անգամ ·	17,2,8	12
բ անգամ ·	5 2	144
գ անգամ ·	48	Քանորդ ։
	00	

Ապա սկսեալ յաջմէ՝ տե՛ս քանի՞ անգամ պարունակի թիւն բաժանարար 12՝ յառաջին անգամն բաժանելի թուոյն · որ այն ինքն է թիւն 17 · և յայտ է թէ միանգամ · դի՛ր զ1 'ի քանորդն, սկսեալ յաջմէ ։ Ապա թուովն 1 քանորդին բազմապատկեա՛ զբաժանարարն 12 · և լինի նոյնպէս 12 · զբաժանարար 12 'ի բաց առեալ 'ի բաժանելի թուոյն 17, մնայ 5. դի՛ր զայն 'ի ներքոյ բաժանելի թուոյն 7։ Ընդ այսմ մնացուածոյ 5 դի՛ր յաջմէ կողմանէ զմիւս թուանշանն բաժանելի թուոյն զ2, որով լինի եկ՟դ անդամն բաժանելի թուոյն 52։ Արդ՝ տե՛ս թէ քանի՞ անգամ թիւն բաժանարար պարունակի յայս թիւ 52. և յայտ է թէ 4 անգամ. ուստի դի՛ր զ4 'ի քանորդն յաջկոյս։ Եւ այսու բազմապատկեա՛ զթիւն բաժանարար 12. և լինի արտադրեալն 48, զոր բարձեալ յերկրորդ անդամոյ բաժանելի թուոյն 52՝ մնայ 4. դի՛ր զայն 'ի ներքոյ բաժանելի թուոյն 2. յաւե՛լ ապա 'ի վ՟ր այսր մնացուածոյ և զվերջին թուանշանն բաժանելի թուոյն զ8. որով լինի եր՟դ անդամն բաժանելի թուոյն 48։ Տե՛ս թէ քանիցս անգամ՝ թիւն բաժանարար 12 պարունակի 'ի 48 բաժանելի թիւն։ Յայտ է թէ 4 անգամ. ուստի դի՛ր և զայն 'ի քանորդն յաջկոյս. և նովաւ բազմապատկե՛լ զթիւն բաժանարար 12, արտադրեալն լինի 48. և բարձեալ զայն յեր՟դ անդամոյն՝ մնայ և ոչինչ, ուստի դի՛ր զերկու զրոյ։

Եթէ յետ յարելոյ 'ի մնացուածն զյաջորդ թուանշանն բաժանելի թուոյն. և կա՛մ յետ դնելոյ զնոյն միայնակ, անդամն բաժանման սակաւ իցէ ք՟ զթիւն բաժանարար՝ դի՛ր 'ի քանորդն զ0, և յարեա՛ 'ի նոյն անդամն զայլ միւս յաջորդ թուանշանն բաժանելի թուոյն. ո՞չ զի անդամն այն առաւելցի և կամ գէթ հաւասարեսցի ընդ բաժանարար թուոյն ։ Իսկ եթէ դարձեալ փոքրագոյն իցէ անդամն բաժանմանն քան զթիւն բաժանարար, ա՛ռ միանգամայն և զմիւս թուանշանն ։ Ա՛ռ քեզ օրինակ ։

	ԲԱԺԱՆԵԼԻ.	ԲԱԺԱՆԱՐԱՐ.
Ա̃ ԱՆԴԱՄ.	49,2,1,	7
	00	703
Բ̃ ԱՆԴԱՄ.	2	ՔԱՆՈՐԴ.
Գ̃ ԱՆԴԱՄ.	21	
	00	

Առաջին անդամ՝ բաժանմանն է թիւն 49 ։ յորում՝ բաժանարարն 7՝ պարունակի եօթն անգամ. որոյ վ̃ն դնի 'ի քանորդն 7. և սովաւ բազմապատկեալ զբաժանարարն 7, արտադրեալն լինի 49. յորմէ 'ի բաց հանեալ զառաջին անդամն 49 բաժանելի թուոյն, մնայ ոչինչ. ուստի ստորև դնի երկու 0 ։ Ապա դնի 'ի ներքոյ թուանշանն բաժանելի թուոյն 2. որ լինի միայնակ երկ̃ր անդամ բաժանման. որոյ և գոլով փոքր քան զթիւն բաժանարար 7, դնի 'ի քանորդն 0. և ապա յարի 'ի նոյն և վերջին թուանշանն բաժանելի թուոյն 1. որով երրորդ անդամն բաժանման լինի 21. և 'ի նմա թիւն բաժանարար պարունակի երիցս անգամ. սմին իրի դնի 'ի քանորդն 3. և նովաւ բազմապատկեալ զթիւն բաժանաբար 7, արտադրեալն լինի 21. զոր առեալ 'ի բաց 'ի նոյն անդամոյն 21՝ մնայ և ոչինչ։

Այլ քեզ զայս միւս օրինակ, յորում բաշխին ութհազար յիսունևվեց ոսկիք՝ երեսունևվեց անձանց, 'ի գիտել թէ որչափ իւրաքանչիւրումեք անկանի։

Բաժանելի.		Բաժանարար.	
Ա անդամ.	84,56 ոսկի		35
Բ անդամ.	145	Քանորդ.	241
Գ անդամ.	56		
Մնայ	21		

Ահա դեմ յանդիման երևի, եթէ իւրաքանչիւրումն անկանի 241 ոսկի, և մնայ 21. զոր պարտ է վերածել 'ի փոքրագոյն մասունս, այն է 'ի ռուբլիս և կամ 'ի ղուռուշս, և բաժանել զն՟ վերստին 'ի վ՟ր 35 անձանց։

Դ։ Ստուգութիւն Բաժանման։

Ա։ Բազմապատկելով բաժանարար թուով բաժանմանն զքանորդն ողջոյն. որ եթէ հաւասար ելցէ ամենևին բաժանելի թուոյն՝ ուղիղ է բաժանումն։ Այլ քեզ օրինակ զնոյն բաժանելի թիւն՝ որ 'ի վեր անդր եդաւ, այն է 8456. որոյ քանորդն եղև 241։ Արդ՝ զսա բազմապատկելով բաժանարար թուովն 35, արտադրեալն լինի 8435. յոր յաւելեալ և զմնացուածն 21, լինի ամբողջ 8456, համեմատ բաժանելի թուոյն. որով հաստատի ուղղու՟ն բաժանմանն։

Կանոն համեմատութեան ։

Հ։ Զինչ է ։

Պ։ Կանոնն համեմատութեան, որ և կոչի կանոն երից, է՝ որով յերից թուոց ծանուցելոց գտանեմք զչորրորդ իմն թիւ համեմատ և անծանօթ ։ Այս կամ է, որով 'ի դնել զինչ և իցէ երիս թիւս ը՟ կարգի՝ ծագի անտի այլ չորրորդ թիւ անծանօթ և համեմատ այնց երից թուոց ։ Զոր օրինակ․ եդեալ ը՟ կարգի զայս երեսին թիւս այսպէս՝ 2, 4, 8, սովին կանոնաւ խնդրի և գտանի չորրորդ թիւն անծանօթ․ որ լինի 16․ որ և ունի զնոյն համեմատութիւն ընդ երրորդ թուոյն ծանուցելոյ, այսինքն ընդ թուոյն 8․ որպէս և երկրորդ թիւն 4 ընդ առաջնոյն 2 ։

Արդ՝ այսու օրինակաւ պարտ է դասաւորել զերիս թիւսն, և գտանել զչորրորդն ։ Զթիւն՝ յորոյ վ՟ր է խնդիրն, պարտ է դնել յերրորդ տեղւոջ յաջմէ կողմանէ․ զթիւն նմանասեռ այնմ՝ յառաջնում տեղւոջ 'ի ձախմէ․ իսկ զթիւն օտարասեռ՝ 'ի միջի անդ․ ապա բազմապատկեալ երկրորդ թուովն զերրորդն, և զարտադրեալն բաժանեալ առաջնովն, քանորդն՝ որ ելանիցէ 'ի բաժանմանէ անտի՝ է նոյն իսկ թիւն չորրորդ որ խնդրի ։

Զօրօրինակ․ գին 1 փութ շաքարի է 62 ռուբլի․ արդ՝ խնդրի թէ քանի՞ է գին 28 փթից․

Յօրինակի աստ թիւն՝ յորոյ վր̃ է խնդիրն, է թիւն 28 փթից, և թիւն նմանասեռ այնմ է փութն։ Իսկ թիւն օտարասեռ է թիւ 62 ռուբ.

փութն շաքարի.	ռուբլ.	փութն շաքարի.
1	62	28
		62
		56
		168
		1736

Ա. հայեցողնելոյ կարգաւ զերեսին թիւս ը̃ վերոյգրեալ կանոնիդ՝ երկրորդ թուովն 62 բազմապատկեալ զերրդ թիւն 28, արտադրեալն եղև 1736. և զի թիւն առաջին է 1, որ ոչ բաժանէ՝ մնաց քանորդն 1736 ռուբլի, որ նոյն ինքն է չրրդ թիւն համեմատական՝ գին 28 փութ շաքարի։

Այլ օրինակ, յորում խնդրի. եթէ գին 6 կանգնոց մահուտի իցէ 48 ռուբլի կամ դահեկան, քանի՞ լինիցի գին 16 կանգնոց այնր մահուտի։

կանգ. մահ.	դահեկ.	կանգ. մահ.	
6	48	16	
		48	
		128	
		64	
4 բաժանումն		768	128 դահ.

Ահա բազմապատկել զթիւն 16 թուովն 48, արտադրեալն եղև 768. զսա բաժանեալ առաջին թուովն 6՝ քանորդն եղև 128. որ այն իսկ է չր̄դ խնդիրն համեմատական:

Բայց եթէ կանոնն համեմատութեան իցէ բաղադրեալ. այսինքն եթէ բաց յերից գլխաւոր թուոց անտի իցեն և այլ թիւք երկրորդականք յարակցեալք ընդ նոսա, պարտ է յայնժամ՝ 'ի գործ արկանել զկանոնն այսպ̄: Նախ պարտ է բազմապատկել զգլխաւոր թիւսն, որք լինին միշտ երեք՝ երկրորդականօքն առանձին առանձին. ապա վճարել զկանոնն ըս̄ վերոյեդել օրինակի: Օրինակ. եթէ մշակք 6 յաւուրս 4 առնուն 'ի վարձ դահեկ. 5, քանի՞ ինչ առնուցուն մշակք 18 յաւուրս 10: Ահա յայտ են հինգ թիւք, և խնդրի թիւն վեցեր̄դ. Այլ երեքին գլխաւորքն 'ի սոսին են այսոքիկ. թիւ մշակացն 6, թիւ դահեկանացն 5, և թիւ մշակացն 18: Իսկ թիւք աւուրցն 4, և 10 են երկրորդականք և յարակիցք.

Մշակք.	Օր.	Դահեկ.	Մշ.	Օր.
6	4	5	18	10
4			10	
24		5	180	
			5	
			900 դահեկ. 37 $\frac{1}{2}$	

ԱԼՃԷՊՐԱՅ

կամ Գործածութեան ·

Հ: Զի՞նչ է Ալճէպրայ :

Պ: Է՝ մասն չափաբերական կամ մաթեմաթիքական մակացութեանց, որ ճառէ զմեծութեանց ընդհանրապէս նշանակելոյ ՚ի ձեռն տառից Այբուբենից:

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ ·

Հ: Զի՞նչ է Երկրաչափութիւն :

Պ: Է՝ գիտութիւն, որ աւանդէ զկանոնս չափելոյ և համարելոյ զքանակութիւն ըստ ամենայն տարածութեան երկայնութեան, լայնութեան, և խորութեան : Տարածութիւն յերկայնութեան նկատեալ առանց լայնութեան և խորութեան կոչի Գիծ · տարածութիւն յերկայնութեան և ՚ի լայնութեան առանց խորութեան՝ կոչի Մակերևոյթ · իսկ տարածութիւն յերկայնութեան, ՚ի լայնութեան և ՚ի խորութեան միանգամայն՝ կոչի Հաստատուն կամ Մարմին: Ուստի Երկրաչափութիւն բաժանի ՚ի Գծաչափութիւն, ՚ի Մակերևութաչափութիւն, և ՚ի Հաստատաչափութիւն կամ ՚ի Մարմնաչափութիւն :

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ·

Հ: Զի՞նչ է :

Պ: Է՝ արհեստ, որ աւանդէ զկանոնս առ ՚ի ըստ պատշաճի յօրինել զշինուածս : Այլ բաժանի 'ի Քաղաքական, 'ի Զինուորական, և 'ի Նաւական կամ 'ի Ծովային :

Քաղաքականն պարապի 'ի շինուածս ապարանից, տանց և Հրապարակական Հանդիսատեղեաց: Այլ հինգ են ազգք կամ կարգք որ̃· Թոսկանեան, Դորիքեան, Յոնիական, Կորնթեան, և Բաղադրեալ : Իսկ 'ի սոցանէ կայ և կարգ ինչ Ճարտարապետական՝ Գոթական կոչեցեալ · զոր նախնիք 'ի գործ արկանէին գրեթէ յամ̃ շինուածս տաճարաց և աղօթատեղեաց: Այս ամ̃ անուանք հնարեցան յայնցիկ ազգաց, որք յաւէտ 'ի կիր արկին զայնոսիկ կարգս :

Զինուորականն ուսուցանէ զ̃ պատշաճի ամրացուցանել զտեղիս այնպէս՝ զի կարող լիցի ը̃դդէմ կալ սակաւ զօրօք բազմութեան թշնամեաց :

Իսկ ծովայինն է արհեստ համեմատ շինելոյ նաւս եթէ պատեր̃զմականս, և եթէ առևտրականս այնպէս՝ զի սրընթաց լիցին նաւքն, և անխորտակելի յալեաց ծովու :

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

ԱՍՏԵՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ.

Հ: Զ՛ինչ է Աստեղաբաշխութիւն :

Պ: Է գիտութիւն, որ ճառէ զերկնային մարմնոց և զնոցին դրից և կարգաց ։ Սկիզբն այսր դիտման համարին Քաղդէացիք և Եգիպտացիք, որոց գաւառք գոլով անամպ՝ դհեա եղեւ զննել զշարժմունս լուսաւորաց · յորոց ապա էանց 'ի Փիւնիկեցիս, և 'ի նոցանէ 'ի Յոյնս ։

Հ. ԶԻ՞ՆՉ Է ՏԻԵԶԵՐՔ ։

Պ. Տիեզերք ըստ աստեղաբաշխից է անսահմանն իմն միջոց, որոյ ծայրքն ամենեւին անյայտ են մեզ · յորում և գտանին անհամար գնտակք աստեղանց զետեղեալք ։

Հ. ՈՐՊԷ՞Ս ԲԱԺԱՆԻ ։

Պ. Յերկինս և յերկիր ։

Հ. ՔԱՆԻ՞ ԵՆ ԵՐԿԻՆՔ ։

Պ. Յայտ է յաւանդութենէ և 'ի սուրբ գրոց, եթէ երկու ազգք են երկնից · մին վասն իմանալեաց և մարմնոց երանելեաց, անուանեալ ԵՐԿԻՆ ՀՐԵՂԷՆ, զոր սուրբ գիրք կոչեն երկինք երկնից · և միւսն 'ի պէտս երկրի մերոյ ։ Սակայն ըստ այլեայլ իմացուածոյ յաւէտ կամ նուազ համարին երկինք · քանզի երկինն առեալ փոխանակ բարձրագոյն, լուսաւոր և անապական մարմնոյ՝ երրեակ համարի առ հասարակ · մին համակ լուսեղէն, որ և կոչի հրեղէն · միւսն համակ թափանցիկ, յորում ոչ գոն լուսաւորք · իսկ երրորդն մասամբ իւիք թափանցիկ, և մասամբ իւիք լուսեղէն, այս է երկին աստեղաց ։ Ըստ այսմ իմացուածոյ առաքեալն Պօղոս գրէ զանձնէ յափշտակեալ մինչև յե՟րդ երկինս․ որ է երկին հրեղէն՝ աթոռ ամենա՟սբ Ե՟րդուեն։

Հ։ Զ՛ինչ են այն գնդակք որք երևին։

Պ։ Ամենայնն են մարմինք լուսաւորք, զորս կոչեմք աստեղս։

Հ։ Քանի՞ են աստեղք։

Պ։ Երկու են ազգք աստեղաց․ անմոլորք, և մոլորակք։

Պ։ Զ՛ինչ են անմոլոր աստեղք։

Պ։ Անմոլոր ասին, որք բարձրագոյն գոլով քան զայլս և բացագոյն 'ի մէնջ՝ փոքրագոյն երևին մեզ։ Սոքա 'ի դիրս և յընթացս իւրեանց պահեն զանխախտ համաչափութ՟ն առ միմեանս, և յիւրեանց անտի արձակեն զկայծականացայտ լոյս։

Հ։ Որչափ է մեծութիւն նոցա։

Պ։ Անհամաձայն են աստեղագէտք յայսմիկ․ զի ոմանք աւելի և ոմանք նուազ համարին․ սակայն ամ՟քն աւանդեն թէ լայնական ընդարձակութ՟ն նոցա է մեծ յոյժ, մինչև այլ նոյնչափ արեգակունս լինել նոցա։

Հ։ Քանի՞ են անմոլոր աստեղք։

Պ։ Թիւ նոցա միայն նա գիտէ, որ արար ըզնոսա․ զի ը՟ մեծի մասին առ հեռաւորութ՟ իւրեանց ոչ անկանին ը՟ տեսութ՟ մերով․ և հայեցեալ 'ի նոսա դիտակամբ՝ երևին լինել անհամար։ Բայց որք 'ի պարզ գիշերի ակներև փայլեն՝ ոչ են աւելի քան 1022 . որք բաշխին և զետեղին 'ի 62 խորանս երկնից, և կոչին ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՔ . յորս երևելի են 12 ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊՔ, ընդ որս ընթանայ արեգակն ամսոյ յամիս: Եւ Համաստեղութիւնքս այսոքիկ յանուն գազանաց կոչեցան ԱՐՋ, ԿԷՏ և այլն:

Հ: ԶԻ՛ՆՉ Է ԱՆՈՒՆ 12 ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԻՑ :

Պ: Խոյ, Ցուլ, Երկաւոր, Խեցգետին, Առիւծ, Կոյս, Կշիռ, Կարիճ, Աղեղնաւոր, Այծեղջիւր, Ջրհոս և Ձուկն :]

Հ: ԶԻ՛ՆՉ Է ԱՐԵԳԱԿՆ:

Պ. Ի՛ գնտակ ինչ հրեղէն, որ 'ի ծագելն մերժէ զխաւար, և զամ ինչ լուսաւորէ ճառագայթիւք իւրովք: 'Ի ծագել արևու՝ յառաջէ նմ Արուսեակն, որև յայնժամ կոչի ԼՈՒՍԱԲԵՐ . և 'ի մտանելն՝ դարձեալ նոյնն ընթանայ յառաջոյ . և կոչի յայնժամ ԳԻՇԵՐԱՎԱՐ: Արեգակն նուազէ և առաւելու զցուրտն, ջեռուցանէ զաշխարհ ամ և կենդանացուցանէ . երբեմն մօտ երկրի մերում գոլով, և երբեմն հեռի՝ գործէ զչորս եղանակս տարւոյն, զգարունն, զամառն, զաշունն և զձմեռն . և քանի ուղղահայեաց արձակէ զշառաւիղս իւր յերկիր, այնչափ սաստիկ է ջերմութի նորա: Աստի արեգակն միջօրէի ջերմ է քան զերեկոյի և զառաւօտու: Նա առանցիւք իւրովք շրջի . և խաւարի յաչս մեր, երբ լուսինն յընթացս իւր անկանի ընդ մէջ նորա և երկրի ․ և այս առ հասարակ պատահի 'ի ծննդեան լուսնի ։ Յորմէ զհետ գայ՝ զի խաւարումն արևու, որ եղև 'ի չարչարանս Տեառն մերոյ՝ ոչ էր բնական ․ զի յայնժամ լրացեալ էր լուսինն ․ որովհետև չարչարեցաւ նա 'ի չորեքտասաներորդ աւուր լուսնի ։

Հ․ Ո՞րչափ է մեծութիւն Արևու ։

Պ․ Տրամագիծ նորա է 319, 314 փարսախ ․

Հ․ Ո՞րչափ հեռի է 'ի մէնջ ։

Պ․ Երեսուն և չորս միլիոն, 357 հազար, 480 փարսախ ։

Հ․ Զի՞նչ են Մոլորակ աստեղք ։

Պ․ Մոլորակ կոչին այն գնտակաձև աստեղք, որք ոչ ընդ միմեանս և ոչ ընդ անմոլար աստեղս պահեն 'ի դիրս և յընթացս իւրեանց զկարգ հաստատուն․ այլ իւրեանց ընթացիւք թափառեալ երբեմն 'ի սա, և երբեմն 'ի նա յարին․ և ամենքն են մարմինք ստուերամած, որք զլոյս իւրեանց առնուն յարեգակնէ ։

Հ․ Քանի՞ են ։

Պ․ Երկու ազգք են մոլորակ աստեղաց ․ առաջինք և երկրորդականք ։ Առաջինքն են եօթն ․ Փայլածու, Արուսեակ, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ, և Երկին, որ նաև կոչի Հերշէլ յանուն աստեղաբաշխի ուրումն Անգղիացւոյ, որ եգիտ զայն յամին 1781․

Իսկ երկրորդականքն են, որք առաջնոց միշտ

արբանեկեն, և ընթացակից են նց կամ պաշտօնեայ։ Այս են Թուով 18. յորոց 4 պաշտօնեայ են Լուսնթագին, 7 Երևակին, 6 Երկնի և 1 Երկրի. այն իսկ է լուսինն ։

Բազմք յաստեղաբաշխից համարեն՝ թէ յայլ մոլորակս ևս իցեն բազմութի մդկան իբրև յաշխարհի մերում. Բայց զայսպիսեաց խօսել աստանօր ոչ է ինձ հաճոյական ։

Հ. Զինչ է Երկիր ։

Պ. Երկիրս այս ենթալուսնեայ, յորում մեք բնակեմք՝ է գնտակաձև մոլորակ շարժական, որ յարևմտից յարևելս յածելով զառանցիւք իւրովք՝ կատարէ զշրջան իւր 'ի 24 ժամս. ուր լինի տիւ, եթէ է հանդէպ արեգական, և գիշեր՝ եթէ յառ 'ի յետոյս ։ Բայց յայսմ անձկագոյն շարժմանէ երկիրս միանգամայն լուսնիւ հանդերձ տարածագոյն իւն շրջանաւ պատի զարեգակամբ յաւուրս 365, ժ. 5, և ր. 49 ։

Շրջապատ երկրի է 9000 փարսախ. իսկ տրամագիծ նր 2865 ։ Առ 'ի դիւրին գործել զչափ ընթացից նր՝ աստեղաբաշխք բաժանեցին զշրջապատն 'ի 360 մասունս կմ աստիճանս. և իւրաքանչիւրն այսց աստիճանաց պարունակէ 25 փարս. և բաժանի 'ի 60 ր ։

Հ. Զինչ են հանգամանք այլ Մոլորակաց ։

Պ. Փայլածուն է մօտագոյն արեգական, և հեռի յերկրէ 13, 299, 782 փարս. և կատարէ զշրջան իւր զարեգակամբ 'ի 87 աւուրս, ժ. 23, և ր. 15։ Տրամագիծ նր̃ է հզ̃ր փարսախ ։

Արուսեակն է հեռի յարեգակնէ 24, 851, 885 փարս. և յածի զնովաւ յաւուրս 224, ժ. 16, և ր. 41։ Տրամագիծ նր̃ է 2748 փարսախ ։

Հրատն է բացագոյն յարեգակնէ քան զերկիր, և կատարէ զշրջան իւր զնովաւ գրեթէ յամս երկու։ Տրամագիծ նր̃ է 1490 փարսախ ։

Լուսնթագն է հեռի յարեգակնէ 178, 692,550 փարս. և կատարէ զշրջան իւր զնովաւ իբր յերկոտասան ամ։ Տրամագիծ նր̃ է 31, 111 փարսախ ։

Երևակն է հեռի յարեգակնէ իբր 572, 742, 720 փարս. և կատարէ զշրջան իւր զնովաւ յաւուրս 10, 746. ժ. 19. ր. 16։ Տրամագիծ նր̃ է 281, 194 փարսախ ։

Ուրանոսն կմ̃ Հերշէլ նորագիւտ Մոլորակն շրջանաւ իւրով ը̃դրկէ զայլս ամ̃, և գծէ զն̃ իւրով շարժմամբ։ Կատարէ զշրջան իւր զարեգակամբ յաւուրս 30, 689, ժ. 8, ր. 39. և է հեռի 'ի նմանէ 655, 600, 602 փարսախ ։

Հ։ Ի՞նչ է Լուսին ։

Պ։ Լուսինն ըմ̃ ասացաք՝ է արբանեակ երկրի, և յերկրորդական Մոլորակաց սակի։ Նա ևս զլոյս իւր՝ որպէս այլք՝ ը̃ունի յարեգակնէ, և է փոքր քան զամ̃ն. զի տրամագիծ նր̃ չէ աւելի քան 782 փարսախ. ուստի յիսուն անգամ մեծ է քան զնա ։ Բայց գոլով նր՟ հպագոյն երկրի քան զնս՟, երևի մեծ քան զայլս. զի հեռի է ՚ի մէնջ միայն 86,324 փարսախ ։ Լուսինն ոլով անգամ երևի և ՚ի ցերեկի. սակայն շառագոյն է յայնժամ, առ անհամեմատ պայծառուե՟ արևու ։ Նա կատարէ զշրջան իւր զերկրաւ ՚ի 27 աւուրս, ժ. 7, և ր. 4. իսկ հանդերձ երկրաւ զամ մի դնէ ՚ի շրջել զարեգակամբ ։

Հ. Վ՟ է՞ր երբեմն բոլորուն երևի լուսինն, երբեմն նուաղ և երբեմն աճեցուն ։

Պ. Այլևայլ տեսիլ կամ ձև նր՟ յառաջ գայ ՚ի պէսպէս պարբերուե՟ նորին ։ Քանզի ՚ի ծննդեանն, գոլով նր՟ միայն առ ՚ի յետուստ լուսաւորեալ յարեգակնէ՝ լինի գլխովին ստուերամած. ապա հետ զհետէ յառաջ կոյս ընկալեալ նր՟ զլոյս արևու՝ լուսաւորի. և զկնի չորեքտասան աւուրց երևի ը՟ ամի՟ լուսաւոր և բոլորաձև ։

Հ. Ե՞րբ լինի խաւարումն արևու և լուսնի ։

Պ. Արեգակն խաւարի յաչս մեր, երբ լուսինն յընթացս իւր անկանի ը՟ մէջ նր՟ և երկրի. և այս պատահի՝ որպ՟ ասացաք՝ ՚ի ծննդեան լուսնի ։ Իսկ լուսինն խաւարի, երբ երկիրս անկանի ը՟ մէջ արևու և նր՟. որ լինի՝ յորժամ լուսինն է յիւրում լրուե՟ ։

Հ. Վ՟ է՞ր ոչ լինի խաւարումն առ իւրաքանչիւր ծննդեան և լրման լուսնի ։

Պ. Վ՟ զի լուսինն յայսկոյս և յայնկոյս թափաւելով արտաքոյ քան զծիր խաւարման՝ ոչ անկանի միշտ ընդ մէջ երկրի և արևու ։

Բաժանումն Ժամանակի ։

Հ։ Ուստի՞ յառաջ եկն բաժանումն ժամանակին ։

Պ։ ’Ի կրկնակի հոլովմանէ երկրի. զի յառօրեայ շարժմանէ նր զառանցիւք իւրովք որոշեցաւ երկարութն միոյ աւուր բաժանելոյ ’ի տիւ և ’ի գիշեր . իսկ ’ի տարեկան շրջանէ նր զարեգակամբ՝ որոշեցաւ տարին բաժանեալ յաւուրս 365, ժ. 5, և ր. 49 ։ Իսկ յայսմ բնական և հասարակ բաժանմանէ՝ մդիկ արարին ’ի դիւրութն ինքեանց նաև զայլ պէսպէս բաժանմունս, որք են.

Դար. է սովորաբար միջոց կմ ժամանակ հարիւրամեան ։ Իսկ երկարատև ժամանակք ևս դարս ասին. զորօրինակ ’ի ստեղծմանէ աշխարհի մինչև ’ի ջրհեղեղ, որ է միջոց 1656 ամաց՝ կոչի ա̅ դար . անտի մինչ ’ի Քրի՝ բ̅ դար . և անտի մինչ յեկդ գալուստ նր՝ գ̅ դար ։ Նոյնպէս և ժամանակք հազարամեան կոչին դար . ը̅ որոյ ծնունդն Քրի եղև ’ի զ̅ դարուն ։

Տարին բաժանի յերկոտասան ամիսս, որք են. Յունվար, փետրվար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր և Դեկտեմբեր։ Նօթն ’ի ստ.

ցանէ ունին աւուրս 31 · իսկ չորքն՝ 30 · և փետրվարն առ հն՟րկ ունի 28 աւուրս և եթ ։ Նահանջ տարի ասի, երբ փետրվարն ունի 29 աւուրս · և այս մի օր յաւելանայ ՚ի 5 ժ, և ՚ի 49 ր · որք բարդին ՚ի վ՟ր 365 աւուրց իւրաքանչիւր ամի, ըն՟ նոյնչափ ժամանակ դնելոյ երկրի յածիլ զարեգակամբ · որով իւրաքանչիւր չ՟րդ ամ՝ ունի զօր մի աւելի ։

Տարին դարձեալ բաժանի ՚ի 52 շաբաթս · և շաբաթն ՚ի 7 աւուրս, որք են · Երկուշաբաթի, Երեքշաբաթի, Չորեքշաբաթի, Հինգշաբաթի, Ուրբաթ, Շաբաթ և Միաշաբաթ կ՟մ Կիւրակէ ։ Կիւրակէն է օր հանգստեան Քրիստոնէից, Ուրբաթն՝ Մահմէտականաց, և Շաբաթն՝ Հրէից ։

Այլև Տարին բաղկանայ ՚ի 365 աւուրց · իսկ օրն բաժանի յառաւօտ, և յերեկոյ · կամ՝ ՚ի տիւ և ՚ի գիշեր · և բաղկանայ ՚ի 24 ժամուց · ժամն ՚ի 60 րոպէից կ՟մ վայրկենից · և րոպէն ՚ի 60 երկվայրկենից կ՟մ մանրերկրորդաց ։

Եղանակք տարւոյ ասին չորս որոշեալ ժամանակք, յորս այլևայլ է զօրութ՟ի արևու · և են գարուն, ամառն, աշուն և ձմեռն ։

Գիշերահաւասարք լինի երկիցս ՚ի տարին · ՚ի 9 Մարտի և ՚ի 10 Սեպտ ։

Երկայնագոյն տիւն ՚ի մեզ հանդիպի յարևակայս ամառան · այն է ՚ի 9 Յունիսի · և կարճագոյն յարևակայս ձմեռան. այն է ՚ի 9 Դեկտ։ Սակայն այս չէ միօրինակ յամ՟ տեղիս. զի ը̅ պէսպէս դրից և կլիմայից եւրաքանչիւր գաւառաց՝ պէսպէս է և ընթացք արեգական։ Ըստ որոյ է ուրեք՝ զի գիշերն հաւասար է տուընջեան զամ՟ ողջոյն. և է ուրեք՝ զի գիշեր ամառան չէ աւելի քան զժամ մի. և ՚ի ցրտայինս գօտիս տիւն և գիշերն տևեն ամիս 6։

Հ։ Ե՞րբ սկսանին ջերմին աւուրք։

Պ։ Ընդհանրօրէն սաստիկ տօթն սկսանի ՚ի 21 Յուլիսի և տևէ մինչ ՚ի վերջ Օգոստոսի։

Հ։ Քանի՞ էին ամիսք Հռովմայեցւոց։

Պ։ Տասն միայն. յետոյ յաւելին զայլ ևս երկու ամիս՝ զՓետ. և զՅունիս. և ՚ի Մարտ ամսոյ սկսանէին հաշուել զտարին։

Հ։ Զի՞նչ է Եպակտն։

Պ։ Է տարբերութիւն որ ը̅ արեգակնային և լուսնային ամի. զի ամն արևու 11 աւուրբք յաւելանայ քան զլուսնին։

Հ։ Զի՞նչ է Ոլիմպիադ։

Պ։ Չորեքամեայ միջոց ժամանակի, զոր Յոյնք հաշուէին ՚ի կատարմանէ անտի հանդիսից և խաղարկութեց մերձ առ քաղաքն Ողիմպիադ, ը̅ կարգելոյ Հերակլեայ ՚ի պատիւ Արամազդայ։

Հ։ Ե՞րբ սկսանի Թուականն Եբրեւի ազգաց։

Պ։ Հրէից ՚ի ստեղծմանէ աշխարհի. և է

այժմ 5579 ․ Յունաց յՈլիմպիական խաղուց ․ և է 2595 ․ Հռովմայեցւոց ՚ի շինուէ Հռովմ քաղաքին ․ և է 2568 ․ Քրիստոնէից՚ի ծննդենէ Քսի ․ և է 1819 ․ Հայոց ՚ի նորոգուէ Տօմարին ․ և է 1268 , և Տաճկաց յամիրապետէ իւրեանց ․ և է 1234 ։

Հ ։ ԶԻ՞ՆՉ Է ՎՐԻՊԱԿՆ ։

Պ ։ Է՝ վրիպակ Զատկի , որ պատճառի՚ի լրրմանէ լուսնի , և հանդիպի միանգամ ՚ի միջոցի 95 ամաց , յորում Յոյնք եօթն աւուրբք յառաջ քան զՀայս կատարեն զԶատիկ ։

ՃԱՂԻԿ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

Հ. Զինչ է Աշխարհագրութիւն :

Պ. Է գիտու՟ն, որ ճառէ զայլ-և այլ հանգամանաց գաւառաց, ազգաց, տէրու՟եց, և զորոց միանգամ գտանին 'ի մակերևոյթ հողագնտոյս :

Հ. Որքան կարեւո՞ր է այս գիտութիւն :

Պ. Այո . զի առանց սորա անհնար է լինել իմաստուն, հանճարեղ, քաղաքավար և քաջ վաճառական :

Հ։ Զի՞նչ է ձև Հողագնդոյս ։

Պ։ Բոլորշի, և ըստ մասին տափարակ մերձ առ Բևեռսն, միանգամայն և արտաքս ցցուեալ ՚ի Հասարակածէն ։

Հ։ Զի՞նչ են Բևեռք, և զի՞նչ Առանցք ։

Պ։ Բևեռք կամ աստեղք կոչին այն կէտք ծայրից կամ ծղխնիք, յորոց վերայ Երկրագունտն կատարէ զիւր շարժումն օրական. և են երկու, Արջային կամ Հիւսիսային, և Հակարջային կամ Հարաւային ։ Իսկ Առանցք ասի այն գիծ, որ միաւորէ զերկոսին Բևեռսն ։

Հ։ Զի՞նչ են այն գիծք կամ շրջանակք, որք երևին ի Գունտին աշխարհագրական ։

Պ։ Հասարակած կամ Գիշերահաւասար ասացեալ շրջանակն բաժանէ զԳունտն յերկուս հաւասար մասունս հաւասարապէս տարակացեալս յերկոցունց Բևեռաց ։

Զօդիակոս կամ Կենդանակամարն նոյնպէս բաժանէ զԳունտն յերկուս հաւասար մասունս. և հատեալ զՀասարակածն խոտորնակի՝ միով մասամբ մատչի ՚ի Բևեռն Արջային, և միւսով ՚ի Բևեռն Հակարջային, խոտորելով ՚ի Հասարակածէ իբրև քսանևերիւք աստիճանօք և կիսով ։ Այսուիկ խոտորմամբ Կենդանակամարի լինին ամենայն փոփոխութիւնք եղանակաց տարւոյ, անհաւասարութիւն աւուրց, և բարեչափ տրամաբաշխութիւն տուընջեան և գիշերոյ ընդ ամենայն երկիր ։ Ի շրջանակի աստ են 12 Համաստեղութիւնք՝ Կենդանակերպք անուանեալք ։

Հորիզոն կամ Եզերակ կոչեցեալ մեծ շրջանակն բաժանէ զԵրկրագունտն յերկուս հաւասար կէսս. որոց մին է վերին և երևելի մեզ. իսկ միւսն՝ ստորին և աներևոյթ ։ Հորիզոնն օգտէ 'ի ցուցանել զծագումն և զմուտ աստեղաց. և յորժամ աստղ մինչ գայ 'ի վեր Հորիզոնի՝ լինի երևակ. այլ երբ իջանէ 'ի ստոր՝ աներևութանայ ։

Միջօրէայ շրջանակն ձգի 'ի միոջէ Բևեռէ 'ի միւսն, և ձևելով զՀասարակածն յուղիղ անկեան՝ բաժանէ զԵրկրագունտն 'ի Կիսագունտ արևելեան և յարևմտեան ։

Միջօրէականն առաջինն է, յորմէ որոշի հեռաւորութի այլ Միջօրէից յարևմտից յարևելս ։

Արևադարձ ասացեալ երկու մեծ շրջանակք՝ են սահմանք շարժման երկրի, որք և նշանակեն զհեռաւորութի արեգական 'ի Հասարակածէն ընդ հարաւ և ը հիւսիս. մին կոչի Արևադարձ Այծեղջեր, միւսն՝ Խեցգետնի ։

Խաւարածիրն է, որով արեգակն կատարէ զպարբերական ընթացս իւր ։

Բևեռային Արջային և Հակարջային շրջանակք են երկու փոքրիկ ծիրք, հեռի'ի Բևեռացն 23½ աստիճանօք. իսկ 'ի Հասարակածէ 66½ ։

Հ: Ո՞րինչ է Լայնութիւն հիւսիսային և հարաւային ։

Պ: Հեռաւորու̃ն տեղւոյ իրիք Հասարակածի 'ի հիւսիսային կամ 'ի հարաւային Բեւեռաց ։

Հ: Եւ– Երկայնութիւն արեւմտեան եւ արեւելեան ։

Պ: Հեռաւորու̃ն տեղւոյ իրիք Միջօրէի յարեւելից կամ յարեւմտից ։

Հ: Զի՞նչ են Գօտիք ։

Պ: Այն տեղիք կամ միջոցք առեալք 'ի մէջ երկու զուգահեռական շրջանակաց Երկրագնտոյն. և են հինգ. մին այրեցած, երկուք բարեխառն, և երկուք ցրտային ։ Այրեցածն է այն միջոց, զոր Հասարակածն բաժանէ յերկուս հաւասար մասունս, որոց մին է հարաւային և միւսն հիւսիսային. և կոչի այրեցած յաղագս սաստիկ տապոյ որ լինի անդ ։ Բարեխառն գօտիք են միջոցք առեալք 'ի մէջ Արեւադարձից. այսինքն 'ի մէջ Խեցգետնի և Այծեղջեր ։ Իսկ ցրտային գօտիք են միջոցք զետեղեալք 'ի մէջ Բեւեռաց և Բեւեռային շրջանակաց ։

Հ: Զի՞նչ է Կլիմայ ։

Պ: Կլիմայ կամ բաժին կոչին միջոցք մակերեւութի Հողագնտոյս առեալք 'ի մէջ երկու զուգահեռական շրջանակաց, յորս երկարութիւն աւուր միոյ կլիմայի առաւելու կիսով ժամու ք̃ զերկարութիւն աւուր միւսոյ կլիմայի ։ Ուստի 'ի ներքոյ Հասարակածի ը̃ բոլոր ամն տիւն և գիշերն երկար են 12 ժամ. բայց անտի ընթանալով դէպ 'ի Բեւեռն Արջային, տիւն առաւելու և նուազի աստիճան առ աստիճան ցայնվայր՝ զի յայն Բևեռն 'ի 9 Յունիսի մինչև 'ի 9 Դեկտ․ տիւն է 24 ժամ․ և անտի մինչև 'ի 9 Յունիսի գիշերն է 24 ժամ։ Նոյն հակառակ այսմ՝ 'ի Բևեռն Հակարջային 'ի ձմեռան տիւն է 24 ժամ, և յամառան գիշերն 24 ժամ։ Ըստ որոյ 24 Կլիմայք կամ բաժինք հաշուին 'ի բովանդակ Երկրագնտին։

Հ․ Զի՞նչ է Աշխարհացոյց։

Պ․ Են աշխարհագրական թուղթք, որք յանդիման առնեն զերկու Կիսագունտս աշխարհի։ Կիսագունտն արևելեան, որ և հին՝ պարունակէ զերիս մասունս աշխարհի․ այն է Եւրոպիա, Ասիա և Ափրիկէ։ Իսկ Կիսագունտն արևմտեան, որ և նոր՝ բովանդակէ միայն զԱմերիկա, որ բաժանի 'ի հարաւային և 'ի հիւսիսային։

Հ․ Զի՞նչ ընդհանրապէս պարունակէ Հողագունդս մեր։

Պ․ Զցամաք և զջուր։ Ցամաքն պարունակէ յինքեան զԿղզիս, զԹերակղզիս, զՊարանոցս, զՀրուանդանս, զԼերինս, և զԺայռս, որք ստորև բացատրին համառօտ։

Ցամաքն է մեծ տարածութ̃ի երկրի անանջատ 'ի Ծովէ։

Կղզին է մաս ինչ երկրի շրջապատեալ 'ի ջրոյ յամ̃ կուսէ։ Իսկ բազմութ̃ի կղզեաց ընթերակայ միմեանց՝ կոչին Արշիպելակոս կամ Արքիպելագոս։

Թերակղզի կամ Ցամաքակղզի կոչի այն մասն երկրի, որոյ երեք կողմանք շրջապատեալ են 'ի ջրոյ, և մին կողմն միայն հաղորդի ընդ ցամաքի. զորօրինակ Ղրիմ, Պելոպոննէսոս, որ է Մօրայ եալըն։

Պարանոցն որ և Սէրմ՝ենեղ և անձուկ մասն ցամաքի, որ միացուցանէ զերկու մեծամեծ զանգուածս ցամաքի ընդ միմեանս, այսինքն զմի Ցամաքակղզի ընդ ցամաքի. զորօրինակ Պարանոցն կամ Սիրձն Կորնթոսի միացուցանէ զՅունաստան ընդ Պելոպոննէսոսի։

Հրուանդանն կամ Սարն է մասն ինչ ցամաքի արտաքս 'ի ծովն կոյս կարկառեալ կամ երկայնեալ։ Զորօրինակ Սարն Բարէ յուսոյ 'ի Հարաւային Ափրիկէ։

Լեառն է բարձրաբերձ տարածումն ինչ երկրի։

Ժայռն է լայնատարած ապառաժ ինչ բարձրացեալ առ եզր ծովու և կամ 'ի դաշտի։

Իսկ Ջուրն պարունակէ զորս ստորև։

Ովկէանոս։ Է լայնատարր ընդարձակութիւն աղի ջրոյ, որ անջատէ զմի 'ի մասանց աշխարհի 'ի միւսմէ. զոր օրինակ՝ Ատլանտեան Ովկէանոսն, որ անջատէ զԵւրոպիա և զԱփրիկէ յԱմերիկոյ։

Ծով։ Է տարածումն աղի ջրոյ ոչ այնքան լայնածաւալ իբրև զՈվկիանոսն ․ զորօրինակ Ծովն Միջերկրականն, Սեաւ Ծովն և այլն ։

Նեղուց ։ Է անձուկ տեղի, ուր միացեալ խառնին երկու ծովք ընդ իրեարս ․ զորօրինակ Նեղուցն Ճէպալթարայ, որ միացուցանէ զԾովն Ատլանտեան ընդ Միջերկրականին ։

Խորշ ծովու (կօլֆ) ։ Է մասն ծովու, որ երկար տարածութ՟ իւ՟ մտեալ ՚ի մէջ ցամաքային աշխարհաց՝ զկայ առնու, պահելով զիւր հաղորդութիւն ընդ ծովու ։ Զորօրինակ Խորշ Պարսկային և այլն ։

Լիճ ։ Է լայնարձակ տարածութ՟ քաղցր ջրոյ շրջապատեալ ամ՟ ուստեք ՚ի ցամաքէ առանց երևելի կցորդութ՟ ընդ ծովու կա՟ ը՟ գետոյ ։

Գետ ։ Է անձուկ յորդութ՟ քաղցր ջրոյ, որ երկար մի ընթացեալ՝ հուսկ յետոյ անկանի ՚ի ծով կա՟ յայլ գետ ․ որպէս Տիգրիս, Արաքս, Նեղոս ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ ։

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԵՐԿՐԻ ։

Հ․ Որպէս բաժանի Աշխարհագունդս ։

Պ․ Ի չորս մասունս ․ որք են՝ Եւրոպիա, Ասիա, Ափրիկէ և Ամերիկա ։

Հ․ Ո՞ր մասն Երկրի է ընդարձակագոյն ․

Պ: Ամերիկա. յետոյ Ասիա. յետոյ Ափրիկէ. և յուսկ յետոյ Եւրոպիա : Յետինս այս Թէպէտ փոքրագոյն մասն է Երկրի, այլ աւելի բազմամարդ է և գեղեցիկ. և գերազանցէ զամենեքումբք ազգի ազգի իմաստից գիտուբք, յոքնայոլով ճարտարագործ և նրբահնար կենցաղօգուտ արուեստից առաւելուբ, և հզօր Թագաւորուեց բազմուբ :

Հ: Զի՞նչ ինչ պարտ է առաւելագէս նշանել 'ի ստորագրելն մասնաւոր աշխարհաց :

Պ: Զտարածուի, զդիրս, զօդն, զբերս, զկերպ կառավարուե, զմուտս, զվաճառս, զզօրուի, զկրօն, զբարս, և զԹիւ բնակչաց. այլև զծովս, զլիճս, զգետս, զլերինս, զերևելի քաղաքս, զնաւահանգիստս և այլն :

ԵՒՐՈՊԻԱ.

Հ: Զի՞նչ է աշխարհագրական դիրք Եւրոպիոյ :

Պ: Եւրոպիա 'ի հիւսիսոյ ունի իւր սահման զՍառուցեալ ծովն. 'ի հարաւոյ զՄիջերկրական ծովն՝ որ անջրպետէ զնա յԱփրիկոյ. յարևելից զՍեաւ ծովն և զԱսիա. իսկ 'ի յարևմտից զՈվկիանոսն : Երկայնուի նր է իբրու հազար փարսախ, 'ի հրուանդանէ Սրյն Վինկենտիոսի ընդ արևմուտս մինչև 'ի բերանն Օպի գետոյ ընդ հիւսիսային հարաւ. իսկ լայձուլին 'ի հիւսիսոյ 'ի հարաւ՝ ինն հարիւր փարս.

Հ: Զի՞նչ է ընդհանուր բաժանումն Եւրոպիոյ :

Պ: Եւրոպիա բաժանի 'ի բազում Թագաւորութիւնս և 'ի Հասարակապետութիւնս: Ռուսիա, Աւստրիա և Օսմանեան տէրութիւնն՝ են Կայսերութիւնք. Գաղղիա, Մեծն-Բրիտանիա համդերձ միացեալ կղզեօք Սկովտիոյ և Իռլանդիոյ, Դանիմարգա, Նորվեգիա, Սվետիա, Պրուսիա, Փորտուգալ, Սարդինիա, և Նեապոլիա՝ են լոկ Թագաւորութիւնք. իսկ Հելվետիա կամ Զուիցերի, Հոլանդա և Վենետիկ՝ են Հասարակապետութիւնք :

Հ: Ո՞յք են գլխաւոր Ծովքն :

Պ: Նախ՝ Ատլանտեան Ովկիանոս, որ գտանի 'ի մէջ Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ: Եկ՟դ՝ Ծով Գերմանիոյ. այս է այն մասն Ովկիանոսի, որ գտանի 'ի մէջ Մեծին-Բրիտանիոյ, Գաղղիոյ, Գերմանիոյ, Դանիմարքայի և Նորվեկիոյ. սա անուանի և Ծով Հիւսիսոյ: Եր՟դ՝ Ծով Բալթեան, կամ Պալթիկ. այս է մեծ խորշ ծովու 'ի մէջ Դանիմարքայի, Գերմանիոյ, Պրուսիոյ, Կուրլանդիոյ, Ռուսիոյ և Սվետիոյ: Չր՟դ՝ անդր ևս ընդ հիւսիս է ձգ Ծովն Հիւսիսոյ, որոյ մի բազուկն մերձ Արխանգելայ կազմէ զխորշ, որ յորջորջի Սպիտակ Ծով. և միւսն կոչի Սառուցեալ Ծով, 'ի պատճառս դիզացեալ սառանց ամի ամիերևելոյ անդր: Հինգերորդ Ծով Կասբից՝ որ 'ի հիւսիս կոյս Սեաւ Ծովու: Վեցերրորդ՝ Սեաւ ծով, կամ Եւքսինեայ հաճաւորջ, որ խառնի ը՟ Միջերկրականին։ Եւ Սեաւ կոչի անուն՝ զի է միշտ ալեկոծեալ. որպէս և ջուր նր՟ քաղցր գոլով քան զայլոց ծովուց, յոլով անգամ սառի 'ի ձմեռուան։ Եօթներորդ՝ Ծով Ազախու, կ՟մ Ազովու. 'ի նախնումն կոչիւր Փալուս Մէոթիտէս. սա չէ այլ ինչ, բայց եթէ մասն ինչ անձուկ Սեաւ ծովու, անջրպետեալ 'ի նեղուցէն Բոսփորոսէ կամ Պօլսոյ։ Ութներորդ՝ Ծով Միջերկրական, որ թանայ զծովափնեայ սահմանս Ասիոյ, Ափրիկոյ և Եւրոպիոյ, և խառնի ընդ Ովկիանու 'ի ձեռն պարանոցին Ճիպրալդարայ։ Իններորդ՝ Ծով Ադրիական, կամ Խորշ Վենետկոյ. սա է խորշ Միջերկրականին, զոր գործէ երկար լեզուակ ինչ ցամաքի, այն է Իտալիա։ Ահա այս են ծովքն Եւրոպիոյ. սակայն ը՟ ինքեան հայեցեալ՝ Միջերկրականն և Պալթիկեանն չեն այլ ինչ, բայց երկայնատարած խորշք ծովու գործեալք յՈվկիանոսէ։

Հ։ Եւ Լերինքն։

Պ։ Պիրենեան լերինք, որք անջրպետեն զԱսպանիա 'ի Գաղղիոյ. Ալպեան, 'ի մէջ Իտալիոյ, Գաղղիոյ և Հելվետիոյ. Ապեննեան՝ յԻտալիա. Կարպատեան՝ 'ի Լեհաստան. և Ուրալ 'ի Ռուսսիա։

Հ։ Եւ Կղզիքն։

Պ։ Բայց 'ի մեծամեծ Բրիտանեան կղզեաց՝ գլխաւոր կղզիք Եւրոպիոյ են՝ 'ի Միջերկրական ծովն. Կորսիքա, Սարդինիա, Սիկիլիա, Մալթա, Կրէտէ, Կիպրոս, Արքիպելագոս, Մայորքա, Մինորքա, և Իվիզա։ ’Ի խորշն Վենետկոյ՝ Կորֆու, Կեֆալոնիա, Զանթա և Սանթէ Մաւրա ։ ’Ի Հիւսիսային ծովն՝ Իսլանդիա. ’Ի Պալթիկ ծովն՝ Ֆիոնիա, Զելանդիա, Ալսէն, Ֆալսդէր, Լանկլանդ, Ֆէմէրն, Մօն, Բօռնհօլմ, Գոթլանդ, Ալանդ, Ռիւգէն, Էօզէլ, Տագօ, Ուզէդօմ և Վօլլին ։

Հ։ Ո՛յք են գլխաւոր Խորշք Եւրոպիոյ ։

Պ։ Խորշ Սունդայ՝ ’ի բերանն Պալթիկ ծովու. նեղ՟ Սրբոյն Գէորգեայ՝ ’ի մէջ Անգղիոյ և Իռլանտիոյ. նեղ՟ Կալայիոյ՝ ’ի մէջ Գաղղիոյ և Անգղիոյ. խորշ Կիպրալթարոյ՝ ’ի մէջ Եւրոպիոյ և Ափրիկոյ. խորշ Մեսսինայի՝ ’ի մէջ Սիկիլիոյ և Նէապոլիոյ. խորշ Կոստանդնուպօլսոյ (Տաճկ. Չանաք գալէսի)՝ ’ի մէջ Օսմանեան Տէրութեան, որ յԵւրոպիա, և որ յԱսիա. և խորշ Մարմարայի՝ նոյնպէս ’ի մէջ Ասիոյ և Եւրոպիոյ։

Հ։ Ո՛յք են գլխաւոր Հրուանդանքն ։

Պ։ Հրուանդանն Հիւսիսոյ՝ ’ի Լապօնիա, Ֆինիսդէրէյ, Սրբոյն Վինչէնդիոսի, և Մադապանու ։

Հ։ Եւ Թերակղզիք ։

Պ։ Յուդլանդ՝ ’ի Դանիմարքա. Սպանիա, Իտալիա, Պեղոպոննոս, և Ղրիմ ։

Հ։ Եւ Լիճք ։

Պ։ Լադոգա և Օնէգա ’ի Ռուսիա. լիճ Կոստանելոյ 'ի Հելվետիա. ընդ Կենէվէոյ 'ի Գաղղիա

Հ: Եւ Գետքն :

Պ: Վօլգա · Դունա · Տնեէպէր · Տնեէստէր · Բորուէրէն · Ռօն · Դանուբ, և Ռէն :

Հ: Որո՞նք են գլխաւոր Կրօնք Եւրոպիոյ :

Պ: Քրիստոնէութիւն, Հրէութիւն և Մահմէտականութիւն : Բայց յանհամար Եղանդոց, որք գտանին 'ի մէջ Քրիստոնէից՝ երեք գլխաւոր Եկեղեցիք կամ Կրօնք գոն ընդ ամ Եւրոպիա. Հռովմէական, Յունական և Լուտերական : Մահմէտականք գտանին միայն յՕսմանեան Տէրութե. իսկ Հրեայք գոլով ցրուեալք աստևանդ, ոչ կացուցանեն զազգ մի յօդաւորեալ :

Հ: Քանի՞ ազգք Կառավարութեան գտանին յԵւրոպիա :

Պ: Չորք · Միապետութիւն, Ռամկապետութիւն; Ազնուապետութիւն, և խառն Կառավարութիւն :

Միապետական կառավարութի կոչի՝ յորժամ մի ոք միայն իշխէ 'ի վերայ տէրութեն. և նա կոչի Թագաւոր կամ Ինքնակալ: Ոմանք յԻնքնակալաց վարեն զբացարձակ իշխանութի, և տնօրինեն ինքնակամ զընչից և զկենաց հպատակաց. այլք կարեն առնել միայն զայն ամ, որ համաձայն է օրինաց տէրութեն : Յառաջնոց սակի են Սուլթանն Տաճկաց և Արքայն Պարսից. իսկ 'ի յետնոց համարի են ամ Ինքնակալք Եւրոպիոյ :

Ազնուապետականն է այն, որոյ ծայրագոյն իշխանութիւն լինի 'ի ձեռս ազնուական արանց ինչ ժողովոյ ։

Ռամկապետական ասի, երբ իւրաքանչիւր անդամ ժողովրդեան ունի իրաւունս մտանելոյ 'ի խորհուրդ այնմ ամենայնի, որ ինչ վերաբերի առ նորանոր օրինաց հաստատութիւն, և առ 'ի հաստատել զնոր հարկս ։

Իսկ խառն Կառավարութիւն է, երբ ծայրագոյն իշխանութիւն լինի 'ի ձեռս թագաւորին և ազնուականաց միանգամայն ։ Այսպիսի է Կառավարութիւն Անգղիոյ ։

Հ։ Ո՞ք են գլխաւոր լեզուք Եւրոպիոյ ։

Պ։ Լեզուք Եւրոպացւոց համօրէն ածանցեն 'ի Լատին, 'ի Յոյն, 'ի Գերմանական, 'ի Սլաւոնեան և 'ի Գոթական բարբառոց ։ Լեզուք բաժանին ընդհանրապէս 'ի մեռեալ և 'ի կենդանի ․ մեռեալ յորջորջին այնք, զորս մարդիկ այլ ևս ոչ խօսեն ․ այսպիսի են Յունականն, Լատինականն և Եբրայականն․ իսկ կենդանի լեզուքն են՝ Գաղղիականն, Անգղիականն, Իտալականն և Գերմանականն ։

Հ։ Զի՞նչ է Կրօնն գլխաւոր ազգաց Եւրոպիոյ ։

Պ։ Կրօնն Ռուսաց է Յունականն ․ Գերմանացւոց՝ Հռովմէականն և Լուտերականն ․ Գաղղիացւոց՝ Հռովմէականն ․ նոյնպէս Իտալացւոց, Սպանիացւոց և Փորթուգալաց ․ իսկ Անգղիացւոց, Պրուսսաց և Դանեաց՝ Լուտերականն։

Հ: Որքա՞ն է թուահամարն համօրէն Ռուսաց։

Պ: Ըստ նոր համարողութեանց համօրէն թիւ բնակչաց նորա հասանէ ց165 միլիոն։

Հ: Որպիսի է բարս ռամկին Ռուսացւոց։

Պ: Ռուսացիք եռանդնոտ են և զուարթամիտ. օտարասէրք, քաղցրակենցաղք, հետաքննինք, փոփոխամիտք, անհամբերք, նորասէրք և դիւրաշարժք ՚ի ցասումն։ Են և սրամիտք, ճարտարք և աչալուրջք. յօժարամիտք և քաջայարմարք յամ ուսմունս. այլև ժրաջան և աշխատասէր, արիասիրտ և քաջահմուտ ՚ի պատերազմական արուեստի. թափառոտք և բազմաշրջիկք։

Լեհացիք գեղեցիկ են և կորովի մարմնով, ծանր և հանդարտ բարուք, հաստատուն և հաւատարիմ ՚ի բանս. քաջասիրտ, վեհանձն և առատաձեռն. աշխատասէր, ճարտարամիտ, գործունեայ, աչալուրջ, հայրենասէր և աշխոյժք։ Այլև մաքրասէր են և շքեղակեացք, բազմածախք և զբօսասէրք. հետամուտ մաթէմաթիկականաց և քաջ պատերազմօղք, մանաւանդ ՚ի ծովու։ Բայց շռայլոտք են ՚ի կերակուրս և յըմպելիս, դժուարընտելք և օտարատեացք։

Գերմանացիք քանզի խառնուրդ են և հաւաքումն յայլևայլ ազգաց՝ այլևայլ են բարք և բնաւորութիւնք նոցին։ Սակայն ընդհանրապէս բարեձև են և բարեհամբոյր , մարդասէր, քաղցրակենցաղ , անկեղծ և հաւատարիմ ․ ուսումնասէր, հնարագէտ ․ միտավարժ , և ճարտար ․ աշխատասէր , կորովի և քաջամարտիկ ։ Այլ կարի իրաւամբ յանդիմանին նք՟ վ՟ս գինեմոլութե՟ և պճնասիրութե՟ , յորս հակեալ են աւելի քան զայլս ։

Ռուսք ուժեղ են և յաղթանդամ, աշխատասէր և ժրաջան և քաջայարմար յամ՟ ուսմունս գիտութե՟ց և արուեստից ․ քաջասիրտ և երկայնամիտ 'ի պատերազմի ․ հաւատարիմ և հնազանդ Ինքնակալի իւրեանց ։ Երբեմն առ հասարակ վայրենաբարոյք էին և անկենցաղելիք ․ այլ այժմ զկնի Մեծին Պետրոսի՝ ազնուականք և քաղ՟քցիք 'ի նոցանէ քաղաքավար են , բարեկիրթ և մարդասէր ․ որպէս և հետամուտ գիտութե՟ց և նորահնար կենցաղօգուտ իրաց ։

Իտալացիք՝ առ քաղցրութե՟ օդոյ , համեղութե՟ ջուրց և առատութե՟ երկրին , յորում բնակեն՝ քաջառողջ են և բարեձև , սրամիտ և յաջողակ յամ՟ ուսմունս ․ քաղցրակենցաղք և մարդասէրք ․ ոչ այնքան ծանր և խորոխտ իբրև զԱնգղիացիս և զՍպանիացիս , և ոչ ևս տարապայման թեթև իբրև զԳաղղիացիս ։ Երբեմն գերահամբաւեալ էին յամ՟ գիտութ՟իս և արհեստս ․ ո՟պ և ահարկու 'ի պատերազմի և տեարք աշխարհի ․ այլ այժմ ծառայ անխնամ արանց, և անձնատուր 'ի փափկութ՟ս մարմնոյ : Են և խորամանկք և գաղտամիտք և ոխակալք · այլև աւելորդապաշտք :

Սպանիացիք հաստատուն և անփոփոխ են 'ի խորհուրդս, հանդարտ և ծանր 'ի շարժմունս · չափաւոր և սակաւապէտ 'ի կերելիս · առատաձեռն և վեհանձն · 'ի զարդս հանդերձից և 'ի կարասիս տանց շքեղք և մեծածախք : Խորշեն մեծապէս 'ի նուաստ պաշտօնատարութեց · յայն սակս անպիտանք են՝ 'ի տնտեսական մասին : Ատեն զզինուորութի՟, զգիտութի՟ս և զարհեստս · ուստի են յամ՟ իրս հեղգաբարոյք : Թուի թէ հարստութիւն զոր 'ի ձեռս բերին յԱմերիկոյ, աղաւաղեաց զբարս նոցա, և ուսոյց լինել դատարկակեցիկս և թուլամորթս : Այլև կարի յոյժ գոլով նոցա աւելորդապաշտք և բիրտք՝ արհամարհեն և հալածեն զայլ ամենայն քրիստոնեայս · ուստի Ատեանն Սրբաքննութեան 'ի Սպանիա աւելի սաստիկ է և վնասակար՟ք յայլ ամ՟ աշխարհս Հռովմէական Կաթօլիկաց

Հ: Ո՛յք են գլխաւոր Քաղաքքն :

Պ: Փարիզ : Սա է Արքայանիստ Մայրաքաղաք Թագաւորութե՟ Գաղղիոյ · և մի յառաջին քաղաքաց աշխարհի : Ունի մետասան գլխաւոր դրունս, 867, կամ ը՟ այլոց 967 փողոցս, 50 հրապարակս, 4 Թագաւորական պալատս, 12 կամուրջս 'ի վերայ Սէն գետոյ, 500 լայնանիստ մեծաշէն ապարանս, և բնակիչս իբր 700 հազար։ Թիւ եկեղեցեաց և մենաստանաց յառաջ բազում էր յոյժ . բայց այժմ նուազեալ գտանի ։ Ունի և 26 Անկելանոցս, 15 երևելի Ուսումնարանս, 43 մեծամեծ Դպրոցս, 6 Ճեմարանս կամ Ակադեմիայս, 5 Հրապարակական հարուստ Գրատունս, և 8 Թատերս խաղուց ։ Այս քաղաք է նաև աղբիւր ամենայն նորահնար ձևոց հանդերձից (Մօտ) ։

Լոնտօն ։ Է Արքայանիստ Մայրաքաղաք տէրութեան Անգղիոյ, և մի յառաջին բազմամարդ քաղաքաց աշխարհի ։ Երկայնութիւն նորա երկու փարսախ և կէս, և լայնութիւն՝ է որ մին փարսախ, և է որ կէս միայն ։ Ունի 26 Թաղս, 8 մեծամեծ դրունս, թո՛ղ զմանունս, 244 եկեղեցիս, 2 Սինակովկայս Հրէից, 116 Անկելանոցս, 4 Ճեմարանս, 8 մեծամեծ Դպրոցս, 18 Ուսումնարանս, 7 մեծամեծ Թատերս խաղուց և այլ 3 Թատերս երաժշտութեան, 20 մեծամեծ բանտս, 42 վաճառատեղիս, և 27 քառակուսի մեծամեծ Հրապարակս։ Թիւ բնակչացն նորա է աւելի քան զմի միլիոն ։

Վիէննա (Վէն) ։ Է Կայսերանիստ Մայրաքաղաք համօրէն տէրութեան Աւստրիոյ ։ Ունի 4 Թաղս, 10 դրունս, 117, ըստ այլոց 80 փողոցս, 8 երևելի Հրապարակս և 49 եկեղեցիս ։ Շինուածք տանց ունին մինչև 98 յարկս . և Թիւ բննակչաց հանդերձ արուարձանօք հասանէ ց250 կմ՟ 270 հազար ոգիս․

Սանկտպետերբուրգ, կամ Պետերբուրգ։ Ի Կայսերանիստ արդեան Մայրաքաղաք համօրէն Ռուսսիոյ, շինեալ 'ի մեծէն Պետրոսէ առաջնոյ յամի 1703։ Երկայնութի՟ նր՟ իբր 4 մղոն․ նոյնչափ համարեա՛ և զլայնութի՟ն։ Սա թերևս է ևս գեղեցկագոյն քղ՟ք աշխարհի, ո՟ր պատշաճաւոր տրամաբաշխութ՟ լայնանիստ փողոցացն, և ո՟ր մեծակառոյց ուղղագիծ դասաւորութ՟ շինուածոցն։ Ունի բնակիչս իբր 400 հազար ոգիս․ որս են բազում օտարականք և իբր 60 հզ՟ր զինուորականք։ Են 'ի նմ՟ 25 եկեղեցիք Ռուսաց, 2 գլխաւոր եկեղեցիք Գերմանացի Լուտերականաց․ և բաց յայսցանէ այլ իւրաքանչիւր ազգք ունին իւրեանց սեփական եկեղեցիս․ որպէս և մեք ևս զմի հոյակապ վայելչանիստ եկեղեցի յանուն Սբ՟յն Կատարինեայ, կառուցեալ 'ի գլխաւոր փողոցի քաղաքին․ այլև զմին Հանգստարան հանդերձ վայելչակերտ եկեղեցեաւ, զոր Եկատարինէ Կայսերուհին յատուկ հրովարտակաւ շնորհեաց գերահռչակ Տոհմին Եղիազարեան։

Ս. Պետրբուրգ ունի բազում երևելի հոյակապ շինուածս․ յորս յաւէտ անուանի են՝ Բերդն, կառուցեալ 'ի միջակէտ անդր քաղաքին 'ի փոքրիկ կղզւոջ․ ձև նորա է վեցանկիւնի, շինեալ ըստ արուեստի այժմեան զինուորական ճարտարապետութեան, և քաջ ապաւազինեալ : Անդ է Փողշըրտնոյն, և հոյակապ դամբարանք մեծին Պետրոսի և այլոց յաջորդաց նորին : Ի բերդի անդ պահպանի և փոքրիկ նաւակ մի ըստ ձևոյ նաւակաց Հոլանտացւոց, զոր շինեալ է մեծն Պետրոս ձեռամբ իւրով : Ի ձախակողմն Նեւայի, ոչ հեռի 'ի բերդէ անտի է Արքունի ապարանք ձմերոցի 'ի ձև երկայն քառակուսի. Ճակատն որ հայի 'ի գետն` է երկայն 700 ոտնաչափ. անդ է արքայական մեծագործ Թագն ականակուռ և մարգարտայեռ : Առաջի այսմ արքունեաց է ծովային Նաւարանն, ամրացուցեալ հաստակառոյց պատուարօք, և 5 աշտարակօք. ունելով և բարձր աշտարակ մի կարծրաձեղուն պղնձապատ ոսկեճաճանչ, զոր ամենայն նաւք 'ի հասանելն անդր ողջունեն արձակմամբ հրազինուց : Իսկ և Հանդէսարանն կոչեցեալ Էրմիթաժ. ուր հաւաքեալ պահին պէսպէս հաղուագիւտ մեծագանձ իրք, և ճարտարանկարք երեւելի պատկերահանաց :

Այս քաղաք ունի և բազում երեւելի Ճեմարանս, Ակադեմիայս և Պիւրոյս գիտութեանց և արուեստից, և Գործարանս այլ և այլ արհեստակերտուածոց. յորս յաւէտ երեւելի է Գործարանն մանուածոյ արտաքոյ քաղաքին առ Նեւայիւ. ուր ճարտարարուեստ մանաւթիկ և հրաշունչ մեքենայիւք մանեն զբամբակ :

Մոսկով ։ Էր երկրորդ Կայսերանիստ Մայրաքաղաք համօրէն Ռուսիոյ ։ Եթէ նկատեսցուք զշրջապատ նորա՝ է յետ Կոստանդնուպօլսոյ և Լօնտոնի մեծ քան զա՟մ քաղաքս Եւրոպիոյ · զի է 20 մղոն ։ Ունի իբր 300 եկեղեցիս · (ամօք ինչ յառաջ ունէր աւելի ,) 29 մենաստանս , և բնակիչս աւելի քան 400 հազար · յորս են բազում օտարականք , և յազգէ մերմէ ևս իբր 30 գերդաստանք , որք ունին զերկուս եկեղեցիս ։

Այս քաղաք բաժանի 'ի 4 մեծամեծ թաղս ։ Առաջինն՝ որ է 'ի միջակէտ քաղաքիս , կոչի Գրէմլ առ Մոսկվա գետով · և է շրջապատեալ բարձր և թանձր պարսպաւ , և խորայատակ խրամով , զոր Գաղղիացիք մտեալ 'ի ներքս յամին 1812 , 'ի հիմանէ քանդեալ տապալեցին · բայց այժմ շինեցաւ վերստին լաւ քան զառաջինն ։ 'Ի սմա են նախնի և արդեան Արքունիք Ինքնակալաց , և 3 Աթոռանիստ եկեղեցիք · յորոց մինն է նուիրեալ Վերափոխման Ածամօրն · ուր սովորաբար լինի օծումն և թագադրու՟ն Կայսերաց · երկրորդն է Եկեղեցին Սրբոյն Միքայելի Հրեշտակապետին , ուր են գերեզմանք Ինքնակալացն Ռուսիոյ · որև ունի զանգակատուն բարձր քան զայլ ա՟մ զանգակատունս քաղաքիս · էր և 'ի նմա յառաջ հռչակաւոր զանգակ Իվան Վէլիքիէ , որ կշռէր 12 հազար փութ · այլ 'ի 1737 հրկէզ լեալ փայտակերտ մեքենայի՝ զորմէ կախեալ կայր, անկաւ յերկիր, և առ ծանրուե̃ն իսպառ թաղեցաւ ՚ի գետնի : Իսկ երրորդն է Եկեղեցին Մեծ Կուսին, երևելի սակս ոսկի և արծաթի սպասուց և զարդուց : ՚Ի թաղի աստ է և հին պատրիարգարանն, ուր այժմ գումարի եկեղեցական ն̃ք Սինհոդոսն Ռուսաց · անդ պահեալ կան նախնի մեծագին զգեստք պատրիարգականք · այլև ձեռագիր մատեանք ՚ի բարբառ Յունաց և Ռուսաց : Անդ են և ժողովատեղիք իշխանաց, արքունի Զինարանն և ախոռն և համբարանոցն պարենից :

Այս քաղաք ունի զմին Համալսարան, զբազում Ճեմարանս, և մեծամեծ Դպրոցս · յորս երևելի է Դպրոցս Հայոց հիմնեալ ՚ի գերահամբաւ Տեարց Եղիազարեանց : Ունի և երևելի վաճառատեղի (պիրժ) կոչեցեալ · յորում գտանին իբր 6000 կրպակք աղիւսակերտք կամարակապք · ուր միշտ լինին բազմուի̃ վաճառականաց յամ ազգաց : Ունի և 85 Գործարանս զանազան իրաց, և փողերանոց հոյակապ, և Անկելանոցս մեծաշէնս :

Պէռլին : Ի Թագաւորանիստ Մայրաքաղաք տէրուե̃ն Պռուսսիոյ, և մի ՚ի գեղեցիկ բազմամարդ քաղաքացն Եւրոպիոյ, բաժանեալ ՚ի 5 քաղաքս. փողոցք ն̃ր̃ա մեծի մասին երկայն են և մաքուր · ունի բազում մեծամեծ ապարանս և երևելի շինուած և հրապարակս գեղեցիկս, և բնակիչս իբրև 150 հազար ։ Ունի 36 կամուրջս, որոց առաւել մասն են քարաշէն, 32 եկեղեցիս, 3 երևելի Ճեմարանս, 4 մեծամեծ Դպրոցս, բազում Գրատունս և Գործարանս և Անկելանոցս ։ Ի քղ՟քի աստ բարգաւաճեալ են ամ՟ գիտութիւնք և արհեստք ։

Ամստերդամ ։ Է իշխանանիստ Մայրաքաղաք տէրութեան Հոլանտայի, և մի 'ի բազմահարուստ քաղաքաց Եւրոպիոյ ։ Ձև նր՟ է կիսաշրջանակ ձգեալ առ Այ գետով. և 'ի ցամաքակողմն ունի 26 մարտկոցս կանոնաւորս, և պարիսպ կամ պատուար հողալից. արտաքոյ այսր շրջապատի խարիսխ արկանեն նաւք մեծամեծք և անթիւք, որք ելևմուտս առնեն յամ՟ կողմանց աշխարհի ։ Թիւ բնակչացն հասանէ ց250 հզր՟. յորոց անտի 30 հզր՟քն են Հրէայք Գերմանացիք և Փորդուգալացիք ։ Են անդ և բազմութիւն օտարական վաճառականաց, յորս գտանին և ոմանք յազգէս մերմէ, որք և ունին եկեղեցի նուիրեալ Հոգւոյն Ս՟բյ, և գերեզմանատուն. այլ զուրկ են այժմ 'ի քահանայէ ։ Կալվինականք ունին 11 եկեղեցիս, և Լուտերականք 2 միայն ։ Իսկ Հռովմէական Կաթողիկք բազում եկեղեցիս և մատուռս. նոյնպէս և Հրէայք բազում Սինակովկայս ։ Ունի այս քաղաք և բազում մեծամեծ հոյակապ Անկելանոցս և Աղքատանոցս, որք դերահամբաւեալ են ընդ ա՟մ Եւրոպիա, սակս վայելչուն շինուածոցն, մաքրուն և բարեկարգուն՝ որք նշմարին 'ի ն՟մ :

'Ի քաղաքի աստ զառաջինն փորագրեաց զտառս Հայոց ընտիր և վայելուչ ա՟մ մասամբ յամի 1660 Մատթէոս սարկաւագ Ծարեցի. յետ ն՟ր Աւետիս Երևանցի՝ ապա եղբայր նորին Ոսկան Վարդապետ. յետոյ Ղուկաս դպիր Վանանդեցի. և յետոյ Թովմաս Եպ՟ս. որոյ տպեցին հետ զհետէ զԱ՟ծաշունչս և զայլ բազում օգտակար գրեանս։

Մադրիտ : Ի Արքայանիստ Մայրաքաղաք տէրութեան Սպանիոյ։ Փողոցք ն՟ր բարձր են և սալայատակ. ունի 15 դրունս, քանի մի գեղեցիկ հրապարակս, 15 գլխաւոր եկեղեցիս, 69 մենաստանս, 4 Համալսարանս, 22 Անկելանոցս, երկու գեղեցկաշէն կամուրջս, և բնակիչս իբր 140 հ՟զր.

Լիզպոնա : Ի Արքայանիստ Մայրաքաղաք տէրութեան Փորտուգալիոյ, և մի 'ի գեղեցիկ մեծագանձ քաղաքաց Եւրոպիոյ։ Ունի 31 գլխաւոր եկեղեցիս, 50 մենաստանս, և Անկելանոցս բազումս, և բնակիչս աւելի քան զերկերիւր հազար : Ունի և 5 մեծակառոյց Արքունիս, մին երևելի Ուսումնարան ազնուական մանկանց, և մին հռչակաւոր Ճեմարան։ Վաճառականութիւն այսր քաղաքի ծաղկեալ է յոյժ, և նաւահանգիստ ն՟ր է մի 'ի պատուական նաւահանգստից Եւրոպիոյ։

Հռովմ։ Սա քաղաք հին, դերահռչակ և մայր ամ՟ քաղաքաց աշխարհի. երբեմն Կայսերանիստ, և երբեմն Աթոռ պանծալի տիեզերակալ Հասարակապետութեան Հռովմայեցւոց. իսկ այժմ մեծ Հայրապետի եկեղեցւոյն Լատինացւոց և Ինքնակալի համանուն գաւառի։ Այս քաղաք է կեդրոն և լրումն ամ՟ գեղեցկանց նկարուց, քանդակաց և ճարտարագործութե՟ց, և այլոց անդիւտ անմահ յիշատակարանաց։ Շրջապատ ն՟ր է իբր 10 մղոն, և թիւ բնակչացն իբր 120 հազար, բաց 'ի Հրէից՝ որք են իբր 8 հազար ոգիք։ 'Ի սոսա հաշուին 2827 քահանայք, 3847 կրօնաւորք, 1910 կուսանք, 1665 ուսանողք 'ի Դպրոցս։ Արդ յայսչափ բազմութե՟ անգործ արանց, հարկիւ Հռովմ է լի աղքատօք և մուրացիկ արամբք։ Վաճառականութիւնն և Գործարանք՝ նուազ, և հողագործութիւնն 'ի շրջակայս 'ի յետին անարգանս։ Այսու ամ՟իւ՝ ը՟ շքեղութե՟ և գեղեցկութե՟ բազ՟ եկեղեցեաց և ապարանից, և ըստ յոլովութե՟ զարմանակերտ շատրուանաց, Հռովմ է տակաւին ևս գեղեցիկ քաղաք աշխարհի, յաւէտ արժանի տեսանելոյ ք՟ թէ մտօք ըմբռնելոյ։ Եկեղեցին Հրաշակառոյց Սրբազան Առաքելոյն Պետրոսի յապշութե՟ կրթէ զտեսողսն, և թուի զանցանել քան զկար բնական մարդկային ճարտարապետութե՟ ։ Եկեղեցին Սբ՟յն Յովհաննու Լատերանեան է մի 'ի ճարտարագործ տեսարանաց աշխարհի ։

ՆԱԲՕԼԻ (ԳԱՂ.) ՆԱԲԼ ։ Է Արքայանիստ Այրաքաղաք համօրէն տէրութե՟ համանուն աշխարհին, և մի 'ի փարթամ բազմամարդ քաղաքաց Եւրոպիոյ ։ Շրջապատ քաղաքին հանդերձ մօտակայ արուարձանօք է իբր 20 մղոն ։ Թիւ բնակչացն հասանէ ց350 հազար ․ յորս են 3600 քահանայք, 10 հազար, 910 կրօնաւորք և կուսանք, և 30 հազար փաստաբանք ։ Գոյ անդ բազմութի՟ Դքսից, Կոմսից և այլ ազնուականաց, որք կեան մեծաւ շքեղութ՟բ ․ այլ ռամիկ ժողովուրդն է բիրտ, յոխորտաբան և յանդուգն ։ Փողոցք քաղաքին առ հասարակ սալայատակ են, մաքուր և կանոնաւոր ․ շինուածք տանցն ը՟ մեծի մասին բարձր և քարաշէն, և յարկք կամ տանիք նոցա տափարակ ։ Բազում երևելի հրապարակք են անդ, և բազմապատիկ երևելի շատրուանք ։ Են անդ և բազում մեծաշէն հոյակապ եկեղեցիք և ապարանք, որք թէպէտ չեն համեմատ եկեղեցեացն Հռովմայ, բայց մեծագանձ են և անուանի ։ Իսկ բոլոր քաղաքն միանգամայն առեալ՝ է յոյժ գեղեցկանիստ, զուարճալի և չքնաղաշէն ։

Նաբօլի ունի 4 մայր եկեղեցիս, 32 ժողովրդապետականս, և այլ ևս 70 հասարակս ․ 79 մենաստանս , 130 մեծամեծ մատուռս և 34 Աղքատանոցս . այլև 11 Անկելանոցս , 5 Դպրոցս մեծամեծս , և այլ բազում հասարակ Դպրոցս, և քանի մի Ճեմարանս գիտութ՟ց և արուեստից : Ունի և 4 Հրապարակական Դպրատունս , 3 Թատերս , յորոց մի՟ն գեղեցիկ է յոյժ և առաջին Իտալիոյ :

Վենեժիէ : Է Մայրաքաղաք համօրէն Վենետկեան տէրութ՟ե , և մի 'ի գեղեցիկ քաղաքաց Իտալիոյ , կառուցեալ 'ի վ՟ր 72 կղզեաց 'ի շրջափակ խորշն Ադրիական ծովու՝ որոյ շրջապատն է իբր 7 մղոն . փողոցքն ու հասարակ սալայատակ են կոփածոյ քարամբք . այլ նեղ և անկանոն . որով դժուարու՟ն լինէր շրջողաց , եթէ չգտանէր անդ յոլովու՟ն թեթևաշարժ վայելուչ նաւակաց , որք լի են յա՟մ փողոցս ն՟ր . որք և բառնան զա՟մ դժուարու՟ն գնալոյ հետի և կամ շրջելոյ կառօք :

Ունի Վենետիկ 72 ժողովրդապետական եկեղեցիս , 22 մատուռս , 68 մենաստանս արանց և կանանց , 23 Անկելանոցս, և 8 Թատերս խաղուց : Հրապարակն Սբյն Մարկոսի է առաջին Եւրոպիոյ , և եկեղեցին նորին անուա՟ն՝ է մի 'ի հրաշակառոյց և 'ի բազմագանձ եկեղեցեաց աշխարհի : Այս քաղաք 'ի հարաւակողմն իւր իբրև միով մղոնաւ հեռի՝ ունի զմենաստան մի յանուն Սբյն Ղազարու 'ի մէջ զուարճալի կղզւոյ .

յորում 'ի 1717 թուականէն հետէ բնակին Միանձունք Լատինահայք 'ի կարգէ Սբ՟յն Անտոնի։ Սք՟ զաւուրս կենաց իւրեանց անցուցանեն յընթերցանութ՟իս և 'ի թարգմանութ՟իս. ունելով 'ի ձեռս իւրեանց զընտիր տպարան մի՝ որ էր յԱմսդրտամ, և քաջ գիտելով զհայկական պանծալի բարբառ մեր, և զնորայն իսկաքանչ ոճ՟ 'ի սկզբանէ անտի 'ի տիպ արձանացուցին զբ՟զմ գրեանս հայերէն. և ցայսօր 'ի նոյն հանապազորդեն։

Կոստանդնուպօլիս. տաճկ. Ստամպօլ։ Է Կայսերանիստ Մայրաքաղաք համօրէն ընդարձակատարր տէրութ՟ե Օսմանեանց, և մի 'ի բազմահարուստ և 'ի շատամարդ քաղաքաց աշխարհի, շինեալ 'ի Մեծէն Կոստանդիանոսէ 'ի տեղւոջ՝ ուր 'ի նախնումն կոչիւր Բիւզանդիոն, կամ Բիւզանդէա։ Է սա կառուցեալ 'ի լեզու ինչ հողոյ եօթնաբլուր 'ի ձև անհաւասար եռանկիւնւոյ, որոյ մի կողմն միայն է 'ի ցամաքի. իսկ մնացեալ երկոքին կողմանք՝ առ ծովու։ Շրջապատն հանդերձ կից արուարձանօք՝ է իբր 16 մղոն։ Ունի 26 դրունս, 490 Ջամիս, և 4494 փոքրիկ աղօթատեղիս, այսինքն Մէսճիտ։ Ի մէջ Ջամեաց՝ երևելիքն և արքայաշէնքն են 10. ամենեքին շքեղակառոյցք և գմբեթաւորք, որք ունին գաւիթ լայնարձակ, և զուարճալի։ Այա Սօֆիան՝ որ էր յառաջ եկեղեցի, շինեալ 'ի Կոստանդիանոսէ բարեպաշտ Կայսերէ՝ է մի 'ի զարմանալի ճարտարապետութ՟եց աշխարհի.

Այս քաղաք ը՟ Հասարակ կարծեաց ունի աւելի քան զ800 հզ՟ր բնակիչս · ոմանք հաստուցանեն ցմի միլիոն · յորս են իբր 100 հազար Հայք, և աւելի ևս Յոյնք, և իբր 130 հազար Հրէայք․ Հայք ունին ’ի մէջ բուն քաղաքին զ3 մեծամեծ եկեղեցիս, և Յոյնք 20 · իսկ յարուարձանս նր՟ զայլ ևս քանի մի եկեղեցիս ։

Առհասարակ մեծ պակասութի՟ է ջրոյ յայսմ քաղաքի․ զի չունի բնաւ ակն ջրոյ ’ի ներքս իւր․ այլ գայ արտաքուստ․ որոյ մի մասն գործի յանձրևաց ժողովելոց ’ի ձորամէջն լերանց Պուրղազ կոչեցեալ գեղջ · և միւս մասն յականէ ինչ՝ որ ’ի կողմանս Չէքմէճէի, հեռի ’ի քաղաքէն իբր 6 ժամօք ։ Մեծ մասն բնակչաց ըմպեն ’ի ջրոյ ջրհորոց, որք բղխեն ջուր փոքր մի լեղի ։

’Ի մէջ բազում երևելի շինուածոց քաղաքիս՝ առաջինն է Արքունի պալատն անուանեալ Սէրայէ Հիւմայուն, որ հայի յերիս ծայրս ծովու․ ուստի է մի ’ի զուարճալի վայրաց աշխարհի ։ Շրջապատ նր՟ է իբր 4 մղոն․ և պարունակէ ’ի ներքս իւր զբնակիչս իբր 10 հազար, որք ամ՟ն կան ’ի սպասաւորութի՟ Սուլթանին և կանանց նորին ։ Ի սա յամ՟ կողմանց պատեալ բարձր և ամուր պարսպօք , և ’ի ծովն կոյս է քաջ պատսպարեալ ’ի յոգնաթիւ հրազինուց (թօփ) · զորս արձակեն սովորաբար , երբ Սուլթանն ելևմուտս առնէ ’ի պալատն ։ Այս պալատ ունի բազում հոյակապ շինուածս աստեանդ ցրուելս, և ոսկեզօծ բրգամբք և բարձր աշտարակօք զարդարեալս ։ Ունի 3 գաւիթս ընդարձակս, որոց առաջինն պարունակէ զԿայսերական Ճամին, զՓողերանոցն և զՀիւանդանոցն ․ Երկրորդն՝ որ կոչի գաւիթ Տիվանին՝ պարունակէ զԱտեանն Խորհրդոյ, զԳանձարանն և զԱխուռ Սուլթանին, յորս սովորաբար պահպանին 3000 ընտիր երիվարք Արաբիոյ, և այլ բզմ՟ երիվարք վն՟ հասարակ զինուորաց և Թիկնապահից Սուլթանին ։ Իսկ երրորդ գաւիթն է սեփական բնակութի՟ Սուլթանին և Հարեմին․ ուրանօր ոչ ոք կարէ մտանել բաց 'ի Դեսպանաց Եւրոպեանց ։

'Ի մէջ երևելի շինուածոց քաղաքին հաշուին և 130 բաղանիք, ամենեքեան առ հասարակ գմբեթաւորք և վայելուչք ։ Այլև բզմ՟ քերվանսէրայք կամ խանք, որք ը՟ն մեծի մասին քարաշէն են և կրկնայարկ ․ երևելիքն 'ի նոցանէ են՝ Վալիտէ խան, որ ունի 366 սենեակս, Վէզիր խան, և Եէնի խան ։

Ստամպօլ ունի 518 Դպրոցս, և Գրատունս 35․ բայց չեն ոք ինչ համեմատ Եւրոպացւոցն ։ Վաճառանոցք քաղաքիս սեւօրէն, որպէս և ա՟մ երևելի քաղաքաց Ասիոյ՝ ունին զայս մի պատշաճաւոր յատկութի ․ իբր զի կրպակքն՝ որք զմիևնոյն տեսակ իրաց վաճառեն՝ զետեղեալ կան նմին ՚ի մի վայր · և ոչ աստանդ ցրուեալ · ըստ որում տեսանի յԵւրոպիա ։

՚Ի հանդիպոյ քաղաքին դէպ ՚ի հիւսիս է Ղալաթիա կամ Գաղատիա, որոյ բնակքն ըստ մեծի մասին են Հայք և Յոյնք · որք և ունին իւրեանց սեփական եկեղեցիս · նոյնպէս և Լատինք ։ Այլ մեծագոյն մասն Լատինացւոց և այլ Եւրոպացւոց համդերձ Դեսպանօք իւրեանց բնակին ՚ի Պէրա կամ Փէրա կոչեցեալ միւս Արուարձանին · որ կից է Ղալաթիոյ զառ ՚ի վեր նորին, Տաճկ· անուանեալ Պէյ օղլու ·

Նաւահանգիստ քաղաքիս է մի յապահով, ՚ի լայնարձակ և ՚ի պատուական նաւահանգստից աշխարհի · ուստի վաճառականութիւն որ բոլորովին է ՚ի ձեռս Հայոց, Յունաց և Հրէից՝ յոյժ ծաղկեալ գտանի և բարգաւաճեալ ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ։

ԱՍԻԱ, ԱՓՐԻԿԷ և ԱՄԵՐԻԿԱ ։

ԱՍԻԱ ։

Հ ։ Զ՞ինչ է աշխարհագրական դիրք Ասիոյ ·

Պ ։ Ասիա ունի իւր սահման ՚ի հիւսիսոյ ըզՍառուցեալ ծովն · յարևելից՝ զՈվկիանոսն · ՚ի հարաւոյ զծովն Հնդկաց · իսկ յարևմտից ըզԿարմիր ծովն, զՄիջերկրականն, զԱրշիպեղագոսն, զՍեաւ ծովն և զԵւրոպիա ։ Ասիա չորիցս անգամ մեծ է քան զԵւրոպիա. զի երկայնութիւն նորա ՚ի նեղուցէ Կոստանդնուպօլսոյ յարեւմուտս կոյս մինչեւ յարեւելեան ծովափնեայ աշխարհ Թաթարաց, է իբր 1700 փարսախ. իսկ լայնութիւնն՝ 1500։

Հ. Որո՞վ Ասիա գերազանցէ զայլովք մասամբք աշխարհի

Պ. Յստակութեամբ օդոյ, առատութեամբ հողոյ, հարստութեամբ, գեղեցկութեամբ, մեծութեամբ և հնութեամբ։

Հ. Ո՞րն է ընդհանուր բաժանումն Ասիոյ։

Պ. Ասիա բաժանի յեօթն գլխաւոր աշխարհս կամ տէրութիւնս. որք են՝ Ասիական Ռուսիա, Մեծ աշխարհն Թաթարաց կամ Սիբերիոյ, Ասիական Տաճկաստան, Արաբիա, Պարսկաստան, Հնդկաստան և Չին։

Հ. Ո՞յք են երեւելի Ծովք կամ Խորշք Ասիոյ։

Պ. Կասպից ծով, Խորշ Պարսից և Խորշ Բանգալայ։

Հ. Ո՞ր Գետքն։

Պ. Բազում մեծամեծ գետս ունի Ասիա. որոց գլխաւորքն են՝ Տիգրիս, Եփրատ, Ինդոս, Գանգէս, Լըբէլ, Ամուր, Լենա և Օբէ։

Հ. Ո՞ր Լերինքն։

Պ. Տորոս. սա պարունակէ յինքեան զբարձրաբերձ լեառն Արարատ, և տարածեալ ձգի ՚ի Պամփիւլիոյ մինչեւ ՚ի սահմանս Հնդկաց, անընդհատ լերանց աղխաղխմամբ, և ընդունի զայլեայլ անուանս յայլեայլ ազգաց՝ ընդ որս անցանէ ։ Կատարք այս լերանց զամ՟ն ողջոյն են ընդ ձեամբ թաղեալ ։

ԵՄԱՒՈՍ . է լեառն բարձր և երկայնաձիգ, և մասն Կովկասու՝ որ բաժանէ զՀնդիկս յաշխարհէն Թաթարաց .

ԿՈՎԿԱՍ . ռամկ. ԵԱԼԲՈՒԶ . է լեառն բարձր և լայնատարած՝ որ ձգի յերկայն 'ի սահմանաց Մեծին Հայոց, պատելով 'ի հիւսիսոյ զաշխարհն Վրաց և Աղուանից, և տարածանի ընդ երկիրն Ռուսաց և Թաթարաց, մինչև 'ի կողմանս Հնդկաց ։

Հ։ ԵՒ ԿՂԶԻՔՆ ։

Պ։ ԿԻՊՐՈՍ, ՀՌՈԴՈՍ, ԿՐԵՏԷ և ՔԻՈՍ . ռամկ. ՍԱՔԸԶ ։

Հ։ Ո՞ՐՔ ԵՆ ԳԼԽԱՒՈՐ ԿՐՕՆՔ ԱՍԻՈՅ ։

Պ։ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, ՄԱՀՄԷՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ և ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ ։ Նկատմամբ երկուց առաջնոց կարի սակաւաթիւ Քրիստոնեայք գտանին յԱսիա ։

Հ։ ԵՒ ԱԶԳՔ ։

Պ։ ԱՐԱԲԱՑԻՔ, ՄՈՆՂՈԼԱՑԻՔ, այսինքն ԹԱԹԱՐՔ, ՊԱՐՍԻԿՔ, ՕՍՄԱՆԵԱՆՔ . ռամկ. ՏԱՃԻԿՔ, ՀԱՅՔ, ՅՈՅՆՔ, ՎՐԱՑԻՔ, ԱՍՈՐԻՔ, ՀՆԴԻԿՔ և ՉԻՆՔ ։

ԱՓՐԻԿԷ .

Հ։ Ո՞ՐՆ Է ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ ԱՓՐԻԿՈՅ ։

Պ: Աֆրիկէ է ցամաք կղզի կրկնապատիկ մեծ քան զԵւրոպիա. և կցի ընդ Ասիոյ 'ի ձեռն ցամաք լեզուակի ինչ, որոյ տարածութիւն է իբր 20 փարսախ 'ի լայն. որև անջատէ զԿարմիր ծովն 'ի Միջերկրականէն: Ունի իւր սահման 'ի հիւսիսոյ զՄիջերկրականն, յարևելից զԿարմիր ծովն, 'ի հարաւոյ և յարևմտից զՈվկիանոսն: Երկայնութիւն նորա առ առաւելն է 1500 փարսախ 'ի հիւսիսոյ 'ի հարաւ. և լայնութիւն 1200 փարսախ յարևելից յարևմուտս: Հասարակածն անջատէ զԱֆրիկէ յերկուս մասունս. և մեծագոյն մասն նորա գոլով ընդ Բևեռական շրջանակօք՝ տօթն անդէն սաստիկ է յոյժ:

Հ: Զիա՞րդ բաժանի Աֆրիկէ:

Պ: Աֆրիկէ ունի անապատս լայնարձակս յոյժ յոյժ, յորս ոչ ոք 'ի մերոց աշխարհացյածեալ շրջեցաւ. ուստի ընդ մեծի մասին այն ընդարձակածաւալ աշխարհ անծանօթ է մեզ: Սակայն որքան յայտնի է այժմոյս՝ յերկոտասան գաւառս կամ աշխարհս բաժանի նա. որք են. Եգիպտոս, Նուբիա, Հապէշ, Պարքա, Բարբարոսաց աշխարհն, Սոֆալա, Կուինէա, Նիգրիտիա, Գոնկոյ, Քաֆրաստան, Եթովպիա, Զանկուէպար:

Հ: Ո՞յք են գլխաւոր Գետք Աֆրիկէոյ:

Պ: Նեղոս. տաճկ. Նիլ Դէրեասի: Ի սա մի 'ի մեծամեծ և յանուանի գետոց աշխարհի, որ ելանէ 'ի Հապէշէ յերկուց ականց, և հոսեալ

՚ի հարաւոյ ընդ հիւսիս՝ ուղղանէ զՆուպիա և զԵգիպտոս, զորս յերկուս անջատէ. և ապա ընդ հինգ բերանս անկանի ՚ի ծովն Միջերկրական.

Նիգեր. սա ելեալ ՚ի Նիկրիտիոյ հոսի բազմապատոյտ ընթացիւք յարևելից յարևմուտս իբր 990 փարսախ, և անկանի ՚ի ծովն Ատլանտեան. Են յԱփրիկէ և Գամբիա, Գուանզա և այլք բազումք.

Հ։ Ո՞ր լերինք.

Պ։ Ատլանտեան լերինք ։ Են բազմուն՟ միագոտի բարձրաբերձ լերանց, որք յարևմտեան Ովկիանոսէ ձգեալ տարածին ընդ արևելս կոյս մինչև յԵգիպտոս ։

Սելեան լերինք, կամ լերինք Լուսնոյ ։ Սք բաժանեն զՆիկրիտիա ՚ի Գուինէայէ, և ձգեալ տարածին մինչև յԵթովպիա ։

Հ։ Ո՞ր Հրուանդանքն ։

Պ։ Հրուանդանն Կանաչ կամ Վերդէ՝ յարևմտեան ծայր Ափրիկոյ. և Հրուանդանն Բարի Յուսոյ. որ է ՚ի հարաւային յետին ծայր նորին.

Հ։ Ո՞յք են գլխաւոր Բերք Ափրիկոյ.

Պ։ Ոսկի, արծաթ, փղոսկր, զանազան բոյսք ամ՟նիւթք ՚ի պէտս դեղօրէից, բազմատեսակ թանկագին փայտք. որպէս են՝ աբանոս և սանտալ ։

Հ։ Ո՞յք են գլխաւոր Կրօնք Ափրիկոյ.

Պ։ Քրիստոնէութիւն, Մահմետականութիւն և կռապաշտութիւն։ Երրորդ մասն Ափրիկեցւոց հետևող է Մահմետի․ մնացեալքն են կռապաշտք, և անկրօնք, բաց 'ի սակաւաթիւ Քրիստոնէից․

Հ։ Ո՛ր քաղաք Ափրիկոյ ծանօթագոյն է մեզ։

Պ։ Եգիպտոս, որոյ Մայրաքաղաքն կոչի Մըսըր, և յԵւրոպացւոց Քայիրօ։ Սա է մի 'ի մեծամեծ բազմամարդ և բազմավաճառ քաղաքաց աշխարհի, կառուցեալ յընդարձակ դաշտի առ Նեղոսիւ․ և է ընդ իշխանութեամբ Սուլթանին Օսմանեանց, որ կացուցանէ զոմն փաշայ իշխող 'ի վերայ բոլոր նահանգին։ Շրջապատ նորա չէ աւելի քան 10 մղոն․ փողոցքն ըստ սովորութեան քաղաքաց Ասիոյ՝ նեղ են և շրջապտոյտ․ և թիւ բնակչացն համանդերձ արուարձանօք՝ 600 հազար․ ըստ ոմանց 700 հազար։ Թիւ Մզկթաց անդ՝ ըստ ոմանց հասանէ 9720, 'ի բաց առեալ զմանունսն։ Բաց յԱրաբացւոց, և յՕսմանեանց՝ են 'ի քաղաքի անդ և բազմութիւնք Խըփտեաց, ըստ մեծի մասին աղքատք, որք ունին բազում եկեղեցիս․ գտանին անդ և 60 կամ 70 դերդաստանք յազգէս մերմէ, բաց 'ի վաճառական երթևեկաց․ որք ունին զմի եկեղեցի։ Են անդ և Յոյնք բազումք․ այլև Հրեայք։

Բազում անգամ լինի կոտորած սաստիկ եղկելի բնակչաց նորա յայսց երկու պատճառաց․ 'ի տարաձայնութենէ շրջակայ Պէյից, յորոց 'ի ձեռս է գրեթէ բոլոր իշխանութ̃ի երկրին․ և յանողորմ դժնդակ մահտարաժամէ՝ որ գրեթէ անպակաս է անդր․ և անտի ծաւալեալ սփռի ընդ աշխարհ Օսմանեանց ։

ԱՄԵՐԻԿԱ ։

Հ։ Ո՞վ եգիտ զԱմերիկա ։

Պ։ Քրիստափոր Քոլոմբոս Ճենովացի յամին 1492 ։ Բայց Ամերիկոս Վեսպուչիոս զկնի նր̃ գնացեալ յայն նոր աշխարհ՝ ետ զնա յանուն իւր կոչել Ամերիկա․ սա կոչի և արևմտեան Հնդկաստան ։

Հ։ Ո՞րինչ են ընդհանուր հանգամանք նորա ։

Պ։ Այս լայնածիր կիսագունտ է յա̃մ կողմանց շրջապատեալ 'ի ծովէ․ տարածութ̃ի նր̃ է 3400 փարսախ ։ Եւ բաժանի բնապէս յերկուս մեծամեծ մասունս կամ ցամաքակղզիս, 'ի հիւսիսային և 'ի հարաւային, միացեալս ընդ միմեանս 'ի ձեռն ցամաք-լեզուի, որ կոչի պարանոց կամ նեղց̃ Բանամայ ։ Լայնութ̃ի այսր պարանոցի է իբր 20 փարսախ ։ 'Ի հարաւոյ ունի իւր սահմանս զԱտլանտեան ովկիանոսն․ իսկ 'ի հիւսիսոյ՝ զծովն Խաղաղական ։ Այս նորագիւտ մասն աշխարհի թէպէտ ընդհանրապէս նկատեալ չէ՝ լեռնային, այսու ամ̃իւ ունի քանի մի լերինս կարի բարձրաբերձս և երկայնաձիգս ։

Երկայնութիւն Կորտիլէան լերանց և Անդէանց՝ է 1433 փարսախ․ որք և այնքան բարձր են՝ զի թէպէտ և ը̅ մասին ընդ այրեցած գօտեաւ անկանին, սակայն հանապազ թաղեալ կան ը̅ ձեամբ ։

Ունի Ամերիկա և բազում մեծամեծ գետս, զորպիսիս չէ տեսանել ՚ի մերումս Կիսագնտի․ նոյնպէս և լիճս լայնանիստս ։ Օդն և Կլիմայն այլ և այլ են անդ ը̅ այլ և այլ գաւառացն։ Ունի և անբաւ բովս ոսկւոյ և արծաթոյ, ազգի ազգի ակունս մետաղինս և պատուականս, և մարգարիտ առատ և ազնիւ․ այլ և պէսպէս ընտիր փայտս պիտանացուս ՚ի զանազան արհեստակերտս և ՚ի ներկս, գադաով, վանիլիա, որդան կարմիր (ղըրմըզ), շաքար, որիզ, ազգի ազգի ազնիւ արմատս, բոյս և համեմս ՚ի պէտս դեղօրէից, և խոհակերոցի, թիւթիւն, բամբակ և այլն։

Այսչափ ինչ շատ լիցի առ ընդհանուր իմն տեղեկութիւն չորից մասանց աշխարհի ։

* * *

ՃԱՌԻԿ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ։

ՄԱՍ՛Ն ՉՈՐՐՈՐԴ.

ՊԱՏՄՈՒԹԻՒ՛Ն.

Հ. Զի՞նչ է Պատմութիւն. և առ ի՞նչ պէտս ։

Պ. Պատմութիւնն է գիտու՟ին, որ յանդիման առնէ զերևելի իրս և զյիշատակաց արժանի արարս նախնեաց ։ Կամ Պատմու՟ին է որ առաջի աչաց նկարագրէ զայլևայլ թագաւորու՟իս ազգաց, որք երբեմն հաստատէին, ընդարձակէին և գլորէին ճոխանան. և երբեմն նուաղէին, անկանէին և իսպառ անհետանան : Պատմութիւն է, որ յառաջ բերէ զգիւտ ազգի ազգի գիտութեանց և արհեստից, և զնոցայն բարգաւաճումն. որ աւանդէ զծագումն օրինադրութեան, զկառավարութիւն ազգաց, զտարբերութիւն օրինաց, վարուց և բարուց մարդկան, զպէսպիսութիւն սովորութեանց, կրօնից և կարծեաց նոցին, զփոփոխումն յոգնայոլով իրաց՝ որք անընդհատ յաջորդութեամբ զերեսս երկրի այլայլեն. այլ և զձիրս, զառաքինութիւնս, զոճիրս և զմոլութիւնս : Միով բանիւ՝ Պատմութիւն է որ զա՟մ անցս ժամանակաց մերկապարանոց կացուցանէ, որով և զմեզ մարզէ և հանճարամիտս գործէ :

Հ: Ո՞րպէս ընդհանրապէս բաժանի Պատմութիւնն :

Պ: Յեկեղեցական և յարտաքին. այլ և ՚ի հին և ՚ի նոր :

Եկեղեցականն ճառէ զիրաց վերաբերելոց առ կրօնն. իսկ արտաքինն զաշխարհապատկան նիւթոց. զորօրինակ զթագաւորութեանց, զպատերազմաց, զսովորութեանց և այլն : Հինն սկսանի յետ աշտարակաշինութեանն. այն է յամի իբր 1800. և հասանէ ցամն 4000, կամ ըստ հաւանականագոյն կարծեաց ց4004. յորում ժամանակի ծնաւ Ք՟ս : Իսկ նորն՝ անտի մինչև յաւուրս մեր :

Հ: Ո՞ր Պատմութիւնն համարի հարկաւորագոյն ՚ի գիտել :

Պ: Սուրբ Պատմութիւնն կամ Պատմութիւնն Հրէից. որ սկիզբն առնու ՚ի ստեղծմանէ աշխարհի, և աւարտի 'ի Ծննդեան Տեառն մերոյ Յ՟ի Ք՟ի : Ապա ազգային Պատմութիւն · բայց յառաջ քան զայն՝ ինձ ընտրելի թուեցաւ կարգել կարճ 'ի կարճոյ զՊատմութիւն չորից տիեզերակալ Միապետութեանց աշխարհի · այն է Ասորեստանեայց, Պարսից, Յունաց և Հռովմայեցւոց :

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ :

ՍՈՒՐԲ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ :

Հ: Ո՞վ եղև առաջին մարդասպան :
Պ: Կայէն :
Հ: Ո՞վ յառաջինն կարդաց զանուն Աստուծոյն :
Պ: Ենովս :
Հ: Ո՞վ համբարձաւ յերկինս :
Պ: Ենովք :
Հ: Ո՞վ շինեաց առաջին քաղաք :
Պ: Կայէն :
Հ: Ո՞րպէս անուն էր նմա :
Պ: Ենոք՝ յանուն անդրանկին իւրոյ :
Հ: Ո՞վ եղև առաջին երաժիշտ :
Պ: Յուբաղ · որ եգիտ զերգս և զքնարս :
Հ: Ո՞վ ոք 'ի մարդկանէ երկարագոյն եկեաց :
Պ: Մաթուսաղայ, որ եկեաց ամս 965 :
Հ: Ո՞վ առաջինն շինեաց վրանս և բնակեցաւ ընդ նոսին :

Պ: Յովբէլ · որև կոչեցաւ հայր հովուաց :

Հ: Ո՞վ եգիտ զարհեստ դարբնութեան, և զպղնձագործութեան :

Պ: Թոբէլ եգիտ զդարբնութիւն, և քոյր նորին Նոէմա գործեաց զառաջինն ասր և կտաւ :

Հ: Ո՞վ եղև հայր օրինակ բազմակնութեան :

Պ: Ղամէք · որ էառ զերկուս կանայս · և ըստ ոմանց սա ինքն սպան զհաւ իւր զԿայէն :

Հ: Զո՞րս անուանէ Սուրբ Գիրք զորդիս Կայենի :

Պ: Որդիս մարդկան · վասն որոշելոյ զնոսա յորդւոցն Սեթայ և Ենովսայ, զորս անուանեն որդիս Այ :

Հ: Յումէ՞ ծնաւ Սէթ :

Պ: ՅԱդամայ և յԵւայէ յետ մահուն Հաբէլի :

Հ: Ո՞յր որդի էր Նոյ :

Պ: Ղամեքայ որդւոյ Մաթուսաղայի :

Հ: Յարարչութենէ աշխարհի քանի՞ ամք անցին մինչև ցջրհեղեղն ·

Պ: Հազար վեց հարիւր յիսուն և վեց :

Հ: Ը՞նդ էր Արարիչն կամեցաւ ջրասոյզ առնել զազգ մարդկան :

Պ: Մեղք անօրէնութեան նոցա :

Հ: Ո՞ւր դադարեաց նաւաձև Տապանն Նոյի :

Պ: Ի վերայ լերին միում Հայաստանի, որ կոչի Արարատ · այն է Մասիս :

Հ. Քանի՞ աւուրս եկաց Նոյ ՚ի Տապանին անդր։

Պ. Զաւուրս 393։

Հ. Զո՞ ոք Նոյ ապրեցոյց միանգամայն ընդ իւր ՚ի Ջրհեղեղին։

Պ. Զկին իւր և զերիս որդիս, որոց անուանքն էին՝ Սեմ, Յաբեթ և Քամ, և զերիս կանայս նոցին։ Այլև յամ սուրբ կենդանեաց եօթն եօթն, և յանսրբոց երկու երկու։

Հ. Զինչ արար Նոյ յետ Ջրհեղեղին։

Պ. Իբրև ցամաքեցան ջուրքն իսպառ՝ ել Նոյ ՚ի տապանէ անտի, և կազմեաց սեղան Ա՟յ ամենակալին՝ մատոյց զպատարագ գոհուե՟։

Հ. Յո՞ր աշխարհն Նոյ արար իւր իջեւան։

Պ. Յաշխարհն Արարատայ· յորմէ և շրջակայ գաւառն այն կոչեցաւ Նախջաւան· այսինքն նախնի իջեւան, կամ Նախիջեւան։

Հ. Ո՞վ զառաջինն տնկեաց այգի։

Պ. Նոյ· որ եարբ ՚ի գինւոյ այգւոյն իւրոյ և արբեցաւ։

Հ. Ո՞վ ծածկեաց զմերկութիւն նր՟։

Պ. Սեմ և Յաբեթ· վս՟ այն օրհնեցան ՚ի նմանէ հանդերձ սերնդովք իւրեանց· այլ անէծ անդրէն Նոյ զՔամ՝ զի ՚ի յայտ եած զամօթոյս նր՟·

Հ. Որ էին ծնունդք որդւոց Նոյի։

Պ. Յաբեթի եղեն ութն որդիք· ը՟ այլոց եօթն. և են՝ Գամեր, Մագոգ, Մադայ, Թոբէլ, Մոսոք, Թիրաս, կամ Մէրան, Յաւան կամ Յունական, և Եղիսա ։

Սեմայ եղեն հինգ որդիք · Ելամ, Արփաքսադ, Ասուր, Ղուդ և Արամ ։

Իսկ Քամայ միայն չորս · Քանան, Քուշ, Մեսրայիմ և Փուդ ։

Հ. Յորմէ՞ սերեցան վաղեմի ազգք աշխարհին ։

Պ. Եբրայեցիք, Քաղդէացիք և նախնի Արաբացիք սերեցան յԱրփաքսադայ յորդւոյ Սեմայ ։ Իսկ Փիւնիկեցիք, Եգիպտացիք, Եթեովպացիք և այլ ազգք Ափրիկոյ սերեցան յորդւոցն Քամայ ։

Հ. Յորմէ՞ սերեցան Եւրոպացիք ։

Պ. Ի Յաբեթայ և յորդւոց նր̃ ·

Հ. Ո՞վ շինեաց զաշտարակն Բաբելոնի ։

Պ. Նեբրովթ որդի Քուշայ թոռն Քամայ · որոյ զօրաւորագոյն գոլով քան զամենսն՝ նուաճեաց զբազումս ընդ իւր, և շինեալ զայն քղ̃ք առ Եփրատ գետով՝ թագաւորեաց անդ ։

Հ. Ո՞վ էր հեղինակ և առաջնորդ աշտարակաշինութեանն Բաբելոնի ։

Պ. Ըստ հաւանական կարծեաց՝ նոյն ինքն Նեբրովթ, որ և կոչի Բէլ ։

Հ. Զի՞նչ խափան էր կատարման այնորիկ ։

Պ. Խառնակումն լեզուաց ։

Հ. Զի՞նչ արարին մարդիկ յետ աշտարակաշինութեանն ։

Պ։ Ի բազմանալ նոցա յոյժ յոյժ՝ ելին 'ի գաւառէ անտի և գնացին սփռեցան յայլեւայլ կողմանս աշխարհի ։ Սերունդք Սեմայ բնակեցան յարեւելս Ասիոյ · սերունդք Քամայ 'ի հարաւ և յԱփրիկէ · իսկ սերունդք Յաբեթի 'ի հիւսիս և յարեւմուտս Ասիոյ և յԵւրոպիա ։

Ամք աշխ.
Նախքան
զՔս ։

Հ։ Ո՞վ երեւելի հանդիսացաւ 'ի սերնդոց Սեմայ ։

Պ։ Աբրահամ, Իսահակ և Յակոբ ։

Հ։ Որո՞յ որդի էր Աբրահամ ։

Պ։ Որդի Թարայի՝ որդւոյ Նաքովրայ՝ որդւոյ Սերուքայ՝ որդւոյ Ռաքաւայ՝ որդւոյ Փաղեկայ՝ որդւոյ Եբերայ՝ որդւոյ Սաղայի՝ որդւոյ 2009
Արփաքսադայ՝ որդւոյ Սեմայ՝ որդւոյ Նոյի, 1995
զոր Ած ընտրեաց լինել հայր և առաջնորդ այնր ազգի, յորմէ ծնանելոց էր Փրկիչն աշխարհի։

Հ։ Զ՞ինչ հրամայեաց Աստուած առնել Աբրահամու ։

Պ։ Զի զոհեսցէ զորդին իւր զԻսահակ ։

Հ։ Զ՞ինչ արար նա ։

Պ։ Իբրեւ ընկալաւ զայն հրաման՝ փութացաւ 'ի ցոյց հպատակութեան իւրոյ անտրտունջ կատարել · ուստի էառ զփայտ ողջակիզին և եդ 'ի վերայ Իսահակայ · և ինքն առեալ զհուր 'ի ձեռն և զսուր՝ չու արար ընդ որդւոյ իւրում 'ի տեղին զոր նշանակեալ էր նմա Ած ։ Եւ 'ի հասանել նոցա անդր՝ հա՛յր իմ, ասէ յայնժամ արդարամիտ պատանին Իսահակ․ ահա փայտ, ահա հուր․ ո՞ւր է ոչխար ողջակեզ ։ Որդեակ, պատասխանի ետ նմա՝ այրն Ա՟յ Աբրահամ․ Ա՟ծ տեսցէ իւր ոչխար ողջակեզ ։ Ապա կապեալ զսիրելի որդին իւր զԻսահակ, և ձգեալ ըզսուրն՝ իբրև կամէր շաղախել արեամբ նորա, հրեշտակ Ամենակալին արգել զնա, և ազատեաց զԻսահակ ։

Իսահակ էր օրինակ Որդւոյն Ա՟յ, զոր Հայրն յաւիտենական մատնեաց ՚ի մահ ՚ի փրկութիւն ազգի մարդկան ։ Իսկ զայն տեղին, յորում Աբրահամ եզեն յետոյ զխոյն փոխանակ Իսահակայ՝ կոչեաց՝ Տէր ետես․ և է նոյն այն լեառն Գողգոթա անուանեալ, յորում Տէրն մեր խաչեցաւ ՚ի Հրէից ։

Հ։ Զի՞նչ պատմի զՂովտայ ։

Պ։ Ղովտ էր եղբօրորդի Աբրահամու․ որ իբրև բազմացաւ որդւովք՝ բաժանեցաւ ՚ի հօրեղբօրէ իւրմէ և գնաց բնակեցաւ ՚ի քաղաքն Սոդոմ ։ Բնակիչք Սոդոմայ և Գոմորայ զեղխեալ ՚ի չարիս, և յանհնարինս անկարգացեալ՝ շարժեցին զարդար ցասումն Ա՟յ ՚ի վերայ ինքեանց․ յաղագս որոյ ծծումբ և հուր տեղաց յերկնից, և բնաջինջ արար զամենն ։ Ղովտ միայն գտեալ ՚ի մէջ նոցա արդար և երկիւղած՝ ապրեցաւ ընտանեօքն հանդերձ յայնմ համակործան պատուհասէ ։

Հ. Քանի՞ ամաց էր Սարրա կին Աբրահամու, յորժամ ծնաւ զԻսահակ ։

Պ. Իննսուն ։

Հ. Զի՞նչ պատմի զԻսահակայ ։

Պ. Յետ մահուան մօր իւրոյ Սարրայի՝ Իսահակ եառ կին զՌեբեկա զդուստրն Բաթուէլի, 2168
որ բնակէր 'ի Միջագետս. յորմէ յետ 20 ամաց 1836
ծնաւ զերկուս որդիս, զԵսաւ և զՅակոբ ։

Հ. Ո՞վ յերկոցունց առաւ ընկալաւ զանդրանկին օրհնութեան Իսահակայ ։

Պ. Թէպէտ ծննդեամբ Եսաւ էր անդրանիկն, այսու ամենայն Յակոբ խրատեալ 'ի մօրէ իւրմէ՝ հնարիւք կորզեաց զայն և փոխանակ Եսաւայ օրհնեցաւ յԻսահակայ ։

Հ. Զի՞նչ պատմի զՅակոբայ ։

Պ. Յորժամ եհաս ժամանակ կին առնելոյ նմա՝ հրամանաւ հօր իւրոյ չոգաւ 'ի Միջագետս առ Լաբան քեռին իւր, և ծառայեալ նմա ամս չորեքտասան՝ եառ զՌաքէլ զդուստրն նր 'ի կնութիւն, և դարձ արար 'ի հայրենիս իւր 'ի Քանան. բայց մինչչև էր նորա ժամանեալ անդր՝ գօտեմարտեալ զճանապարհայն ընդ Հրեշտակի Տեառն՝ յաղթեաց նմա, և կոչեցաւ 'ի նմանէ Իսրայէլ փոխանակ Յակոբայ ։

Հ. Քանի՞ որդիք էին նմա ։

Պ. Երկոտասան ուստերք և մի դուստր. որոց անուանքն են՝ Ռուբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա դա, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար, Զաբուղոն, Յովսէփ և Բենիամին. իսկ անուն դստերն՝ Դինա :

Հ. Յորո՞յ սերնդենէ ծնաւ Տէրն մեր :

Պ. Ի սերնդենէ Յուդայ :

Հ. Զի՞նչ ինչ յատկապէս պատմի զՅովսեփայ :

Պ. Քանզի Յովսէփ էր պատանի արդար և 2288 գեղեցիկ յոյժ, և յատուկ իմն սիրով գգուեալ 1716 'ի հօրէ իւրմէ, եղբարք նորա չչարեալ վաճառեցին զնա Իսմայելացւոց՝ որք տարան յԵգիպտոս :

Հ. Զիա՞րդ Յովսէփ անդ բարձրացաւ 'ի պատիւ նախարարութեան :

Պ. Իմաստութ̃ մեկնելով զերազ Փարաւոնի, և գուշակելով զեօթնամեայ սովն, որ գալոց էր 'ի վերայ ը̃ ա̃մ երկիրն ը̃ այն :

Հ. Զի՞նչ այլ պատմի զՅակոբայ և զորդւոց նորին :

Պ. Զկնի ամաց ինչ իբրև սկսաւ սովն ը̃ նախագուշակ լինելոյ Յովսեփայ՝ չարաչար տառապեցուցանել զա̃մ սահմանս Եգիպտոսի, լուեալ Յակոբայ՝ եթէ առատութի̃ է յԵգիպտոս, առաքեաց զորդիս իւր անդ առ 'ի գնել զհաց: Ետես Յովսէփ զն̃ս և ծանեաւ. այլ ծածկե̃լ զո՛ լինելն իւր 'ի նոցանէ՝ դարձոյց զն̃ս անդրէն առ հայրն իւրեանց, պահեալ միայն առ իւր զմին 'ի նոցանէ զՇմաւոն, այնու դաշամբ՝ զի բերցեն առ ինքն զԲենիամին զկրտսեր եղբայր իւրեանց։ Եւ նք յետ սակաւուց իբրև ածին զԲենիամին առ Յովսէփ, յայտնեաց սա յայնժամ զանձն իւր նոցա, և ետ բերել յԵգիպտոս զհայր իւր և զտուն ընտանիս, և բնակեցոյց զնոսա յանդորրու երկրին Գեսեմ։

Ժ։ Ո՞վ էր Մովսէս. և զի՞նչ երևելի պատմի զնմանէ և զորդւոցն Իղի։

2433 1571. Ժ։ Մովսէս էր որդի Ամրամայ յազգէն Ղևեայ։ Իբրև վախճանեցաւ Յովսէփ՝ եկաց այլ թագաւոր յԵգիպտոս, որ ոչ գիտէր զնա։ Նմին իբրև տեսեալ նորա՝ թէ ազգն Իղի օր աւուր բազմանայ, և ևս քան զևս զօրանայ՝ երկեաւ յոյժ, և սկիզբն կալաւ պէսպէս տառապանօք ճնշել զնոսա և յոգիս ապաստան առնել. ապա այնու ևս ոչ շատացեալ նորա՝ եդ 'ի մտի իսպառ ջնջել զազգ նց։ Ուստի հրաման եհան՝ զի զամենայն նորածին արու զաւակ Եբրայեցւոց ընկեսցեն 'ի գետ, և զէգս միայն պահպանեսցեն։ Ընդ այն աւուրս ծնաւ Մովսէս. որոյ ծնօղքն առ երկիւղի եդեալ 'ի մէջ տապանակի զնա՝ ընկեցին 'ի գետն. ետես զնա դուստրն փարաւոնի 'ի խաղի անդ ջուրցն, մինչդեռ ճեմէրն յեզր գետոյն, և խանդաղատեալ զնովաւ ապրեցոյց զնա։ Իբրև եղև Մովսէս քառասուն ամաց՝ եթող զծառայութիւն փարաւոնի, և գնաց առ եղբարս իւր, զորս յանխնայս չարչարէին անողորմ տեարք իւրեանց : Եւ տեսեալ 'ի ճանապարհին զայր մի Եգիպտացի՝ զի հարկանէր զոմն Եբրայեցի՝ սպան զնա և փախեաւ յերկիրն Մադիամու : Անդ երևեցաւ նմա Ա՟ծ, և հրամայեաց դառնալ առ Փարաւոն և յայտնել նմա՝ թէ կամք են իւր՝ զի նա թոյլ տացէ ժողովրդեան իւրոյ ելանել յԵգիպտոսէ և գնալ յանապատն : Ընդդէմ եկաց Մովսէս հրամանի Ա՟յ · բայց յետոյ յաղթահարեալ յերկուց յայտնի սքանչելեաց, զորս Ա՟ծ եցոյց նմա՝ փութացաւ չոգաւ առ Փարաւոն, և համարձակ առաջի եդ նմա զհրաման Ամենակալէն : Ծաղր արար Արքայն զնա · այլ Մովսէս ունելով ընդ ինքեան զԱհարոն զերեց եղբայր իւր, և զօրացեալ Աստուծով՝ բ՟զմ նշանս եցոյց Փարաւոնի, և բազմադիմի տառապանօք տառապեցոյց զնա, յուսալով կակղացուցանել զխիստ անօրէնին · այլ 'ի զուր : Յուսկ ապա եհար Տէր զա՟մ անդրանիկս Եգիպտացւոց 'ի գիշերին, յորում Ի՟սլացիք կատարէին զԶատիկ · յորմէ սասանեալ յոյժ մեծա՟մ Փարաւոնի՝ նոյնհետայն ետ կոչել զՄովսէս, և թոյլ ետ նմա հանել զԻսրայելացիս յԵգիպտոսէ, և տանիլ ուր և կամեսցի : Յայնժամ Իսրայելացիք առաջնորդութ՟բ Մովսիսի ելին անտի թուով իբր երկու միլիոն ոգիք, և յուղի անկեալ հասին յեզր Կարմիր ծովու, և բանակեցան անդ ։ Ոչ անագան ահա խստացեալ վերստին սիրտ Փարաւոնի՝ զղջացաւ զի արձակեալ էր զԻ՟սլ․ և ժողովեալ առ ինքն զա՟մ զզօրս իւր՝ վաղվաղեաց պնդեցաւ զհետ ն՟ց ։ Տեսին զնա ’ի հեռաստանէ Ի՟սլացիք և զանհամար բազմութ՟ի զօրաց ն՟ր, և զահի հարան յոյժ․ և մինչդեռ տրտնջէին՝ հրամանաւ Տեառն Մ՝ովսէս ձգեաց զձեռն ’ի վ՟ր ծովու, և նոյնհետայն ջուրքն պատառեալ կացին իբրև զպարիսպս աստի և անտի, և Ի՟սլացիք անցին ընդ ցամաք յայնկոյս ծովուն ։ Զայն տեսեալ Փարաւոնի և որոց ընդ նմա՝ պնդեցան և ինքեանք զհետ ն՟ց․ այլ ձգեալ յայնժամ Մ՝ովսիսի զձեռն ’ի վ՟ր ծովու, դարձան անդրէն ջուրքն յառաջին տեղին, և խեղդամահ արարին զա՟մ զբանակն Եգիպտացւոց ։ Յայնժամ Մ՝ովսէս և որդիք Ի՟սլի լի ցնծութ՟բ՝ երգեցին զհրաշալի զայն օրհնութ՟ի․ Օրհնեսցուք զՏէր՝ զի փառօք է փառաւորեալ ։

Հ։ ՙՔանի՞ ամս դեգերեցան Ի՟սլացիք յանապատին ։

Պ։ Ամս քառասուն ։

Հ։ Ո՞վ եմոյծ զժ՟ղն յերկիրն Աւետեաց ։ 2553

Պ։ Յեսու որդի Նաւեայ․ զոր Ա՟ծ կար- 1451
գեաց առաջնորդ ն՟ց զկնի Մ՝ովսիսի ։ Առ կենդանութ՟բ սորա ’ի միջոցի վեց ամաց՝ երեսուն Թագաւորութ՟ք Կռապաշտից նուաճեցան յԻ՟սլացւոց, և ’ի սուր սուսերի մաշեցան զօրք ն՟ց ։

Հրամանաւ սորա արեգակն եկաց յընթացից իւրոց զօր մի ողջոյն. և 115 երևելի քաղաքք ՚ի պարտութիւն մատնեցան: Հուսկ յետոյ՝ առ իշխանութեամբ սորին Յեսուայ Իսրայելացիք տիրեալ բովանդակ երկրին Քանանացւոց, բաժանեցին զայն ՚ի մէջ երկոտասան ցեղից իւրեանց. և յետ մահուան նորա իւրաքանչիւր ցեղ կացոյց ՚ի վերայ իւր յատուկ ատեան և յատուկ դատաւորս: Իսկ գլխաւոր Մայրաքաղաք համօրէն տէրութեան Իսրայելացւոց էր յայնժամ Սելով. ուր նստէր ծայրագոյն քահանայապետն և գլխաւոր ատեանն:

Հ: Զի՞նչ այլ պատմի զԻսրայելացւոց:

Պ. Հրամայեաց նոցա Աստուած կոտորել զամենայն զՔանանացիս և զայլ կռապաշտ ազգս համօրէն, որք տակաւին մնացեալ էին զսահմանօք նոցա: Իսկ նոքա յետ նուաճելոյ զկռապաշտս ընդ իշխանութեամբ իւրեանց՝ թողին զոմանս ՚ի նոցանէ բնակել խառն ընդ ինքեանս. յորոց առ սակաւ սակաւ ուսան պաշտօն մատուցանել կռոց: Ընդ որ սրտմտեալ Բարձրեալն սաստիկ յոյժ, և կամելով վրէժս առնուլ ՚ի նոցանէ վասն կռապաշտութեան իւրեանց՝ էարկ զնոսա ընդ իշխանութեամբ Այլազգեաց, և տառապեցոյց յոյժ յոյժ: Բայց յետ սակաւուց վերստին շարժել ՚ի գութ՝ յարոյց ՚ի մէջ նոցա զոմանս փրկիչս, որք Դատաւորք անուանեցան: Առաջինն ՚ի նոցանէ եղև Գոթոնիէլ. և յետինն Սամուէլ.

սակայն քան զամենեսեան երեւելի հանդիսացաւ Սամսոն անհամեմատ իմն զօրութեամբ անձին ։

Հ. Ո՞վ եղեւ առաջին Քահանայապետ Իսրայէլացւոց ։

Պ. Ահարոն ։

Հ. Յորմէ՞ ցեղէ պարտ էր ընտրելոյն։

Պ. Ի ցեղէն Ղեւեայ։

Հ. Զկնի Սամուէլի յետին Դատաւորի ո՞վ իշխեաց ՚ի վերայ Իսրայէլի ։

Պ. Իբրեւ ծերացաւ Սամուէլ՝ յանձն արար զկառավարութիւն ազգին որդւոց իւրոց. որոց ՚ի վարելն զայն չարաչար յոյժ, ըստ խնդրանաց ժողովրդեան օծ ապա նա զՍաւուղ արքայ. եւ իշխանութիւն այնուհետեւ դարձաւ միապետական։ 2929 1095

Հ. Զի՞նչ ինչ արար Սաւուղ։

Պ. Սաւուղ որդի Կիսի մեծատան առն ուրումն ՚ի ցեղէն Բենիամինի իբրեւ նստաւ արքայ Իսրայէլի՝ յաղթանակեաց Ամմոնայ արքային Ամմոնացւոց, եւ կոտորեաց հետզհետէ զՓղշտացիս եւ զԱմաղէկ. այլ յետոյ ընդդէմ յայտնի հրամանին Աստուծոյ ապրեցուցեալ զԱգագ զարքայն Ամաղեկայ, ընկեցաւ յաթոռոյ իւրմէ. եւ հուսկ ուրեմն յուսահատեալ, մխեաց զսուր ՚ի սիրտ իւր եւ մեռաւ ։

Հ. Զի՞նչ պատմի վասն Դաւթայ ։

Պ. Առ կենդանութեամբ Սաւուղայ՝ Դաւիթ 2950
գոլով միայն 16 ամաց՝ օծաւ արքայ Իսրայէլի փո- 1054
խանակ նորա։ Սա յերկիր տապալեաց զվիթխարի

զօրավարն այլազգեաց զԳողիաթ, և եառ 'ի կնութ՟ն զդուստրն Սաւուղայ · յորմէ և բ՟զում հալածմունս կրեաց · այլ ամ՟ն տարաւ մեծաւ համբերութ՟բ : Ապա մեղս ինչ գործեալ առաջի Ա՟յ, երևելի հանդիսացաւ իւրով ապաշխարութ՟բ և բարեպաշտութ՟բ :

2989 Հ: Զ՞ինչ պատմի զՍողոմոնէ :

1015 Պ: Սողոմոն որդի Դաւթի՝ յաջորդեաց զնա 'ի թագաւորութ՟ն : Սա ընկալաւ առ յԱ՟յ զյատուկ իմն իմաստութ՟ն և զհանճար · ապա նաւս առաքեալ 'ի կողմանս Ափրիկոյ ընդ Կարմիր ծովն՝ 'ի ձեռս եբեր զբազում գանձս ոսկւոյ և արծաթոյ : Շինեաց սա և զտաճար Ա՟յ դեղեցկակերտ ընդարձակ և հոյակապ · արար և զբ՟զմ՝ յաղթութ՟ս, և ընդարձակեաց զսահմանս թագաւորութ՟ն իւրոյ մինչև ցգետն Եփրատայ · և ետես զԹագուհին Սաբայ գալ յԱրաբիոյ առ ինքն բազում երևելի ընծայիւք, լսել զսքանչելի իմաստութ՟ն իւր : Այսչափ փառք և այսօրինակ երջանկութ՟ն խոտորեցուցին զարքայս զայս յուղղոյ ճանապարհէ Տեառն. քանզի հասել ն՟ր 'ի հասակ ծերութ՟ն, փոխանակ եւս իմաստնագոյն գնացս և վարս աշխարհի ընծայեցուցանելոյ՝ զհետ եղև ախտին ճակաճանութ՟ն, և պաշտօն մատոյց կռոց հեթանոսաց :

Ոմանք 'ի մ՟րց հարց · է որս և մերս ոք Նարեկացին՝ համարին, թէ յետոյ նա ապաշխարութ՟ քաւեաց զմեղս իւր · բայց Ա՟ծաշունչն ոչինչ յայտնի աւանդէ զայնմանէ ։

Հ։ Ո՞վ յաջորդեաց զկնի Սողոմոնի ։

Պ։ Որդի նորա Ռոբովամ ։ Սա ոչ կամելով թեթեւացուցանել զժողովուրդն 'ի ծանր ծանր 3029 հարկաց, ը՟ որովք մաշէին՝ տասն ցեղք Իս՟լացւոց 975 ապստամբեցան 'ի նմանէ, և կացուցին իւրեանց այլ թագաւոր · այն է Յերոբովամ, 'ի ցեղէն Եփրեմայ ։ Իսկ Ռոբովամայ հաւատարիմ մնացին միայն երկու ցեղք՝ Յուդայ և Բենիամինի · որք 'ի վերայ այնր ամ՟ի զօրեղագոյն էին քան զտասն ցեղսն ։

Հ։ Ո՞ր քաղաք արքայանիստ էր յայնժամ արքայիցն Իս՟լի ։

Պ։ Սեքեմ · սակայն իբրև Ամրի շինեաց ըզՍամարիա, աթոռն տեղափոխեցաւ անդ ։

Հ։ Եւ արքայիցն Յուդայ ։

Պ։ Երուսաղէմ ։

Հ։ Քանի՞ արքայք եղեն Յուդայ · և քանի՞ Իս՟լի ։

Պ։ Յուդայ եղեն քսան · որք են՝ 1 Ռոբովամ, 2 Աբիա, 3 Ասա, 4 Յովսափատ, 5 Յովրամ, 6 Ոքոզիա, 7 Աթալիաս, 8 Յովաս, 9 Ամասիա, 10 Ոզիա կամ Ազարիա, 11 Յովաթամ, 12 Աքազ, 13 Եզեկիա, 14 Մանասէ, 15 Ամմօն, 16 Յօսիա, 17 Յովաքազ, 18 Յովակիմ, 19 Յեքոնիա, 20 և Սեդեկիաս ։

Իսկ Իսրայէլի եղեն տասնևինն · և են՝ 1

Յերոբովամ ա, 2 Նաբատ, 3 Բաասա, 4 Ելա, 5 Զամբրի 6 Ամրի, 7 Աքաաբ, 8 Ոքոզիա, 9 Յովրամ, 10 Յէու, 11 Յովաքազ, 12 Յովաս, 13 Յերոբովամ բ, 14 Զաքարիա, 15 Սեղղում, 16 Մանայէմ, 17 Փակէէ, 18 Փակէ, 19 Ովսէէ ։

Հ։ Ո՞րչափ ժամանակ տևեցին այս երկու թագաւորութիւնք ։

Պ։ Թագաւորութիւնն Յուդայ տևեաց ամս 384․ և Իսրայէլի՝ 250 ։

Հ։ Զի՞նչ անցք եղեն․

Պ։ Մինչդեռ արքայն Ովսէէ խաղաղութեամբ վարէր զիշխանութիւն իւր ՚ի վերայ Իսրայէլի՝ Սաղմանա-
3278 սար արքայ Ասորեստանեայց բազմութեամբ զօրաց
726 յարձակեցաւ ՚ի վերայ Հրէաստանի, և պաշարեալ զԱթոռանիստ քաղաքն Սամարիա ամս իբրև երիս՝ ձերբակալ արար զՈվսէէ, և կապանօք գերի վարեաց յԱսորեստան հանդերձ մեծագոյն մասամբ Իսրայելացւոց ։ Ընդ որս էր և այրն Աստուծոյ Տօբիթ․ որ էր կարի քաղցրացոյց ըզտառապանս եղբարց իւրոց վարելոց ՚ի Նինուէ ազգի ազգի բարեգործութեամբք իւրովք ։ Եւ ահա անդէն վախճան կալաւ Թագաւորութիւնն Իսրայէլի ։

Այսպէս և ՚ի պայազատել Սեդեկիայ զազգ իւր մեծաւ ամբարշտութեամբ՝ Նաբուգոդոնոսոր
3407 արքայ Ասորեստանեայց լուեալ զապստամբել
597 նորա, դիմեաց ահագին զօրութեամբ ՚ի վերայ նորին,

և տիրեալ քաղաքին Երուսաղեմի, յետ պաշարելոյ զայն զամս իբր երկուս. ետ սպանանել առաջի Սեդեկիայ զորդիս նորա, և հանեալ զաչս նորին՝ առաքեաց զնա կապանօք 'ի Բաբելօն ։ Ապա կողոպտեալ զտաճարն Սողոմոնի, և զքաղաքն աւերեալ իսպառ՝ 'ի գերութիւն եած զամենայն բնակիչսն. յորոց մին էր մարգարէն Եզեկիէլ ։

Հ ։ ԶԻՆՉ ԻՆՉ ԵՐԵՒԵԼԻ ԴԷՊՔ ՅԵՏ ՎԱՐԵԼՈՅ ՀՐԷԻՑ 'Ի ԳԵՐՈՒԹԻՒՆ ։

Պ ։ Ընդ նոյն ժամանակս Նաբուգոդոնոսոր արքայ միացուցեալ զերկուս թագաւորութիւնս Բաբելոնի և Նինուէի, Հրեայք թագաւորութեան Իսրայէլի և Յուդայ ողջոյն անկան ընդ իշխանութեամբ նորա. ընդ որս էր և մարգարէն Դանիէլ, որ մեկնեաց զխորհրդաւոր երազ արքային այնորիկ, և գուշակեաց զյաջորդել չորից մեծամեծ թագաւորութեանց՝ Ասորեստանեայց, Պարսից, Յունաց և Հռովմայեցւոց։ Ապա սա ինքն արկաւ 'ի հնոց հրոյ. այլ հրաշիւք անվտանգ ել անտի ։ Իսկ արքայն Նաբուգոդոնոսոր յետ տիրելոյ և աշխարհին Պարսից՝ առաքեաց անդ զմասն ինչ Հրէից 'ի բնակութիւն. բայց յետ ժամանակաց Արտաշէս արքայ Մեդացւոց՝ եղբայր Աժդահակայ. ըստ այլոց նոյն ինքն Աժդահակ, զոր սուրբ գիրք Ասուերոս անուանէ, վերստին դրաւեալ ընդ իւրև զայն աշխարհ՝ շինեաց զԱթոռանիստ քաղաքն զՍուսիս , և արձակեալ զԱսթինէ զկին իւր՝ եած փոխանակ նր՟ զԵսթեր զդուստր Ամինադաբայ Եբրայեցւոյ՝ հօրեղբօր Մուրթքէի ։ Այր ոմն Համան անուն՝ աթոռակից արքային՝ մախացեալ ընդ Մուրթքէ յայն սակս՝ զի սա ոչ երկրպագանէր նմա, դրդեաց զարքայն ընդդէմ համօրէն Հրէից , և առաւել ևս ընդդէմ Մուրթքէի · և նա հրովարտակաւ հրամայեաց կորուսանել զամ՟ Հրէայս տէրուե՟ իւրոյ , և զՄուրթքէ իսկ կախել զփայտէ ։ Բայց Եսթեր մաղթանօք իւրովք քաղցրացուցեալ զարքայն 'ի վր՟ ազգին իւրոյ՝ ետ արձակել զնս՟ և զՄուրթքէ , և զանօրէնն Համան կախել զփայտէ փոխանակ Մուրթքէի ։

Յետ ամաց ինչ երևեցան 'ի քաղաքին Բաբելոն երկու բղջախոհ ծերունիք դատաւորք տարւոյն այնմիկ · որոց հարեալ 'ի սէր Շուշանայ դստեր Քեղկեայ՝ ցանկացան լինել ը՟ նմա · և իբրև ոչինչ իւիք կարացին խոտորեցուցանել զսիրտ նր՟ , զրպարտութ՟ կամեցան կորուսանել զնա ։ Բայց մանուկ ոմն Դանիէլ անուն ազդեալ առ 'ի վերուստ՝ արդարացոյց զնա , և փոխանակ զնոսին իսկ զանօրէն դատաւորսն ետ մահու սատակել ։

Ապա իբրև տիրեաց Կիւրոս թագաւորուե՟ Ասորեստանեայց՝ ետ զիշխանուե՟ աշխարհին ցհօրեղբայր իւր ցԴարեհ Արքայ՝ Մեդացի մականուանեալն ։ Ի ժամանակս նորա մարգարէն Դանիէլ արկաւ 'ի գուբ առիւծուց , և սքանչելեօք ամբողջ ել անտի։ Այլև առ Թագաւորութ̃բ նորին Դարեհի Ա̃ծ յայտնեաց Դանիէլի զեօթանասնեակ շաբաթսն ․ զկնի որոյ ունէր Փրկիչն մեր սպանանիլ 'ի Հրէից ։

Հ։ Ո՞վ ազատեաց զԵբրայեցիս յայնմ տաժանէն գերութենէ ։

Պ։ Կիւրոս․ որ թագաւորեաց 'ի վ̃ր Մարաց, Պարսից և միանգամայն Ասորեստանեայց։ Մարզեալ ̃էր 'ի Դանիէլէ Մարգարէէ 'ի հաւատս ճշմարիտ ա̃ծպաշտութե̃՝ հրաման եհան ը̃ ամ̃ տեղիս Թագաւորութե̃ իւրոյ, զի թոյլ տացեն Հրէից դառնալ յԵրուսաղէմ, և շինել վերստին զՏաճարն ։ Իբրև դարձ արարին նոքա յերկիր իւրեանց՝ ոչ ևս կամեցան ինքեանց ունել զօք Թագաւոր․ այլ կացուցին ծայրագոյն Քահանայապետս , որոց 'ի ձեռս ետուն զգերագոյն իշխանութ̃ին ։ Յորչափ տևեաց Թագաւորութ̃ին Պարսից՝ Հրեայք մնացին ը̃ իշխանութ̃բ արքայից նոցա ․ այսինքն ամ̃ս իբր 200 ․ բայց իբրև մեծն Աղեքսանդր նուաճեաց զայն հզօր Թագաւորութ̃, և տիրեալ Թագաւորեաց 'ի վերայ բովանդակ Ասիոյ՝ Հրեայք ևս անկան ը̃ իշխանութ̃բ նորա ։ Յետ մահուան նորին Աղեքսանդրի այն ընդարձակ Թագաւորութ̃ բաժանեցաւ 'ի 3468 536 չորս մասունս ․ յայնժամ և Հրէաստան յարեցաւ 'ի նորոգ թագաւորուի՟ն Ասորւոց , և պահեաց զամս 138 անխախտ զնոյն եղանակ կառավարուե՟ , և զազատուի՟ Կրօնի ։ Սակայն 'ի վերջին ամս թագաւորուե՟ Սելևկիոյ Փիլոպատոր կոչեցելոյ՝ Հրէաստան եղև կոխան թշնամեաց , և կրեաց զհալածանս բազումս ։

Հ։ Ո՞վ նորոգեաց զպարիսպս Ե՟ղմի ։

Պ։ Նեեմիա տակառապետ Արտաշէս արքային Պարսից ։

Հ։ Ո՞րչափ ժամն՟ տևեաց երկ՟ շինութիւն տաճարին ։

Պ։ Ամս քսան ․

Հ։ Զ՞ինչ եղև 'ի ժամանակս Քահանայապետաց Հրէից ․ և զի՞արդ Անտիոքոս Եպիփան հալածեաց զեկեղեցին Երուսաղէմ ։

Պ։ Առ թագաւորուբ՟ Սելևկիոյ արքային
2824 Ասորւոց՝ Ոնիաս էր ծայրագոյն Քահանայապետ
180 Հրէից , այր արդար և երկիւղած ։ Իսկ ներքին կառավարուի՟ տաճարին էր 'ի ձեռս Սիմոնի չարագործ առն ուրումն ։ Սա մախացեալ ընդդէմ մծ՟ Քահանայապետին՝ մատեաւ առ կուսակալն Պաղեստինոյ , և մատնեաց նմ՟ զգանձս տաճարին․ և նա զեկուցեալ արքային՝ հրաման եառ 'ի նմանէ կողոպտել զա՟մ ։ Որոյ աղագաւ փութանակի առաքեաց սա յԵ՟ղմ զգունդ մի զօրաց ը՟ առաջնորդուբ՟ Հեղիոդորոյ հանդերձապետի արքայ-

էին • որոյ գնացեալ անդր իբրև կամէր բռնութ̃ մուտ առնել ՚ի տաճարն՝ հարաւ ուժգին ՚ի հրեշտակէ Ամենակալին, և յետս կասեցաւ: Ապա իբրև յաջորդեաց Սելևկիոյ Անտիոքոս անուանի հալածիչ Հրէից յամին 3829, երևեցաւ անարժան եղբայրն մեծի Քահանայապետին Ոնիայ՝ Յասոն • որոյ մատուցեալ առ նոր արքայն՝ գնեաց ՚ի նմանէ զքահանայապետութ̃ ազգին իւրոյ, և դարձաւ յոխորտանօք յԵ̃ղմ: Բայց Մենելաոս եղբայր Սիմոնի դաւով յինքն ձգեալ զայն իշխանութ̃՝ ետ սպանանել զՈնիաս, որ մեկուսացեալ էր յԱնտիոք: Ոչ կարի յետոյ Անտիոքոս կասկած առեալ՝ թէ Հրեայք կամին ձողոպրել զանձինս յիշխանութ̃ իւրմէ՝ ել զօրու ծանու յԵգիպտոսէ և խաղաց ՚ի վ̃ր նոցա • և մտեալ ՚ի քաղաքն Ե̃ղմ, սրոյ ճարակ ետ զարս իբրև ութսուն հազար • այլև զքառասուն հազար ողջս ետ ՚ի կապանս, և նոյնչափ անձինս ևս վաճառեալ մատնեաց ՚ի գերութ̃ • ապա յետ մերկացուցանելոյ զտաճարն ՚ի բազմագանձ զարդուց իւրոց՝ դարձաւ ՚ի տեղի իւր: Յետ այսորիկ առաքեաց բազմութ̃ զօրաց յԵ̃ղմ զԱպողոնիոս, պատուէր սաստիկ տուեալ նմ̃՝ զի զմնացորդս ՚ի Հրէից կոտորեսցէ, և զերկիրն իսպառ ամայի կացուսցէ: Հասեալ Ապողոնի անդ, փութացաւ անյապաղ կատարել զկամս տ̃ն իւրոյ • Նմին իրի յաւուր շաբաթու այն ինչ բազմութ̃

Հրէից 'ի շրջակայ քաղաքաց եկեալ էին յԵրուսաղէմ յերկրպագութիւն տաճարին, յեղակարծ իմն արձակեալ զզօրս յամենայն փողոցս և 'ի տունս քաղաքին՝ ետ առ հասարակ կոտորել զամենեսին . ապա յետ զպարիսպս քաղաքին հարթայատակ առնելոյ և զամենայն երևելի շինուածս յերկիր կործանելոյ , ինքն և զօրք իւր ամրացան 'ի մարտկոց քաղաքին :

Յետ որոյ Անտիոքոս գրեաց հրովարտակ և առաքեաց առ Հրեայս, ստիպելով զնոսա բազում չարաչար սպառնալեօք թողուլ զԱստուածն իւրեանց, և պաշտել զկուռս : Ետ կանգնել և 'ի մէջ տաճարին զարձան Դիոսի , և հրամայեաց՝ զի այնուհետև կոչեսցի այն՝ տաճար Դիոսի Ողիմպէացւոյ . յայնժամ և զօրք նորա սկսան անդանօր գործել զամենայն պղծութիւնս, և անարգել զսրբութիւնս : Ապա կամելով Անտիոքայ 'ի չափ լրութեան հասուցանել զամբարշտութիւն իւր՝ եկն վերստին անձամբ 'ի Հրէաստան , և շրջեալ ընդ քաղաքս և ընդ գիւղս՝ ետ կազմել զոհարանս յամենայն հրապարակս , 'ի փողոցս և 'ի դրունս տանց . և 'ի դուրս կորզեալ զՀրեայս համօրէն՝ բռնադատէր զամենեսին առ հասարակ յերկրպագութիւն կռոց . Յայնժամ բազումք 'ի նոցանէ ահաբեկեալ կատարեցին զթիւր կամս նորա . բայց որք միանգամ դիմադարձ գտանէին նմա, և գաղթէին յայրս և 'ի խոռոչս 'ի պահել զօր շաբաթու՝

չարաչար մահուամբ ՚ի կենաց վճարեցին ․ է՛ զի ՚ի բորբոքեալ հուր կենդանւոյն արկեալ ՚ի մոխիր դառնային, և է՝ զի ՚ի ձեռն անգութ դահճաց սրախողխող լեալ ՚ի Տէր հանգչէին ․ բազումք ևս ՚ի կանանց ամբաստանեալք, եթէ թլփատեալ են զորդիս իւրեանց՝ պէսպէս խոշտանգանօք ածեալ լինէին առաջի բռնաւորին, որ նոյն կետայն հրամայէր կախել զստեանց ն՟ց զնորոգ թլփատեալ մանկունսն զայնոսիկ, և այնպէս գետնաքարշ յածեալ ը՟ ա՟մ փողոցս քաղաքին՝ հուսկ յետոյ ՚ի բարձր պարսպաց ընկենուլ ՚ի վայր ։ Յայնժամ և ծերունի օրէնսգէտ ոմն Եղիազար անուն՝ այր լի սրբութ՟ և վարդապետութ՟՝ չկամելով ուտել զխոզենի, կատարեցաւ ՚ի ձեռաց դահճաց ․ նոյնպէս եօթանեքին ծաղկահասակ եղբարք հանդերձ մարբ իւրեանց մի զկնի միոյ ճաշակեցին զդառնագին մահ, յայն սակս՝ զի ոչ յօժարեցան ուրանալ զԱ՟ծն Ի՟ղի ։

Ժ․ Զօրութ Յուդա Մակաբէի ընդդէմ զօրավարութեան Անտիոքայ ։

Պ։ Մատաթիա քահանայ Տեառն ՚ի ցեղէն Ա- 3837
հարոնի այր առաքինի և անցեալ զաւուրբք՝ 167
տեսեալ զանհնարին աղէտս տառապանաց ազգին իւրոյ, ել յԵրուսաղէմէ հանդերձ հինգեքին որդւովք իւրովք ․ որոց մին էր Յուդա Մակաբէոս ․ և ժողովեալ առ ինքն զբազմութ՟

ընտիր ընտիր արանց Իս՟լացւոց՝ սկսաւ նոքօք շրջել յամ՟ կողմանս Հրէաստանի․ և զորս միանգամ 'ի ձեռս բերէր յանօրէն կռապաշտից անտի՝ սատակամահ առնէր․ զբագինս կործանէր, և ամ՟ ուրեք վերստին զճշմարիտ Ա՟ծպաշտու՟թին հաստատէր։ Յետ նորա յարեաւ երանելին Յուդա Մակաբէ՝ այր քաջասիրտ և նախանձայոյզ օրինաց Ա՟յ․ որ զգեղեցիկ նմանու՟թի հօրն յանձին բերեալ, և կարգեալ զօրագլուխ վեցհազար արանց՝ խաղաց յարձակեցաւ անվեհեր արիու՟թբ ընդդէմ Ապողոնի սպարապետին Անտիոքայ․ և ճակատամարտ պտ՟րազմեալ ը՟ նմ՟՝ սպան իւրով ձեռամբ զնա ինքն զԱպողոնիոս, և զզօրս նորա 'ի սուր սուսերի մաշեաց։ Ապա ևս քան զևս զօրացեալ նորա՝ 'ի պարտու՟թի մատնեաց զամ՟ զօրագլուխս Անտիոքայ, որք առաքեցան առ 'ի կորուսանել զնա։ Նա և մտեալ յաղթական հանդիսիւ յԵ՟րմ՝ ձեռն 'ի գործ եարկ վերստին սրբել զտաճարն, և նորոգել զպարիսպս քաղաքին․ յոր ամրացուցեալ զբնակիչսն, եւ ինքն զօրօք իւրովք յոգնու՟թի քաղաքաց և գիւղօրէից․ և բազում անգամ բազում յաղթու՟թիս արարեալ ընդդէմ զօրացն Անտիոքայ՝ տիրեաց յոգունց քաղաքաց, և զմի մասն այնց բնակչաց եած յԵրուսաղէմ։

Հ. Զիա՞րդ ապաշխարեցաւ ամբարիշտ արքայն Անտիոքոս։

Պ. Իբրեւ լուաւ Անտիոքոս զպարտիլ զօրապետաց իւրոց յերեսաց Յուդայ Մակաբէոսի՝ զայրացաւ 'ի հոգի իւր. եւ նոյն կետայն ժողովեալ զանհամար բազմութիւն զօրաց, իբրեւ զյորձանս սաստիկ հեղեղի փութացաւ հասանել 'ի Հրէաստան, 'ի մտի եդեալ այրել 'ի հիմանէ զտաճարն, եւ բնաջինջ առնել զազգն Հրէից ողջոյն. սակայն 'ի ճանապարհին յանկարծուստ չարաչար ախտիւ հարեալ 'ի Տեառնէ՝ անկաւ 'ի կառաց իւրոց, եւ զարհուրելի մահուամբ ընկալաւ զարժանաւոր հատուցումն այնքան անօրէնութեանց իւրոց։ 3840 164

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

ա̃ ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Աշխարհի. այն է Ասորեստանեայց։

Հ. Ո՞վ եղեւ հիմնադիր այսր առաջին Միապետութեան։

Պ. Նեբրովթ, կամ Բէլ. որ յետ աշտարակաշինութեան բռնացեալ նուաճեաց զբազումս ընդ իւրեւ, եւ թագաւորեաց 'ի վերայ նոցա։

Հ. Յումմէ՞ անուանեցաւ ազգ Ասորեստանեայց։

Պ. Յասուրայ յերկրորդ որդւոյ Սեմայ։

1840 ÷ ՈՐԴ ԲԱԳԱՒՈՐԵԱՑ ՅԵՏ ՆԵԲՐՈՎԹԱՅ ։

Խոր. 2181 Գ. Որդի նորա Նինոս ։ Սա կամելով ըստ 2164 արժանւոյն յարգել զյիշատակ հօր իւրոյ՝ կանգնեաց նմա բագին , և ստիպեաց զամ̃ն իբրև զա̃ծ պաշտել զնա ։ Ապա միաբանեալ ը̃ Արաբացիս սահմանակիցս իւր՝ 'ի միջոցի 17 ամաց նուաճեաց ը̃ իշխանութ̃ իւրով զընդարձակ աշխարհն , որ ձգի յԵգիպտոսէ մինչև ցՀնդիկս և ցԲակտրիացիս ։ Այն սա և բազմօք վայելչացոյց զքաղաքն Նինուէ , և խաղաց միւսանգամ 'ի վերայ Բակտրիացւոց , և պաշարեալ զԲակտրի զամուր քաղաք նոցա՝ հուսկ ուրեմ̃ էառ զայն խորհրդով Շամիրամայ կնոջն Մենոնի ուրում̃ զօրավարի , և բազում աւարաւ դարձ արար 'ի տեղի իւր ։ Եւ 'ի մեռանիլ առն Շամիրամայ՝ Նինոս եած զնա 'ի կնութ̃ , և ծնաւ 'ի նմանէ զՆինուաս ։

Ոմանք յետ Նեբրովթայ հաշուեն զայլ հինգ թագաւորս Ասորեստանեայց մինչև ցմեծն Նինոս ։ Այսպէս աւանդէ և Խորենացին մեր առեալ 'ի Մարիբասայ և 'ի հին մատենագրաց ։ Բայց ես զհետ երթեալ հասարակ կարծեաց հնախօսից՝ զկնի Նեբրովթայ անմիջապէս յարեցի զՆինոս , զանց արարեալ զայնու հինգ թագաւորօք , զորս յիշէ Խորենացին ։

÷ ՈՐԴ ՅԱՋՈՐԴԵԱՑ ՆԻՆՈՍԻ 'Ի ԲԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ։

Գ։ Նոյն ինքն Շամիրամ ։ Բայց թագուհի 1882
զուարճին 'ի մէջ կանանց թագաւորեաց, եւ Աբր․ 2233
եղեւ գրեթէ քան զա՟մ թագաւորս Ասորեստանեայց 2122
երեւելի եւ մեծագործ ։ Սա կանգնեաց զբզմ՟ հրապարակական շինուածս 'ի Բաբելոն քաղաքի , եւ շինեաց զճարտարարուեստ կամուրջ 'ի վերայ Եփրատ գետոյ ․ հարթեաց զճանապարհս , եւ կառոյց զպարիսպ քաղաքին , խրամատեալ զայն հաստահիմն պատուարօք եւ խորայատակ ջուրբք ։ Շինեաց եւ տաճար հոյակապ յանուն Բելայ , եւ 'ի ներքս անդր՝ աշտարակ բարձրաւանդակ ․ յորոյ 'ի ծայրն ելեալ Բաբելացւոց՝ պարապէին 'ի դիտողութ՟ն աստղաբաշխականս ։

Յետ այսպէս շքեղացուցանելոյ զայն քաղաք՝ խաղաց զօրու ծանու յԵթեովպիա , եւ նուաճեաց զկէս մասն այնր աշխարհի ը՟ իշխանութ՟ իւրով ․ ապա չու արար անտի մեծաւ պատրաստութ՟ 'ի Հնդիկս , եւ էանց յայնկոյս Ինդոս գետոյն , յորմէ աշխարհն այն անուն զիւր առնու ։ Անդ զուարճին արար զյաղթութ՟ի ինչ ․ բայց յետոյ թշնամիք զօրացեալ յարձակեցան 'ի վերայ նորա , եւ առաթուր կոխեալ կոտորեցին զմեծ մասն զօրաց նորին ․ որով նա ստիպեցաւ կոր 'ի գլուխ դառնալ 'ի տեղի իւր․ ուրանօր լուեալ թէ Նինուաս որդի իւր դարանակալ է ինքեան, յանձն արար նմա զիշխանութ՟ի թագաւորութ՟ն ։

Հ. ԶԻ՞ՆՉ ԻՆՉ ՊԱՏՄԻ ԶՆԻՆՈՒԱՍԱՅ ։

1324 Պ. Նինուաս յոչինչ իրս նմանեալ մեծագործ ծնողաց իւրոց՝ անձնատուր եղև գլխովին ՚ի խրախութիւնս և ՚ի փափկութիւնս մարմնոյ ։ Հազիւ ուրեմն երևէր արտաքս, և ոչ մի ինչ փոյթ ունէր զբարութ՟է հպատակաց · այլ զիշխանութ՟ի իւր տուեալ ՚ի ձեռս ծառայից և զօրականաց իւրոց՝ որ քան զօր առաւել լինէր ազգին իւրոյ ։ Զնոյն զայս շաւիղ ընկալան և յաջորդք նորա մինչև ցա՟մն աշխարհի 3233 · յորում Փուղայ միապետեալ զԱսորեստանեայս՝ խաղաց ահագին զօրութ՟ք յօգնութ՟ի Մանայեմայ, որ բռնացեալ էր ՚ի վերայ Իս՟րլի · և ընկալեալ ՚ի նմանէ զհազար տաղանդոց՝ դարձաւ ՚ի Նինուէ ։ Ըստ հաւանական կարծեաց սա է, որ ՚ի քարոզութ՟ե անդ Յովնանու մարգարէին փութացաւ յապաշխարութ՟ի ա՟մ հպատակօքն հանդերձ ։

Խոր. 2275

2280

3246 Հ. ԶԻ՞ՆՉ ՊԱՏՄԻ ԶՍԱՐԴԱՆԱՓԱՂՈՅ ։

758 Պ. Սարդանաբաղ որդի Փուղայի թագաւորեաց յետ հօր իւրոյ ՚ի վերայ Ասորեստանեայց ։ Սա քան զամե՟ն զտաւ հեշտասէր և անարգաբարոյ · որոյ զհետ լեալ ամենևին ախտից ճակաճանութ՟է, և զգեցեալ ը՟ տարազու փափկասուն հոմանեաց իւրոց՝ ոչ երբէք երևէր արտաքս · ուստի նշկահեալ հպատակացն զիշ-

խանութ̃ն նորա՝ կամեցան բառնալ զնա 'ի կենաց․ իսկ նա զէնս առեալ աճապարեաց նուաճել զմբոստացեալսն ․ և իբրև ոչ կարաց՝ փախեաւ և ամրացաւ անդէն յապարանս իւր ․ ուր հուսկ յետոյ 'ի յուսոյ իսպառ հատեալ՝ արար փայտակոյտ մեծ , և եմուտ անդր ինքն և ամ̃ հոմանիք իւր և ներքինիք հանդերձ ամ̃ գանձուք իւրովք , և հուր արկեալ այրեցան :

Հ: Զի՞նչ անցք անցին յԱսորեստանեայս յետ Նբր̃ : 3257

Պ: Այս միահեծան թագաւորութ̃ն յետ տևելոյ ամս իբր 1486 , 'ի միապետելոյ անտի Նեբրովթայ՝ բաժանեցաւ յայնժամ յերիս մասունս․ որք կացուցին զմի մի երևելի թագաւորութ̃ն : Արբակէս թագաւորեաց 'ի վերայ Մարաց և Պարսից ․ Բելեսիս թագաւորեաց 'ի վերայ Բաբելոնի ․ իսկ Թագղաթփաղասար , որև կոչի Նինոս կրտսեր՝ 'ի վերայ Նինուէի : Սա օգնեաց արքային Յուդայ Աքազու յաւուրս Եսայեայ մարգարէի ընդդէմ Փակեհի արքային Իսր̃լացւոց , և ընդդէմ Հռասիմ արքային Ասորւոց․ և առեալ զհարկ աշխարհին այնորիկ՝ դարձաւ 'ի Նինուէ : 747

Հ: Ո՞վ թագաւորեաց յետ Թագղաթփաղասարայ 'ի Նինուէ :

Պ: Որդի նորա Սաղմանասար : Լուեալ սորա 3276
թէ Ովսէէ արքայ Իսր̃լի կամէր թօթափել 728
զանձն յիշխանութէ իւրմէ , խաղաց 'ի վերայ

նորա, և առեալ զՍամարիա՝ գերեաց զնա, և եբարձ զԹագաւորութիւն Ի՟ղի : Տե՛ս յեր. 216 :

3287 Հ: ՈՎ յաջորդեաց ՍԱՂՄԱՆԱՍԱՐԱՅ :

717 Պ: Որդի նորա ՍԵՆԵՔԵՐԻՄ · Սա դիմեաց զօրու ծանու 'ի վերայ Ե՟ղմի յաւուրս Եզեկիայ արքայի Յուդայ · այլ 'ի սատակել 'ի գիշերի միում 'ի հրեշտակէ Տեառն 185,000 արանց 'ի զօրաց իւրոց՝ կոր 'ի գլուխ դարձաւ 'ի Նինուէ, ուր անօրէն սկիզբն եառ ծանր հարկօք ձ՛նշել ըզհպատակս իւր : Ապա սպանաւ անդէն յերկու որդւոց իւրոց :

3294 Հ: ՈՎ ԹԱԳԱՒՈՐԵԱՑ ԶԿՆԻ ՍԵՆԵՔԵՐԻՄԱՅ :

710 Պ: Որդի նորա ԱՍՈՐԴԱՆ : Ընդ այն ժամանակս անժառանգ մնացեալ Թագաւորութեան Բաբելոնի՝ ժամանակ պատեհաւոր համարեցաւ Ասորդան նուաճել զայն ը՟ իւրև · Նմին իրի 'ի քսանևութներորդ ամի Թագաւորութեան իւրոյ եմուտ 'ի Բաբելոն, և տիրեալ միացոյց զայն ը՟ իւրում Թագաւորութեան : Յետ այնորիկ չոգաւ 'ի Պաղեստին, և կալեալ զՄանասէ ըզԹագաւոր Յուդայ՝ գերի վարեաց 'ի Բաբելոն · բայց զկնի ժամանակաց ինչ արձակեաց զնա 'ի տեղի իւր :

3335 Հ: ՈՎ յաջորդեաց ԱՍՈՐԴԱՆԱՅ :

669 Պ: Որդի նորա ՍԱՈՍԴՈՒԽԷՆ, որև կոչի ՆԱԲՈՒԳՈԴՈՆՈՍՈՐ առաջին : Գործեալ սորա 'ի Պեովկայ · ը՟ այլոց 'ի Փրաորդայ արքայէ Մարաց՝

խաղաց 'ի պատերազմ ընդդէմ նորա, և պաշարեալ զամուր մայրաքաղաք նորին զԷկբատան՝ եառ զայն, և սպան զնոյն ինքն զարքայն Դէովկէս : Այն սա 'ի յաջորդ ամի առաքեաց զՀողոփեռնէս 'ի Հրէաստան, նուաճել զայնոսիկ, որք ապստամբ արարին ընդ հրամանն իւր : Բայց գնացեալ նորա անդր՝ սպանաւ 'ի քաջէն Յուդիթայ, և զօրք նորա 'ի սուր սուսերի մաշեցան :

Հ. Ո՞վ թագաւորեաց յետ Սաոսդուքինայ :

Պ. Որդի նորա Քինալադանոս կամ Սարակոս· 3356
որոյ օրով այր փափկակեաց և զեղխ՝ Նաբու- 648
պոլասար զօրագլուխ նորա ապստամբեցաւ 'ի նմանէ, և թագաւորեաց առանձինն 'ի Բաբելոն · ապա միաբանեալ ևս ընդ Մեդացիս՝ պաշարեաց զՆինուէ և եառ զայն : Իսկ մոլին Քինալադանոս անճարացեալ՝ այրեաց զինքն համդերձ տամբ իւրով : Թագաւորեալ Նաբուպոլասարայ 'ի վերայ Նինուէի և Բաբելոնի միանգամայն՝ եղև ահարկու և հզօր յոյժ · և 'ի կենդանութեան իւրում թագաւորեցոյց զորդի իւր զՆաբուգոդոնոսոր, և յետ սակաւուց մեռաւ :

Հ. Զ՞ինչ պատմի զՆաբուգոդոնոսորայ : 3399

Պ. Նաբուգոդոնոսոր երկրորդ, որ և Մեծն ան- 605
ուանի՝ առ կենդանութեամբ հօր իւրոյ տիրեալ Սիւրիոյ և Պաղեստինոյ՝ չոգաւ ապա և նուաճեաց

զԱրաբիա և զԵ՟ղմ, և գերեաց զՅովակիմ արքայն հանդերձ ամ՟ բնակչօք քաղաքին այնորիկ ․ ը՟ որս էր և մարգարէն Դանիէլ ։

Արքայս այս ՚ի չրր՟դում ամի թագաւորութեան իւրոյ ետես զարմանալի երազ, զոր Դանիէլ միայն կարաց մեկնել նմա ։ Այն երազ գուշակէր զբարձումն թագաւորութեան Ասորեստանեայց , և զյաջորդել այնմ՝ այլ երից մեծամեծ Միապետութեանց՝ Պարսից , Յունաց և Հռովմայեցւոց ։ Հաւանեալ նորա ընդ իմաստութիւն պատանեակ մարգարէին, բարձրացոյց զնա յառաջին նախարարութիւն տէրութեան իւրոյ ։ Ապա յոլով անգամ յարձակեալ ՚ի վերայ Հրեաստանի՝ էառ զԵ՟ղմ, այրեաց զտաճարն , զքաղաքն կողոպտեաց, և զամ՟ բնակիչսն գերեաց ։ Զայն արարեալ՝ ետ կանգնել ՚ի դաշտին Դուրայ զոսկի արձան իւր, և անհնարին սպառնալեօք ստիպեաց զա՟մենսին յերկրպագութիւն պատկերի իւրոյ ։ Եւ ՚ի չառնուլ յանձն երից մանկանց Եբրայեցւոց , որք ընկերակից էին Դանիէլի՝ արկան նոյն ժամայն ՚ի հնոց հրոյն բորբոքելոյ, յորմէ սքանչելեօք անվտանգ ելին ։ Զարմացեալ ընդ այն արքայն՝ պատուեաց զնոսա, և հրովարտակաւ դրոշմեաց զմեծութիւն Ա՟յն Հրէից ։ Ապա տիրեալ բովանդակ Արևելից՝ պաշարեաց և զբազմահարուստ զամուր քաղաքն զՏիւրոս զամս երեքտասան , և էառ զայն ։ Արար և զայլ պէսպէս երևելի շինուածս 'ի Բաբելոն. և գեղեցկացոյց զայն յոյժ յոյժ:

Բայց զկնի այսքան մեծամեծ յաջողուածոց բարձրամտեալ նորա՝ կորոյս զբանական միտս իւր. և զամս եօթն շրջէր յանտառս որպէս զգազան կատաղի: Յետ որոյ 'ի զգաստութեան եկեալ՝ նստաւ անդրէն յաթոռ թագաւորութեան իւրոյ, և զկնի միոյ ամի վախճանեցաւ:

Դ: Ո՞Վ ԹԱԳԱՒՈՐԵԱՑ ԶԿՆԻ ՆՈՐԱ. ԵՒ Ո՞ՐՔ ԵՂԵՆ ՅԱՋՈՐԴՔ ԻՒՐ ԱՅՍ ՄԵԾԱՆՈՒՆ ՀԶՕՐ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ:

Ե: Որդի նորին ԵՒԻԼՄԱՐՈՎԴԱՔ ամս երկու. 3442
զոր ՆԵՐԻԳԼԻՍԱՐ քեռայր նորա սպան վասն զեղխ 562
և մոլի բարուցն, և թագաւորեաց ինքն փոխանակ նորա ամս չորս. և ապա որդի նորա ԼԱԲՈՐՈՍՈԱՐՔՈԴ ամիսս ինն: Սմա յաջորդեաց որդի Եւիլմարովդաքայ ԲԱՂԴԱՍԱՐ. որոյ խաղացեալ պատերազմաւ ընդդէմ Մարաց և Պարսից՝ 'ի պարտութեան մատնեցաւ, և կորագլուխ դարձաւ յետս: Յետ ժամանակաց թշնամիք եկին և պաշարեցին զքաղաքն Բաբելոն. իսկ Բաղդասար ընդ ամի յանհոգս եղեալ՝ արար մեծ կոչունս իւրոց նախարարաց և ծառայից. և այն ինչ ամենքն առ հասարակ ուրախ լինէին ընդ թագաւորին՝ տեսին զթաթ ձեռին մարդոյ, որ դրօշմէր 'ի վերայ որմոյ սենեկին զայս երիս բանս. ՄԱՆԷ, ԹԵՔԷՂ, ՓԱՐԷՍ: Զահի հարեալ

արքային՝ ետ վաղվաղակի կոչել զմոգս և ըղձգէտս՝ զի մեկնեսցեն զայն · և սակայն ոչ ոք կարաց · հուսկ յետոյ մարգարէն Դանիէլ եկն, և զայս մեկնումն ետ բանիցն այնոցիկ ։ **Չափեայ, կշռեայ, և բաժանեայ** · այսինքն՝ չափեաց Ա՟Ծ զթագաւորութիւն նորա, և վախճանեաց զնա · կշռեաց զգործս նորին, և գտան պակասեալ · ուստի բաժանեաց զնորայն թագաւորութիւն, և ետ Մարաց և Պարսից ։

Արդարև 'ի նմին գիշերի թշնամիք մտին 'ի ներքս 'ի քաղաքն, և սպանին զարքայն Բաղտասար · որով և այն ահաւոր թագաւորութիւն ջնջեցաւ իսպառ յամի 3466 ։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ։

ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

այն է Մարաց և Պարսից ։

Հ. Յումմէ՞ սերեցան Մարք (Մեդարք) և Պարսիկք ։

Պ. Մեդացիք կամ Մարք սերեցան 'ի Մադայեայ որդւոյ Յաբեթի ։ Իսկ ազգն Պարսից սերեցաւ 'ի Յեղամայ որդւոյ Սեմայ ։

Հ. Զի՞նչ կառավարութիւն ունէին նոքա 'ի սկզբան անդ ։

Պ։ Ոչ ինչ հաւաստի աւանդեալ 'ի հնախօսից զկառավարութ՟է նախնի Մարաց և Պարսից. և սակայն զայս մի ինչ գիտեմք անվթար, եթէ զի նոքա անդստին 'ի սկզբանէ ունէին իւրեանց գլուխս կամ պետս հարկատուս ինքնակալաց Ասորեստանեայց, մինչև ցաւուրս Սարդանապաղայ արքայի. յորում Արբակէս իշխան Մեդացի միաբանեալ ընդ իւր զնահապետն մեր զՊարոյր, և զիշխանն Բաբելացւոց զԲեղեսիոս, խաղաց զօրու ծանու 'ի վ՟ր արքային այնորիկ, և եռամեայ պաշարմամբ առեալ զաթոռանիստ քաղաքն զՆինուէ, կացոյց փոխան նորա զայլ թագաւոր՝ զԹագղաթփաղասար. և ինքն դարձ արար 'ի տեղի իւր ։ Աստէն սկիզբն առնու թագաւորութ՟ին ազգիս մերոյ։

Հ։ Ո՞վ եղեւ առաջին թագաւոր Մարաց.

Պ։ Մարք չունէին բնաւ 'ի սկզբան անդ քաղաքս և օրէնս. այլ բնակէին ցրիւ ը՟ դաշտավայրս. և բազում անկարգութիւնք լցեալ էր աշխարհ նոցա ։ Այլ յամին 3294 միաբան հաւանութ՟բ ազգին թագաւորեալ 'ի վերայ նոցա Դէիոկէս կամ Դէիոկիէս՝ սկիզբն կալաւ շինել զԷկբատան քաղաքն, կարգել զօրէնս և մուծանել յազգի իւրում զքաղաքականութ՟ի ։ Սա կոչի և Արփաքսադ ։

Հ։ Ո՞Վ յաջորդեաց Դէյոկեայ ՚ի թագաւորութեանն ։

3347 Պ։ Որդի նորա Փրաորտ ․ որոյ գոլով այր
657 սէգ և քաջամարտիկ՝ նուաճեաց ը̄ իւրով իշխանութ̄բ զՊարսս, և զմի մեծ մասն Ասիոյ ․ այլ ՚ի դիմել յետոյ մարտիւ ՚ի վ̄ր Ասորեստանեայց, և ՚ի պաշարել զՆինուէ՝ սպանաւ ՚ի Նաբուգոդոնոսորայ առաջնոյ ։

Հ։ Ո՞Վ թագաւորեաց զկնի Փրաորտայ ։

Պ։ Որդի նորա Կիաքսար կամ Կիւաքսարէս ։ Սա լուեալ՝ թէ զօրք Ասորեստանեայց կոտո-
3369 րեցան մերձ Բեթուելի յարքայուէ անդ Յուդթի,
635 ժամանակ պատեհաւոր համարեալ զայն՝ հաստատեցաւ ՚ի թագաւորութ̂ե իւրում ․ և հետ ընդհետէ տիրեալ զանազան կողմանց բարձր Ասիոյ՝ ընդարձակեաց զտէրութիւն իւր ։ Բայց Սկիւթացիք անհամար բազմութ̄բ գրոհ տուեալ ՚ի վ̄ր աշխարհին այնմիկ, զամս իբր քսան անհանգիստ արարին զԿիաքսար ։ Իսկ յետոյ ՚ի խնճոյս իմն ետ նա կոտորել զմեծ մասն նց̄, և զմնացեալսն արար հալածական ։ Յետ ժամանակաց իմն ծագեցաւ պատերազմ ՚ի մէջ նորա և Ալիաթայ թագաւորին Լիւդացւոց, և տեւեաց ամս իբր հինգ ․ այլ միջնորդ լեալ Նաբուգոդոնոսոր մեծ՝ հաշտեցոյց զնոսա ։ Այս սա կամելով առնուլ զվրէժ վ̄ս մահուան հօր իւրոյ՝ միաբանեցաւ ընդ արքային Բաբե-

լացուց, և յաղթահարեալ զԱսորեստանեայս՝ բազում աւարաւ դարձաւ յաշխարհ իւր ։

Ժ. Ո՞Վ ՅԱՋՈՐԴԵԱՑ ԿԻԱՔՍԱՐԱՅ. ԵՒ ԶԻ՞ՆՉ ԻՆՉ ՊԱՏՄԻ ԶԿԻՒՐՈՍԷ ։ 3409 595

Պ։ Որդի նորա Աժդահակ Աստիագէս, որոյ թոռն եղև դիւցազն Կիւրոս ։ Պատմի՝ թէ Աժդահակ յառաջ քան զթագաւորել իւր, մինչդեռ գահակից էր հօր իւրում՝ ետես յանուրջ միում յերազի՝ զի 'ի բերանոյ եկդ դստեր իւրոյ Մանդանեայ հոսէր ջուր յորդութ՟ և լընոյր զա՟մ քաղաքն, և ճապաղէր յա՟մ Ասիա ։ Կոչեաց զմոգս, և եհարց ցնոսա վասն երազոյն. և նոքա ասեն. աղջիկդ հանդերձեալ է ծնանիլ զայնպիսի ոք, որ ունի իշխել համօրէն Ասիոյ ։ Խիթացեալ Աժդահակայ ը՟ այն՝ ոչ ամուսնացոյց զաղջիկն ը՟ իշխանաւորի ումեմ՟ 'ի Մարաց, այլ ընդ Պարսիկ նախարար ոմ՟ Կամբիւս անուն ։

Յետ որոյ իբրև ծնաւ Կիւրոս 'ի Մանդանեայ և 'ի Կամբիւսայ, այն է յամի աշխ. 3405, հրամայեաց Աժդահակ 'ի ծածուկ սպանանել զնա. բայց պահպանեալ նորա 'ի հովուէ միոջէ, և հասեալ 'ի չափ հասակի՝ գնաց առ հայր իւր Կամբիւս, և անդ ոչ անագան եցոյց զանձին առուգութի՟ և զսրտին քաջութի՟. որոյ վասն հայր նորա Կամբիւս կարգեաց զնա սպարապետ զօրաց իւրոց ։ Միաբանեալ ապա Կիւրոսի ը՟

Տիգրանայ արքային մերոյ, խաղաց պատերազմաւ 'ի վ՟ր Աժդահակայ ․ որոյ 'ի սպանանելն ձեռամբ քաջին Տիգրանայ, դիւցազն Կիւրոս թագաւորեաց 'ի վերայ Մարաց ․ և յետ հօր իւրոյ նաև 'ի վ՟ր Պարսից ։ Այսորիկ այսպէս յաջողելոյ՝ ել Կիւրոս համդերձ Տիգրանաւ 'ի պատերազմ ընդդէմ Կրեսոսի թագաւորին Լիւդացւոց, որ գրգռեալ էր զայն առ 'ի վրէժս առնուլ 'ի նմանէ վասն մահուան փեսայի իւրոյ Աժդահակայ ․ և մարտ եդեալ յաղթահարեաց զնա ։ Դիմեաց անտի 'ի վ՟ր Բաբելոնի, և առեալ զայն՝ թագաւորեցոյց զԴարեհ զքեռի իւր՝ զորդի Աժդահակայ փոխանակ Բաղտասարայ ․ այս այն Դարեհ է, որ եարկ զմարգարէն Դանիէլ 'ի գուբ առիւծուց ։ Այլ նա ինքն Կիւրոս յետ անցանելոյ երկուց ամաց՝ պատերազմեալ և ընդ քեռւոյ իւրում Դարեհի՝ ինքն թագաւորեաց 'ի Բաբելոն ․ և յայտնեցաւ միահեծան թագաւոր Պարսից, Մարաց, Ասորեստանեայց և Բաբելացւոց ։ Յետ որոյ 'ի լնուլ եօթանասուն ամաց գերուե՟ Եբրայեցւոց՝ հրամայեաց ետ նոցա գնալ յաշխարհ իւրեանց և շինել զտաճարն Ա՟յ յԵ՟րղմ ։

Զկնի սակաւուց չոքաւ Կիւրոս 'ի պատերազմ 'ի վ՟ր Թոմիրեայ թագուհւոյն Սկիւթացւոց, և կոտորեաց զզօրս նորա, և զբազումս 'ի նոցանէ գերեաց ․ ընդ որս և զորդի այնր

Թագուհւոյն․ որ իբրև լո՛ւաւ զայն՝ բազում աղաչանս մատոյց առ Կիւրոս՝ զի արձակեսցէ զորդին իւր․ և յոչ զիջանել Կիւրոսի 'ի խնդրո՛ւածս նորա՝ ել վերստին Թագուհին 'ի պատերազմ 'ի վերայ Կիւրոսի, և խաբանօք կեղծ փախստեան ընկեց զնա 'ի մացառս դժո՛ւարինս․ ուր և կորեաւ Կիւրոս ինքն և երկերիւր հազար արք ը̃ նմա։

Ասի թէ գտեալ Թագուհւոյն այնորիկ զդի Կիւրոսի՝ եհատ զգլուխ նորա, և եարկ 'ի տիկ լի արեամբ մարդոյ․ և ապա ասէ ցաւագլխն․ ԱՆԳՈՒԹ ՅԱԳԵԱ՛Ց ԱՐԵԱՄԲ ՅԵՏ ՄԱՀՈՒԱՆ, ՅՈՐ ԱՆՅԱԳ ԷԻՐ 'Ի ԿԵԱՆՍ ՔՈՅ։

Հ․ Ո՞Վ ԹԱԳԱՒՈՐԵԱՑ ԶԿՆԻ ԿԻՒՐՈՍԻ։ 3475

Պ․ Որդի նորա ԿԱՄԲԻՒՍ, այր անողորմ, 536 յանդուգն և զեղխ։ Սա 'ի չոր̃դում ամի Թագաւորուե̃ իւրոյ ել 'ի պատերազմ ընդդէմ Եգիպտացւոց, որք ապստամբեալ էին յիշխանուէ̃ իւրմէ, և վերստին նո՛ւաճեաց զնոսա։ Առաքեաց ապա անտի հրեշտակս առ արքայն Եթէովպացւոց բարեկամուէ̃․ իսկ նա լրտեսս համարեալ խոժոռ հայեցաւ ընդ նոսա․ և առեալ զաղեղն մի մեծ և լայնալիճ՝ լարեաց ուժգին, և ասէ ցնոսա․ յայնժամ Պարսիկք իշխեսցեն խորոխտալ 'ի վերայ Եթէովպացւոց, երբ կարասցեն մի ոք 'ի նոցանէ 'ի կիր արկանել զաղեղն մեծ այսպիսի։ Եւ յոչ կարել միո ուրուք 'ի նոցանէ լարել զայն աղեղն՝ Սմերդ եղբայր Կամբիւսայ եառ զայն և լարեաց : Իսկ Կամբիւս նախանձեալ ընդ քաջուե՟ն եղբօր իւրոյ՝ առաքեաց զնա 'ի Պարսս , և ետ սպանանել . քանզի և յառաջնմէ իսկ կասկածէր զնմանէ : Եւ ապա խաղաց զօրու ծանու 'ի վր̃ Եթէովպացւոց . բայց մեծ մասն զօրաց նորա եղեն աւազահեղձոյց . բազումք ևս առ քաղցի կերան զիրեարս . որով և ստիպեցաւ անդրէն դառնալ յԵգիպտոս :

Մինչդեռ Կամբիւս էր անդ՝ Պարզիտ այր մի , զոր նա ինքն թողեալ էր կառավար երկրին , ապստամբեալ 'ի նմանէ՝ հուչակ եհան՝ թէ Սմերդ եղբայր Կամբիւսայ չէ՛ սպանեալ, այլ տակաւին կայ կենդանի . և զի ունէր ինքն զեղբայր մի Սմերդ անուն՝ նման եղբօր Կամբիւսայ , զնա թագաւոր կացոյց 'ի տեղի արքային : Սա է ՍՈՒՏ ՄՈԳՆ, որ և կոչի Ս[illegible] . որոյ անունն կայ 'ի ս̃բ գիրս . Ա̃ Եզր. Դ̃ . և այլն : Իբրև լուաւ զայն Կամբիւս՝ աճապարեաց եկն առ 'ի կորուսանել զբռնաւորն . այլ յելանել իւրում յերիվար՝ խոցեցաւ 'ի կողս 'ի սրոյ իւրմէ, որ ելեալ էր 'ի պատենից . և յետ սակաւուց մեռաւ :

3483 Հր̃: Ո՞Վ ԱՊԱ ՅԱՋՈՐԴԵԱՑ 'Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԱՐՍԻՑ :

521 Պ: Քանզի ոչ դոյր ժառանգ Կամբիւսայ*

Դարեհ որդի Վշտասպեայ՝ մի յեօթն նախարարաց թագաւորութեան ընտրեցաւ արքայ 'ի տեղի նորա ։ Սա կոչեցաւ Արտաշէս Երկրորդ . որ առ հաստատուն ունելոյ զթագաւորութիւն իւր՝ եած 'ի կնութիւն զերկոսին դստերսն Կիւրոսի . և զկնի ժամանակաց ինչ ամուսնացաւ ևս ընդ Եսթերայ դստեր հօրեղբօր Մուրթքեի . և հրամայեաց Հրէից 'ի կատար հասուցանել զշինուած տաճարին ։ Ապա լուր առեալ թէ վտարանջեալ են Բաբելացիք՝ գնաց և նուաճեաց անդրէն զնոսա ընդ իւրև . և խաղացմամբ 'ի վերայ Սկիւթացւոց, կամելով խնդրել 'ի նոցանէ զվրէժ վասն բազմադիմի տառապանաց , զոր հասուցեալ էին իբր հարիւր ամօք յառաջ աշխարհի իւրում ։ Այլ սակայն Սկիւթացիք հնարիւք ձգեալ զնա հանդերձ զօրօք իւրովք յանջրդին և յաւազուտ վայրս՝ առաքեցին առ նա 'ի պարգև զթռչուն մի , զմի մուկն և զմի գորտ հանդերձ հինգ նետիւք , առանց իրիք բանի բացայայտութեան ։ Զայն իմաստ մեկնեալ Դարեհի՝ ըստ յանդուգն սեգ բնաւորութեան ոգւոյն վարկաւ , թէ այնու մկամբ և գորտով Սկիւթացիք խոնարհին զհող և զջուր , զոր նոքա տային նմա . իսկ թռչունն և հինգ նետիւքն նշանակէին զարագաշարժութիւն երիվարաց և արանց Պարսից ։ Բայց նախարար ոմն Պարսիկ այլազգ մեկնեաց զայն նմա . գիտեա՞ ասէ , ո՛վ Արքայ մեծ՝ զի եթէ ոչ սլանաս յերկինս իբրև զթռչունս , կամ ոչ թագչիս ը̄ երկրաւ իբրև զմկունս , և կամ եթէ ոչ սուզանիս 'ի խորս ջուրց իբրև զգորտս՝ ոչ կարես ճողոպրել 'ի նետից Սկիւթացւոց ։ Զգաց Դարեհ զճշմարտութի̄ այսր մեկնութե̄ , և դէմ յանդիման տեսեալ զմեծ վտանգ զօրաց իւրոց՝ եթող զթշնամիս 'ի բաց և դարձաւ ը̄ կրունկն ։

Յետ այսր ձախորդութե̄ պատրաստեաց զնաւահանգիս մեծ , և յանձն արարեալ քաջահմուտ ծովակալի ումեմն՝ որ էր ազգաւ Յոյն՝ առաքեաց 'ի Հնդիկս, առ 'ի գիտել զետափնեայ վայրաց այնր աշխարհի · զկնի սակաւուց գնաց և ինքն և տիրեաց այնոցիկ կողմանց ։ Այլ մինչդեռ էր նա անդր՝ լուաւ եթէ Յոյնք փոքուն Ասիոյ ապստամբեալ յինքենէ՝ ձեռնտուութ̄բ Աթենացւոց և Հերետրիացւոց այրեալ են զքաղաքն Սարդայ ։ Յաղագս որոյ շտապ տագնապաւ դարձ արարեալ անտի՝ առաքեաց զօրս 'ի Յոնաստան , և տիրեալ կղզեաց Եգեոն ծովուն՝ այրեաց զաթոռանիստ քաղաքն Հերետրիացւոց ։ Բայց յետոյ զօրք նորա չարաչար կոտորեցան յԱթենացւոց 'ի դաշտին Մարաթոնայ ։

3518 Հ։ ՈՎ ԹԱԳԱՒՈՐԵԱՑ ԶԿՆԻ ԴԱՐԵՀԻ ։

486 Պ։ Որդի նորա ՔՍԵՐՔՍԷՍ ԱՌԱՋԻՆ · որ յետ նուաճելոյ անդրէն ը̄ իշխանութ̄բ իւրով զվտարանդեալ Եգիպտացիս , կամեցաւ բուռն զօ-

բուռն խաղալ պատերազմաւ 'ի վերայ Յունաց . նմին իրի խաղաղութիւն խօսեցաւ ընդ Կարկեդոնացիս , որք էին հզօրք 'ի պատերազմի՝ առաքեաց զնոսա 'ի Սիկիլիա և յԻտալիա՝ նեղել զՅոյնս և զբնակիչս այնոցիկ կողմանց . իսկ ինքն պատրաստեալ զամն երիս , և կազմեալ գումարտակ հազար և երկու հարիւր նաւուց՝ յարձակեցաւ երկու միլիոն զօրօք 'ի վերայ Յունաստանի , և այրեաց զքաղաքն Աթենացւոց . որոյ բնակիչքն թողեալ էին զայն ամայի : Այլ 'ի յառաջ խաղալ նորա՝ Յոյնք չարաչար հարուածս հասուցին 'ի զօրս նորին հետ զհետէ մերձ 'ի Սաղամինէ , 'ի Պղատէ և 'ի Միուկալէ , և ստիպեցին զնա կոր 'ի գլուխ դառնալ 'ի տեղի իւր :

Եւ յայնմ հետէ Պարսիկք ոչ ևս վստահացան երթալ 'ի Յունաստան . այլ պատսպարէին զանձինս, պահպանելով զՅոյնս յազգային երկպառակութիւնս :

Պատմի՝ թէ յառաջ քան զխաղալ Քսերքսեայ ընդդէմ Յունաց, ցանկացաւ տեսանել միահաղոյն զանհամար բազմութիւն զօրաց իւրոց . ուստի ելեալ 'ի բարձրադիտակ տեղի , իբրև ետես՝ թէ որ է այնքան ահագին բազմութիւն՝ զառաջինն զուարճացաւ յանձն իւր . այլ յետոյ զմտաւ ածեալ՝ թէ զկնի անցանելոյ հարիւր ամաց ոչ ոք 'ի նոցանէ ունէր մնալ կենդանի , հարա յարտասուս, և ելաց 'ի վ՟ր թշուառութեան մարդկային վիճակի ։

Այս արքայ եղև հզօրագոյն քան զբազումս, և տիրեաց բազում տեղեաց ․ այլ 'ի վերջին ամս թագաւորութեան իւրոյ 'ի սկսանել նորա օր քան զօր փափկանալ և անկարգանալ՝ սպանաւ յԱրտաւանայ սենեկապետէ իւրմէ ․ և յաջորդեաց նմա կրտսեր որդի նորին Արտաշէս ԵՐԴ ։

Հ։ Զի՞նչ պատմի զսմանէ ։

3539 Պ։ Սա ունելով զաջ բազուկ կամ զձեռն
Քա յռջ երկայն քան զձախն, կոչեցաւ Երկայնաբազուկ կ՟մ
3531 Երկայնաձեռն ․ և նախ քան զժառանգելն խաղաղութ՟բ զիշխանութ՟ի իւր՝ հարկ եղև նմա մարտնչել ընդ հզօր համախոհս Արտաւանայ, և եղբօր իւրոյ Հիւստասպեայ ․ զորս նկուն արար, բայց արեան ճապաղիս գործելով 'ի զօրս նոցա ։

Արդ իբրև հաստատեցաւ 'ի թագաւորութեան իւրում՝ թոյլ ետ Հրէից պաշտել զճշմարիտ Ա՟ծն, և ըստ նախնի օրինաց իւրեանց վարել ։ Եւ ապա 'ի պատերազմ ընդդէմ Բակտրիացւոց և յաղթահարեաց զնոսա ։ Ընկալաւ պատուով զերևելի սպարապետն Աթենացւոց ըզԹեմիստոկլէս, որ խոյս տուեալ յաշխարհէ իւրմէ՝ դիմեալ էր խնդրել զհովանաւորութիւն ։ 'Ի ժամանակս սորա Եգիպտացիք կրկին ապստամբեալ՝ օգնականութ՟բ Աթենացւոց նշկահեցին զիշխանութիւն Պարսից․ բայց յետ սակաւուց անդրէն դարձաւ 'ի հնազանդութիւն։

Ճ։ Ո՞Վ ՅԱՋՈՐԴԵԱՑ ԱՐՏԱՇԷՍԻ ԵՐՐՈՐԴԻ։

3580 424 Գ։ Որդի նորա Քսերքսէս երկրորդ։ Սոգդիանոս ապօրինաւոր որդի Արտաշեսի, յետ թագաւորելոյ Քսերքսեայ աւուրս 45 միայն․ ըստ այլոց զամ մի, յանկարծ յարուցեալ 'ի վերայ նորա սպան զնա, և յինքն գրաւեաց զիշխանութիւն թագաւորութեան։ Բայց չև ևս կացեալ սորա ամիս եօթն՝ սպանաւ և ինքն յերկրորդ Դարեհէ յեղբօրէ իւրմէ Ոխոս անուանելոյ․ որ և թագաւորեաց փոխանակ նորա՝ կորոյս զայլ միւս ոմն յեղբարց իւրոց, որ զէնս առեալ յարձակեալ էր 'ի վերայ նորա։ Ընդ այն ժամանակս պարապ գտեալ Պիւզութնայ գաւառապետն Լիւդացւոց՝ ապստամբեցաւ 'ի Դարեհէ, և ըսկսաւ ինքնագլուխ իշխել 'ի վերայ աշխարհին իւրոյ։ Զայն լուեալ Դարեհի՝ գունդս զօրաց արձակեաց անդ առ 'ի զբռամբ ածել զբռնակալն․ իսկ նա զօրաժողով լեալ՝ ընդ երկար պահպանեաց ազատ զայն աշխարհ․ բայց 'ի վաղճանի թողեալ 'ի համախոհից իւրոց՝ անկաւ 'ի ձեռս Դարեհի և սպանաւ։

Առ թագաւորութեամբ սորա Եգիպտացիք վերստին ապստամբեալք՝ վարեցին յաշխարհէ իւրեանց զամենայն զՊարսիկս, և կացուցին ինքեանց թագաւոր զԱմիրթեոս ոմն։ Զայն լուեալ Մարայ՝ փութացան և ինքեանք զնոյն առնել. բայց Դարեհ զօրս առաքեալ 'ի վերայ նոցա՝ եհան 'ի զգաստութի.

3599 Ժ: Ա'Հ յաջորդեաց Դարեհի ։

405 Դ: Երէց որդին նր̃ Արտաշէս երկրդ՝ կոչեցեալն Մնեմոն առ մեծի յիշողականութեան իւրոյ. և էր սա այր բարեբարոյ և մարդասէր, թէպէտև կարի վավաշոտ. մինչև ը̃ս ոմանց ծնանիլ հարիւր հնգետասան որդիս ։ Կիւրոս կրտսեր եղբայր նր̃, որում Դարեհ 'ի կենդանութեան իւրում տուեալ էր զիշխանութիւն 'ի վր̃ փոքր Ասիոյ, նախանձաբեկ լեալ՝ 'ի միտի եդ կորուսանել զնա, և յինքն կորզել զթագաւորութիւն ։ Զայն զգացեալ Արտաշէսի՝ ընկէց զնա յիշխանութենէ իւրմէ, և կամեցաւ 'ի մահ մատնել զնա. այլ յետ սակաւուց ներեալ յանցանաց նր̃՝ վերստին հաստատեաց զնա յաթոռ իշխանութեան իւրոյ ։ Վեհանձն գործ արքային ոչինչ այլայլութի գործեաց 'ի սիրտ դժնեայ երիտասարդին Կիւրոսի. որոյ ժողովեալ զհարիւրտասնևերեք հազար ոգիս՝ խաղաց ընդդէմ եղբօր իւրոյ Արտաշէսի. իսկ սա սոսկացեալ ընդ այնքան ապիրատութի եղբօրն՝ ել և ինքն զօրու ծանու ընդդէմ Կիւրոսի՝ և չարաչար կոտորեալ զզօրս նր̃՝ իւրով ձեռամբ սատակեաց զնա ։ Ապա ետ պատերազմ Յունաց և այլոց շրջակայ ազգաց, և յաղթանակեաց ն̃ց ։ Յետ այսր ամի իբրև մերձեցան աւուրք

կենաց իւրոց՝ անուանեաց ինքեան յաջորդ զանդրանիկ որդի իւր զԴարեհ. որոյ անհանդուրժ լեալ երկարութեան կենաց հօրն՝ կամեցաւ կարճել զայն դարանօք. զոր լուեալ Արտաշեսի՝ սպան զնա. և յայնժամ Ոքոսն եկդ որդի նր̃ մնաց ժառանգ թագաւորութե̃ն։

Հ։ Ո՞չինչ պատմի կողմանէ։ 3643

Պ։ Ոքոս որ և Արտաշէս հնգերորդ կասկած առեալ՝ թէ Արշամ և Արիասպ խորթ եղբարք իւր կամին բռնութ̃ յինքեանս գրաւել զիշխանութի̃ թագաւորութե̃ն՝ եբարձ զնոսա ՚ի միջոյ։ Զայն իբրև լուաւ Արտաշէս չորրորդ՝ անկաւ ՚ի տրտմութի̃ մեծ, և զկնի սակաւուց մեռաւ։ Ապա ևս քան զևս երկուցեալ Ոքոսի՝ թէ մի՛ գուցէ ՚ի համբաւիլ մահու հօր իւրոյ՝ նախարարքն արհամարհեսցեն զինքն վասն ժանտ բարուց իւրոց, և զայլ ոք յեղբարցն ՚ի տեղի իւր թագաւորեցուսցեն՝ գուն գործեաց զամիս տասն գաղել զմահ հօր իւրոյ. և եհան հրաման ՚ի դիմաց նորա, թէ կամէր նա՝ զի զկնի իւր Ոքոսն նստցի թագաւոր։ Իբրև այնու օրինակաւ հաստատեցաւ յիշխանութե̃ իւրում՝ կոտորեաց զութսուն ոգիս յեղբարց իւրոց, և կորոյս զբզ̃մն ՚ի մերձաւոր ազգականաց և յերևելի նախարարաց. որք ամենեքին չունէին զայլ յանցանս, բայց միայն զի էին բարեհամբաւք և քաղցրաբարոյք։ Բայց մի ոմն ՚ի նախարարաց անտի Բագոաս անուն՝ 350 ճողոպրեալ յայնմ անագորոյն կոտորածէ՝ ժողովեաց առ իւր զբազմութիւն արանց Պարսից և այլոց շրջակայ ազգաց, և 'ի դիմի հարեալ զօրաց անօրինին՝ զորս նա առաքեալ էր ընդդէմ սորա, կոտորեաց զամենայն ։ Յայնժամ ոճրագործն Արտաշէս կամելով հնարիւք բառնալ զԴակդամ 'ի կենաց՝ առաքեաց առ նա զմի ոմն 'ի նախարարաց իւրոց. որոյ գնացեալ անդր՝ առ սակաւ սակաւ յինքն յանկոյց զսիրտ Դակդամայ. և յաւուր միում զնա գտեալ ամենեւին անզէն և անօգնական, յանկարծուստ յարձակեցաւ 'ի վերայ նորա, և դաշնակաւ բազում հարուածս 'ի նա արարեալ՝ եբարձ 'ի միջոյ ։

Ընդ այն ժամանակս Փիւնիկեցիք կամեցան զանձինս թօթափել 'ի լծոյ ծառայութեան Պարսից. սակայն Արտաշէս զօրու ծանու փութանակի խաղացեալ 'ի վերայ նոցա՝ զառաջինն գնաց պաշարել զՍիդոն. որոյ բնակիչքն թուով քառասուն հազար՝ մատնեալք 'ի չորս հազար արանց Յունաց խառն ընդ ինքեանս բնակելոց՝ փակեցան 'ի ներքս տանց, և հուր արկեալ յամենայն կողմանց այրեցան ։ Յետ այնորիկ տիրեալ Արտաշեսի ամենայն գաւառաց Փիւնիկեցւոց, և Կիպրոսի և Եգիպտացւոց՝ սփիւռ տարածեաց ամենայն ուրեք զդժնդակութիւն բնութեան իւրոյ ։

Հուսկ ուրեմն ներքինի ոմն Եգիպտացի Բագու անուն՝ մտերիմ սիրելի արքային, դեղ մահու արբուցեալ նմ՟ եբարձ զնա 'ի կենաց, և 'ի տեղի նր՟ հաստատեաց 'ի թագաւորութեան զկրտսերագոյնն յորդւոց նորին զԱրշէս, և զայլ ամ՟ եղբարս նր՟ սպան մի զկնի միոյ։

Հ: Զի՞նչ պատմի սմանէ ։

Պ: Արշէս կամ Արսամէս փութով 'ի վերայ 3665
հասեալ արեանարբու բարուց Բագուայ, և 339
երկուցեալ թէ մի՛ գուցէ և ինքեան զնոյն չարիս հասուսցէ նա, կամեցաւ ձողոպրել 'ի նմանէ. այլ Բագու քաջակիրթ յոճրագործութիւնս առաւել քան զԱրշէս՝ վաղվաղեալ ինքն եբարձ զնա 'ի կենաց հանդերձ ամ՟ ընտանեօքն։

Հ: Զի՞նչ այլ ինչ արար Բագու. և զիա՞րդ կատարեցաւ հզօր իշխանութիւն Պարսից ։

Պ: Կոդոմանոս որդի Արշամայ և Սիսենգամբեայ քեռ Դարեհի Նոթոսի՝ մազապուրծ լեալ 'ի ձեռաց Արտաշէսի Ոքոսի, անյայտ մնացեալ էր մինչև ցմեռանիլ բռնաւորին. զսա Բագու յետ Արշէսի կացոյց թագաւոր, համարելով թէ նոյնպէս յաջողեսցի ինքեան 'ի դիմաց նր՟ վարել զիշխանութի՟ թագաւորութեն՟. բայց ոչ անագան տեսեալ՝ թէ յայսմ նուագի վրիպեցաւ 'ի յուսոյն՝ դեղ մահու պատրաստեաց նմա. և սակայն նախազգած լեալ Արքային այնմ՝ բռնի արբոյց նմա զնոյն, և զանօրէնն եբարձ 'ի միջոյ։

Զայսու ժամանակաւ մեծն Աղեքսանդր անցեալ յԵւրոպիոյ յԱսիա՝ սկսեալ էր հռչակ սփռել զանձնէ բազմադիմի քաջութբ և յաղթանակութբ իւրով : Զայն իբրև լուաւ Կոդոմանոս, որ Դարեհ էրդ անուանեցաւ, փութացաւ անյապաղ զդէմ ունել սաստիկ յորձանաց հզօր թշնամւոյն . ուստի զօրաժողով լեալ խաղաց ՚ի վերայ արքային Մակեդոնացւոց . այլ յաղթահարեալ երիցս անգամ ՚ի նմանէ, և ՚ի նեղ անկեալ՝ խուսեաց ՚ի Մեդիա . ուրանօր նենգութբ սպանաւ ՚ի Բեսսոս կուսակալէ Բակտրիոյ : Տե՛ս զնմանէ դարձեալ յեր. 257 :

Իսկ ՚ի մեռանել Դարեհի երդի՝ փոխման էառ թագաւորութին Պարսից, սկսեալ ՚ի Կիւրոսէ, յետ տևելոյ ամս 229 կամ 230 :

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

Դ. ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ,

այն է Յունաց կամ Մակեդոնացւոց:

Հ. Յորմէ՞ սերեցան Յոյնք :

Պ. ՚Ի յԱւանայ ՚ի չորդ որդւոյ Յաբեթի :

Հ. Զո՞րպիսի կենցաղավարութիւն ունէին նոքա ՚ի սկզբան անդ :

Պ. Յոյնք բնակէին ՚ի տաղաւարս կամ ՚ի խրճիթս աստ և անդ ցրուեալք . և էին ըստ ամե վայրենամիտ և տմարդի քան զա՟մ ազգս աշխարհի, առանց կառավարուե՟ և առանց քաղաքականուե՟։ Զկնի երկար ժամանակաց գաղթականք ոմանք յԵգիպտոսէ անցեալ անդ՝ սկիզբն արարին մուծանել ՚ի նոսա զկարգ օրինաց, և կրթել զնոսա ՚ի մարդապատշաճ վարս։

Հ. Ո՞վ ոք առաջինն էարկ հիմն միահեծան թագաւորութեան Յունաց։

Պ. Աղեքսանդր Մեծ անուանեալն՝ որդի Փիլիպպոսի արքային Մակեդոնացւոց։

Հ. Զի՞նչ պատմի զնմանէ։

Պ. Սա անդստին ՚ի մանկուե՟ իւրմէ մարզե՟լ յուսմունս առ ոտս իշխանին փիլիսոփայից Արիստոտելի՝ յառաջադէմ գտաւ յա՟մ կարևոր գիտուե՟ս և յազատական արհեստս․ ապա ՚ի ժամանել ՚ի հասակ քսան ամաց, յաջորդեաց հօր իւրում ՚ի թագաւորուե՟ Մակեդոնացւոց․ և զի էր սա ինքն այր հզօր և արիասիրտ, պատերազմասէր և փառամոլ՝ ՚ի սկզբան անդ թագաւորելոյ մտախորհ եղև ձգել ՚ի հնազանդուե՟ իւր զՅունաստան ողջոյն։ Յաղագս որոյ զառաջինն դիմեալ պատերազմաւ ՚ի վ՟ր Թեբայեցւոց՝ ՚ի բերան սրոյ կոտորեաց զն՟ս, և զք՟ղքս ն՟ց հարթայատակ քանդեաց։ Զայն լուեալ Աթենացւոց՝ զահի հարան յոյժ, և ինքնակամ անձնատուր եղեն նմ՟։ Իսկ յետ այնպէս ճոխանալոյ ն՟ր՝ յանձն արար Անտիպատրոյ սպարապետի իւրում 3648 816 զիշխանութ՟ն թագաւորութեան իւրոյ, և չու արար յԱսիա երեսուն հազար հետևակօք և հինգ հազար հեծելովք : Զայն լուեալ Դարեհի արքայի Պարսից՝ առաքեաց ընդդէմ նր՟ զբազմութ՟ն զօրաց իբրև հարիւր հազար արանց . որոց 'ի դիմի հարեալ՝ ոչ կարացին նովին բազմութբ՟ արգելուլ զՄակեդոնացիս յանցանելոյ զԿրանիք գետն Բիւթանիոյ : Աղեքսանդր յայնմիկ պատերազմի ոչինչ աւելի կորոյս, քան զերկերիւր ոգիս . այլ 'ի զօրաց Դարեհի կոտորեաց զարս քսաներկու հազար, և զերկուս հազարս գերեաց : Յետ այնորիկ խաղաց 'ի վր՟ Լիւդիոյ, Յոնիոյ և Կարիոյ, և տիրեալ ամ՟ի ձգեաց 'ի հնազանդութ՟ն իւր : Նուաճ ապա հետզհետէ զՊամփիւղիա, զԿապադովկիա, և զայլ ամ՟ գաւառս ստորին Ասիոյ : Զկնի այսր ամ՟ի կասկածեալ թէ գուցէ զօրականք իւր տաղտկասցին յանընդհատ պատերազմաց, և խուսափեալ ցրուեսցին՝ խորհրդով յետս առաքեաց զմեծ մասն նաւուցն՝ զորս բերեալ էր ընդ իւր յԱրևելս . և այնպէս ստիպեաց զամ՟ն կամ ընդ ինքեան մեռանիլ 'ի պատերազմի, և կամ տիրել համօրէն Ասիոյ :

Դիւցազն արքայս այս մուտ արարեալ յաղթանակաւ 'ի Կիւլիկիա՝ գնաց նոյնհետայն քրտնահար և փոշոտեալ լուանալ 'ի Կիդնոս գետն . որոյ վն՟ անկաւ 'ի հիւանդութ՟ն մեծ . Նաև

Պարմենիոն ընտրելագոյնն ’ի զօրապետաց իւրոց՝ գրով զգուշացոյց զնա յայնժամ՝ չհաւատալ բնաւ Փիլիպպոսի բժշկի իւրում. զի զնա ասէ՝ Դարեհ կաշառեալ է առ ’ի մատուցանել քեզ զդեղ մահու. բայց յետ սակաւուց իբրև եմուտ նոյն ինքն Փիլիպպոս ’ի սենեակ արքային, ետ նմա անվեհեր արիասիրտն Աղեքսանդր միով ձեռամբ զթուղթ Պարմենիոնի, և միւսովն առեալ ’ի ձեռանէ նր՟ զըմպելին, զոր նա բերեալ էր՝ էարբ զայն առանց իրիք կասկածանաց:

Եւ եղև յետ աւուրց ինչ իբրև առողջացաւ արին Աղեքսանդր՝ ել ’ի պատերազմ ’ի վր՟ Դարեհի, որ ահագին զօրու՟բ սպասէր նմ՟ առ Իսսոս քաղաքաւն: Վ՟ն զի տեսեալ Արքային Պարսից՝ թէ Աղեքսանդր զբզմ՟ տեղիս ’ի սահմանաց իշխանութե՟ն իւրոյ ոտնակոխ առնէր, և որքան զօր զօրացեալ նր՟ վտանգէր զհզօր Թագաւորութի՟ն իւր՝ ժողովեաց առ ինքն զա՟մ զցրուեալ զօրս Պարսից, Մարաց և այլ զանազան գաւառաց. որոց թիւն հասանէր ցչորս հարիւր վաթսուն հազար հետևակս, և ցհարիւր հազար հեծեալս. յորս էին և քառասուն հազար հետևակք, և եօթն հազար հեծելազօրք արքային մերոյ Վահեայ. և այնպիսի բուռն պատրաստութ՟բ դիմեաց ’ի վերայ Աղեքսանդրի, բնաջինջ առնել զնա: Եւ սակայն Թագաւորն Մակեդոնացւոց ոչինչ համեմատ զօրու՟բ ’ի դիմի հարեալ նմ՟՝ խորտակել կոտորեաց 'ի զօրաց նր՟ իբրև հարիւրհզ՟ր ոգիս, և 'ի գերուն՟ վարեաց զքառասուն հազար։ Իսկ ինքն Դարեհ մազապուրծ ճողոպրեալ՝ փախստեայ գնաց յերեսաց Աղեքսանդրի ։ Բայց 'ի զօրաց Մակեդոնացւոց վիրաւորեցան ը՟ Կորտիոսի միայն ոգիք իբրև հինգհարիւր, և ը՟ նմ՟ն անկան 'ի նոցանէ հետևակք երեսուն և երկու, և հեծեալք հարիւր և յիսուն ։ Յայնժամ պատերազմի գերեցան և մայր Դարեհի և կինն, և որդիք նորա, զորս Աղեքսանդր ետ պահպանել յանդորրու և հանգստութ՟ե ։

Յետ այսր կրկին յաղթութ՟ե բազում գաւառք և քաղաքք յօժարակամ մտին ը՟ իշխանութ՟բ Աղեքսանդրի ։ Իսկ Վահէ թագաւոր Հայոց այր սեգ և հզօր՝ առ ոչինչ գրեալ զպարտանիլ Դարեհի և զօրաց իւրոց իսկ, զորս առաքեալ էր յօգնականութ՟ն Պարսից, և զօրագումար լեալ 'ի հեռաւոր և 'ի մօտակայ ազգաց՝ դիմեաց յո-
332 խորտալով 'ի վերայ Մակեդոնացւոց. այլ 'ի պար-
3372 տութ՟ե մատնեալ սպանաւ նա ինքն 'ի պատերազմի
անդ. և այնուհետև աշխարհս Հայոց անկաւ ը՟ իշխանութ՟բ նոցա ։

Ել Աղեքսանդր և 'ի վր՟ Փիւնիկեցւոց, և պաշարեալ ամիսս եօթն զփարթամ քաղաքն զՏիւրոս՝ հիմնայատակ կործանեաց զայն, և զերկու հազար ոգիս՝ որք փախուցեալ էին յերեսաց զօրաց իւրոց՝ եւ հանել 'ի խաչ ։ Անդանօր եկին հասին հրեշտակք Դարեհի, զորս նա առաքեալ էր առ 'ի դնել զուխտ խաղաղութե՟ ընդ Աղեքսանդրի, խոստանալով նմ՟ զդուստր իւր 'ի կնութի՟, և զկէս թագաւորութե՟ իւրոյ ։ Այլ արքայն Մակեդոնացւոց արհամարհեաց զայն ասելով ։ Ո՛չ երկինք զերկուս արեգակունս տանին, և ո՛չ Ասիա զերկուս թագաւորս ։ Յայնժամ յառաջ մատուցեալ Պարմենիոն զօրագլուխն ասէ ։ Արդարեւ ես յանձն առնուի զայդ պայմանս յօժարակամ, եթէ Աղեքսանդր էի ։ և ես յիրաւի 'ի դոյն յօժարէի՝ ասէ Աղեքսանդր, եթէ Պարմենիոն էի ։ Ապա յետս դարձուցեալ զհրեշտակս Դարեհի գրեաց առ նա՝ զի պատրաստեսցի նորանոր պատերազմաց ։ Եւ ինքն խաղաց 'ի վր՟ Դամասկոսի, և տիրեաց ամ՟ գանձուց, զորս Դարեհ պահէր անդ ։ Եւ ապա չոգաւ յԵղ՟մ առ 'ի պատուհասել զբնակիչսն այն սակս՝ զի ոչ էին առաքեալ նմ՟ զօրս և հարկս ։ Բայց Յադդոս քահանայապետ նց՟ ընդ առաջ ելեալ Արքային՝ եցոյց նմ՟ զբանսն մարգարէին Դանիէլի ։ ուր ասի՝ թէ իշխան ոմն Յոյն համդերձեալ է կործանել զթագաւորութի՟ Պարսից ։ Զայն լուեալ Աղեքսանդրի՝ ուրախ եղև յանձն իւր, և ներեալ յանցանաց նց՟ եմուտ 'ի տաճարն, և մատոյց պատարագ Այ՟ ըս՟ ծիսին Հրէից ։ Յետ այնորիկ աճապարեաց պաշարել զԳազա, ընդ որ պարտ էր նմ՟ մնանել 'ի համօրէն նահանգն Եգիպտոսի · և մահառիթ վէրս ընկալեալ անդ՝ էառ զայն քաղաք, և զերկուս հազարս 'ի բնակչաց անտի ետ սրոյ ճարակ· իսկ զմնացեալսն վաճառեաց ։ Այլ որ կարի մեծապէս աղօտացուցանէ զանհամեմատ փառս Աղեքսանդրի մեծի՝ է՝ զի ետ նա յայնմ՝ քաղաքի զԲետիս կուսակալն կապել 'ի յաղթական կառս իւր, և անգթութ՟բ յածեցուցանել ը՟ ա՟մ փողոցս մինչև ցյետին շունչ կենաց ն՟ր ։

Ոչ անագան ահա և Եգիպտոս ետես զհզօրն Աղեքսանդր, և գլուխ խոնարհեցուցեալ ընկալաւ զօրէնս նորա · որոյ մտեալ 'ի մեհեան Դիոսի Ամմոնի՝ առ տարապայման ամբարհաւաճութ՟ե անձին զինքն որդի չ՟այն այնորիկ քարոզել ցնորեցաւ ։ Ապա թողեալ զԵգիպտոս՝ չոգաւ և հիմն էարկ հռչակաւոր քաղաքին Աղեքսանդրիոյ, և դարձ արար անդրէն 'ի Պաղեստին· և 'ի թիկունս թողեալ զԵփրատ և զՏիգրիս՝ յարձակեցաւ ահագին զօրու՟ք 'ի վ՟ր Դարեհի մերձ 'ի քաղաքն Արբեղայ 'ի կողմանս Ասորեստանեայց, և չարաչար խորտակեաց զնա· և անտի չոքաւ և մուտ արար 'ի Բաբելոն յաղթական հանդիսիւ ։ Յետ սակաւուց ել և գնաց 'ի Սիւսիս, և բազմեցաւ 'ի գահոյս Դարեհի· զկնի այնորիկ էանց 'ի Պերսեպօլիս և հրձիգ արար զմեծաշէն ապարանս Դարեհի ։ Եւ այն ինչ դիմէր 'ի վ՟ր Եկբատանու զհետ Դարեհի՝ լուր էառ, եթէ

Բեսսոս զօրավար ն՟ր սպանեալ էր զնա ։ Զկայէաւ անդէն Աղեքսանդր, և ելաց 'ի վ՟ր եղկելի արքային Պարսից ։

Իսկ Բեսսոս ապստամբեցուցեալ զԲակտրիացիս՝ կամեցաւ զդէմ ունել Աղեքսանդրի ․ բայց յարձակեալ Արքային 'ի վ՟ր ն՟ր՝ ձերբակալ արար զնա, և եհատ զունչս և զականջս նորին․ ապա ածել յԷկբատան՝ դառն տանջանօք եբարձ զնա 'ի կենաց ։ Յետ սակաւուց Աղեքսանդր արար կոչունս մեծ զօրավարաց իւրոց ․ յորում զկնի յանհնարինս արբենալոյ, ը՟ սովորութե՟ իւրում սկիզբն էառ մնապարծութ՟բ գովել զանձն, և զամ՟ գործս քաջութե՟ իւրոյ մի առ մի չափազանց ոճիւ պատմաբանել․ զորս համեմատեալ ընդ գործս արիութե՟ հօր իւրոյ Փիլիպպոսի արքայի, արհամարհեաց զնորայն և առ ոչինչ համարեաց ։ Զայն լուեալ բազմականացն՝ ամ՟քն առ հասարակ բողոքեցան 'ի բարկութ՟ի ․ և մանաւանդ որոց դտեալ էր ընդ Փիլիպպոսի արքայի յայն պատերազմունս, և կցորդ լեալ փառաց ն՟ր ։ Մին 'ի նոցանէ Կղիտոս անուն՝ այր բազմամեայ և մեծագործ, ոչ ևս կարացեալ հանդուրժել յանդուգն բանից Աղեքսանդրի, սկսաւ և ինքն յիւր կողմանէ համարձակ յա՟ջ բերել և գովել զպէսպ՟ս յ՟ղթանակութիւնս Փիլիպպոսի արքայի․ ը՟ որ յանհնարինս սրտմտել Աղեքսանդրի, այլ ևս ոչ յիշեաց՝ թէ սոյն այն Կղիտոս ապրեցուցել էր զնա 'ի մահուանէ, յանցանել նր՟ ը՟ Կւանիք գետն, հատանելով սուսերաւ իւրով զբազուկ Պարսիկ իշխանի ուրումն, որ բարձրացուցեալ էր զսուրն 'ի հարկանել զԱղեքսանդր · այլ նոյն կետայն զդեղարդն մխեալ 'ի սիրտ բարբարին իւրոյ՝ անդէն սպան զնա :

Յետ տիրելոյ Աղեքսանդրի Բաբելացւոց և Ասորեստանեայց, Պարսից և Հայոց, և այլ բազում ազգաց, չև ևս բաւականացեալ այնու ամ՟իւ՝ խաղաց 'ի Հնդիկս · և յետ բազմադիմի տառապանաց և նեղուե՟ց հասեալ անդ՝ էառ զբազում քաղաքս և գաւառս, և նուաճեաց ը՟ իւրև զյոլով արքայս · յորոց միջի երևելի էր արքայն Պիւռոս · զոր իբրև Մակեդոնացին ձերբակալ արար՝ եհարց ցնա · Օ՞րպէս կամիս՝ զի վարեցայց ընդ քեզ : Իբրև ընդ թագաւորի, պատասխանի ետ Պիւռոս : Այս ևս 'ի քոյին յօժարէն, ասէ ցնա Աղեքսանդր: Ապա ոչ անագան բազում մեծարանօք արձակեալ զնա անդրէն՝ հաստատեաց յիշխանուե՟ն իւրում:

Դարձ արարեալ անտի 'ի Բաբելոն՝ ընկալաւ անդ զդեսպանս դրեթէ յամ՟ծազգաց աշխարհի · բայց առ սակաւ սակաւ մատնել զանձն 'ի գործս անարժանս իւրում քաջուե՟, և օր քան զօր ախտացեալ զախտ ճակաճանուե՟՝ մեռաւ անդ 'ի Բաբելոն յերեսնե՟րդ ամի կենաց իւրոց, թագաւորեալ ընդ ամ՟՝ ամս երկոտասան և ամիսս եօթն ։

Ժամանակն, յորում ծաղկեցաւ մեծն Աղեքսանդր՝ է մի 'ի չորից երևելի դարուց աշխարհի, առ բազմութե՟ քաջիմաստ փիլիսոփայից, ճոխաբան ճարտասանից, վսեմապանծ բանաստեղծից և ճարտարագործ արհեստականաց ։

Ա։ Ո՛վ յաջորդեաց Աղեքսանդրի 'ի թագաւորութեան Յունաց ։ 3681 323

Գ։ Աղեքսանդր յառաջ քան զմեռանիլն՝ յանձն արար կտակաւ զթագաւորութի՟ իւր չորից սպարապետաց իւրոց, որք էին մանկակիցք նր՟, և միանգամայն իշխանք այլևայլ աշխարհաց․ պատուէր տուեալ նոցա՝ զի Մակեդոնական անուամբ վարեսցեն զայն։ Այլ յետոյ աղմուկ շփոթի անկեալ 'ի մէջ զօրապետաց նորա, երևելագոյնքն 'ի նոցանէ թուով քսան՝ ինքնագլուխ սկսան իշխել 'ի վ՟ այլևայլ կողմանց այնր համատարած թագաւորութե՟ ։ Յետ սակաւուց կամելով Անդիգոնոսի կուսակալի ստորին Ասիոյ զամ՟ն ընդ բռամբ իւրով նուաճել, միաբանեցան Լիսիմաքոս, Կասանդրոս, Պտղոմէոս և Սելևկոս՝ չորեքին սպարապետքն Աղեքսանդրի, և մարտիւ պատերազմի խորտակեալ զնա՝ բաժանեցին 'ի մէջ ինքեանց զմիահեծան թագաւորութիւն զայն, և թագ. կապեալ թագաւորեցին առանձին առանձին 'ի վերայ չորից տերուեց՝ Մակեդոնացւոց, Եգիպտացւոց, Ասիացւոց և Սելեւկիացւոց։

Ժ. Զ՞ինչ ինչ պատմի արժանի յիշատակաց դիպեալ 'ի ժամանակս այս։

Պ. Պտղոմէոս Ղագեան թագաւորեալ 'ի վ(ե)ր Եգիպտացւոց՝ եղև այր անուանի և գովելի. որ 'ի վերջնում ամի իշխանութեան իւրոյ ետ զթագաւորութիւն որդւոյ իւրում Պտղոմէոսի Փիղադեղփեայ, այն է եղբայրասէր. որև գրասէր լեալ և հանճարիմաստ առաւել քան զհայր իւր, կառոյց զհոյակապ գրատուն յԱղեքսանդրիա. և ժողովեալ 'ի նմա զերկերիւր հազար գրեանս յայլ-եայլ աշխարհաց՝ յանձն արար վերատեսչութեան Դեմետրիոսի Փաղերիոյ առն իմաստնոյ։ Ապա բուռն եհար ծաղկեցուցանել զվաճառականութիւն 'ի տէրութեան իւրում, բանալով զնոր ճանապարհ ընդ Նեղոս գետն մինչև ցնաւահանգիստ քաղաքին Բերենիկեայ՝ զոր նա ինքն Պտղոմէոս շինեաց յանուն մօր իւրոյ։ Եւ զի տեղեակ էր սա միանգամայն օրինաց Հրէից, խնդրեաց յԵղիազարայ քահանայապետէն զարս իմաստունս՝ զի գնացեալ առ նա թարգմանեսցեն զԱծաշունչն 'ի Յոյն բարբառ. և նա ընտրեալ վաղվաղակի զրաբունիս բանիբունս և օրինականս թուով եօթանասուն, որք քաջ գիտէին զլեզու իւրեանց և զՅունաց, առաքեաց առ թագաւորն։ Որոց գնացեալ առ Պտղոմէոս՝ արարին զայն թարգմանուն, որ կոչի Նօննոսեանց, որև յարգի եղև միշտ առ ամ՟ ազգս քրիստոնէից. վ՟ այն և երջանիկ Թարգմանիչք մեր Սբ՟ն Սահակ և Մեսրովպ 'ի ձեռս բերեալ զընտիր օրինակ նորին՝ բազում զգուշութ՟ թարգմանեցին 'ի Հայս։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

Է ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ

Իշխանութեան Հռովմայեցւոց։

Հ։ Ուստի՞ սկսեցան Հռովմայեցիք։

Պ։ 'Ի Հռոմուղոսէ յառաջին թագաւորէ իւրեանց։

Հ. Ո՞րն է պատճառ շինմանն. և ո՛վ շինեաց զքաղաքն Հռովմ։

Պ։ Իբրև յաջորդեցին Ամուղիոս և Նումիտոր որդիք Աղքանիոսի և թոռունք Ենէասայ՝ յաթոռ թագաւորութեան Լատինացւոց, կամելով Ամուղիոս միայն թագաւորել՝ տարագրեաց զեղբայր իւր զՆումիտոր, և սպան զորդիս նր՟. և զդուստր նորին զՌէա արգել 'ի տաճար Վեստայ դիցուհւոյն, զի մի՛ հարսնացեալ ծնցի զորդիս։ Իսկ Ռէա 'ի ծածուկ հնարս գտեալ ամուսնացաւ անդ և յղացաւ զերկուս որդիս, զՀռոմուղոս և զՀռեմոս։ Որ իբրև լուաւ Ամուղիոս՝ հրամայեաց ընկենուլ զնոսա 'ի Տիբերիս գետ · այլ որք պարտէին կատարել զայն հրաման՝ խնայեալ 'ի մանկունսն շատացան թողուլ զնոսա յեզր գետոյն · ուր գտեալ հովուի միոջ զնոսին՝ տարաւ 'ի տուն իւր, և սնոյց զնոսա խնամով: Իբրև աճեալ զարգացան նոքա՝ անձնատուր եղեն յորսորդութիւն, և յայլ այնպիսի արիական կրթութիւնս · ապա տեղեկացեալ ամենայն անցից, որք անցեին ընդ ինքեանս՝ ժողովեցին զմերձակայ հովիւս և բարեկամս, և գունդ կազմեալ յարձակեցան 'ի վերայ Ամուղիոսի և սպանին զնա, և յաղթող իշխանութեան նորա նստուցին անդրէն զհաւն իւրեանց զՆումիտոր · Զայն արարեալ՝ յետ երկուց ամաց հաւանութեամբ նորին Նումիտորայ եկին է ընկերաց իւրեանց յեզր Տիբերիս գետոյ, և շինեցին զմայրն քաղաքաց աշխարհի զՀռոմ: Յետ սակաւուց 'ի ծագել խռովութեան 'ի մէջ իրերաց՝ Հռոմուղոս սպան զկրտսեր եղբայր իւր զՀռեմոս, և ինքն առանձին պայազատեաց զնորահիմն տէրութիւն Հռովմայեցւոց:

Հ. ԶԻՆՉ ԱՅԼ ԻՆՉ ՊԱՏՄԻ ԶՀՌՈՄՈՒՂՈՍԷ:

3252 Պ. Յետ շինելոյ նորա զՀռովմ՝ տեսեալ թէ
752 բնակիչք քաղաքին չունէին բնաւ կանայս առ բազմանալոյ, արար հանդէս խաղարկութեանց · և իբրև եկին մտին 'ի քաղաքն բազմութիւն արանց և կանանց 'ի զանազան մերձակայ ազգաց, Հռովմայեցիք արգելին անդէն զկանայսն, և արարին

ինքեանց ամուսինս · սմին իրի 'ի մարտ պատերազմի գրգռեցան ամենքն առ հասարակ ընդդէմ Հռովմայեցւոց · և այն ինչ Սաբինեանք արք անպարտելիք մերձ էին 'ի չարաչար հարուածել զբնակիչսն Հռովմայ, կանայք նոցա՝ որք յղացեալ էին 'ի Հռովմայեցւոց, միջնորդ անկեալ հաշտեցուցին զերկու կողմանս ընդ իրեարս ։

Իսկ Հռոմուլոս յետ բազում երևելի յաղթութիւնս առնելոյ, և զսահմանս իշխանութեան իւրոյ ընդարձակելոյ՝ շքեղացոյց զայն ազգի ազգի բարեհնար օրինօք, և կենցաղօգուտ սահմանադրութեամբք, հաստատելով միանգամայն զԾերակոյտ կամ Սենկղիտոս յօգնականութիւն իւր ։ Այլ իբրև սկսաւ բռնանալ 'ի վերայ ամենայնի՝ Սենկղիտոսք բարձին զնա 'ի կենաց, յետ պայազատելոյ նորա ամս 38 ։ Զսա ժողովուրդք Հռովմայ աստուածացուցին, կարծելով թէ Դիքն յափշտակեցին յերկինս ։

Հ ։ Ո՞Վ ՅԱՋՈՐԴԵԱՑ ՀՌՈՄՈՒԼՈՍԻ ·

Պ ։ Յետ նորա Ծերակոյտն և ժողովուրդն ընտրեցին ինքեանց թագաւոր զՆումա Պոմպիլիոս · որոյ գոլով այր քաղցրաբարոյ և իմաստուն՝ արար ուխտ խաղաղութեան ընդ ամենեսին · և սկիզբն եառ քաղցրացուցանել զվայրենի բարս հպատակաց իւրոց, եդեալ 'ի նոսա զկարգ բարեպաշտած կենցաղակցութեան և զօրէնս խորանաց ։ Նա բաժանեաց զտարին յերկոտասան ամիս, 3229 705 և կանգնեաց 'ի Հռովմ բագինս կռոց . և մեռաւ յետ թագաւորելոյ ամս 43 :

Հ: Ո՞վ թագաւորեաց զկնի Նումայի :

3332 Պ: Տուղղոս Հոստիլիոս : Սա քաջութ՟բ երից
672 հարազատ եղբարց Ովրատեանց յաղթեալ Ալբանիացւոց, և հրկեզ արարեալ զքաղաք նոցա՝ ստիպեաց զնոսա գալ բնակիլ 'ի Հռովմ: Սա զկնի թագաւորելոյ ամս 32՝ հրդեհակեզ լեալ մեռաւ :

Հ: Ո՞վ յաջորդեաց Տուղղոսի :

3364 Պ: Անկոս Մարտիոս թոռն Նումայի Պոմպի-
640 լիոսի . որ յաղթեաց Լատինացւոց, մեծացոյց զՀռովմ, և կառոյց զբզմ՟ հոյակապ շինուածս, և յետ թագաւորելոյ ամս 25 մեռաւ .

Հ: Ո՞վ թագաւորեաց զկնի Անկոսի :

3388 Պ: Տարկուինիոս Պրիսկոս, զոր Անկոս 'ի մե-
616 ռանիլ իւրում թողեալ էր խնամակալու երկոցունց որդւոց իւրոց : Սա զառաջինն 'ի թագաւորս Հռովմայ եդ անձին շուք և ձև թագաւորական, արկեալ զիւրև ծիրանի, և կալեալ 'ի ձեռին գաւազան արքունի : Այլ սա մարտ եդեալ ընդ Սաբինացիս՝ յաղթահարեաց զնոսա, և կառոյց զառաջինն կրկէս խաղարկուե՟ց : Ապա պարապ գտեալ որդւոցն Անկոսի՝ սպանին զնա, թագաւորեալ ամս 38 :

Հ: Ո՞վ յաջորդեաց Տարկուինիոսի :

Պ: Իբրև 'ի յայտ եկն ոճիր որդւոցն Անկոսի՝

Ծերակոյտն յաքսորանս առաքեաց զն՟ա, և անուանեաց Թագաւոր զՍերվիոս Տուղղիոս ։ Սա 3420
՚ի գլուխ տարաւ յաջողութ՟ զբզ՟մ մրցմունս 588
պատերազմի զյառաջնմէ սկսեալսն , և ՚ի համար արկեալ որոշեաց զհպատակս իւր ՚ի տասնեւթն ցեղս ։ Կամեցաւ սա և բառնալ իսպառ զԾերակոյտն , և զօրացուցանել զռամիկն· այլ սպանաւ ՚ի դստերէ և ՚ի փեսայէ իւրմէ ՚ի Տարկուինոսէ. և յաջորդեաց նմ՟ սոյն այս Տարկուինոս անուանեալն հպարտ ։ ՚Ի հնարել ն՟ր զառաջինն զբանտս և զտանջանս , և ՚ի սկիզբն առնուլ բռնութ՟ վարել ընդ ժողովրդեանն` ամ՟քն առհ՟րկ յոգիս եղեն ապստամբ , և խորհեցան զհնարս կորուսանելոյ զբռնաւորն , և ջնջելոյ զմիապետական իշխանութ՟ին ։ Ոչ անագան ահա Քսեստոս որդի Տարկուինոսի` համանմանն նմին իւրով դժնդակ բարուք` ետ պատճառ Հռովմայեցւոց ՚ի գլուխ հանելոյ զայն · քանզի հարեալ ն՟ր ՚ի սէր ողջախոհ և ազնուատոհմիկ կնոջ ուրումն Հռովմայեցւոյ` որ կոչէր Լուկրետիա, և տեսեալ թէ նա ոչ յօժարի կատարել զկամս իւր` համարձակեցաւ բռնադատել զնա · որոյ մահու չափ դառնացեալ ընդ նախատինս անձին, ետ ինքեան մահ առաջի առն իւրոյ, հօրն և այլ երկուց ազգականաց· յորոց մինն էր Բրուտոս երևելի իշխան Հռովմայեցի ։ Յետինս այս ոչ կարացեալ այլևս համ=

դուրժել անօրէնութեան Տարկուինոսի՝ վաղվաղակի ժողովեաց առ ինքն զամ՟ զբարեկամս և զազգականս իւր, և նոքօք յարձակել 'ի վ՟ր բռնակալն Տարկուինոսի՝ տարադրեաց 'ի քաղաքէն. և յայնժամ համօրէն Հռովմայեցիք 'ի մի վայր գումարեալ՝ երդուան չճանաչել յայնմ հետէ զոք թագաւոր։ Նմին իրի ընտրեցին ինքեանց զերկուս Հիւպատոս՝ զնա ինքն զԲրուտոս և զԿողատինոս զայր Լուկրետիայ. զորս որոշեցին փոխել յիւրաքանչիւրում ամի :

3496 Հ։ Զ՞ինչ ապա եղեւ գայ :

508 Պ։ Տարկուինոս հանապազ երկնելով 'ի մտի իւրում դառնալ վերստին 'ի Հռովմ, խոստմամբք և ողոքանօք 'ի ծածուկ յինքն գրաւեալ էր զխումբ բազում երևելի երիտասարդաց Հռովմայեցւոց։ Զոր իբրև լուաւ Ծերակոյտն՝ 'ի մահ դատապարտեաց զդաւակիցսն. և անագորոյն Հիւպատոսն Բրուտոս տեղեկացեալ՝ եթէ երկոքին որդիք իւր ևս էին 'ի թիւ ապստամբելոցն՝ ետ զն՟ս վաղվաղակի ածել առաջի իւր և սպանանել. կամելով այնու ցուցանել՝ եթէ օրէնք հաւասարապէս իշխեն 'ի վ՟ր ամ՟ց, և ոչ ընդունին ակնառու՟ն ինչ։

Յետ որոյ չոգաւ Տարկուինոս առ Պոռսենաս արքայն Կղուսիացւոց, և գրգռեաց զնա յարձակիլ բազմութ՟ զօրաց 'ի վերայ Հռովմայ։ Այլ այն ինչ Կղուսիացիք կամէին անցանել ը՟ կամուրջ Տիբերիս գետոյն և մտանել 'ի քաղաքն, Ովրատէս Կոկղէս սքանչելի զօրութ̃ բազկի իւրոյ մէն միայն 'ի դիմի հարաւ ահագին բազմութե̃ թշնամեացն, և պարապ ետ Հռովմայեցւոց 'ի բաց բառնալ զկամուրջն և արգելուլ զանցս նոցա ․ ապա և նա ինքն Ովրատէս անկաւ 'ի գետն և լողալով էանց յայնկոյս ։

Իսկ հզօր արքայն Պորսեննաս պաշարեալ է̃ երկար զքաղաքն Հռովմ՝ 'ի նեղ էարկ զբնակիչսն յոյժ յոյժ ․ մինչև առ քաղցի կոտորել զմիմեանս ․ որոյ վասն անճարացեալ նոցա կամեցան անձնատուր լինել 'ի ձեռս թշնամւոյն ։ Եւ սակայն Մուտիոս Սկեւոլա՝ ազնուական պատանեակ ոմն Հռովմայեցի յառաջ մատուցեալ՝ հաճեցոյց զմիտս նոցա սպասել փոքր մի ևս, մինչև ինքն գնացեալ գաղտ 'ի բանակ թշնամեացն՝ ջանահնար լիցի սպանանել զՊորսեննաս ․ որ եթէ յաջողեսցի՝ դէթ զանձն իւր զոհեսցէ 'ի փրկութ̃ի հայրենեաց ։ Զայն ասացեալ բաջն Մուտիոս՝ ելանէ 'ի ծածուկ 'ի քաղաքէն, և չու առնէ 'ի բանակ Կղուսիացւոց, և սրտապինդ քաջութ̃ յառաջ մղեալ հասանէ 'ի վրանս արքայեն ․ ոչ անագան ահա առաջի ելանէ նմա զօրավար ոմն, զոր կարծելով Մուտիոսի լինել նա ինքն Պորսեննաս՝ անդէն սպանանէ զնա ։ Յայնժամ պահապանք արքայեն կալեն զՄուտիոս և տանին զնա առաջի Պորսենայ, որ հրամայէ նոյնժամայն արկանել զնա 'ի հուր բորբոքեալ : Իսկ քաջն Մուտիոս ինքնին յառաջ մատուցեալ՝ կարկառէ զաջ ձեռն իւր 'ի վերայ կայծական հրոյ, և թողու այրել առանց զցաւակրու՟թ ինչ ցուցանելոյ. յետ այնորիկ 'ի ձայն բարձր ասէ. Ո՛րքայ Կղուսիացւոց, մի՛ կարծեր այսուհետև կեալ 'ի հանգստի· այլ երկի՛ր, զի ահա ա՟մ Հռովմայեցիք հասակակիցք իմ նոյնպէս 'ի մտի եդեալ են կամ զքեզ կորուսանել, և կամ ձեռամբ քով ըզգլխանս իւրեանց ողջակիզել վասն հայրենեաց :

Զայն լուեալ Պորսենայ՝ փութացաւ հաշտու՟թ խօսել ը՟ Հռովմայեցիս, և դարձաւ 'ի տեղի իւր :

Հ: Յետ այսորիկ ի՞նչ անցք անցին 'ի Հռովմ :

Պ: 'Ի հաստատել հասարակապետական իշխանու՟թ 'ի Հռովմ՝ բազում խռովու՟թք անցին 'ի մէջ Ծերակուտին և ժողովրդեան : Եւ սակայն 'ի վերայ այսր ա՟մի օր քան զօր զօրացեալ Հռովմայեցւոց, և մարզեալ 'ի մրցմունս պատերազմի, և համապազ միով հոգւով վարեալք ընդդէմ օտարաց՝ բազում յաղթանակու՟թս արարին 'ի բազում տեղիս, և ը՟արձակեցին զսահմանս իշխանու՟թ իւրեանց յոյժ յոյժ : Եւ զի
3740 Կարկեդոնացիք ընդ նոյն ժամանակս տիրապե-
264 տեալ էին այլևայլ կողմանց աշխարհի, և ահաւոր երևէին ա՟մ ազգաց, մանաւանդ 'ի ծո-

վու՝ կարևոր վարկան Հռովմայեցիք խոնարհեցուցանել զնոսա, և զդէմ ունել յաջողուածոց նոցին : Այլ ահա աստի սկիզբն եղև առաջին Փիւնիկեան մարտի, որ համբաւեալ է յոյժ առ նախնի մատենագիրս, որ և տևեաց ամս քսան և հինգ : Այլ թէպէտ անվարժ էին ցայնվայր Հռովմայեցիք 'ի նաւարկութեան, և չունէին բնաւ 'ի պատրաստի նաւս պատերազմականս, սակայն 'ի սակաւ ամիսս մարթացան հանել 'ի ծով 120 ցուկանաւս (ԿԷՔՈՒԷՐԷՍ)· և նոքօք 'ի դիմի հարեալ ծովային զօրուն Կարկեդոնացւոց՝ զբազում՝ մեծամեծ նաւս նոցա ձերբակալ արարին, և զայլս վտանգեցին : Այլ սպարապետ Հռովմայեցւոց էր երևելին Հռեգուղոս · որ յետ բազում անգամ զԿարկեդոնացիս յաղթահարելոյ՝ հուսկ յետոյ անկաւ գերի 'ի ձեռս նոցա : Յորում ժամանակի կամեցեալ Կարկեդոնացւոց առաքել դեսպանս 'ի Հռովմ վասն հաշտութեան, արձակեցին զնա ինքն զՀռեգուղոս՝ զի գնացեալ ստիպեսցէ զհայրենակիցս իւր, առնել խաղաղութիւն ընդ նոսա · խոստանալով նմա՝ զի եթէ 'ի գլուխ հանցէ զայն՝ ազատ լիցի · ապա թէ ոչ՝ անդրէն դարձցի 'ի կապանս իւր : Իսկ վեհանձն Հռեգուղոս 'ի հասանել իւրում 'ի Հռովմ՝ տեսեալ թէ Ծերակոյտն կամի կատարել զխնդիր Թշնամեացն, զընդդէմն հաստատեաց · քանզի հայելով յօգուտ և 'ի պարծանս հայրենեաց՝ յանձն էառ անդրէն դառնալ 'ի ձեռս Թշնամեաց, քան ազատանալ և խափանարար լինել այնմ օգտակար պատերազմի։ Եւ եղև երբև գնաց վերստին 'ի Կարկեդոն ըստ բանից իւրոց, իմացեալ Թշնամեաց զայն՝ վառեցան յանհնարին սրտմտութեամբ ընդդէմ նորա, և ոչ ևս կշռեալ զայն վեհապանծ գործ առաքինափայլ առն՝ նորահնար տանջանօք բարձին զնա 'ի կենաց։ Բայց Հռովմայեցիք ոչ անագան չարաչար վրէժս առին 'ի նոցանէ, և յանարգանս մատնեցին զնոսա ։

3787 Յետ ժամանակաց Հռովմայեցիք դարձեալ
217 դրդուեցան 'ի պատերազմ ընդդէմ Կարկեդոնացւոց յայն սակս՝ զի հռչակաւոր սպարապետ նոցա քաջն Աննիբաղ բազմութեամբ զօրաց գնացեալ 'ի Սպանիա՝ պաշարեալ էր զծովեզերեայ բազմագանձ քաղաքն Սագունտոս, որ էր ընդ հզօր պաշտպանութեամբ Հռովմայեցւոց ։ Եւ մինչդեռ Հռովմայեցիք պատրաստէին զնաւահանդէս մեծ բազմութեամբ զօրաց արձակել 'ի վերայ նորա, Աննիբաղ ինքն Թողեալ զՍպանիա՝ խաղաց ընդդէմ նոցա յԻտալիա․ և անցեալ զՊիւրինեան և զանմատոյց լերինս Ալբից՝ եկն եհաս 'ի դրունս Հռովմայ․ և յետ բազում անգամ չարաչար հարուածս հասուցանելոյ 'ի զօրս Հռովմայեցւոց, այն ինչ մերձ էր 'ի տիրել քաղաքին՝ Փաբիոս իշխանապետ Հռովմայ յա-

պաղեաց զնա քաջահանձար հնարիւք իւրովք· Ապա իբրև զօրք Աննիբաղայ անձնատուր եղեն 'ի գրգանս փափկութե՟, Հռոմայեցիք յանպատրաստից յարձակեալ 'ի վերայ նոցա՝ կոտորեցին զբազումս, և զմնացեալսն հալածական կացուցին հանդերձ սպարապետաւ իւրեանց ։ Այս է երկրորդ Փիւնիկեան պատերազմն, որ տևեաց ամս 16 ։

Իսկ եր՟րդ Փիւնիկեան մարտն է, որով Հռոմայեցիք իսպառսպուռ կործանեցին զահաւոր իշխանութիւն Կարկեդոնացւոց, և զհոյակապ Աթոռանիստ քաղաք նոցա հարթայատակ քանդեցին ։

Հ. Ո՞ էին այլ էին արտաքին ազգ Հռոմայեցւոց·

Պ. Որքա 'ի սուղ ինչ միջոցի այնքան զօրացան և ճոխացան, մինչև սասանեցուցանել զտիեզերս բովանդակ ։ Ոչ բաւականացեալ իշխել Եւրոպիոյ և Ափրիկոյ՝ սկիզբն կալան զհզօր իշխանութե՟ իւրեանց սփռել և յԱսիա ։ Յայնժամ քաջ արքայն Պոնտոսի Միհրդատ պատերազմեալ ընդ ն՟ց զամս քսան՝ բազում չարաչար կոտորածս արար 'ի զօրս ն՟ց, և առ ժամ՟կ մի գտաւ խափանիչ յաղթանակութե՟ց նոցին ։ Տե՟ս զամանէ և 'ի պատ. Հայոց ։ Իսկ ապա երևելի սպարապետ ն՟ց Պոմպէոս նուաճեալ զՄիհրդատ, և ճանապարհ ընդարձակ բացեալ՝

աւանց աշխատանաց տիրապետեաց համօրէն Ասիոյ ։

Այլ եղեւ մինչդեռ սպարապետք Հռովմայ պարապեալ էին 'ի մրցմունս պատերազմի յԱսիա, Կատիլինա պատրիկ Հռովմայեցի՝ այր չեղխ և անառակ, յետ սպանելոյ զա՟մ ինչս իւր՝ միաբանեցաւ ընդ բազմուե՟ սոտահակ արանց, և կամեցաւ յինքն կորզել զբովանդակ հարստուի՟ն և զիշխանուի՟ն Հռովմայ ։ Այլ մեծն Կիկերոն, որ էր հիւպատոս այնր տարւոյ՝ իրագէտ լեալ չար յանդգնուե՟ ն՟ր՝ կշտամբեաց զնա յատենի Ծերակուտին սքանչելի ատենաբանու՟ք իւրով, և ետ աքսորել 'ի քաղաքէն ։

Հ։ ՅԵՏ ԱՅՍՈՐԻԿ Ո՞Չ ԻՆՉ ԱՅԼ ԱՆՑՔ ԱՆՑԻՆ 'Ի ՀՌՈՎՄ։

3944 Գ։ Բազումք յերեւելի նախարարաց Հռովմայեցւոց հետզհետէ ցանկացան լինել ինքնագլուխ իշխան այնր հզօր տէրուե՟ . բայց ոչ ոք 'ի նոցանէ մարթացաւ հասանել 'ի նոյն . մինչև ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ՝ այր անուանի քաջալանջ սեգ և լայնախորհուրդ, միաբանեալ ընդ ՊՈՄՊԷՈՍԻ գերահամբաւ սպարապետի Հռովմայ, և ը՟ ԿՐԱՍՍՈՍԻ՝ հաստատեաց զԵՌԱՊԵՏԱԿԱՆ զիշխանուի՟ն, և հանդերձ նոքօք տիրեաց 'ի վ՟ր ամ՟ցն ։
60

Յետ որոյ Յուլիոս գնացեալ 'ի Գաղղիա՝ էառ զբովանդակ զայն աշխարհ, և խաղաց անտի պատերազմաւ 'ի վերայ մեծին Բրիտանիոյ ։ Ընդ նոյն ժամանակս Կրասոս անցեալ յԱսիա՝

ետ պատերազմ Պարթեւաց քաջաց, և մեռաւ անդ։ Իսկ Պոմպէոս մնաց միայն 'ի Հռոմ։ որոյ դժկամակ գտեալ ընդ ականաւոր յաղթութիւն Յուլիոսի՝ ստիպեաց զՍերակոյտն կոչել զնա յետս 'ի Հռոմ, և զինքն առաքել փոխանակ նորա։ Իբրև ընկալաւ Կեսար զհրաման Սերակուտին՝ վաղվաղակի ժողովեալ զա՟մ գունդս զօրաց իւրոց՝ դարձաւ նոքօք յԻտալիա, և մտեալ 'ի Հռոմ՝ 'ի փախուստ դարձոյց զՊոմպէոս. ապա կամեցեալ Յուլիոսի զնա ձերբակալ առնել՝ պնդեցաւ զհետ նորա 'ի Յունաստան. այլ նա խոյս ետ անտի, և գնաց ապաստան անկաւ առ Պտղոմէոս արքայն Եգիպտացւոց, որ անխնայօրէն եբարձ զնա 'ի կենաց։ Իսկ Կեսար զկնի կոտորելոյ զա՟մ զզօրս Պոմպէի՝ յաղթանակաւ դարձաւ 'ի Հռոմ, և հաստատեաց զմիապետական զիշխանութ՟ի։ Ապա 'ի սկիզբն առնուլ նորա բռնութ՟ք վարիլ ընդ հպատակս իւր՝ Բրուտոս և Կասսիոս բազմութ՟ք ժողովրդեան յեղակարծ իմն յարձակեալ 'ի վերայ նորա՝ սպանին։ Եւ վերստին հաստատեցաւ Եռապետական իշխանութ՟ին, և անկաւ 'ի ձեռս Անտոնիոսի, Լեպիդոսի և Հոկտաւիանոսի եղբօրորդւոյ Յուլիոսի. որոց կամեցեալ առնուլ զարժանին վրէժ 'ի սպանողացն Յուլիոսի՝ 'ի Բրուտոսէ և 'ի Կասսիոսէ, հետամուտ եղեն նոցա մինչև 'ի Մակեդոնիա.

ուր անճարացեալ երկոցունց սոցա՝ զանձինս 'ի մահ մատնեցին մի զկնի միոյ :

Յետ սակաւուց միաբանեցան Անտոնիոս և Հոկտաւիանոս ընդդէմ Լեպիդոսի, և մերժեցին զնա յիշխանութենէ իւրմէ : Հոկտաւիանոս մնաց 'ի Հռովմ. իսկ Անտոնիոս գնացեալ պատերազմաւ յԵգիպտոս՝ անդ հարաւ 'ի սէր անուանի Թագուհւոյն Կղէոպատրեայ : Իսկ եղև ապա 'ի ծագիլ խռովութեան 'ի մէջ Հոկտաւիանոսի և Անտոնիոսի՝ Հոկտաւիանոս ել 'ի պատերազմ 'ի վերայ նորա, և նուաճեալ զնա Թագաւորեաց միայն 'ի վերայ Հռովմայեցւոց. և ետ զինքն կոչել Կայսր. որում և Ծերակոյտն յաւել զբառդ Օգոստոս : Իսկ ահա այսու եղանակաւ վախճան էառ Հռովմէական հասարակապետութիւն.

Հռովմայեցիք 'ի ժամանակս Կայսերացն, որք յաջորդեցին Օգոստեայ՝ ընդարձակեցին զիշխանութիւն իւրեանց այնքան, մինչև դառնալ բացարձակ տեարք երից մասանց աշխարհի. այլ փարթամութիւն՝ զոր տարան յԱսիոյ յերկիր իւրեանց՝ առ սակաւ սակաւ խոտորեցոյց զգովելի բարս նոցա, և եղև պատճառ անկման տիեզերասաստ իշխանութեան նոցին :

ՎԱԽՃԱՆ :

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ [illegible]
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
[illegible]

ՑԱՆԿ

Գլխոց և երեսաց որոց բովանդակին 'ի Տետրիս ·

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ·

Յաղագս Գիտութեան առ Հասարակ ·

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ·

Յաղագս այլևայլ Կրօնից · երեսք·

Գլ. Ա. Կրօն ։ Բաժանումն Կրօնի ։ 2 · 3
Գլ. Բ. Բնական Կրօն ։ 5
Գլ. Գ. Կրօն Հրէից ։ 7
Գլ. Դ. Կրօն Քրիստոնէից ։ 9
Աշխարհ ։ 14
Մեղք ։ Եկեղեցի ։ 16
Խորհուրդք Եկեղեցւոյ ։ 17
Օտարադաւան Կրօնք Քրիստոնէից և Աղանդք նոցին · 19
Մարտինոս Լուտեր ։ 20
Գլ. Ե. Հեթանոսութիւն, որ է Դիւցաբանութիւն ։ 23
Դիք առաջին կարգի ։ 24

Երեսք։
Զեւս կամ Արամազդ ։ 26
Մինէրվա կամ Աթենաս ։ Ապողոն ։ 28
Մուսայք ։ Անահիտ կա̃ Արտեմիս ։
Դեմետրէ ։ 30
Ափրոդիտէ ։ Հերմէս ։ 31
Պոսէիդոն ։ Բաքոս կամ Դիոնիսիոս ։ 32
Ա̃ծք երկրորդ կարգի ։ 34
Կիսա̃ծք և դիւցազունք ։ 35
Պերսէոս ։ —
Հերքուլէս կամ Հերակլէս ։ 36
Թեսեոս ։ 39
Կաստոր և Պողիդեւկէս ։ Յասոն ։ 40
Աքիլլէս ։ 41
Վահագն ։ 42
Պատերազմ Տրոյեայ ։ —
Գլ. Է. Մահմէտականութիւն ։ 44
Գլ. Ը. Կռապաշտութիւն ։ 46

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

Փիլիսոփայութիւն ։

Գլ. Ա. Տրամաբանութիւն ։ 48
Գլ. Բ. Բնաբանութիւն ։ 49
Տարերք ։ Օդ ։ —
Մետեորայք ։ 50
Ջուր ։ 59
Հուր ։ 60

Երեսք·
Գլ. Գ. Բնական Միպասանութի : 65
Երկրաբանութեան և Հանքաբանութեան : —
Հող : —
Գլ. Դ. Տնկաբանութիւն : 70
Գլ. Ե. Կենդանաբանութիւն : Դիեցուցիչք : 79
Զգայութեան Հոգւոյ : 80
Զօրութեան բանական Հոգւոյ : 81
[illegible] մարդոյ : 82
Մարդկեղէն մարմին : 83
Կեանք մարդոյ : 89
Կենդանածին անասունք կամ չորքոտանիք : Փիղ : 95
Առիւծ : 97
Վագր : 99
Ինձ և Յովազ : Ռնգեղջիւր : —
Արջ : 100
Գայլ : 101
Ուղտ : 102
Ձի : Իշ : Ջորի : 203
Եզն : Ոչխար : Այծ : 104
Կով : Եղջերու : 105
Նապաստակ : 106
Կատու : 107
Շուն : —
Աղուէս : 108
Կաղէկ : —

Երեսք

Թռչունք : 110
Արծիւ : —
Կոնդոր : 111
Փասիան : Սիրամարգ : 112
Ջայլամն : 113
Երկակենցաղք : 114
Կոկորդիլոս : —
Մողէս : Գորտ : Կրիայ : 115
Ձիագետի : 116
Ջրշուն : 117
Ձկունք : 118
Կէտք : 120
Միջատք : 121
Մեղուք : —
Սողունք : Օձք : 123
Գլ. զ̄. Չափաբերական Մակացութիւնք : 124
Թուաբանութիւն : 125
Յաւելումն : 129
Բարձումն : 134
Բազմապատկութիւն : 136
Աղիւսակ Պիւթագորեան : 137
Բաժանումն : 141
Կանոն Համեմատութեան : 145
Ալկեպրայ : Երկրաչափութիւն : 148
Ճարտարապետութիւն : —
Գլ. է. Աստեղաբաշխութիւն : 149
Բաժանումն Ժամանակի : 157

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ։ երեսք։

Աշխարհագրութիւն ։ 161

Գլ. ա. Բաժանումն Երկրի ։ 167
Եւրոպէ ։ 168
Գլ. բ. Ասիա ։ 190
Ափրիկէ ։ 192
Ամերիկա ։ 196

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ։

Պատմութիւն ։ 199

Գլ. ա. Սուրբ Պատմութիւն ։ 201
Գլ. բ. Առաջին Միապետութիւն աշխարհի. այն է Ասորեստանեայց։ 225
Գլ. գ. Երկրորդ Միապետութիւն աշխարհի. այն է Մարաց և Պարսից։ 234
Գլ. դ. Երրորդ Միապետութիւն աշխարհի. այն է Յունաց՝ կամ Մակեդոնացւոց։ 250
Գլ. ե. Չորրորդ Միապետութիւն աշխարհի. Իշխանութիւն Հռովմայեցւոց ։ 261

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ.

Երես	Սխալ.	Ուղղ.
2	իմասաունք	իմաստունք
6	իւրե անս	իւրեանս
8	Իսահտկայ	Իսահակայ
26	ըմպանակ	ըմպելի
. .	ուրագ	մանգաղ
59	խառնքալ	խառնեալ
81	Սորշում	Յանկուցն, Սորշում
88	և և	և
. .	միանգամ այն	միանգամայն
97	փունթ	ֆունթ
144	երեսունևմեց	երեսունևհինգ
155	յիսուն	երկիրս յիսուն
156	Ը ամի	Ը ամի,
. . .	ոլով	յոլով
	յգոյն	գոյն
219	ցհօրեղբ.	ցքեռի
222	դաղթէին	դաղէին
239	միո	միոյ

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Института Маркса-Ленина
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 թ.